



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

919, 920

205
7-79

1851

2010

3437







Թ. Ե. Կ. Գ. Ե. Պ. Ե. Կ.

Խ. Բ. Տ. Ա. Խ.

5

200
341-70

ΦΕΛΛΑΡΕΙΟ

12

205:

7-79

W. H. E. S. A. B.

ՅՈՐԻՆԵԱԼ

Դ ՊՕՂԱԾ ԱՐՔԵՊՈՏՍԿՈՊՈՍԻ ԱՆԴՐԱՏԱՆԻՊՈԼԱՆՑԻՑ

Դ Ա Ա Խ Ա Ն Պ Ա Տ Ր Ի Ա Ր Գ Ե Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ա Կ Պ Ո Լ Ա Ց

ԴՐԱՄԱՆՈՒԹԵՆՔ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՆԵՄԻ

ԲԱԺԱՆԵԱԼ ՅԵՐԿՈՒՍ ՀԱՏՈՐՍ

ՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ՕԳՈՒՏՆ ԱՐԱԿՈՒՐՅՈՒՆԻՑ

ՏԻՊ ԵՐԿՐՈՒԴԻ ԱՄԵՆԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԱՐՈՂՅԱՆ ԷՀՄՏԱԶԻՒ


Տ. Տ. ԴԵՐՄԵՎԻ ՄՐԲԱՀՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՌ Դ ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ՏԱՐԱԾՈՒՅԹ ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒՄ

ԵՒ Ի ՊԱՏՐԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱԴԻՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ. Տ. ՅԱԿՈԲԻԱՆ ՄՐԲԱՋԱՆ ԱՐԳԵՊՏՍԿՈՊՈՎԻ



ՅԵՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Ե ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆՑ

1851

2001

093
08-14

ОГЛАШЕНИЕ

о публичном

запросе

о выдаче земельных участков в селе Красногородка
Белогорского района Краснодарского края и
подтверждении данных о земельном участке

Иванова - Сергею - Ивановичу

о земельном участке

в селе Красногородка Краснодарского края

о выдаче земельного участка в селе Красногородка Белогорского района Краснодарского края
Иванову - Сергею - Ивановичу
для строительства жилого дома и земельного участка под строительство жилого дома
в селе Красногородка Белогорского района Краснодарского края
о выдаче земельного участка в селе Красногородка Белогорского района Краснодарского края
Иванову - Сергею - Ивановичу

ЧС801-ч

Министерство

ПОСЛОДОНОДО

семьдесят восемь четыреста

год

10.05.

ՅԵՒՇ.ՅԵՐԵԿ

Երկու ինչ կարողութիւնք սեպհական են
մարդոց՝ սրով է մարդ, իմացական միտք, և ազատ
կամք։ Ուստի կան առաջի ճանաչել զՃշմարտու-
թիւն, և ընարսւթիւն առնել՝ ի մեջ բարւոց և
չարի. իսկ կամաց՝ խորշել՝ ի չարեն, և առնել
զբարին ազատ բերմամք։

Աւ այսոքիւք իբրև երկոքումքք թեօք վերա-
նայ մարդոց՝ ի պատկեր և ՚ի նմանութիւն Վասու-
ծոյ, սրալիսի ստեղծաւ և առաջին մարդն Վդամ.
ըստ այնմ, « Վրասցուք մարդ ըստ պատկերի մե-
րում և ըստ նմանութեան ». Օհու. Ա. 26:

Վարդն մեզանչելով կորոյս զնմանութիւնն Վս-
տուծոյ, այլ ոչ զլինելն պատկեր Վստուծոյ. զի
պատկեր լինելն մտածի ՚ի բնական կարգի, իսկ
նման լինիլն՝ ՚ի բարյանկան կարգի. և որ ինչ
բնական է՝ ՚ի բնութենել է, և անեղծ. ապա
սրակէս նախ քան զմեզանչելն էր անձնիշխան, ՚ի
նոյն եկաց և զինի անկմանն։

Իսկ բնականաւ ոչ ոք կարէ ժառանգել զՎս-
տուծուած. զի գործողութիւնն բնական՝ ոչ ելուզանի
՚ի յաղատ կամաց, այլ ՚ի հարկէ բնութեանն. և

որ ինչ անկանի ՚ի ներքոյ հարկի բնութեան , ոչ է արժանի վարձուց կամ պատժոց : Իսկ բարօյականը՝ որ ՚ի յազատ կամոց ներդործի , արժանի լինի վարձուց կամ պատժոց :

Ապա պարտ է մարդոյ նմանիլ Կատուծոյ բարօյական առաքինութեամբ , զի այս է՝ որ զմարդն առնէ նման Կատուծոյ . և մինչ ոչ ելանէ մարդ ՚ի նմանութիւն Կատուծոյ , ոչ կարէ գտանել ըդ փառս զոր կրօյս՝ յօրժամ էր նման Կատուծոյ :
Եւ այս նմանութիւն հիմնի ՚ի համաձայնութեան կամացն Կատուծոյ . վասն որոյ ետ Կատուած զարտութրան , և եցոյց զհաճոյս կամաց խրոց , զի նմա միայնոյ ջանասցէ մարդ հաճոյանալ , և զնա միայն պաշտել : Օ, ի ոչ այլ ինչ է պատուերըն , քան կամք պատութրողին . և ոչ այլ ինչ է պաշտել զկամն Կատուծոյ , քան յօժար կամօք հընտղանդիլ և պահել զնոյն պատուէրն . զի նազատակ գործողութեան մարդոյ պարտ է լինիլ կամքն Կատուծոյ . բատ այնմ , « Այն որ հանգիստ՝ աշխատելոց , և կամքը ըն գործ է եղելոց » . Ըստակ :
Ուստի որ մտադիւր սիրով պահէ զպատուիրան Կատուծոյ , լինի համաձայն կամաց նորա , որ է նմանիլ Կատուծոյ ՚ի բարօյական կարգի . քանզի անհնար է ստեղծուածոց նմանիլ Կատուծոյ ըստ եռութեան : Յայս միտ ուսուցանեն մեղսութք գիրք պաշտել զկամն Կատուծոյ , որպէս զի կարասցուք ժառանգել զԿատուած իբրև վերջին վախճան :

Եւ քանզի Կատուած է ողորմած և գիտակ տը կարութեան մարդկան , հաստատեաց զհաճու-

թիւն իւր ՚ի յաւզզաւթիւն բարուց մարդկան որ ուղղի միայն առաքինութեամբ :

Իսկ զառաքինութիւնս հիմնեաց ՚ի դիւրին սկզբունս , զի ամենեցուն հեշաբնկալ վցի , և մի որ պատճառեցի զակարութիւն և զանքաւականութիւն իւր . ըստ այնմ , «Պատօւիրանքն նորա չեն ինչ ծանունք » . Ա . Յով . Ե . Զ : Եւ թէ՝ « լուծ իմ քաղցր է . և բեռն իմ փաքրագի » . Վարդ . ԺԱ . ԶՕ :

Քանզի զի՞նչ զոյ դիւրին քան զեր , քան ըստ խոնարհութիւն , ժուժկալութիւն , հեզաւթիւն , համբերութիւն , ներսզութիւն , պահեցազութի , աղօթափրութիւն , պղորմութիւն , և այլն . որք և անաշխատ գործին , և տմենայն ոք կարէ առնել :

Իսկ եթէ պահանջեր Վասուած յամենեցունց զուժեզութիւնն Առմիասնի , զարբարնիթագութիւնն Առայէլի , զարիսւթիւնն Աերակլեայ , զիմաստութիւնն Արիստոտէլի , զբանաստեղծութիւնն Արքիլիսափ , յայնժամ կարեին մարդիկ անպարտ կացուցանել զանձինս : Իսկ այժմ ոչ կարեն մնալ անպարտ , յորժամ ոչ առ առաքինունս : Վասն զի գործք տռաքինութեան դիւրին են , և ամենայն ումեք կարելի , զի պահանջեն միայն ըստ յօժարսւթիւն կամաց , և այն է ՚ի պատրաստի եթէ ախորժէ մարդս :

Տես և զմիւս դթութիւն Վասուածոյ , զի ոչ միայն ՚ի դիւրին սկզբունս կարեաց զառաքինութիւնս , այլ և ոչ պահանջեաց յամենեցունց միաշափի , այլ ըստ իւրաքանչիւր կարեաց . զի ոչ յաղքատաց խնդրէ զտուրս , և ոչ ՚ի հիւանդաց ըստ

ծոմասղահութիւն, և ոչ ՚ի տգիտաց զխրատ : Ապաքէն Աստուած որպէս ամենեցուն պարգեկ զբաւական շնորհս ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի, նոյնպէս խնդրէ յամենեցունց՝ զի գործեցեն զբարիս նովին շնորհօք՝ զոր ետ նոցաձրիաբար : Ո ՚ի շնորհքն առւեալ լինի ՚ի կողմանէ Աստուծոյ, և գործածութիւնն պահանջի ՚ի կողմանէ մարդոյն . այս է գործակից լինել շնորհացն Աստուծոյ՝ առ ՚ի հաճոյանալ նմին :

Բայց գործածութիւն շնորհացն Աստուծոյ կատարի բարոյական առաքինութեամբ . վասն որոյ շեք ՚ի կեանս մարդոյ օգտակար և հարկաւոր՝ քան զուսումն բարոյական առաքինութեան : Իսկ և բարոյական առ աքինութիւնք արդիւնաւորին յառատածաբանական առ աքինութեանց, որը են հաւատք՝ յոյս՝ և սէր . հաւատքն առ ճանաչել զԱստուծոծ . յոյսն առ Աստուծոծ առաջնորդէ . և սէրն ընդ Աստուծոյ միաւորէ :

Եւ բարոյական առ աքինութիւնք են միջոց՝ առ ՚ի պահել ամբողջ զաստածաբանական առաքինութիւնն . ուստի առտուածային և մարդկային առ աքինութիւնք զատ ՚ի միմեանց ոչ հասուցանեն զջափահաս մարդն յերանական փառն ՚ի ժառանշ գել զԱստուծոծ . ըստ որում հաւատք առանց գործոց մեռեալ են, և գործք առանց հաւատոց մեռեալ . զի աստածաբանականքն են որպէս հսդի, և մարդկայինքն՝ որ այն ինքն է բարոյականքն, որպէս մարմին :

Ապաքէն միայն առ աքինութեամբ ու զզի կամք մարդոյ՝ նմանիլ կամացն Աստուծոյ, և առ աքինու-

Թիւնք գործին ՚ի մեղ ջանիւք և կրթութեամբ .
բայց ըստ որում մարմինն հակէ զմիսս մարդց
՚ի հողեղէն յարկո , և արդելք բազում են առա
քինեաց ՚ի կենցաղոյս ճանապարհի ելանել առ
Աստուած , կարօտի մարդն առաջնորդութեան
խրատուց և յորդորանաց : Որոյ աղադաւ սուրբ
հարք և վարդապետք և անսուչք հոգւոց հա
ւատացելոց՝ հոգացին միշտ և հոգան սւսուցա
նել և յորդորել զմարդիկ գործել զբարիս ըստ
կոմայն Աստուծոյ . քանզի ոչ զերծանին ՚ի պար
առաւ որութենէ , եթէ առ դիւրութիւն անձին
անփոյթ լիցին ՚ի խրատելոյ զայնոսիկ՝ ոքք կարօտ
իցեն խրատուց :

Օսյս պարաւաւորութիւն ունելով և մեր ,
արդէն ողորմութեամբ Տեառն ՚ի հրաժարել մեր
՚ի պատրիարքական զբաղմանց , և ՚ի դադարիլ ՚ի
Վանս որբոյ Եշրուսաղէմի՝ որ ՚ի խրիսուպօլիս ,
ոչ կամելով զպատուական ժամանակին անաշխատ
վատնել , զոմանս բարոյական իմաստս հաւաքեալ
՚ի մի , և զայլս բազում յաւելեալ ՚ի նոյն՝ իբրև
ԹԱՆԳԱՐԱՆ ԽՐԱՏՈՒ լի ամենայն կենցաղօգուտ
վաճառք՝ եղաք առաջի : Ի սմա կարեն առ ձեռն
պատրաստ գտանել իւրաքանչիւր փափագողք
զկարեորս հոգւոց և մարմինոյ :

Եւ մի ոք ասիցէ , թէ անթիւ են խրատական
գրեսնք սրբոց հարց կամ իմաստափրաց . մանա
ւանդ զի աստուածաշունչ մատեանն ամենայն
ուրեք անմոլոր ուղեցոյց է ցանկացողաց ճանա
պարհին բարեաց : Բայց զի՞նչ , միթէ անդէպ
ի՞նչ իցէ զմի և զնոյն օդաւակոր դեղ զանաղան

եղանակու մասուցանել ակարաց , ոմանց գառնահամ՝ և սմանց քաղցրահամ . զի ոմն զայն և ոմն զայն ախորժէ առնուլ :

Նա՝ զի որ ինչ ՚ի սմա է՝ գտանի այն ՚ի բազում գրեանս , այլ ցրիւ , կամ մթին ոճիւ . իսկ աստ որպէս ՚ի վճիա հայելոջ երեխն միանգամյն սպարդ և մեկին : Յոր եթէ ոք յառաքինեաց հայեսցի , տեսեալ ՚ի սմա զգեղեցկութիւն տուաքինութեան՝ որով զարդարեալէ , զուարձացեալ յնծայ ՚ի հոգի : Իսկ եթէ ՚ի մոլեաց ոք իցէ , դիւրաւ նշմարէ ՚ի սմա զարատ և զբիծ չարաչար վարուց իւրոց . և բազդատեալ զանարգն ընդպատուականին , ջանայ մաքրել յանձնէ զբիծ չորեաց :

Ապաքէն տեսանես յընթացս մատենիս , զի բակը խրառաւց որք ՚ի մի և ՚ի նոյն նիւթ վերաբերին , ՚ի բազում սպարբերութիւնս տրոհեալ՝ հատաւածօրէն առաջի դնին իբրև զատ ածս նտինեաց , որ պէս զի սպարդ և մեկն ցուցցի իմաստ բանիցն , և դիւրընկալ մոտաց վերծանողաց :

Որով յուսումք շնորհօք ուետոն , թէ բազումք ընթերցանութեամք սորին քաղեսցին օգուտ անձանց , և վառեալ ՚ի սէր նազելի գեղաց առաքին նութեան՝ զարդարեսցին գործալք բարութեան : Օք որպէս մարդս անձնիշխան կամօք սպատիեր է Աստուծոյ , լիցի և բարսյական առաքինութեամք համաձայն կամացն Աստուծոյ , որով վերանայցէ ՚ի նմանութիւն Աստուծոյ . որպէս զի ընկալցի զարդիւնս վաստակոց առաքինութեան՝ զերանական փառս , զոր խոստացաւ Աստուծոյ սիրելեաց իւրոց :

Եւ ահա սովորն մոօք փոյթ յանձին կալաք աշ
խառասիրել՝ ի յօրինուածս մատենիս, յուսալով
յառաս ողօրմութիւնն Արտուծոյ, թէ ոչ թողու
և զմեզ անմասն ՚ի վարձուց . ըստ այնմ, “ Որ
գարձուսցէ զմեղաւորն ՚ի մոլորութեան ճանա-
պարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ՚ի մահուա-
նէ, և ծածկեսցէ զբաղմութիւն մեղաց ” . Յակ .
Ե . 20 :

Ապաքէն մեծաւ սիրով և ակնածութեամբ
մատուցանեմ հայրենի ազգիս իմաց զայս գոյզն
նուեր՝ իբրև նախընծայ երեխայրի, ՚ի փառս
Արտուծոյ :

Եւ համ վասն յեր միշտ աղօթարաբ
ծառաց ծառայիշն Ասպուծոյ՝ Պօղոս
արքեպիսկոպոս Անդրեանուալուեցի,
նախին Պատրիարք Կոստանդնուպօլ-
սոյ, մաբան ուբոյ Անոնոյ
Երուսաղեմ :

Օ Գ Տ Ա Կ Ա Ր

Խ Պ Ա Տ Ե Մ Ո Ւ Թ Ե Վ Ի Ք

Խ Ե Ր Ա Ք Ա Ն Չ Է Ւ Բ Ա Ն Չ Ի Ն

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն



Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա Ռ Ա Ջ Ա Ռ Ո Ւ Դ

Ա. Յ թ Պ Ե Ս է զ ե կ ա վ ա ր ն ՚ի ն ա ւ ի , զ օ ր ա պ ե տ ն ՚ի զ օ ր ս ու , հ ո վ ի ւ ն ՚ի հ օ ա ի , և ա չ ք ն ՚ի գ ը լ ւ ի ս , ն ո յ ն ա պ է ս է և ա ռ ա ջ ն ո ր դ ն ՚ի ք ա ղ լ ո ր ի և յ ա ղ դ ի ի ւ ր ո ւ մ : Օ ՚ի ե թ է զ ե կ ա վ ա ր ն է ձ ա ր ա ր , կ ա ր է ն ա ւ ն ա ն ա վ ա ս ա ն գ հ ա ս ա ն ի լ ՚ի դ ի ս ե ա լ ն ա ւ ա հ ա ն գ ի ս ո ն ն : Ե ւ թ է զ օ ր ա պ ե տ ն է ք ա ջ , յ ա ղ թ ա կ ա ն հ ա ն դ ի ս ա ն ս ո ն զ օ ր ք ն ո ր ս ՚ի մ ա ր ս ո թ շ ն ա ս ե ա ց : Ե ւ թ է հ ո վ ի ւ ն է հ ս կ օ լ , հ օ ս ն ո ր ս ա ն շ ո ր թ ե լ ի ՚ի գ ա յ լ ո ց ա ր ա ծ ե ա լ ա լ ա ր ա ր ի ՚ի մ ա ր գ ո դ ա լ ա ր ի ս : Ե ւ թ է ա չ ք ն է պ ա յ ծ ա ս , բ ո լ ո ր մ ա ր մ ի ն ն լ ի ն ի լ ո ւ ս ա ւ ո ր : Ա յ ս պ է ս ե թ է ա ռ ա ջ ն ո ր դ ն ի ց է ա ր ժ ա ն ո ւ ո ր , հ ա ս ա ր ա կ ո ւ թ ի ւ ն ն ո ղ ջ ո յ ն վ ա յ ե լ է յ ե ր ջ ա ն կ ո ւ թ ե ա ն :

Բ . ՚ Ե ս է ա ր ժ ա ն ի ա ռ ա ջ ն ո ր դ ո ւ թ ե ա ն , ո ր ք ա ջ ա ն ի օ թ է ժ ո ղ ս վ ր դ ե ա ն , և հ ր ա ժ ա ր ի ՚ի լ ի-

նելոյ առաջնորդ , զի որ զանձն ընծայեցուցանէ , և ցանկայ իշխանութեան , ոչ ճանաչէ թէ զի՞նչ է լինել առաջնորդ բազմաց . և ոչ կարէ ըստ լ զպարտաւորութիւն իւր : Բայց և ժողովուրդն զայնպիսին պարտի ըստրել որ իցէ իմաստուն և բարեջան : Վասն զի երկու շնորհք հարկաւոր են առաջնորդին , խոհեմութիւն՝ 'ի սահմանեն զօրէնս օգտակարս , և ջանք՝ 'ի գործ դնել զօրէնսն :

Դ . Կարեւոր է առաջնորդին գիտել զեղանակն բարութք կառավարութեան , թէ 'ի ժամանակս խաղաղութեան , և թէ 'ի ժամանակս խոռովութեան . զի այլ է կերպն կառավարութեան 'ի խաղաղութեան ժամանակի , և այլ՝ 'ի խոռովութեան . և եթէ յերկոսին վիճակն միօրինակ վարեսցի , չէ նա խոհական և կատարեալ :

Ե . Պարա է առաջնորդին զգոյշ լինել յամենայնի , վասն զի ամենայն մարդիկ անթարթ աջօք գիտեն զօրհանապաղ , զի դասեսցեն զնա , չեն տեղեակ վիճակին յորում գտանի նա , և ոչ զգան զգժուարութիւնսն զօրս կրէ . այլ խնդրեն տեսանել 'ի նմա զկատարելութիւնս՝ որ 'ի վեր է քան զմարդկային կարողութիւն :

Յ . Առաջնորդք և իշխանք առաւել պարտին հոգածու լինել մանկանց հասարակութեան քան զծնօղս նոցա , ջանացեալ վարժել զգեւաբոյս մանկունս բաղադին՝ կամ ազգին , յուսումն գիտութեան և բարի վարուց , և հարկաւոր արհեատից : Օ, ի մանկունք՝ որք 'ի թարմագոյն հասակի սովորին լինել ուսումնատեաց , կամ անգործ , կամ չարաբարոյ , դժուարին է յոյժ 'ի

զարգանալ տիսցն՝ գտանիլ ուստ մնասէր , ժրաւ
ջնն , և բարեբարոյ :

Զ . Առաջնորդք միայն ուստցանել
ժողովրդեան արհամօրհել զտանջանս և զմահ
վտանձշմարիս հաւատոց . հեռի կալնի փափկութենէ , և յապերախտութենէ . ժիր և անձանձիր
լինել յաշխատանս . ձանաչել զերախտիս բարեբարին . և սիրել զաղդն և զհայրենին :

Է . Առաջնորդն՝ որ սիրէ միայն զմեծարանս և
զօգուտ և զդիւրութիւն անձին իւրոյ , չկարէ
լինել սիրելի ժողովրդեան . վասն զի օգուտն հասարակաց առաջին է դասելի՝ քան զօգուտ և ըդ
դիւրութիւն անձին : Վասն որոյ ոչ կարեն անքարակաց առաջին նոքա , որք վասն հանգիստ և հանգարակաց կաւալ կեանս վարելց՝ հրաժեշտ տան ՚ի բաւանաց զծանրութիւն կաւալսրութեան հասարակաց :
Չեն անքասիր և նոքա՝ որք ցանկան լինել կաւալ վարիչ , և հնարս հնարեն յափշտակել զայն քաղցր պատուո :

Առաջնորդն՝ եթէ միայն ՚ի հաճոյս և յօգուտ
իւր վարէ զիշխանութիւնն , է անիրաւ բռնաւոր .
իսկ եթէ ըստ իրաւանց և յօգուտ հասարակաց
վարէ , է նու հայր գթած , և արժանի առաջնորդութեան :

Ը . Առաջնորդք պարախն ունել սրոշեալ ժամանակ լսել հպատակաց իւրեանց , որք ունին բռ
զոք առ նու , կամ լուր ինչ հասուցանել : Ինդունել պարտ է և զեկս և զպանդուխտ , և խօսակից ընդնոսա լինել , և տեղեկանալ սովորութեան
հեռաւոր ազանց , յօրոց մարթ է ուսանել զօրենս

ինչ՝ որ իցէ օդտակար ժողովրդեան իւրոյ :

Թ. Առաջնորդք կարեկցութեան ևն արժանի առաւելքան զայլս՝ քան թէ դատողութեան . զի զգածեալ գոլով մարդկային տկարութեամբ՝ ան կեալ են ՚ի ներքյա անտանելի ծանրութեան : Օ ի պարտաւորեալ են կառավարել զբազմութիւն ժողովրդեան, և բարիս առնել նոցա, և հագալ միշտ զոլէաս՝ որոց կարօտին . և զի բազում են պիտոյքն, բազում աշխատաւթիւնս կըեն՝ որք կամին բարւոք կառավարել :

Ժ. Առաջնորդն՝ եթէ տեսանէ զպակասութիւն գործակալաց իւրոց ՚ի պաշտամունս իւրեանց, պարտէ նմա յորդորական բանիւք յայտնել զպակասութիւնս նոցա, և իրաւունս պահանջել առանց վրդովման . եթէ այսու ուղղեսցին, յուսալի է հաւատարմութեան նոցին . ապա թէ ոչ պարտէ զգուշանալ ՚ի նոցանէ, զի մի վիսասեսցի :

Ժն. Առաջնորդ ոք՝ թէ և իցէ բարեկարգ, գոնէ սխալի երբեմն իբրև զմնորդ . և արդարե գովութեան լինի ժառանգաւոր, եթէ ունկնդիր եղեալ խրառուց՝ ջանայ ճանաչել զպակասութիւն իւր, և ուղղել զանձն : Նշան ուղղութեան է խոստովանին զպակասութիւն անձին, և տանիլ ծանր խրառուց իմաստուն բարեկամաց :

ԺԲ. Որ ոչ է առաջնորդ, ոչ գիտէ տակաւին թէ զի՞նչ է առաջնորդելն բազմաց, վասն որոյ համարձակաբար դատի զառաջնորդն, թէ յայս և ՚ի սոյն իցէ սխալեալ . բայց մինչ սյնպիսւոյն դէսլ լինի հասանիլ յիշխանութիւն առաջնորդական, առաւել ևս սխալի, և դատի յայլոց :

ԺԴ. Առսկտկան մարդ՝ կտրծէ զանձնէ թէ ըստացեալ իցէ դքաջ հմութիւն ամենայն հանգամանաց կտռավարութեան տռառելքան զամենեսին, և համարի թէ ինքն ոչ սխալէր՝ եթէ լինէր տեսուչ, բայց ոչ գիտէ՝ թէ իշխանութիւն կտռավարութեան նուածէ զմիսս, և ըստ մեծութեան իշխանութեան՝ մեծամեծ երեխն ՚ի նմափոք սխալանիք :

ԺԴ. Չարք՝ երբեմն կարծելով չարիս հասուցանելքարի կտռավարչոց իւրեանց, զբարտութեամբ ամբաստանեն զնոցանէ, և տան վարելյուարութիւն, բայց այսու առնեն մեծ քարիս, զի նոքա զերծանին ՚ի բազմատագնապ հոգոց կառավարութեան հասարակաց, և գտանեն զհանգիստ և զանգքաղ կեանս :

ԺԵ. Առաջնորդք սւնին պարաւաւորութիւն երկար խուզովութեամբ քննել զվէճն ՚ի դատաստանի, և հասու լինել իրացն ճշմարտութեան . զի ոչ ամենայն ամբաստանեալէ յանցաւոր, և ոչ ևս կարծիք յանցանացն կարէ տոնել զոք արժոնի դատապարտութեան՝ ըստ բազոքելոյ դատախաղից :

ԺԶ. Առաջնորդն է պահապան օրինաց, և օրինակ քարի հասարակաց . ուստի պարաւաւոր գտանի դատաստանի վասն մեղաց ժողովրեան, եթէ զանց տոնէ ՚ի պատուհանելոյ զյանցաւօրս օրինաց, և կամ անիրաւութեամբ՝ ագահութեամբ՝ և սնափառութեամբ իւրով լինի չարօրինակ այլոց, և պատճառս տաց գոյթակզութեան և մեղանչելոյ նոցա :

ԺԵ. Արչափ ոք նախամեծար քան զայլս գտաւնի, ոյնչափ առաւել քան զայլս բարեկարդ լինել պարտի : Փոքր յանցաներ առաջնորդին՝ պատճառ ուեն զմեծ չարիս ՚ի ժողովուրդն, որ երբեմն ձգի ՚ի բազում դարս : Ճաղովուրդք աշոլուրջ են ՚ի տեսանել զիսքը պակասութիւնու առաջնորդին՝ քան զմեծամեծ առաքինութիւնս նորա . և առաւել զգան զսակաւ վեասն զոր կրեն ՚ի նմանէ՝ քան զբազում օգուտա զոր ստանան նովաւ :

ԺԹ. Առաջնորդք արքանի լինին պատճոյ, յորժամ տան զիտուավարութիւն իւրեանց ՚ի ձեռս անարժանից, որք չարիս հասուցանեն հասարակութեան : Օ, ի թէ և ինքեանիք անհազորդ իցեն վնասուն, բայց քանզի ոչ փայթ ունին քննել և գտանել զարժանաւորն, և նմին յանձնել զգործակալութիւնն, վասն որս իրաւամբք պահանջի ՚ի նոցանէ դատաստանն :

Առաջնորդն՝ եթէ կամի առնել զոր գործակալ, պարտ է յառաջադայն կացուցանել զետ ՚ի պաշտօն ստորին, փորձել զգործունէութիւն նորա և զհաւատարմութիւն . լրտեսել զառանձնական վարս նորա, յաճախ խօսակից լինել ընդնմա, հարցանել ՚ի ծածուկ, և ուստանիլ ՚ի նոցանէ որք լնասանեբար վարին ընդ նմա, թէ զբնչ յաւէտ ախորժելի է նմա, որոց առաւել հաւանի, զորս բնաւորաբար սիրէ, առ որս ասելութեամբ բերի . և յետ տեղեկանալոյ ամենայն հանգամանց նորա, ապա կարգել ՚ի դործակալութիւն բարձրագոյն աստիճանի :

ԺԹ. Առաջնորդն՝ եթէ բռնադատիցի զչար ոք

Կ պաշտօն ինչ կարդել, պահեսցէ զնա միշտ ՚ի ստորին կարգի . և զգաց լիցի յամենայնի , զի մի ելանիցէ ՚ի բարձրագայն պաշտօն , և մի գաղտնի և ներքին խորհրդոց լինիցի իրազեկ : Եւ ևս արժան է հայիլ , զի եթէ սակաւ առ սակաւ յուղ զութիւն ոչ եկեսցէ , հնարիւք իմն ՚ի գործակա լութենէն ՚ի բաց հանիցէ : Բայց պարս է խոհ հեմութեամբ վարիլ , զի մի աղմուկ ինչ վերերեւ եսցի . զի եթէ չէ հնար զչարն առ օրին ՚ի բաց հանել , արժան է միշտ մտադիր լինել դիսողա գոյն առթի ՚ի միջոց բառնալ :

Ի Արաջնորդք՝ ՚ի կարդել իւրեանց զայր բարի և գործունեաց ՚ի պաշտօն ինչ և ՚ի գործակալութիւն , արժան է այնուհետև աներկմիտ սրտիւ հաւատալ նմա . զի արք առաքինիք կամին ուղ զութեամբ ստանալ զհամբաւ բարի՝ քան զդանձտ սկւոյ : Բայց պարս է ՚ի չափու իւրաւմ պահել , և ոչ տալ նմա տարապայման համարձակութիւն . զի այնպիսին որ կարէք մնալ միշտ առաքինի և հաւատարիմ , գուցէ անկուպար իշխանութեն կարի համարձակեալ արտօքոյ ելցէ յուղզութենէ :

Ին . Փառք և խաղաղութիւն անբաժ լծորդ են ուղղութեան և հաւատարմութեան . վասն որոյ մինչ պակասի յառաջնորդէն ուղղութիւն կամ հաւատարմութիւն , բառնի փառք և խաղաղութիւն ՚ի ժողովրդենէ , և փոխանակէ անարդութիւն և խռովութիւն :

Ին . Բազում հաւատարապատիւ մարդիկ չկարեն անօրինել զօրէնս վաղեմիս , կամ դնել զնորս , մինչև ոչ գոցի ՚ի նոսա գլխաւոր ոք , որ ունիցի

բաւական իշխանութիւն ՚ի վճռել և ՚ի ստհման
նել զօրէնս . զի իւրաքանչիւր ոք ՚ի համապատիւ
անձանց պնդէ զիւր դատումն հաստատել , յորմէ
ծնանի հակառակութիւն և խուվութիւն :

Ի՞ . Ոչ է պարտ առաջնորդին առանց ձիշդ
և երկար քննութեան շտապաւ հատանել վճիռ
՚ի դատաստանի , զի չարք բազում են յամենայն
ուրեք , և խորամանկ հնարիւք խարեն զանգդոյշ
դատաւորս՝ և մոլորեցուցանեն . այլ պարտ է նմա
երկուց հակառակ կողմանց ունկն մատուցանել ,
և ասկա վճռել : Առաջնորդ ոք կամ իշխան՝ պար-
տի լսել ամենեցուն , բայց հաւատալ սակաւուց :

Ի՞ . Առաջնորդին կարգեալ է բառնալ զծան-
րութիւն կառավարութեան ժողովրդոյց՝ որպէս
հովիւ մի հօտին , և հայր ընտանեաց . և այս ոչ
է նմա վատարախոսութիւն՝ այլ երջանկութիւն :
Զի յինքեան ցուցանէ զնմանութիւնն Աստուծոյ՝
պատժելով զչարս , և վարձասրելով զբարիս , և
զամենեսին յորդորելով ՚ի կատարել զօրէնս Աս-
տուծոյ : Ապա բաւական փառք են նմա լինել
պահապան օրինայն Աստուծոյ , և բաւական միսի
թարսութիւն՝ վարձքն յաւիաենական կենաց , որ
պատրաստեալ է յԱստուծոյ փոխանակ աշխա-
տութեան նորա :

Ի՞ . Առաջնորդ ոք՝ եթէ ցանկայ զարս իմաս-
տունս և առաքինիս բազմացուցանել , պարտ է
նմա զայնալիսի արս որչափ և սակաւ իցեն՝ ունել
՚ի պատուի , և օրինակօք նոցին յորդորել զբա-
զումն յուսումն գիտութեան , և ՚ի կրթութիւն
առաքինութեան . և որք յառաջանան ՚ի նոցանէ

՚ի բարելաւութիւն և յիմաստութիւն՝ յարգել
զնոսա, և կարգել ՚ի պաշտօն ինչ. որպէս զի տե-
սեալ և այլոց բաղմաց զմեծարանս նոցա, գուն
դործեցեն լինել նմանող, զի ստացին զպատիւ։
Քանզի գտանին բազումք՝ որք այժմ՝ զուրկ են ՚ի
գիտութենէ. և յառաքինութենէ. և մարթ էր
նոցա լինել իմաստուն և բարի, եթէ լեալ էր
յոյս և ակնկալութիւն պատույ:

ՏԶ. Որ կարգեալէ տեսուչ հասարակութեան,
պարտ է լինել համբերող և երկայնամբու, զի լի-
նիցի տէր անձին իւրոյ, և ապա անձանց այլոց։
Վասն զի անհամբերութիւնն ոչ եթէ զօրութիւն
ինչ է հոգւոյ, այնու զի վազվազէ առ վախճան
իրին, այլ է տկարութիւն, զի ոչ կարէ տոկ ու-
նել վատաց։

Որ ոչ գիտէ սպասել և համբերել, նման է
այնմ՝ որ ոչ գիտէ լոել և պահել զխորհուրդ-
իւր. և երկրուեան ողբայ յառաջ գտն ՚ի տկարու-
թենէ, որով չկարէ զուսպ ունել զանձն։

Օ ՚ի զօր օրինակ՝ որ արշաւէ սրբնթաց կառօք,
և չունի բաւական զօրութիւն ըստ պիտելոյ դա-
դարեցուցանել, գահամբէժ կործանի ՚ի վիհո. այս-
պէս և անհամբերն՝ ոչ կարելով զիսյ առնուլ, ան-
կանի ՚ի դուքն թշուտուութեան։

Օ ՚ի ոչ սպասէ երբէք, և ոչ գիտէ չափել
զժամանակն. այլ բուռն առնէ զամենայն ինչ ծա-
ռայեցուցանել ՚ի հաճոյս իւր։ Յէկանէ զոստու՝
՚ի ժողովել զպտուղ յառաջ քան զհտունակիլ
նոցա. խորտակէ զդրունս, և ոչ սպասէ զի բաց-
ցի. կամի ինքն հնձել, մինչդեռ այլք սերմանեն։

Օք զոր ինչ առնե՞լ կարճմտութեամբ շտապէ .
ոչ գիտէ ժումել և մնալ դիպողութեան ժամանակի . և որքան մեծ է իշխանութիւն իւր , այնքան մեծ լինի և վեսան իւր :

Իւ . Վասնորդ ազգի ուրուք՝ կամ իշխան ոք ժողովրդեան՝ եթէ հայեսցի ընդ վիշտու կառավարութեան և ընդ ապերախտութիւն մարդկան , դժբաղդութիւն անձին համարի լինել իւր առաջնորդ կամ իշխան : Վայց պարտէ նմա գիտել թէ մարդիկ լինին ապերախտք , սակայն չէ արժան վասն այնորիկ ՚ի բաց հրաժարիլ ՚ի բարերարութեանէ . ոյլ հարկ է ամենայն իրօք խնամել և շահել զազդ և զժողովաւրդ իւր բարի օրինակօք , ոչ այնքան վասն սիրոյ նոցա՝ որքան վասն սիրոյն Վատուծոյ . զի ոչ կորնչի բարերարութիւն , զոր առնել ոք այլց ՚ի փառս Վատուծոյ :

Վա և եթէ ապերախտք բազումք իցեն , գըտանին և երախտագէտք ոմանք , որք Ճանաչեն զերախտիս և զբարերարութիւնս , և սիրեն զերախտաւորն : Եւ հասարակութիւնն թէպէտ և փոփոխամիտ իցէ առ ՚ի լինել երախտագէտ , բայց ոչ իսպատ մնոյ երախտամուաց . զի կանուխ կամ անադան առնել դատաստան վասն Ճշմարիտ առաքինութեան , և Ճանաչէ զբարերարութիւնն :

Եւ քանզի ապերախտութիւնն առաւել յառաջ գայ ՚ի վատթարութեանէ բարուց , վասն որոյ պարտէ առաջնորդին կամ իշխանին ջանալ ՚ի բարեկարգել և ուղղել զբարս մարդկան , և առնել զնոսա առաքինի , հաւատարիմ , և երկիւզած Վատուծոյ . որպէս զի կարող լինիցին Ճանաչել զբար-

բերարն և զերանիստուորն իւրեանց, և սիրել զնաւ
Ուստի առնելով զհասարակութիւնն կատարեալ
բարի, առնել ինքեան զբազում բարի, և ոչ եր-
կընչի բնաւ յապերախտութենէ նոցա :

Վաս եթէ առաջնորդն կամ իշխանն իցէ ա-
նիրաւ և անհաւատարիմ, ոչ ինչ են զարմանք
թէ և ժողովուրդն լինիցի ապերախտ : Բայց եթէ
առաջնորդն կամ իշխանն իցէ բարի, և աշխատ
լինիցի օգտակար խրառուք՝ և բարի օրինակօք
իւրովք վտրմել զհասարակութիւնն ՚ի բարի սո-
վորութիւնս, և ՚ի պահպանութիւնն օրինացն Եր-
տուծոյ, գտանէ և վայելէ զպտուդ աշխատու-
թեան իւրոյ յառաքինութիւնս հատարակու-
թեան. կամ գմնել վայելէ զայն յանձին իւրում
յառաքինութիւնս իւր :

Եթ. Երկիւզն հարկաւոր է, յորժամ սէրն պա-
կասի ՚ի ժողովրդենէն . բայց պիտոյ է ունիլ զայն
՚ի կառավարութեան միշտ ակամայ, որպէս զգեղ
ինչ առաւել աղդու և առաւել վտանգաւոր :

Իթ. Չէ ամօթ առաջնորդաց խոնարհիլ և
լինել երբեմն իբրև զակար՝ զի շահեացին զակարա .
քանզի և վարժապեան մինչ ոչ զիշանիցի և տոիցէ
ոյք, աշակերան ոչ կարէ ուսանիլ և ասել ոյք :

Ե. Ոչ ամենայն ձկունք միատեսակ խոյժիւ որ-
սացեալ լինին, և ոչ ամենայն մարդիկ միակերպ
խրառուք ՚ի բարին յորդորին . տալու ըստ ոյլիւ ոյլ
վիճակի և բնաւորութեան մարդկան՝ պարտ է
յարմարել զբան խրառուն :

ԱԱ. Տկարամիա համարի առաջնորդ ոք, որ
մինչ աեսանէ զժողովուրդն սնլուր խրառու իւ-

բում՝ յուստհատեալ յետո կասի ՚ի խրատելց ըկնոսա : ՚Քանզի պարտաւոր է բատ պաշտաման իւրում՝ սաստել յանդիմանել և միսիթարել ամենայն երկայնմասւթեամբ . ապա յետ այսր ամենայնի եթէ մնասցեն անուղղաց, ինքն առնու յլուտուծոյ զվարձս վաստակոց իւրոց : ՚Կայց բազում անգամ հայեցեալ Աստուծոյ ՚ի ջանս առաջնորդին, շնորհօք իւրովք շարժէ զկամս ժողովրդեան անսալ բանից խրատու նորա, և դատոնալ յուղղութիւն :

ԼԲ. Առաջնորդն և ժողովուրդ իւր այնպէս սիրեսցեն զմիմեանս, մինչեւ մնալ անորոշելի, թէ ո՞ առաւել սիրիցէ : ՚Քանզի պարտին ջանալ յաղթել միմեանց սիրով. առաջնորդն՝ վասն օգտի ժողովրդեանն, և ժողովուրդն՝ վասն դիւրութեան և խաղաղութեան առաջնորդին :

ԼԳ. Անխոհեմէ առաջնորդն, որ վասն միոյն սիրոյ՝ առելի լինի ամենեցուն, կամ վասն միոյն օգտի՝ զրկէ զամենեամին, կամ միոյն խորհրդոց անսարով՝ արհամարհէ զիսորհուրդս ամենեցուն :

ԼԴ. Ոեզանչէ առաջնորդն՝ եթէ պատուեսցէ զփարթամս և զիշխանաւորս, որք չիցեն օրինապահ, և անդոսնեսցէ զալքատս և զսոսկականս՝ որք պահիցեն զօրէնս, կամ պատմեսցէ զսոսկականս՝ որք ստունդանեն օրինաց, և անպատճարձակեսցէ զփարթամս՝ որք յանցանեն ընդ օրէնս : Օ ՚ի թշնամի արդարութեան է՝ որ անպատիք թողու լյանցաւորն, և անվարձ զանմեղին :

Չէ արժանի առաջնորդութեան ադահ ոք կամ սխակալ . զի ադահն վաճառէ զարդարու-

թիւնն ընդ արծաթմոյ , և սխակալն թիւրէ զիրաւ
ւունս վասն ատելութեան՝ զօր ունի ընդ ումեք :

16. Վեծապէս պատմել վասն սխակալութեան
զյանցաւոր ոք՝ որ միայն արժանի է կշտամբանաց
և սաստից , է անիրաւութիւն : Օ ի պատիմն է
սպասաւոր արդարութեան , և պարտ է միայն 'ի
նոյն պաշտօն ծառայեցուցանել . ապա թէ ոք ծա-
ռայեցուցանէ կրից իւրոց , է անիրաւ :

17. Չէ արժան 'ի ժամու սաստիկ բարկութեան
պատմել զյանցաւորն , այլ պարտ է թողուլ մին-
չե շիջտնիցի բորբոքումն սրտի . զի բարկութիւնն
խանդարէ զուզեղ մարդոյ , և տայ խօսել զան-
վայելս , և գործել զանիրաւութիւն :

18. Պարտ է առաջնորդին լինել քաղցր առ
ամենեսին . զօր կարէ առանձինն խրտուք շառ
հիլ , մի խրատեսցէ հրապարակաւ . և զօր կարէ
առնել սղորանօք , մի տրաոցէ սպասնալեօք . և
զօր կարէ ուղղել սպասնալեօք , մի 'ի գործ դիցէ
զպատիժ :

19. Եայց եթէ հարկաւոր իցէ պատմել , պարտի
վարիլ գթութեամբ՝ և ոչ ճիշդ արդարութեամբ ,
զի մի յանցաւորն փոխանակ ուղղելոյ՝ դարձցի 'ի
յանդդնութիւն . զի առաջնորդն ոչ է դահիճ
յանցաւորաց՝ այլ ուղղիչ :

20. Վոաջնորդ ոք՝ եթէ յամենայն գործս կա-
ռավորութեան խորհրդով այլոց վարի , է անխո-
հեմ , և անարժան առաջնորդութեան . խոկ եթէ
ոչ բնաւ ընդ այլոց խորհրդակցի , այլ զամենայն
ինչ գործէ միայն ըստ խորհրդոց կամաց իւրոց ,
է կամակոր և յանդուգն . այլ որ խոհական է և

արժանի կառավարութեան՝ խորհրդակցի ընդ իւմաստնոց և գլխաւորաց ժողովրդեան, և գործեզարժանն և զվայելուչն յօդուահարակութեան։

ԱՅ. Տեսուչ ոք ժողովրդեան՝ եթէ կամիցի համոզել զոք ՚ի գործադրութիւն օգտակար ինչ իրազութեան, պարտ է յառաջադայն խորհիլ, թէ իւիւիք հնար է յինքն յանկուցանել զկամս նորա, զի ոչ ամեներին են համաբարոյ, և ոչ միատեսակ բանիւք յորդորին ՚ի գործ։

Վանդի ոմանիք շարժին առ վայելչականն, որ պէս երիտասարդք. ոմանիք առ օգտակարն, որպէս կատարեալքն հաստիւա. և ոմանիք առ համբաւաւորն, որպէս ծերք. կէոք առ շահաւէան անձանց, որպէս արտահք. այլք առ փառաւորն, որ պէս փառասէրք. և այլք առ այլ ինչ առարկայ, որք ախորժելիք են բնաւորութեան իւրեանց. առ ողա գործ է ճանաշել զըտրս իւրաքանչիւր ումեք, որպէս զի կարասցէ ածել զմիսս նորա ՚ի հաւանութիւն, և ՚ի գործ շարժել զկամս նորա՝ զրի համովէ։ Կարեւոր է նկատել ևս զպարադայո ժամանակին, անձին, և գործողութեանն, ապա թէ ոչ մեայ գործն ամուլ, կամ թերի. և է ուրեք զի փոխանակ օգտութեանն՝ գտանի առիթ վիստու։

ԱՅ. Վզնիւ և քաղցրահամ է մեզը, բայց յահախ մասուցանել ՚ի կեր՝ առբերէ զատզակութիւն ՚ի սեղանաւոր. բանիք քարոզչն որչափ քաղցրալուր իցեն և ընտիր, եթէ ստէպ կրկնեաւցին ՚ի միում առենաբանութեան, կամ յաճախութեամբ բանից երկարածդեսցին, պատճառ են դժանձրութիւն ՚ի յունկուդիրս։

Վայ զի յառաւելութիւն բանից գժուարին է շոպրդիլ ակամայ վրիպանաց , կամ չխառնիլ անպիտան և աւելորդ զրուցաց ընդ պիտանիս և ընդ կարեւորս : Վայ պարու է զգուշանալ քարոզչին յերկարաբան ձառից , և շափով և կշռով խօսիլ . որպէս զի բանիք խրատու իւրոյ ախորժելի և աղքու լինիցի ունկնդրաց , և ինքն ընկալցի զպատիւ և զգովութիւն :

Վառաւելութիւն բանից ոչ է նշան իմաստնոյ՝ այլ տղիտի . քանզի ապէտք սովորաբար են շատաւ խօսք , և իմաստունք սակաւախոսք . բայց սյսու ամենայնիւ ունին զտատիւ և զմեծարանս , որպէս և տղէտ շատախօսք՝ զարհամարհանս :

Խ. Խշանիք աշխարհի կացուցանեն գործակալս , զի ոչ են կարող անձամբ միայն զհոգ ժողովրդեանն ըտոնալ . որպէս Վովսէս լստ խոհական խրատու Քոթորոց՝ կարգեաց զարս զօրաւորս , ասուուածաւ պաշտու , և արդարակորովս ՚ի մասնաւոր գործս կտու սովորութեան . Ելք . Ճ.Ը . 21:

Ուստի և առաջնորդք կարգեն զբահանայն՝ իբրև փոխանորդ և գործակալ ՚ի վերայ ժողովրդեան . զի ոչ կարեն զբազմութիւն ժողովրդեան անձամբ կառավարել որոց կարգեալ են ՚ի Տեառնէ համբաւ և դէտ : Վասն որոյ պարտին ամենայն արթնութեամբ քննել և իմանալ զվարս և զկաւ ռավարութիւնս քահանայից , զի մի արատ ինչ կամ պակասութիւն գտցի ՚ի նոսա . այլ յամենայնի լինիցին բարեկարգ և աստուածահաճոյ , որպէս պահանջէ պայմանն քահանայութեան . զի որովհետեւ քահանայքն են գործակալք առաջնորդին ,

ամենայն պակասութիւնն նոցա վերաբերի առ
առաջնորդն :

“Գոշը զօրո-լետամբ և մ' խնայեր . բարձրացա իբրւ
շիուլա զբարբառ չո . պատմեա ժողովրդեան իմում զմելա
նոցա ” . Եսայ . Ծ.Բ . 1 :

“ Իւս-ծին հովեւս զայշին իւրեանց , և զնաշին իմ ոչ
արածեին . այսպիս ասե Տեր Տեր . ահա-ասիի եւ ՚ի վերայ
հովուաց , և պահանջեցի զնաշին իմ ՚ի յեւաց բոցա ” .
Եզեկ . ԼԳ . 8 :

“ Օ գոյշ իայես անյանց և ամենայն հօպիւ , յորում եւ
զեղագին սուրբ աւսու-չո , հովուել զժողովրդ աւտուն ” .
Գործ . Խ . 28 :

“ Եւ նո եւ զոմանս առաքեալ . զոմանս ճարդարես ,
զոմանս աւելպարանիչս , զոմանս հովես և վարդապետս . ՚ի
հասպարութիւն սրբոց , ՚ի գործ պաշտաման , ՚ի շնորած
ճարմանյն քրիստոսի ” . Եփես . Գ . 11 :

“ Օ բինակ լենիջր հաւաքացելոց . բանիւս , գնացիւս ,
միրով , հաւաքովչ ” . Ա . Տիմ . Գ . 12 :

“ Բարոն պաշտօնեայ լենիջր քրիստոսի Յիսուսի . մա-
նիցիս բանիւս հաւաքոց , և բարոն վարդապետութեամբն ” .
Ա . Տիմ . Գ . 6 :

Հ/Խ 1922

ԵՎԵԼԻԱ, ԽԱՆՈՒՅՑ
ԱՅԱՍՏԵՎԱԿԱՆ ԱՆ

Ա. «Քահանայք՝ վասն զի հրեշտակ Տետոն
տմենակալի կոչին. Վաղաց. Բ. 7. վասն որոց պար-
տին զլարս հրեշտակաց ունել ըստ կարողութեան
մարդկան. զի թէ ծառայ և սպասաւոր Վատու-
ծոյ անուանիլ մեծ պատիւ է. քանի ևս առաւել
բարձրագոյն սրամիւ է կոչիլ հրեշտակ Տետոն ու
մենակալի. որ ոչ միայն զծառայութեանն սպասա-
հարկութիւնն. այլ և զմիջնորդութեանն պաշտօն
յինքն փակէ. զի քահանայն է միջնորդ ՚ի մէջ
Վատուծոյ և մարդկան»:

Դարձեալ քահանայն է այր աստուածատե-
սակ. զի թէ միայն Վատուծոյ է յատուկ քաւել
զմեզու. ահա զնայն առնէ և քահանայն զօրու-
թեամբ սուրբ կարգին. ըստ քանի Տետոն,
Յուն. Ի. 25.

Դարձեալ ՚ի խորհաւրդ սուրբ Պատարագին
քահանայն ձեռ օք շօշափէ զայն. որում հրեշտակը
ահիւ սպասաւորեն. ապա մոածնոցեն՝ թէ յոր-
պիսի գերազագոյն պատիւ վերացեալ կան. և ըստ
ոյնմ քաղաքավարեսցին. զի «որում շատ տուաւ»
շատ խնդրեսցի ՚ի նմանէ. և որում քաղում ա-
շանդեցաւ՝ առաւել ևս պահանջնոցեն ՚ի նմանէ ».
Դուշ. Ժ.Բ. 43:

Բ. «Դարձեալ յատուկ է միջնորդին սիրելի և
հաճոյ լինել այնմ առ որ բարեխօսէ. իսկ սիրել-
լութիւնն հիմնի ՚ի համակերպութեան. և զի

քահանայն է միջնորդ՝ ՚ի կողմանէ մարդոյ առ
Աստուած, ապա հարկաւ պահանջէ, զի իցէ նա
մարդ աստուածառեսակ, որպէս զի կարասցէ լի-
նել սիրելի Աստուածոյ՝ և բարեխօս ընդ մարդկան:

Գ. Ոչ ոք երկրայի թէ քահանային պարտ է
ունիլ ոչ միայն զտեղեկութիւն հին և նոր կուա-
կարանց, այլ և զհմութիւն իմաստափրական
գիտութեանց. քանզի առաջի կոյ նորս խրատել՝
ուստւցանել համոզել՝ ՚ի բարիս, և խորշեցուցա-
նել՝ ՚ի չարեաց զորս աշխարհիկս, յորոց բազումք
առատամիտ են և ուշիմ, հանձարեզք՝ ՚ի գիւտս
ձեռնարկութեանց, և զօրաւորք՝ ՚ի դարձուածս
քանից. Եթէ քահանային տկարացի յաղթել այն-
պիսեաց զօրաւոր վաստիւք, ոչ ևս աղդէ խրա-
տական բանք նորտ՝ ՚ի յամառ միտս նոցա, և դուցէ
հպարտացեալ խոպտու հետուցեն հոգեւոր խրա-
տուց, և տգիտութիւն քահանայից առիթ լիցի
կործանման նոցա: Վ ան որոյ պարտ է քահանային
ամենայն իրօք գերազանցիլ քան զամենեսեան,
որպէս՝ ՚ի որբութիւնս վարուց՝ նոյնպէս և յի-
մաստութիւնս:

Դ. ՚Քահանայ՝ որ անարի է՝ ՚ի հոգեւոր պաշ-
տաման իւրում՝ և անփոյթ զկարեւոր գիտութենէ,
ոչ միայն անպատիւ է յերկրի, այլ և արժանի պատ-
ժայ՝ ՚ի հանդերձեալն: ՚Օ՛ուլութիւնն՝ որ յաս-
տուածային պաշտօնեացս, և տգիտութիւնն՝ որ
յաշխարհականս են չար և արժանի նախատա-
նաց, ՚ի քահանայն՝ լինին ամենաչար, և անհնա-
րին անարգանք:

Ե. ՚Քահանայք՝ իբրև զարեգակն պարտին լու-

ասատ լինել խուարեալ մոռց , չեռուցիչ յրապելոց ՚ի սիրայն Վասուծոյ . ուստի Քրիստոս առաց առաքելոց . Դուք եք լցո աշխարհի : Վաղա եթէ սպակասութիւն ինչ գացի ՚ի բանս և ՚ի գործըս քահանացին , որպէս թէ՝ արեգակն հովանաց և մթագնի :

Ասրաքէն մինչ երկիրն միգագատ լինի կամ ազմաշաղախ , ոչ ումեք ինչ փոյթ է դիտել ընդ այն , զի առ ոսս կոյ . իսկ մինչ արեգակն կամ լուսին բնակմն պատճառաւ խուարի , ամենայն ոք ակնասպիշ լինի . զի են գոյացութիւնք վերամբ բարձեալք՝ զօրաւորք՝ և ներդործ ականք : Այնպէս ընդ չարաչար անկումն միոյ ուրաւք ժողովրդեան՝ ոչ ոք հայի , և ոչ ոք զարմանայ . բոցց ընդ փոքր մի գթելքահանային՝ աչք ամենեցուն ՚ի նա հային և զարմանան , և բոզումք եւս գոյթակղին :

Զ . Օ չարմանք են՝ թէ զիարդ ոմանք միջնորդ ՚ի մէջ արկանեն , աղաչանս մասուցանեն , կաշ շուս խասսանան , և ազգի ազգի սրուեսոս ՚ի գործ գնեն , զի ընկալցին զնեանադրութիւնն քահանացութեան : Գաւցէ սոքա ոչ գիտեն թէ զի՞նչ է լինելքահանայ , և կամ ոչ ձանաշեն զշափ անձին , և կամ միսյն զմարմնաւոր պիտոցից հոգան :

Եթէ ոչ ձանաշեն թէ զի՞նչ է լինելն քահանայ , ծանիցեն՝ թէ է լինել հրեշտակ երկնաւոր . լցո թափանցիկ , ոսկի ընտիր : Եթէ զշտի անձին ոչ ձանաշեն , փորձեսցեն զանձինս եթէ ունիցին զլարս հրեշտակաց , զլայս գիտութեան . և իցեն փորձեալ իբրև զոսկի ՚ի բովո համբերութեան . ապա թէ ոչ՝ Վասուծած մէր հուր ծափիչ է , ոյքի .

զլսաւ, զփայտ, զիսիւ, և զամենացն նիւթ կիզաւ-
նոււտ: Իսկ եթէ զաստեացս միայն խորհին՝ ան-
փոյթ եղեալ զհանդերձելց, ածցեն դմտաւ՝ թէ
կեանք կենցաղաց անցաւորէ և անտոի, և իրքե առ-
աջօք ինչ ստուեր նկատմամբ կենացն յաւ իտենից:

Երդ՝ զի՞նչ տացեն պատասխանի յահաւորն առ-
անի, յորմամ լուիցեն ՚ի Տեաւնէ. Ծնկեր՝ զիսարդ
մանը այսր՝ եթէ ոչ ունեիր հանդերձ հարանեաց:
Եւ զի եկեղեցին է տիպ և օրինտկ երկնաւոր հարու-
նարանին, ապա քահանայք՝ որք մտանեն ընդ նա-
իրքե բազմականք, պարտին ունել զհանդերձ մաշ-
քուր աստու ածահաճոյ տուարինութեան:

“Եյ պատուեր է իմ ու յեշ բահանացր. եթէ ու
ընկեց և ու ունին դնիցէ՛ ՚ի սրդի յերուած բալդառա անունն
իմում. առեւ Տեր ամենակալ առաւեցից ՚ի վերայ Յեր անեծու. .
Մաղ. Բ. 1.

“Օ եղբայրն այսուհետեւ աշակէմ . . . սրածեցէ՛ որ
՚ի յեշ հօրտ է Աստուծոյ. վերակայու լինել ՚ի իբրև ա-
խանոյ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ”. Ա. Պետ. Ե. 1:

“Եր բարու վերակայու լինել եղբայրն, կրին պա-
րագ արծանի եղբայրն”. Ա. Տիմ. Ե. 17:

ԴԱՅԱԽ ԵՐԵՌԻԴԻ

ՏԸՆԱԿ

Ա. Ո՞եծութիւն աշխարհի իբրև նաև հոյտ-
կապ անդագար ծփի ՚ի յորձանո ծովու . և որ ՚ի
նաւին է , կրէ զկառկած մահու , և ցանկաց ելա-
նել ՚ի ցամաք . իսկ որ ՚ի ցամաքի է , աեսեալ ՚ի
հեռուստ զգեղեցկութիւն նաւուն՝ ցանկաց մտա-
նել ՚ի նա , և ոչ զգաց՝ թէ քանի վասնգ կայ ա-
ռաջին մինչև մոցէ ՚ի նա , և քանի դառն վիշտա-
ռնի կրել մինչդեռ գտանիցի ՚ի նմա :

Օ արմանք են , զի ոմն փութայ ելանել ՚ի նա-
ւէն , և ոմն ձեռպէ ՚ի ներքս մտանել . զոր օրինակ
՚ի խուճապել և զեռալ ձկանց ըմբռնելց ՚ի ցան-
ցըս , կարծիցեն ձկունք որք արտաքսյ են՝ տօն ու-
րախութեան լինել անդ , և առ ցնծութեան կայ-
թել շոապեսցին և ինքեանք ՚ի ներքս մտանել :

Օ ի մինն փորձ առեալ տառապանց մեծու-
թեան , գուն գործէ ՚ի բաց հեռանալ . և միւսն
անփորձ տակաւին՝ ջանաց ՚ի մեծութիւն անդք
հասանել : Երանի այնմ՝ որ եմուտ յայս նաւ , և
ել անվեսա . և ևս երանի այնմ՝ որ ոչ երբէք ե-
մուտ ՚ի նա . բայց ո՞ կարէ զայս ճշմարտութիւն
հաւատարիմ տոնել այնոցիկ՝ որ գեռ կան ՚ի ցա-
մաքի , ոյսինքն չե ևս զփորձ տոին մեծութեան :

Բ . Ի խանդարիլ մասանց՝ խանդարի և բոլըրն ,
որպէս ՚ի խախտիլ հիմանն՝ խախտի և կործանի
շնուռածն որ ՚ի վերաց նորա է հաստատեալ : Իսկ
արդ՝ մարմին մարդոյ բաղկանաց ՚ի տարերաց իբրև

՚ի մասանց . և ցօրչափ տարեբըն են բարեկարգ , մարմինն կայ առողջ . բայց մինչ խանդարի բարեկարգութիւն նոցա , մարմինն տկարանայ , կամ հիւանդանայ , և կամ մեռանի :

Մարմին տէրութեան կամ ազգի բաղկանայ յօրինապահ իշխանէ , յաշխատասէր հապատակաց , յարդարութենէ իրաւանց , և ՚ի խաղաղութենէ սահմանակից ազանց . ապա մինչ ամբոխի բարեխառնութիւն սոցա , իշխանութիւնն այն կամ հասարակութիւնն ընկճի և նուռճի , կամ ՚ի վրտանդի կործանման լինի , և կամ կործանի խապառ :

Ա ասն որոց պարտ է իշխանին լինել օրինապահ , զի և սյլ ամենայն մասունք՝ յորոց բաղկանայ կամ հասատափի հասարակութիւնն , ՚ի բարեկարգութեան կացցեն , և սղջոյն մարմինն տէրութեան կամ ազգի մնացցէ զօրաւոր և հասատա : Ախալ մունք գործակալոց՝ աղաւազէ զհամբառ իշխանաց և առաջնորդաց :

Գ . Իշխան բարերար՝ է իրին արեգակն լուսավիսյլ . և որպէս անուոք և շամփաք ոչ ըստ արժանւոյն գիտեն զիենդանական զօրութիւնն և զշարկաւոր օգտակարութիւնն՝ զօր ներգործէ արեգակն ՚ի ձեւան ջերմութեան և լուսոյ ՚ի բոլոր բնութեան ընդհանուր տիեզերիս , նոյնպէս ոչ գիտէ ռամիկն որպէս արժան է գիտել զազգօգուտ արդիւնս և վրարերարութիւնս՝ զօր առնեիշխանն ՚ի բովանդակ հասարակութեան :

Բ այց պարտ է առն բարեսրափ ներել տկարամառութեան նոցա , և ոչ գժդմնիլ , զի եթէ վասն ոչ ձանաշելց նոցա զերախտիս իւր՝ դադարեսցի

՚ի բարերարելց , լինի նո իբրև զմի ՚ի հասարակ մարդկանէ , և որպէս թէ խաւարի արեգակն :

Այլ որպէս յայտ է փորձիւ , զի մինչ խաւարի արեգակն , ամենայն բազմութիւնն ընդ այն պըշնուն , և բազումք բազում ինչ զնմանէ գուշակն , սոյնավէս՝ յորժամ լու է իշխանն ՚ի բարիս առնելց , ամեներին վրդովին՝ և ՚ի պէսավէս միտո հարկանին , և անտեղի կարծեօք բազում ինչ ոյլ ընդ ոյլոյ խօսին :

Եւ որպէս արեգակն հարկաւոր օրինօք անգատար շարժի ՚ի լրումն պարաւարութեան իւրոյ , որ է օգուտն աշխարհի , թէ և ոչ ճանաշիցէ աշխարհ զերախտիս նորա . նոյնավէս և իշխանն՝ վասն զի ՚ի վերին խնամոց ամբարձեալ է ՚ի պատիւ գլխաւորութեան ազդին , ունի զպարաւառութիւնն բարերարելց , և ոչ երբէք դադարիլ թէ և շիցէ բաւական հասարակութիւնն լինել երախտագէտ :

Դ . Ա Երասմեսուչ ոք կամ իշխան՝ ոչ միոյն զիւրոց առանձնական առ աքինութեանց զվարձնն ունի ժառանգել , ոյլ և այնոցիկ՝ որոց բանիւ կամ գործով եղեալ է պատճառ բարեգործութեան : Ազա որ անկարգութեամբ վարի , ոչ մի ոյն զիւրոց ապիրատ գործոց ընդունի զպատիժ , ոյլ և որոց օրինակ չարեաց եղեւ զեղծ վարուք իւրովէ , կամ անհոգութեամբ իւրով թոյլ ետ նոցա գործել զչարիս :

Ե . Ա Կարկենական սխալումն գլխաւորաց ժողովրդեան վեսա մեծ գործէ բազմոց , և ձգի ՚ի բազումք գարս . ապա գիտելով նոցա թէ մարդիկ

են մսեղի , բազմավիճակ և դիւրաստն բնութեան վիճակեալ , ոչ պարտին վաղվազակի օրոշել զիմն . այլ արթուն մտօք կշռել և խուզարկել , և յետ այնորիկ վճիռ հատանել , զի եթէ միանգամ սխալ եսցին ՚ի դատաստանի , թէ և բազում անգամ զջաւացին , ոչ յետո դառնան սխալմունք նոցա :

Զ . Դործ բարի և գործ չար՝ մեծաստանն և սոսկականին , ոքք թէպէտ նոյն իցեն ըստ իրաւ կութեան , այլ չեն նոյն ըստ արժովութեան , վասն որոյ և ոչ համաչափ են փախարինութիւնք :

Վագագէն զնոյն բարին՝ զար առնէ մեծաստուն ոք և սոսկական , սրալէս եթէ երկաքանչիւր տայցեն ողորմութիւն դահեկանս հարիւր , սոսկականն առ առելու արդեամբք յայնմ՝ քան զմեծաստունն , վասն որոյ և առաւելու վարձք նորաւ : Եւ զարն՝ զոր առնեն երկաքանչիւր , սրալէս եթէ զրկէին զորքն , և առնուին դահեկանս հարիւր , մեծաստունն առաւելու յանցաւորութեամբ յայնմ քան զսոսկականն , վասն որոյ և առաւելու պատիւ նորու : Օքի արդիւնք կամ յանցաւորութիւն բարի կամ չար գործոց՝ ոչ միոյն չափին յէակութենէ գործոցն , այլ և յատիճանէ գործողին :

Վար յաւետ զգոյշ լիցին մեծաստունք չառնել զգործ ապիրատ զի սոսկական ոք արարեալ զայն՝ լինի չար . իսկ մեծաստունն՝ չարագոյն , վասն որոյ և ծանրագոյն պատոյ արժանի :

Ե . Գլխաւորքն ժողովրդեանն են պատճառ բարեկարգութեան , կամ անկարգութեան ազգին . զի կենցազավարութիւնք , շարժմունք , ըղքեաոք , և զարդք նոցա՝ են իրեւ վարժարանք

Հասարակութեան, զի զոր ինչ տեսանեն առ նոսա
համեստ կամ անհամեստ, զնոյն ուսանին առնել:
Ուստի և իշխանաւորք՝ որպէս հաղորդակից են
առաքինութեան կամ մոլութեան ազգի իւրեանց,
նոյնպէս և փոխարինական վարձուց կամ պատճոց:

Ե. Որպէս չէ հնար կը ել զպատիւ համաշափ
աշխատութեան հայրենասէր իշխանաց, որք տքնին
վասն օգտի սեպհական ազգի իւրեանց. նոյնպէս
չէ հնար կը ել զանարդանս զուգաշափ վնասու
զանցառութեան նոցա, որք կարող են նպաստել,
և պատճառանօք իմն յետս կան, և ոչ ջանան առնել:
Կան է կործանման քաղաքի կամ ազգի, յորժամ
գլխաւորք ոչ խորհին զբարեկարգութենէ նորա,
այլ միայն զդիւրութենէ անձանց իւրեանց:

Թ. Որ կարող էր արգելու զվիաս կամ զանար-
դանս ազգին իւրոյ, և զանցառութեամբ իւրով
եթող վնասիլ կամ անարդիլ, հարկաւ վնասի կամ
անարդի և ինքն ընդ ազգին իւրոյ. զի յապականիլ
բոլորին, ապականի և մասն նորա:

Ժ. Կառավարիչ ոք ազգի կամ ժողովրդեան
եթէ իցէ ցոփակեաց և հեշտասէր, ՚ի հարկէ լինի
և զրկող. քանզի քաջ գիտէ՝ թէ մեզկ և հեշտա-
սէր բարոյիւրն տտելի է հասարակութեան, զըր-
կանօք ջանայ մթերել գանձս, զի գոնէ նովաւ կա-
րասցէ կալ յիշխանութեան իւրում:

Իսց այսու առաւել ևս սխալէ. զի տրտունջ
և քրթմինջիւն որպէս կայծ ինչ անկեալ ՚ի խորիւս
փշոց՝ գաղտնի վառի ՚ի ժողովրդեան, և օր քան
զօր ճարտկեալ և տարածեալ՝ յարուցանէ զհրդեհ
տպատամբութեան :

Իսկ որ զրկանօք ժողովեաց զինչո՝ բռնալիք ցըռւէ առ ՚ի նուաճէլ զժողովուրդն, բայց շահի և ոչ ինչ . զի գանձքն սպառին, և ապստամբքն բազմանան, և գրոհ տուեալ յաւուր միում՝ զրկեն յիշխանութենէ զզրկողն իւրեանց :

Վպա կառավարքն լինիցին բարեկարգ, զի վայեւ լեացեն յիշխանութեան իւրեանց . իսկ եթէ լինիցին զրկող, կորուստ և ապականութիւն մերձէ առ գուրս նոցա :

Ժն . Ծաւէտ կարեւոր է իշխանաց հարստացուցանել զորդիս իւրեանց իմաստութեամբ և առաքինութեամբ՝ քան մեծագանձ Ճոխութեամբ, քանզի հանդերձեալ են նորա իշխան և հրամանատար լինել ժողովրդեան . և որ ոչ գիտէ իշխել կրից իւրոց՝ չկարէ լինել իշխան այլոց :

Ժն . Ծազումք յորդւոց իշխանաց են մոլի, և անարժան իշխանութեան, զի ՚ի կենդանութեան հօր իւրեանց սնեալ են ՚ի մէջ փափիկութեան և ամբարտաւանութեան . վասն որոյ մինչ սկսանին իշխել, համարին զմարդիկ թէ ծնեալ են ՚ի ծառայել ինքեանց, և ինքեանք ոչ իցեն ՚ի բնութենէ հասարակ մարդկան : Ուստի ոչ յայլ ինչ պարապին՝ քան թէ գտանել զնորսանոր փափիկութիւնս . վասնեն զգանձս հայրենի, և տանջեն զհպատակս իւրեանց ՚ի կեղեքել զինչո նոցա :

Վքհամարհեն զլսրատս ծերոց և իմաստնոց, և անսան հասակակցաց իւրեանց շոգմոգ երիտասարդաց յօրմէ զհետ գայ անհնազանդութիւն ժողովրդեան, և կործանումն իշխանութեան :

Խցանել արժան է զականջո նոցա իսպառ, կամ

հրացեալ շամփրով բանալ, որք ոչ լսեն հոգեշահ
բանից իմտստուն խրառաստուաց, այլ միայն հո-
գեկորուստ համոզանաց օգտախնդիր շողոքորթաց։
ԺԴ. Ո՞ւծատուն ոք մոլեալ զհետ մարմնական
հաճութեան՝ որչափ և ջանայցէ հեռի լինել՝ ի
տրտմութենէ, այնքան առաւել հուպ մատչի առ-
տրտմաբեր կիրս։ զի չկը յաշխարհի ուրախու-
թիւն ինչ մարմնական, որ կարիցէ անմասն լինել
ի տրտմութենէ։

Խոկ այր առաքինի՝ թէ և չունիցի զկորեոր
պիտոյս մարմնական, ունի առակաւին զերկնային
իմն ուրախութիւն, և զքաղցրութիւն՝ ի հոգին,
որով միշտ միսիթարի և բերկրի։

ԺԴ. Ո՞ւծատուն ոք եթէ իցէ տգէտ՝ է պա-
տիժ հասարակութեան. զի տգէտն է իբրև կոյր
ոք, և մեծութիւնն է իբրև սուր ՚ի ձեռո նորա։
և որպէս կոյրն առեալ զուր՝ անխափի հարկանէ
զքարեկամն և զթշնամիս, սոյնպէս և մեծատուն
տգէտ խանդարէ զամենայն բարեկարգութիւնս
ժողովրդեան։

Ուստի եթէ բարկասցի Առառած քաղաքի
իմիք կամ ազգի, թողու իմաստնոց լինել ազքատ,
և տգիտաց փարթամ։ Քանզի տգէտն եթէ իցէ
փարթամ, կամ խնդրէ լինել իշխան՝ կամ խոր-
հըրդակից իշխանի. և զի՞նչ օգուտ ստացի ժո-
ղովուրդն յայնմանէ, որ ոչ ճանաչէ զօդուտն և
զվեաս։

Եպա պարա է խնդրել՝ ի ջեառնէ, զի կամ
փարթամք իմաստասիրեցեն, կամ իմաստունք
փարթամասցին, որպէս զի հասարակութիւն աղ-

գին այնորիկ՝ ունիցի զերջանիկ կեանս և զբարօշութիւնս :

ԺԵ. Ուժատունք և աղքատք հաւասարապէս պարտին պահել զօրէնս և զահմանադրութիւնս, որք միապէս հային առ երկոսինն . ապա եթէ այլ ըսլութիւն ինչ լիցի ՚ի պահպանութեան օրինաց, անդէն վրովի խաղաղութիւնն :

Օ. ի մեծատունն ոչ պահելավ ընդ աղքատին, համարի զանձն գերագոյն քան զմարդ, և հպարտացեալ արհամարհէ զայլ . և աղքատն տեսեալ զի մեծատունն ոչ պահել զօրէնս հասարակաց, արտնչէ և վհատի զանձնէ :

Ուստի եթէ մեծատունք և աղքատք միապէս պահեսցեն, երկորին ևս առնուն գլարձս . ապա եթէ մեծատունք խզեսցեն զոստայն օրինաց, որ խալին մեծատին, և պարտաւոր գտանին դատաստանի, զի լինին ամբոխիչ եկեղեցւոյ, և օրինակ չարեաց այլոց :

Ժ. Զթէ ոք ՚ի ստորին կարգէ բարձրանաց յիշխանութիւն և ՚ի պատիւ, արհամարհեն զնատղնուականիք, խնդրեն զանկումն նորա հաւասարք, և նախանձաբեկ լինին նուաստք . ապա որ կամի կալ անկասկած և յապահովի յիշխանութեան իւրում, յարգեսցէ զաղնուականան, սիրեսցէ վհաւասարսն, և խնամակալ լիցի նուաստից :

ԺԷ. Իշխան ոք մինչ կողսպաէ և նեղէ զհպատակս իւր, և ոչ տայ նոցա վոյելել յարգիւնս գործոց իւրեանց, ոչ է պէտք նմա արտաքին թշնամի, զի ինքնին բուռն հարեալ ջանաց կործանել զիշխանութիւն իւր . և որպէս ախտացեալ

որ լեբդացաւութեամբ՝ հիւծեալ մաշի օր ըստ օք
րէ , և հուսկ ապա բառնի ՚ի միջոյ : Փութով
կործանի իշխանութիւնն , որ միայն ջանայ ստա-
նալ զգանձս , և ոչ զբարի և զիմաստուն խոր-
հըրդակիցս :

ԺՅ . Ո՞ւծ յաղթութիւն գործէ , որ յաղթէ
թշնամոյն գթութեամբ և բարերարութեամբ ,
քան զօրու և զինու : Օ ի որ բռնութեամբ նր-
ւաձի , աննուաձելի զսիրա իւր ունի , և սպասէ
պարապոյ յառնել ՚ի վերայ , և խորտակել զըրո-
նութիւն նորա : Իսկ որ նուաձի մտրդասիրու-
թեամբ , ոչ խորհի առնել զթշնամութիւն . և է՝
զի լինի մոռերիմ բարեկամ , զի բարերարութիւնն
բազում անգամ դարձուցանէ զթշնամութիւնն
՚ի հաւատարիմ բարեկամութիւն :

ԺՅ . Իշխան իմաստուն՝ քաջ պատսպարէ ըզ-
տէրութիւն իւր խաղաղութեամբ վարելով ընդ-
սահմանակիցս՝ քան բազմութեամբ զօրաց և ամ-
րութեամբ պարսպաց . քանզի յանկարծադէպ
պատսահարօք ցրուին զօրք՝ և կործանին ամրոցք .
բայց հաստատուն մնայ խաղաղութիւնն , զոր-
պահեալ է հաւատարմութեամբ :

Ե . Յոյս վարձուց և երկիւղ պատժոց՝ է կշխ-
ուղղութեան ՚ի ձեռս իշխաննին , որով ՚ի խաղա-
ղութեան և ՚ի բարօրութեան պահէ զժողովուրդ-
իւր : Քանզի յոյս վարձուց քաջալերէ զբարիս՝
անդադար բերել պարապ յազգօգուտ իրողու-
թիւնս և ՚ի վաստակս . և երկիւղն սպատժոց սան-
ձահարէ զչարս՝ դադարիլ ՚ի վնասակար գործոց :

Իսկ եթէ իշխանն թիւրեսցէ զայս կշխու , իրը

զի ոչ հաստուսցէ վարձս բարեաց , և ոչ պատիմ չարաց , բառնի բարեկարգութիւնն և խաղաղութիւնն ՚ի ժողովրդենէ , և տիրէ անիրաւութիւն և աղմուկ . քանզի արք բարիք յուսակառուր եղեալ լքանին և ՚ի բաց մեկնին , և շարք անպատիմ մնացեալ յաճախեն ՚ի չարիս :

Պարգեք իշխանաց և խոստմունք վարձուց յաւաջ բերեն զնորանոր արհեստա յօդուա հասարակաց :

Իւ . Իշխան ոք բարեմիտ՝ կարէ վասն հասարակաց օգտի այսու դաշամբ յանձն առնուլ զիշխանութիւնն , որում արժանի դատեցաւ ժողովուրդն : Եթզ զի՝ եթէ ինքն ստունդանեսցէ օրինաց , և շարժեսցի անկարգութեամբ , հանցեն զնա յիշխանութենէն . իսկ եթէ ընուցու զօրէնս զոր պահանջէ պարտաւորութիւնն պաշտամնի իւրայ , ժողովուրդքն հլու և հպատակ կացցեն ամենայն ակնարկութեան նորա :

Եւ այսու պայմանաւ վասահ և ապահով առնէ իշխանն զսիրտս ժողովրդեան իւրայ , թէ արդարեկամի նա պահպանել զօրէնս , և ոչ երբէք զարտուղիլ , և պարաւանդէ զնոստ ՚ի միամիտ հնազանդութիւն իւր . վասն որս իշխանն և հնազանդեալք իւր մնան ընդ միմեանս սիրով և օգտիւ :

Ի՞ . Որ կարող է իրօք և արդեամբ օգնել կարօտելոյն , և միայն օգաջու բանիւք սնոտի խոստման ընու զունկն՝ որում խնդրէ զօդնութի , ոչ զոք գտցէ իւր ձեռնառու և օգնական ՚ի ժամանակի կարօտութեան , բայց միայն զընդունայն կարկաչումն լիզուի . զի զոր սերմանեէ ոք , զնոյն և հնձէ :

ԷԴ. Իշխան ոք եթէ ոչ օգնէ ժողովրդոցն իւշըց ՚ի ժամանակի նեղութեան նորու , ասյ նոցացանկալ իշխանութեան : Եւ զի գիտեն՝ թէ ոչ կարեն ըստ կարգի բերման վիճակի իւրեանց հասանիլ այնմ , յանդգնին ձեռնամուխ լինել յանարժան և ՚ի վեասակար միջոցս , զի գոնէ նորօք հասանիլ կարասցեն . և յայսմանէ հետեւի լնկառմն իշխանին , և ապօտամբութիւն ժողովրդեան , որ երկոքին են չար :

Վպա իշխանն պարտի օգնել ժողովրդեան , և ածել զգութ և զինամ . և ժողովուրդն գոհ լինել զվիճակէ իւրմէ , և մնալ ՚ի հնազանդութեան և յակնածութեան :

ԷԴ. Իշխանիք՝ ոքք պատմեն զւտմիկս վասն փոքրու յանցանաց , որոց կարեն ներել առանց աշխրաւելոյ յիրաւունս , զինչ արդեօք սկասասիսանի տայցեն Կյառուծոյ , որ ներէ մեծամեծ յանցանաց նոցա , զորս կարեր պատմել արդար իրաւամք :

ԷԵ. Իշխան ոք՝ եթէ կամի զի չարք պակասեսցին , և բարիք բազմասցին , մեծարեսցէ զբարեբարօյս , և անդոսնեսոցէ զչարս : Ո՞ի մարդիկ բնականաբար գոլով պատուասէր , միշտ հնարին ստանալ զպատիւ . և մինչ տեսանեն՝ թէ չարաչար ընթացիւք ոչ կարեն ստանալ , ջանան աւզգել զանձինս , զի այնու կարասցեն հասանել : Ուստի և պատիւն լինի իմթան առաքինութեան՝ զարթնուլ ՚ի մոլեկան թմրութենէ , և գործել զբարիս : Քանզի ոչ պակասին չարք , մինչդեռ յարգի են նոքա յաջս իշխանին . և ոչ բազմանան բարիք՝ ցորչափ կան յանպատութեան :

Էջ. Հոգի իշխանին կապեալ ունի ընդ ինքեան զհոգիս ժողովրդեան . ուստի եթէ կամի իշխանն զի ժողովուրդ իւր լինիցի առաքինի , եզ զիցի և ինքն առաքինի . և ահա տացէ զամենայն հասարակութիւնն փոխեալ՝ի լաւ անդր :

Էջ. Պարտ է իշխանին՝ որքան ունի հպատակ , այնքան ունել և զսիրտ . քանզի կամի իւրաքանչիւր ոք զի իշխանն տացէ զսիրտ իւր նմա , և զնմանէ միայն հոգացի . և իւրաքանչիւր ոք առանձինն ձանաչէ զնա՝ թէ միայն վասն իւր է իշխան , և 'ի նա միայն հայի . զի ամենեքին զօշ գուտն իւրեանց 'ի ձեռն նորա ակն ունին գտանել . և եթէ վշտանան յումեքէ , 'ի նմանէ խընդրեն զօդնականութիւն . իսկ իշխանն զամենեսին ունի յինքեան , և զամենեցունց հոգայ :

Տես քանի՞ դժուարին է իշխան լինել հասարակութեան , չասացից թէ ծառայ . ամենայն ժողովուրդն ծառայէ միոյ իշխանի , և մի միայն իշխանն պարտի ծառայել ամենեցուն :

Էջ. Իշխանն բազում անդամ խարի 'ի շահասէր անձանց , որք երեւեցուցանեն նմա զանձինս հաւատարիմ : Օի երբեմն զգացուցանեն նմա զիրողութիւն ինչ՝ որ թուի նմա կարեւոր 'ի գիտել , միչև հարցեալ իցէ 'ի նոցանէ . որով յինքեանս յանկուցեալ զկամս նորա , կարծին լինել բարեկամ : Իսկ յայլում նուագի բանս 'ի մէջ արկեալ , խօսին զնոյն իրողութենէ այլազգ՝ քան զոր կանխաւ խօսեալ էր նոցա : Եւ որ յառաջնում աղդարարութեան՝ ծանօթութիւն իրացն օդտակար ինչ երեւէր լսողին , յերկրորդումն յեւ

զափոխեցաւ յօդուտ ասողին՝ 'ի վեաս այլոց :

Ապա զգոյշ լիցին իշխանք՝ չխաբիլ 'ի շահա-
խընդրաց, թէպէտ և դժուարին է յոյժ՝ ցորչափ
կենցաղավարին ընդ նոսա . զի սյր հաւատարիմ
կարի ստկաւ գտանի՝ որ խօսիցի յօդուտ այլոց
և 'ի ծառայութիւն իշխանին :

Իթ . Ինդէք պարծի մարդ՝ եթէ կարէ տիրել
երկրի, հրամայել ծովու, նուաճել զժողովուրդ
բազում, օրինադիր լինել հասարակաց, պարտա-
ւորել զտմենեսին 'ի պահպանութիւն օրինաց .
մինչ տկարանաց իշխել անձին, և նուաճել զկիրա-
իւր, և պահել զօրէնս որ յաստուածուստ տպա-
ւորեալ է 'ի սրաի իւրում . զի նա է ծշմարիտ
տիրող, որ տիրէ յօժարութեան և կրից իւրոց :

Ոչ է յաղթող՝ որ յաղթէ այլոց, բայց եթէ
նա՝ որ յաղթէ անձին :

Ա. Իրաւամբ մեղադրին նոքա, որ մինչդեռ 'ի
նուաստ կամ 'ի միջակ վիճակի գտանին, բարե-
կարդ են և առաքինի . այլ յորժամ ստանան մե-
ծութիւն և զփառս, սկսանին անկարգանալ և
մոլիլ . ուր պարտ էք նոցա առաւել ևս լինելբա-
րեկեցիկ, մինչև ակն ածել 'ի նոցանէ ամենեցուն :

ԱՅ. Վրաւել մեծագործութիւն է զբարս ժո-
ղովրդեան ուղղել, քանի զաւերեալ քաղաքս նո-
րոգել : Ինդլայր աշխատութիւն է նորոգել զա-
ւերակս, եթէ բնակիցքն իցեն անսաղցայ . զի անի-
րաւութիւնք բնակչաց վութով կարեն տապալել
զբաղաքն, թէ և իցէ նորակերտ և ամբակուռ :

Չէ պարծանք քաղաքի՝ բաղմութիւնք մեծա-
վայելու և քարուկիր շինուածոց, այլ կենցաղօ-

գուտ առաքինութիւնք աշխատասեր բնակչաց ,
և Բ . Օ ի՞նչ օգուտ է ուժեք լինել աղնուա-
տոհմ , եթէ չկայ ազնուաբարայ ՚ի կեանս , և բա-
րեհամբաւ ՚ի մահու . ապա մի պարծեսցին մալիք՝
թէ իցեն բարեատհմիկ , այլ ջանացեն յաւելու
լինել բարեկեցիկ . զի առաւել անարդանք է լինել
տոհմիւ պատուական , և բարուք անպիտան :

Ո՞եծամեծ առաքինութիւնք նախնեաց՝ ծան-
ըացուցանեն զապիքատութիւնս որդւոց , զի
յեանեալ գտան ՚ի բարեմասնութենէ նախնեաց
իւրեանց :

Ե՞ր . Իշխանն իշխէ ՚ի վերայ հպատակաց իւ-
րոց , բայց և օրէնքն իշխեն ՚ի վերայ իշխանին .
այն է ճշմարիտ իշխան , որ հնազանդի օրինաց ,
ապա թէ ոչ բռնաւոր է նա և ոչ իշխան :

Այն է օրինաւոր իշխան՝ որ տայ օրինաց իշխէ լ
հպատակաց , զի պարտ է իշխանին միաբանիլ ընդ
օրէնս , և ՚ի միասին իշխել , և ոչ թէ ինքն միայն .
Ոչ է նա գովիճի որ քաջ գիտէ զօրէնս՝ այլ որ
՚ի գործ դնէ :

Իշխանութիւնն զոր վարէ իշխանն՝ ոչ է իւր ,
զի ոչ կարէ առնել ինչ վասն փառաց և հաճայից
իւրոց . այլ է իշխանութիւն օրինաց , որում և
ինքն է պաշտպան . ուստի պարտ է նմա հնազան-
դիլ օրինաց , առ ՚ի լինել օրինակ հպատակաց :

Ե՞ր . Իշխանն ունի ազատ կարողութիւն առ-
նել զբարիս , բայց չունի ազատութիւն առնել
զարիս . քանզի օրէնքն յանձն արարեալ է նմա
գեղողավուրդն իբրև պատուական տւանդ՝ զի լի-
նիցի հասարակութեան հայր խնամածու . և ծառ-

այեսցէ խմատութեամբ և բարեկարգութեամբ
վասն երջանկութեան և խաղաղութեան ամենեւ
ցուն . և ոչ եթէ ամենեքին ծառայեսցեն նմա
իբրև տառապեալ գերի՝ ՚ի ընուշ զբաղձանա սր
նախառութեան նորա և փափկաւթեան :

ԱՅ . Երկիւզն ոչ է բառական պինդ ունելըզ
ժողովուրդն ՚ի հնազանդութիւն ամենայն ակնար
կութեանց իշխանին , այլ սէրն . զի նորա ոչ են
գերիք՝ այլ քաղաքացիք . և որպէս ոչ է բարուզ
զի լինիցին գլխովին աղասոք , նոյնուր ոչ է բարուզ
զի իցեն բոլորովին ծառայք :

ԱՅ . Իշխանք պարաին ունել զդութ՝ ՚ի վերայ
հաղատակաց իւրեանց . զի եթէ ծանրացուցանեն
զհարկն առաւելքան զկար նոցա , խորհուրդն ա-
պլատամբութեան զօրացեալ՝ ՚ի նոսա , ծնանի զա-
տելութիւն ՚ի կործանումն հասարակաց . զի յայն
ժոմ կամ իշխանն նուաճէ զհաղատակն ՚ի չարա-
չոր ծառայութիւն , կամ հաղատակըն խաղա-
մերմեն զիշխանութիւն նորա . և լինի պատա-
ռումն չար ՚ի միտոմ մտրմի :

ԱՅ . Կնմիտ է իշխանն՝ որ կարծէ մեծարու լի-
նել անիրաւ բոնութեամբ , կամ գտուողութեամբ ,
կամ խառութեամբ . զի այն է մեծարելի , որ է
արդար , հեղ , և քաղցրաբարոյ :

Իշխանք առաւելքարե համբաւ և մեծանուն
հանդիսանան խմատուն կտուալարութեամբ՝ քան
թշխամեացն յաղթութեամբ :

ԱՅ . Երանելի է ժողովուրդն , որոյ իշխանն
կրթէ զնոսա ՚ի բարիս . բայց այնու երանելի ևս
լինի իշխանն զի գտանէ զժողովուրդ իւր փոխեալ

՚ի լու անդր . զի զարգացեալ առաքինութեամբ՝
ուժգին կապին ընդ ինքեան սիրով քան երկիւզիւ .
Յայնժամ ոչ իշխանն ունի պէտս ջանից առ ՚ի
հնազանդեցուցանել զժողովուրդն , զի յօժարու-
թեամբ հնազանդի նմա . և ոչ ժողովուրդն ցան-
կայ վտարանջել և աղատ մնալ յիշխանութենէ
նորա , զի երկնչի կորուսանել զնա , վասն որոյ նր-
ւիրէ զկեանս իւր վասն նորա :

Եյն է արժանաւոր իշխանութեան , զոր կամ
Վտառած յայտնէ , կամ ժողովուրդն ինդրէ . զի
իշխան լինել բոնութեամբ՝ ընդդէմ կամաց և հա-
ճութեան ժողավրդեան , է առնել զանձն թշուառ .
և զհասարակութիւնն գերի :

Բոնաւոր և անիրաւ իշխանն է ցասումն առ-
տուածային հասեալ ՚ի վերայ մարդկոյին սեռի՝
՚ի կործանումն բազմաց :

Աթ . ՚Իժբաղդ են ժողովուրդք , զի կառավա-
րին ՚ի միոջէ իշխանէ , որ նա ևս է մարդ իրեւ
զնոսա՝ սխալտկան բնութեան վիճակեալ . քանզի
կառավարել և ուղղել զմարդիկ՝ Վտառածոյ էր անկ ,
զի նա միայն է անսխալ :

՚Իժբաղդ է և իշխան , զի է մարդ բազմավրէպ
հանդունակից այլոց , և ունի կառավարել զան-
թիւ բազմութիւն նենդամիտ մարդկան , և կալ
անբամբաս :

Իշխան ոք բարի՝ է տակաւին մարդ . ունի կիրք ,
բարք , և սովորութիւն՝ որք իշխեն նմա . և պա-
շարեալ է յարանց շահասիրաց , որք խաբեն զնա .
վասն որոյ հանապազ անկանի ՚ի սխալանս , երբեմն
յախտից իւրոց , և երբեմն յախտից այլոց . և

յուղղել իւրաւմ՝ զմի ինչ պակասութիւն . գահավիժի ՚ի միւսն :

Ա. Իշխանք աշխարհի՝ առաւելքան զամենայն մարդիկ փութով ՚ի ծերութիւն հասանեն . զի եթէ լնուկամիցին զպարտաւորութիւնս իւրեանց, խստութիւնք պատերազմի՝ և հոգք հասարակութեան հիւծեալ մաշեն զկեանս նոցա : Իսկ եթէ անփոյթ լինիցին զպարտաւորութենէ իւրեանց, և թողեալ զհոգ հասարակաց բարւոյ՝ տացեն զանձինս ՚ի մարմնական հեշտութիւնս, կորուսանեն զառողջութիւն՝ և փութացուցանեն զմահ :

Որ ցանկայ իշխանութեան՝ չէ իմաստուն, զի եթէ ջանասցէ արդար իրաւամք դատել, անհնարին աշխատութիւն է նմա . իսկ եթէ անիրաւութեամբ՝ լինի ատելի մարդկոն, և արժանի յաւիտենական դատապարտութեան :

Իշխանութիւնն է ծպոեալ իմն ծառայութիւն . զի փառք և մեծութիւն իշխանին կախի զբաղմաց՝ որոց իշխէ . իսկ կախիլն զբաղմաց՝ է ծառայել բազմաց :

Հարկաւոր է իշխանին առաւելքան զամենայն մարդիկ լինել ժուժկալ, և թշնամի փափկութեան . զի Աստուած ոչ արար զնա իշխան և մեծ վասն իւր, այլ վասն օգտի ժողովրդեան . վասն որոյ պարտ է նմա զամենայն ժամանակս կենաց իւրոց, և զջանս, և զսէր նուիրել վասն նոցա . մինչեւ մոռանալ զանձն իւր, և զոհել վասն բարեաց հասարակութեան :

ԽԱ. Իշխանք՝ վասն երկուց առաւել պարտին հոգալ, մի՛ վասն ունելոյ ինքեանց խորհրդակից

զարս իմաստունս և առաքինիս , որք ծաղկեցուաց ցեն զօդտակար արհեստա , և առաջարկեցեն նոցատունել զբարին . և երկրորդ՝ վասն բազմոցուցանեց զերկրագործո , որպէս զի երկիրն բարւոք մշակեալ աճեցուացէ զարմանիս ՚ի դարման և ՚ի անունդ ժողովրդեան :

Իշխանն ոչ կարէ քաջ ճանաչել զբնաւորութիւնս մարդկան , որք շուրջ կան զիւրի . քանզի նորու միշտ կերտարանափոխ եղեալ ծածկեն ըզքնաւորութիւնս իւրեանց , և պէսալէս հնարիւք ջանան համայ երեխլ յաչո նորու և խարել զնա . Եւ որքան մեծ է իշխանն , և ունի ընդ իւրի ժողովուրդ բազում , այնքան բազում գործակալք , այնքան բազում են խարեողք . ապա կարի արթնութեան պէտա ունի՝ զի մի խարեացի :

ԽԲ . Պարտ է իշխանին կրթել զհպատակս իւր յօդտակար արհեստա , մանաւանդ յերկրագործութիւնս . և արգելուլ զանպիտան արհետո՞ որք հային ՚ի վափիկութիւնս և ՚ի զարդարանս . չներել երբէք պՃնասիրութեան արանց և կանանց , և շւոյլութեան կերտկոց և ըմպելեաց , զի չափազանց վայելութիւննք և զի զխութիւնք տալսկանեն զբարս . ուստի որպէս քաջ պարտիզ պտն հատանել պարտ է նմա զանպիտան ճիւղս , զի մի գուասցին պտղաբեր ծառք :

ԽԴ . Իշխանն արկանէ զանձն ՚ի վարանս , յորժամ հաւասար զինքն գործակալի իւրում՝ որ կեղծիք ձեւանայ հաւատարիմ . քանզի ՚ի կասկածիլ իւրում զհաւատարմութենէ նորու , երկնչի հեր-

քել զնա , զի գիտակ է ամենայն գաղտնեաց իւրաց . և ջանայ անտես առնել զխորդախութիւնս նորա , և ցուցանէ կամովին թէ խորեալ է :

Եւ մինչ կեղծաւորեալն զգոյ՝ թէ իշխանն աւնի զիւրմէ զկասկած , խորհի հնարս նենգութեան՝ ցուցանել զանձն հաւատարիմ : Զեռն արկանէ ՚ի նորանոր գործո՝ որբ յաւելուն զփառս և զհամբաւ իշխանին , զորս ՚ի կատար ածել հարկաւոր է գործակալութեան իւրոյ :

Հարժէ զլեզու իւր ըստ հաճայս իշխանին , զի բարձյէ ՚ի մասց նորա զգոյթակզութիւնն : Ըստ բացուցանէ զարս բարիս ՚ի նմանէ , զի մի յայտնեացին խարդախութիւնք իւր : Հարդորէ զիշխանն հանգչիլ և վայելել ՚ի փափկութիւնս , և ինքն յանձն առնու կրել զամենայն աշխատութիւն վասն կենաց և փառաց նորա . վասն որոյ և իշխանն միշտ մնայ ՚ի վարանման , և չկարէ որոշել թէ արդեօք իցէ հաւատարիմ , եթէ նենգուաւոր և գտաաճան :

ԽԴ . Իշխանք սովորաբար կասկածուք են , և անզգոյշ . կասկածուք են , զի բազում անգամ առեալ են զիորձ նենգաւոր գուաճանութեան մարդկան . անզգոյշ են , զի տուեալ զանձինս ՚ի զբօստնո՝ յանձնեալ են զզեկ կառավարութեան ՚ի ձեւս գործակալոց , որոց բազումք ոչ ծառայեն նմա ուղղութեամբ . վասն որոյ և խաղալիկ լինին սուտակասպասից , և թշուառ քան զբմենայն մարդիկ :

ԽԵ . Իշխանք անգստին ՚ի մանուկ տիսց յարդական գովիսաիւք զարդացեալք , և մոնաւանդ շողորորթական բանիւք ապականեալք , խոժոռին

յոյժ՝ յորժամ՝ ոք անհաւան գտանի խորհրդոց և
գործոց նոցին, և զուղիզն առաջարկէ . այլ սիրեն
զհաճելիս ախորժակաց, և զգովութիւն խորհրդոց
և գործոց իւրեանց : Վասն որոյ մարդահաճոյք
սիրելի են յաշ իշխանաց իբրու իրաւախոհք և
քաղաքավարք . և ճշմարտախօսք ատելի՝ իբրու
յանցաւորք և վայրենաբարոյք :

Իսյց հարկաւոր է իշխանին՝ ՚ի խնդիր լինել և
գտանել բարեկամ և խորհրդակից զայնպիսի այր,
որ կարող իցէ ասել զՃշմարիան, և ոչ երբէք շո-
զոքորթել . և ՚ի գտանելն անկորուստ պահել, և
մտադիւր անսալ բանից նորա :

ԽԶ. Կենցաղավարութիւնն իշխանաց՝ է ջինջ
հայելի հասարակաց, զի ամենեքին ցանկան նմա-
նիլ նոցա լստ կարողութեան իւրեանց : Ղթէ ա-
ռաքինի կեանս վարեսցէ մեծատունն, բազմանան
առաքինիք ՚ի հասարակութեան . իսկ եթէ մոլե-
կան վարս ունիցի, բազմանան մոլիք : Վպա եղուկ
է մոլի մեծատունց, որք օրինակաւ իւրեանց լինին
պատճառ չարեաց հասարակաց :

ԽԵ. Իշխանն կամի՝ զի ամենեքին հետեւսցին
կամաց իւրոց . և ամենեքին կամին՝ զի իշխանն
հետեւսցի կամաց իւրաքանչիւրոց . ահա վէճ ան-
վերջ : Վպա կամեսցի իշխանն զբարին հասարա-
կաց, և յայնժամ՝ ամենեքին հետեւին կամաց իշ-
խանին . ահա խաղաղութիւն անվըդով :

ԽԸ. Իշխանաւորք պարտին լինել զգուշաւորք
՚ի խօսս և ՚ի գործս իւրեանց, զի զօր ինչ խօսին՝
ամենեքին լսեն, և զօր ինչ գործեն՝ ամենեքին ի-
մանան : Քանզի նմանին ահագին զանգակի, զի իցէ

՚ի բարձրագոյն դիտանոցի . որ մինչդեռ հարկանի՝
ամենելքին լսեն : Իսկ ու ամիկըն նման են ծոցակը-
րելի զանգակի , որոյ ձայնն միայն ինքեանց է լսելու :

Խթ . Անիրաւութիւն իշխանին խանգարէ ըզ-
կարգ աշխարհի , զի հպատակըն նեղեալ յանի-
րաւութենէ նորա՝ գուն գործեն լինել ազատ ,
և աղատութիւնն ստիպէ՝ զի լինիցին հրամայող :
Իսկ արդ՝ ՚ի լինել ամենեցաւն հրամայող՝ ով լի-
նիցի հպատակ , կամ ում հրամայեսցէ . ահա խռո-
վութիւն անհաջող , և աղմուկ անվախճան : Ապա
իրաւասէր լինիցին իշխանք , զի եղիցին հպա-
տակըն հլու և հնաղանդ :

Ծ . Անկարգութիւն ինչ ՚ի թոյլտուութենէ իշ-
խանին տիրեալ միանգամ ՚ի հպատակս , հեղինա-
կութիւնք օրինաց և վրէժինդրութիւնք պատ-
ժոց՝ կարի գժուարաւ և կամ ոչ բնաւ կարեն
բարեկարգել . վասն որոյ չէ արժան գոնէ գոյզն
մի համարձակութիւն տալ նոցա , որք օրինազանցն
լինել կամին . զի որ զիոքը յանցանս ուրուք անտես
առնէ , թողու նմա գործել զմեծամեծո :

ԾԵ . Իշխան ոք եթէ լիցէ ագահ , սովոր է կո-
ղոպտել զհարստութիւնս հպատակաց իւրոց . և
զի հաստատեալ է ՚ի միտո՝ թէ հպատակըն ոչ
կարեն տանիլ անիրաւ զրկանաց իւրոց , չունի
հանգիստ ՚ի տուէ , և ոչ քաղցր քուն ՚ի գիշերի .
յարաժամ երկնչի ՚ի ստուերէ իւրմէ , և ամենայն
ինչ թուի նմա վտանգաւոր :

Եւ Ասոուած առ ՚ի յաւելուլ զտանջանս նո-
րա , բեռնաւորէ զնա գանձիւք բազմօք , զորս ոչ
համարձակի վայելել . Դանձն զոր մթերէ առ ՚ի

լինել երջանիկ, է արգել երջանկութեան իւրոյ .
զի երկիւղն կորուսանելոյ՝ ոչ տայ նմա հանդիսա
երբէք :

Չիք ուրախութիւն ՚ի սիրտս նորա , այլ ան-
հնարին սարսափ . յամենայն շնչմանց այլափսիսի ,
և գմնդակ տիրութիւն ՚ի դէմս նորա նկարի :
Լոէ յաճախ , և հառաջէ յանկած . ոչ կարէ թա-
քուցանել զլայթ սրտին , որ տոչորէ զաղիս նորա .
համեղութիւնիք կերակրոց անախորժ թուլին նմա
և դառն , և փափուկ գահաւորակք՝ գետնախշի
անկողին : Երկնչի յորդւոց իւրոց , և համարի ըզ-
նոսա թշնումի . ամենայն ստացուածք իւր անօ-
դուտ են նմա , և անպիտան որպէս զաւազ , զի ոչ
կարէ վայելել ՚ի նոսա :

Վպա յայտ է՝ թէ ոչ ոք բռնաւոր կարէ լինել
ապահով . զի որչափ անիրաւ բաղձանս ունի , այն-
քան գահիճս ստացեալէ անձին իւրոյ :

ՃԲ. Ա' ծաստուն ոք՝ մինչ յօժարամիտ է յանձն
առնուլ զլիձակ նուաստութեան ՚ի փոխիլ յաջո-
զութեան իւրոյ , այնպիսին անվրդով մոօք վայելէ
՚ի մեծութեան իւրում . տպա թէ ոչ միշտ ՚ի կառ-
կածանս է , և ոչ ունի հանդիսատ , դիտելով թէ
մեծութիւն իւր յորս վայելէ , անհաստատ է և
շուտափախուստ :

ՃԳ. Հաստատութիւն իշխանութեան հիմնի
՚ի հաւատարմութեան , յարդարութեան , և ՚ի
բարերարութեան , թէ առ հպատակու և թէ առ
սահմանակիցս : Ուստի մինչ պակասին սոքա , և
փոխանակէ խարդախսութիւն , անիրաւութիւն ,
և անդթութիւն , որ քան զօր տկարացեալ կար-

ծանի իշխանութիւնն ։

ՃԴ. Իշխան ժողովրդեան կամ ազգի՝ եթէ իցէ ագահ և հպարտ, յառնէ պատերազմաւ ՚ի վերայ սահմանակից իշխանաց, որք կան ակնածութեամբ և խաղաղութեամբ ընդ նմա. որպէս զի տիրեսցէ նոցա, և յաւելցէ իւր գանձ և համբաւ։ Իսյց այս անիրաւ բաղձանք՝ լինի պատճառ չարաշար կործանման իւրայ. քանզի սահմանակից իշխանք գաշնաւորեալ ընդ միմեանս՝ ՚ի կոիւ գումարին ընդ նմա, խորտակեն զեղջիւր ամբարտաւանութեան նորա, և բառնան ՚ի միջոյ զապականիչն հասարակաց։

ՃԵ. Իշխան ոք՝ եթէ վասն սնափառութեան յարուցանէ զպատերազմ անիրաւ, և իրքեւ թէ ՚ի խաղ արկեալ զմարդկային բնութիւնն՝ զոհէ ախտից և կամաց իւրաց զանհամար անձինս, այն պիսին չար քան զգազանս գտանի. զի նոքա զանակակիցս իւրեանց ոչ սպառեն, իսկ սորայս անագստուն սիրա՝ գլխավին մուացեալ զմարդասիւրութիւնն և զմարդկութիւնն, վասն սնափի փառաց և կորստական մեծութեան՝ թաթաւէ զձեռն յարեան եղբօր իւրայ, որ նման է ինքեան։

Վատուած երբեմն յամեցուցանէ զլրէմխընդրութիւնն այսպիսեաց, ոյլ ոչ խապառ թողու անպատճիժ. զի ՚ի վախճանի հաստուցանէ զփսխարէնն արդար իրաւամբք։

ՃԶ. Պատերազմն է օրինաւոր՝ եթէ իցէ հարկաւոր վասն բարեաց հասարակաց. զի ոչ է արժան հեղուլ զարիւն ժողովրդեան, եթէ ոչ ՚ի փրկել զնոյն ժողովուրդ. ՚ի ծոյրագոյն վտանգէ։

Իսկ յարտւցանել զպատերազմ վասն սնուտի փառաց և ագահութեան, է անզգայ թշուառութիւն. զի արկանէ զանձն ՚ի վտանգ առանց հարկաւորութեան, և գործէ զանթիւ չարիս ժողովրդեան իւրոյ առաւելքան թշնամեաց :

Ճէ. Ո՞եծագոյն յաղթութիւն թշնամեաց՝ է բարերարել նմա, քան վնասել, զի վնասելն՝ է գործ տկարի և չարաբարոյի, իսկ բարերարելն՝ է գործ վեհանձին և բարուց, որով և զթշնամին առնէ իւր բարեկամ և մոռերիմ, որպէս ՚ի թիւնաւոր օձից կազմելով զգեղթափ :

Ճէ. Ո՞չուառ է իշխաննն, որ զրկանօք ժողովը բարդեան իւրոյ համարի լինել երջանիկ. զի յափրշտակեալ ՚ի չարաչար կրից իւրոց, ոչ կարէ ճանաչել զպարտաւորութիւն իւր, որ է միայն առնել զբարիս, և ոչ գիտէ վայելել ՚ի քաղցրութիւն առաքինութեան :

՞Շառայք իշխանաց ցաւակցութեան են արժանի, զի եթէ չարք են, և խոշտանգեն զմարդիկ, գանձեն անձանց իւրեանց զպատիժ գեհենին. Իսկ եթէ բարիք են, և ջանան առնել բարիս հասարակաց, անդադար կրեն զնեղութիւնս ՚ի նենդութենէ չարագործաց. զի չարք միշտ հակառակ կան բարեաց :

ՃԹ. Իշխանիք՝ որք ոչ խորհին բարերարութեամբ և սիրով յինքեանս յանկուցանել զիրտ հպատակաց, այլ առաւելքան զչափին նուաճելով զնոսա՝ ջանան ահարկու երևիլ նոցա, են խանդարիչ և պատիժ աղդի մարդկան. Ահ արկանեն յամենեսին, բայց ատեցեալ լինին յամենայնէ :

վասն որոյ ինքեանք առաւել պարտին երկնչիլ ՚ի
հպատակաց, քան նոքա յիշխանաց:

Որ թոյլ տայ ծառ այից իւրոց անիրաւիլ և
վնասել այլոց, մի յուսասցի մնալ ազատ ՚ի վեա-
սուէ նոցին. զի որ տասան անիրաւիլ առ այլ,
անիրաւեսցին և առ տետրս իւրեանց:

Կ. Իշխան անիրաւ չունի զոք բարեկամ. քան-
զի արք բարիք վշտացեալ յանիրաւութենէ նորա՝
օտարանան ՚ի նմանէ, ոչ ինչ չար կամելալ նմա.
և չարք երկուցեալ ՚ի խատութենէ նորին՝ նիւթեն
զչարիս, զի բարձցեն ՚ի կենաց. վասն որոյ և է
միշտ ՚ի վտանգի:

ԿԱ. Որ ոչ զգայ զիսայթ խղճի մտաց, ոչ ճա-
նաչէ նա զառաքինութիւն. և կարծէ թէ մե-
ծութիւն և իշխանութիւն կայանայ ՚ի տիրելն
ամենեցուն, և յահարկու երկիլն բազմաց. վասն
որոյ ՚ի մոփ դնէ զրկել զոյլ, և ծառայեցուցա-
նել ինքեան, բայց խարի յոյժ. զի մեծութիւն
և իշխանութիւն կայանայ ՚ի լինելն բարերար, և
սիրելի հասարակութեան՝ քան երկիւզալի:

Իշխան բարի՝ առաւել ախորժէ լսել զաղտ-
զակս աղքատաց և կարօտելոց՝ զի արասցէ առ-
նոսա բարիս, քան զքաղցրածայնութիւնն երգոց
և նուագարանաց: Եսաց որ խնդրէ միայն փափ-
կանալ ՚ի զանազան հեշտութիւնս, և ոչ ինչ հո-
գայ զազդօգուտ իրողութեանց, այնպիսին է
խանգարիչ ազգին, զի ոչ միայն ինքն ոչ օգնէ ազ-
գին, այլ և չար օրինակաւ իւրով արգելլինի բազ-
մաց հեռի կալ ՚ի գործոց օգտակարաց, և պարա-
պիլ միայն ՚ի հաջոյս անձանց իւրեանց:

“ Տուս ՚ ի յեղ յել շար իմաստուն՝ և խորհրդական՝
և հանձարեղ՝ ՚ ի վերա ցեղա յերա . և իայուցիւ ՚ ի վերա
յեր իշխան յեղ ” . Բ . Օրին . Ա . 13 :

“ Այ յել ՚ վաբանա՝ են բանիմ . զե ուսանիցիւ զե
մաստունիւն , և մի՛ մասլիցիւ ” . Իմաստ . Զ . 10 :

“ Ալե յանիայ ալուսոյ և գաւաղանա իշխանութեան
բանա՝ ժողովրդոյ , պատուեցիւ զեմաստունիւն ” . Իմաստ .
Զ . 22 :

“ Իշխանութեան բանի այ սինըն արտարութեան . և
առաջնորդ լենի կարօտութեան հայտառակութեան և կոկ .
Ըստակ . Ժե . 14 :

“ Դարասոր իմաստուն խրատ ժողովրդեան . . . չաղաք
շնեսցի յիմաստունենէ իշխանա ” . Ուրա . Ժ . 1 :

“ Ծառ լիս յել իշխանութ Խարայէլք . արտ ՚ ի բայ ա-
րարէս զապիրաբութեան և շըստառութեան . իրաւուն և
արտարութեան արարէս , ՚ ի բայ մերժեցէս զբունութեան ՚ ի
ժողովրդենէ իմնէ , ասէ Տեր Աստուած ” . Լուսեկ . Խե . 9 :

“ Ուժաբանաց որ են յայսմ աշխարհի , պատուելը պա-
շի՞ մի՛ հարդարանալ և մի՛ յուսաւ ՚ ի մեծութեան սնոսի ” .
Ա . Տիգր . Զ . 17 :

“ Օ գոյշ լիրու՞ս՝ գուցէ իշխանութեանտ յեր այդ
գոյշականութեան լիցէ ոկարաց ” . Ա . Կորն . Ը . 9 :

ԳԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ա. Պրակէս առաջնորդք և իշխանիք սիրեն ըզ-
հասարակութիւնն , և կրեն միշտ զպէսպէս աշ-
խատանս և զնեղութիւնս վասն օգտի և խաղա-
ղութեան նոցա , նոյնպէս պարտ է հասարակու-
թեանն և ամենայն ստորադրելոց՝ հնազանդ լինել
սիրով հրամանաց առաջնորդին և իշխանին , և
Ճանաչել զբարերարութիւնս՝ զոր առնեն նորա
յօգուտ իւրաքանչիւրոց :

Իսկ եթէ ոչ ճանաչիցեն զերախտիս և զյարդ
բարերարաց իւրեանց , և խատապարանոց եղեալ՝
հետեւցեն հրամանաց նոցա , յայնժամ Վատուած
բարկացեալընդ ապերախտութիւն ժողովրդեանն՝
բաւնայ զինտմոկալ և զբարեջան առաջնորդս և
զիշխանս , և փախանակ նոցա՝ տայ զրկողս և զչա-
րայոցը : Ուստի աստուածային բարկութեան և
պատժոց նշան է՝ պակասիլ բարեբարոց իշխանաց ,
և յաջորդել չարաբարայից :

Բ. Պարա և արժանն է ամենայն ժողովրդակա-
նաց , նախ՝ ունել զբարի համարումն զառաջնոր-
դէն . որ ուսուցանէ զամենայն բանս օգտաշահ .
և մի թիւր դատազութեամբ առ չիմանալոյ զմիտս
ասողին՝ անգոսնել՚ի սրտի և օտարանալ՚ի նմանէ :
Երկրորդ՝ Ճանաչել զնա օգտախնդիր հասարակու-
թեան , և վրէժինդիր հոյրենասուր օրինացն . և
մի՚ ՚ի պատճեն զամանս վասն բանի կրօնի , շշնջել
ընդ միմեանս և բամբասել՝ թէ առ ատելութեան

առնէ , և այլն : Կպա եթէ զերկուս զայսոսիկ չու-
նիցին ժողովուրդք , ամենայն բանք և գործք ա-
ռաջնորդին այլ ընդ այլոց երե ին նոցա և կասկա-
ծելի . ուստի բառնի հնաղանդութիւնն ժողովը-
դոց առ առաջնորդն , և սէր առաջնորդին առ
ժողովուրդն :

Գ . Ի արեբաստիկ է աղքն՝ յորժամ ունիցի
զխոհեմ և զիմաստուն առաջնորդ . այլ բարեբաս-
տիկ ևս է , եթէ ունիցի զժողովուրդս հնաղանդս
առաջնորդաց եկեղեցւոյ : Քանզի հպատակու-
թիւն ժողովրդոց առ բանս խրատու և պատուի-
րանաց հոգեոր իշխանաւորաց՝ առ Կատուած վե-
րաբերի . ըստ այնմ , « Որ ձեզ լսէ , ինձ լսէ » .
Դ . Ճ . 16 :

Իսյց գտանին ոմանք , զի զպակասութիւն ինչ
զոր տեսանեն՝ ի կարգաւոր ոք , առ ամենայն կար-
գաւորս տարածանեն , և զամենեսին սոգտանեն
և բամբասեն . գոնէ լուիցեն այնպիսիքն աստուա-
ծային գրոյն՝ որ ասէ . « Օ իշխան ժողովրդեան քո
մի հայհայեւոցես » . Ելք . իբ . 28 :

Դ . Իշխան քաղաքի կամ աղքին՝ որպէս գլուխ
՚ի մարմնի . իսկ ժողովուրդք՝ որպէս անդամք ըստ
իւրաքանչիւր կարգի և աստիճանի : Եւ զոր օրինակ
ամենայն անդամք մարմնայն՝ արբանեկեն գլույն ,
զի մի վետո ինչ հասանիցէ նմա , որպէս ՚ի կար-
կառել թշնամւոյն զուր՝ հարկանել զգլուխ ու-
րուք , ձեռն նորտ վտղվաղակի յառաջ մատչի՝
յինքն ընդունել զհարուածն . և ՚ի ձկել ուրուք
զքար հարկանել զաշն՝ դիմակալ լինի բազուկն :
Եւ թէպէտ մից մարմնայ անդամք են գլուխ և

աչք և ձեռք . սակայն ձեռն իւրովի ընդ առաջ ելանէ ու և իցէ արկածից՝ 'ի պաշտպանութիւն գլխայ և աչաց . քանզի բնութիւնն իսկ ուսուցանէ՝ թէ նուասան ծառայեացէ պատուականին :

Արդ՝ իբրև գլուխ և իբրև աչք են առաջ նորդք եկեղեցւոյ , և ազգասէր իշխանք և գլխաւորք , իսկ հասարակութիւնն իբրև ձեռք : Ապա արժան է ժողովրդեան առ պատուականս ունել զգլխաւորս ազգին . ոգւովչափ ճգնիլ զի մի վեսա ինչ հասանիցէ . ճանաչել զնոսա հայրենասէր և խորախորհուրդ . և բարեկարդ ակնարկութեան նոցա ամենայն յօժարութեամբ հլու և հպատակ կալ : Քանզի 'ի տկարանալ կամ 'ի պակասիլ գրւխաւորաց՝ անդէն լըեալ թուլանայ հասարակութիւնն , բառնի վայելչութիւն և յարդ և համբաւ նորա , և լինի կոխան ազգաց օտարաց :

Ե . Գերազանց գտան մեզուք 'ի խոհականութեան քան զամենայն կենդանիս , 'ի կարգել 'ի վերայ հասարակութեան իւրեանց զմի նախագահ և իշխան՝ հնազանդիլ նմա ամենայն ակնածութեամբ . զի եթէ ոչ ունէին զգլխաւոր՝ հնազանդ լինել նմա , միաբանութիւն իւրեանց քակտեալ փեռեկոէր , և ոչ կարէին ընուլ զիեթակս իւրեանց մեզու :

Այն օրինակ ճահէ իմանալ և վասն բաղմութեան ժողովրդոց , որք եթէ ունին առաջնորդ և իշխան՝ և հնազանդին նոցա , լցեալ պարարին ամենայն բարեօք հոգւոյ և մարմնոյ : Իսկ եթէ իւրաքանչիւր անհատ զինքն ծանիցէ գլուխ , տիրէ 'ի վերայ նոցա անկարգութիւն , և շփոթութիւն , և

զրկին յամենայն բարեաց . նմանեալ իշտեղուաց՝
ոքք ոչ ունին գլուխ , և ոչ կարդ , և ոչ միաբա-
նութիւն , վասն որոյ և ոչ կարեն գործել զմեզը ,
և են անարդ և հալածեալ յամենայնէ : Ապա
պարու է ժողովրդոց ունիլ զգլիսաւորս , և կամա-
կար սիրով հնազանդիլ նոցա , զի բարեվայելուչ
կարդօք և շինութեամբ օրքան զօր պայծառացի
ազգն , և հոգեոր և մարմնաւոր բարեմասնու-
թեամբ բարդաւաճեսցի :

2. Ոչ պք ՚ի մարդկանէ՝ որ զմիտս ունի՝ կարէ
յերկուանալ կամ հակառակիլ յայտնի ճշմարտաւ-
թեանս , թէ առանց գլխաւորի չէ հնար հաստա-
տուն կալ բարեկարդութեան իմիք : Բայց յատ-
կութիւն գլխաւորտութեան է ունիլ հպատակեալս ,
և յատկութիւն հպատակութեան է՝ միամիտ հնաւ-
զանդութիւն իւրում գլխաւորի : Ուր մին յեր-
կուց աստի պակասի՝ ոչ գտանի անդ բարեկար-
դութիւն , և հետեւաբար՝ ոչ երեխ բնաւ ազգօ-
դուտ շահեկանութիւն ինչ . զի ՚ի բառնիլ պատ-
ճառին , բառնի և գործն . իսկ պատճառ ամենայն
օգտակար գործոց՝ որով պանծալի հանդիսանայ
ազգն , է հաստատութիւն բարեկարդ սահմանա-
դրութեանց :

3. Օ վինչ օգուտ է գտանիլ ՚ի մէջ ազգի կամ
քաղաքի խոհեմ՝ և ազգասէր իշխան , եթէ հա-
սարակութիւնն ոչ հնազանդեսցի նմա , և օգտա-
կար բանից նորա ոչ անսայցէ : Եւ զինչ օգուտ է
լինել ժողովրդեան հնազանդ և բարեմիտ , եթէ
ոչ գտցի ՚ի նոսա արժանաւոր իշխան՝ առաջնոր-
դել նոցա ՚ի բարին . և յօգտակարն . դիմագրաւ-

լինել վուանդաւոր դիպուածոց, և դնել զանձն ՚ի կշխո՞ ՚ի պաշտպանել զհասարակութիւնն :

Այլ սակայն մարթ է իսհեմ իշխանի՝ առանց ժողովրդոց իւրեւ զմի ՚ի հասարակ մարդկանել կեալ յանքոյթ, զհոդ անձին իւրաց և զիւրայնոց միայն հոգալ, և լինել երջանիկ յառանձնութեան իւրում. այլ ոչ է հնար բազմութեան ժողովրդոց՝ առանց իշխանի և բարեկարդ սահմանադրութեան իւրաքանչիւր անձին իւրում օրէնսդիր լինելով՝ մնալ անխռով, և լինել երջանիկ :

Քանզի բազումք ՚ի նոցանէ զաջ և զահեակ ոչ ճանաչեն, զօգտակարն և զվեասակարն ոչ կարեն որոշել, ուստի բազում անդամ զբարերարն իւրեանց բամբասեն և վշտացուցանեն անիրաւ գաստղութեամք. որով ոչ միայն մեզանչեն առ իշխանն՝ որ արար զմեծամեծ բարիս, այլ և առ Նշուռած՝ որ ետ նոցա զայնպիսի իշխան. նմին իրի բազմիցս պատճին յաստուածուստ վասն ապերախտութեան իւրեանց :

Ը. Հասարակութիւն ողջոյն ազգի կտրի վայելսաղէս նմանի ծառոց, որոց գլխաւորքն ունին զոեղի արմատոց և բնոյն, և ժողովուրդքն ոստոց. և որպէս ոստք ծառոց յամենայն հողմոց շարժին, և յոլովակի անզօրքն ՚ի նոցանէ ոչ կարացեալ տռկալ բռնութեան նորին՝ բեկանին, և ՚ի բռնոյ ՚ի բաց քեցեալ չըրտնան. ըստ այսմ և ակարամիտքն ՚ի ժողովրդոց յամենայն շնչմանց աղմկեալ վրդումն, և հեստեալ խորհրդոց և կամաց գլխաւորաց իւրեանց՝ զանձինս ՚ի բաց որոշեն, որով ոչ զայլինչ շահին, բայց եթէ զվեաս անձանց՝ և զկոր-

ծանումն ազգին :

Թ . Փառք ազգին՝ են գլխաւորք նորա . զի որքան գլխաւորքն են մեծաշուք և զօրաւոր յիրս և 'ի բանս , այնքան գովանի համարիսանայ անուն ազգին , և երանելի համարին իւրաքանչիւր անհատ նորա . որպէս 'Եշխոյն հարաւոյ երանէր զծառայսն Ասղամոնի , զի այնպիսի իմաստուն տեառն ծառայէին . Գ . Թագ . Ճ . 8 : Ապա ժողովուրդ՝ որ զգլխաւոր իւր սիրէ և պատուէ , զփառս իւր բարձրացուցանէ :

Իսկ փառք գլխաւորաց՝ են ամենայն առանձնաւորք ազգին . այլ այս փառք նոցա ոչ 'ի բազմութեան անհատից կայանայ՝ քան թէ 'ի բարեկարգութեան օրինաց , և 'ի միաբանութեան ընդ միմեանս . վասն զի բազմութիւն ապառում և խաժամուժ ամբոխից՝ առաւել վնաս գործեն քան օդուտ : Այլ սակայն չէ արժան բարի իշխանի՝ վշտացեալ ընդ անպատկան բանս և գործս սովուե անոպայ անձանց , հրաժեշտ տալ յազգօգուտ իրողութեանց . քանզի 'ի մէջ հասարակութեան ազգին ոչ սակաւ աղնուաբարոց , խոհեմ , և բարեսէր անձինք գտանին , որք քաջ ճանաչեն զեւրախաւորս և զպատիւ իշխանաց : Բայց միայն պարտէ նոցա յորդորել զհամազգիս , լինել հնազանդ՝ երախտագէտ՝ և պատուադիր ազգասէր բարերարաց . և աղօթս առնել վասն նոցա , զի օր ըստ օրէ շքեղափայլ պայծառասցին 'ի բարօրութեան և 'ի յաջողութեան , 'ի սէր և 'ի խընամս հասարակութեան , որով առաւել ևս ազգն փառաւորեցի 'ի նոսա , և նոքա 'ի բազմութեան

ազգին : Քանզի և Աստուած մինչ աեսանէ զջանս
և զսէր գլխաւորացն և ժողովրդեան , ինքնին
կանխէ ընուլ զամենեսեան հոգեոր և մարմնաւոր
բարեօք . լստ այնմ , “ Եւ եղիցի մինչչե կարդա-
ցեալ իցէ նոցա , ես լուայց նոցա . և մինչդեռ
խօսեսցին , ասացից՝ թէ զի՞նչ խնդրէք ” . Եսայ .
ԿԵ . 24 :

“ Աշակեմ զիել եղարք՝ ճանաչել զվասպակաւորս և ըլ-
վերակայուս յեր ՚ի Տէր , և զվրատիչ յեր . և համարեցա-
րուս զնոսս արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա ” .
Ա . ԺՃԱՍԹ . Ե . 12 :

“ Ունինտիր չերուս առաջնորդաց յերոյ , և հպատակ
իացէս նոցա . զի նորս արմին վասն ոգուց յերոյ՝ որպէս թէ
համարս առաջ իցեն ընտ յեր ” . Երբ . ԺԳ . 17 :

“ Ամենայն անձն որ ընտ իշխանութեամբ է . ՚ի հնազա-
տութեան իացցէ . ժանով ոչ ուստե՞ս է իշխանութիւն , թիւ
ու յԱսպուծոյ ” . Հռոմ . ԺԳ . 1 :

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱԶԳԱՍԵՐ

Ա. Որպէս մարմին մարդոց է բոլոր ինչ բաղկացեալ յանդամոց իբրև ՚ի մասանց , սոյնպէս և հասարակութիւն միոյ ազգի է բոլոր իմն , որոյ մասունք կամ անդամք՝ են իւրաքանչիւր անձն նոյն ազգին : Այլ որպէս ՚ի վշտանալ հիւանդութեամբ միոյ յանդամոց մարմնոյն , այլ ամենայն անդամք ջանան դարման մատուցանել նմա և բժշկել . զի մի հիւանդութիւնն մահաբեր զբոլոր մարմինն ապականեացէ , որով և ինքեան ապականեացին :

Եյսպէս և իւրաքանչիւր առանձնաւոր՝ որ են անդամք հասարակութեան ազգին , պարախն օգնական լինել , և դարմանիչ տկարաւթեան և ցաւոց ընկերին , որ վշտացեալ իցէ ձախողակի պատահօք , զի մի հետ զհետէ յայլ ամենայն անդամն հասարակութեանն տարածանիցի ախտն . վասն զի ՚ի տկարանալ և ՚ի կործանիլ ողջոյն ազգին , անշուշտ կործանին և ինքեանք : Ուստի որք կորողքն են՝ եթէ ոչ ջանան ցաւակից և օգնական լինել ազգայնոց իւրեանց , պարտաւոր են դատաստանի , զի անհոգութեամբ լինին պատճառ կործանման բոլոր ազգին :

Որ ոչ լինի ձեռնտու փորձանաւորաց ՚ի յաջողութեան իւրում , ոչ զոք գտցէ ձեռնտու ինքեան ՚ի ձախորդութեան իւրում :

Բ. Ամենիմաստ տեսչութիւնն աստուածային՝ որ ինսամէ զարարածու իւր քաղցրութեամբ , ոչ

արար զամենայն մարդիկ միօրինակ , այլ զոմանս փարթամ , և զոմանս աղքատ . որպէս զի ողորմելի վիճակ աղքատաց՝ շարժեսցեն ՚ի գութ զփարթամը , և փարթամը յընչից իւրեանց լցուսցեն ըզկաբօատւթիւնս աղքատաց . և փոփոխակի լինելով միմեանց պատճառ բարեգործութեան , ամենեքին ընկալցին զվարձս յԱստուծոյ : Ո՞ի եթէ ամենեքին լինեին աղքատ , ո՞վ կարէր տալ զողորմութիւն . և եթէ ամենեքին էին փարթամ , ո՞վ զի ջանէր առնուլ զողորմութիւն :

Վակա որք կարսղք են յողորմիլ , գոհացողք լիցին զջեառնէ , որ ետ նոցա զինչ օգնել կարօտելոց . որպէս զի ընկալցին վարձս անեղբական փոխանակ բարերարութեան իւրեանց : Կայնապէս և աղքատոք ՚ի լնուլ իւրեանց զկարօտութիւն տըրովք փարթամաց , երախտահատոյց լինիցին գոհութեամբ զջեառնէ և զպարգեղաց , որպէս զի արժանասցին առնուլ վարձս յԱստուծոյ :

Այսկայն թէ և բազմութիւնն ըլինիցի երախտագէտ , չէ արժան փարթամաց գաղարիլ ՚ի բարերարելոյ , եթէ ցանկան նմանող լինել յօտուծոյ . զի ահա բազումք զբազում բարիս ընկալեալ յԱստուծոյ՝ ոչ ճանաչեն զբարերարութիւն նորա , սակայն Վատուած տակաւին առնէ նոցա զբարիս :

Գ . Եռն ազգասիրի չէ բաւական միայն սիրել զօդուան հասարակաց , և վասն նորա աշխատիլ , այլ և պարուէ տառել և ՚ի բաց հալածել զայն՝ որ ներհակի բարւոք գիտողութեան իւրում , և ջանց վեաս հասուցանել հայրենեացն :

Դ . Չէ արժան հայրենասիրին իսպառ համա-

կիւ տրամաւթեամբ և լքանիլ, տեսեալ թէ բազու
մութիւն մարդկան ատելութեամբ բերին առ մի
մեանս . առ երեսս կերպարանին բարեկամ, և 'ի
սրտի իւրեանց խորհին զչարիս . կեղծաւորին զօ-
գուտն միմեանց խնդրել, բայց գործով ոչ դա-
դարին վնասել . լարեն որոգայթս ստից երախ-
տաւորաց իւրեանց , և 'ի յայտնիլ դաւաճանու-
թեանն՝ զլանսան և 'ի չքմեզս լինին . խրատին և ոչ
զգաստանան . յանդիմանին և ոչ պատկառեն : Այլ
պարտ է նմա քաջալերիլ և միմիթարիլ, զի գոտա-
նին և սակաւք՝ ոյք սիրեն զընկերս իւրեանց ձը-
մարտութեամբ , և ջանան առնել նոցա զբարիս .
դնեն զանձինս 'ի վտանգի վասն հասարակաց օգ-
տի , և ոչ 'ի թշնամութենէ սուտ բարեկամաց
սրտաբեկ եղեալ կասին յետո :

Ե . Որ կարող է 'ի բարերարել, այլ եթէ ոչ
գուցէ կարօտ ոք՝ որ խնդրիցէ 'ի նմանէ զօդնա-
կանութիւն , մնայ անարդիւն . խոկ եթէ գոցին
կարօտեալք , բայց ինքն ոչ կամիցի օգնել նոցա ,
մնայ պարտական : Օ ի զի՞նչ օգուտ իցէ լինել
հարուստ , և ոչ ձեռն կարկառել աղքատաց . կամ
գիտնական , և ոչ ուսուցանել տգիտաց . կամ խո-
րագէտ , և ոչ խորհուրդ տալ փորձանաւորաց .
կամ ուժեղակ , և ոչ բաւնալ զտկարութիւն ար-
կարաց : Օ ի ամենայն բարիք իւր՝ որք չեղեն ինչ
օգուտ ումեք յընդարձակ աշխարհի , ոչ բնաւ լի-
նիցին օգուտ նմա յանձուկ գերեզմանի . այլ մա-
նաւանդ դարձցին 'ի պատիժ և 'ի դատապարտու-
թիւն անձին իւրայ . զի լսելոց է 'ի Տեառնէ յա-
նաշառադատն ատենի . Օյաւայ չար և վատ՝ ընդէ՞ր

ոչ ետուր զարծաթն իմ՝ ի սեղանաւորս, զի և ես
եկեալ տակասեօք պահանջէի :

Զ. Որ մասնաւոր անձին ումեք առնէ զբարե-
բարութիւն, առնու զհատուցումն ՚ի նմանէ ըզ-
չնորհակալութիւն . իսկ որ հասարակաց լինի բա-
րերար, ոչ ոք վնա համարի ինքեան յատուկ ե-
րախաւաւոր, զի գոնէ հասուսցէ նմա զպարաս իւր
գոհութեամբ : Վ ասն որյ հասարակաց բարերարն
առնու զհատուցումն վաստակոց իւրոց ՚ի Տեառ-
նէ, որ անթերի հատուցանէ իւրաքանչիւր ումեք
ըստ գործո իւր :

Է. Որ կարէ բանիւ և գործով օգնել կարօտե-
լոյն, և միայն բանիւ բերանոյ մատչի յօդնութիւն՝
և ոչ գործով, պարտաւոր գտանի վարձուց գոր-
ծոյ, զի կարէր՝ և ոչ կամեցաւ առնել. կորուսանէ
և զվարձս լեզուի իւրոյ, որով աշխատ եղեւ վասն
նորս : Իսկ որ ոչ կարէ օգնել գործով, և միայն
բանիւ ջանայ նպասաել՝ միջնորդութեամբ, կամ
խրատու, կամ միսիթարութեամբ, առնու զվարձս
գործոյ վասն յօժարութեանն, զի կամեր՝ և չեր
ձեռնհաս առնել :

Մարդիկ հանդերձեալ են պատժիլ ՚ի գժոխս,
ոչ միայն վասն չարեացն զօր արարին, այլ և վասն
բարեացն զօր պարտ էին առնել, և զանց արարին :
Ը. Կանացի և անարի որտի է երկնչիլ ՚ի ծան-
րութենէ աշխատութեան, և յետս կասիլ յազգու-
օգուտ իրողութեանց՝ յորժամ կարող է յանձնա-
ռութեամբ գժուարութեանց կատարել զայնս . զի
այնպիսին ոչ միայն մնայ տնվարձ՝ այլ և պարտա-
ւոր, զի ձեռնհաս էր առնել՝ և ոչ որար :

Ոչ այլ ինչ է լինել իշխան, բայց եթէ բառնալ զբեռն հասարակութեան :

Թ. . Ազգ մարդկան՝ որ ընդ ամենայն աշխարհս են տարածեալ, ունին զսկիզբն սերնդեան իւրեանց ՚ի միոջէ, և են եղբարք միմեանց, վասն որոյ պարտին սիրել զմիմեանս, և օգնական լինել այր ընդ ընկերի իւրոյ . ապա որ վնասէ ընկերին՝ վնասէ անձին, զի ՚ի միոջէ արենէ են զանգեալ :

Ժ. . Իռնաւորն՝ որ զայլս ծառայեցուցանէ, նըման է զայրացեալ գետոյ, որ փախանակ հեզիկ խաղացմամբ արբուցանելոյ զերկիր, ուժգին հոսմամբ արտաքս զեղեալ՝ իրամայ իւրմէ, ապականէ զանդըս և զտունկս ընդ որ անցանէ :

ԺԱ. . Իռնաւթիւնք իշխանաց ոչ կարեն աճեցուցանել՝ ՚ի քաղաքի զօդտակար արհեստ ինչ, այլ վարձատրութիւնք արհեստաւորաց, և օգուտն հասարակաց . զի մարդիկ վասն օգտի իւրեանց ջանան հնարել կամ կատարելագործել զարհեստ :

ԺԲ. . Ճողովուրդ՝ որ առաջնորդին ՚ի բարերար և յիմաստուն իշխանէ, կեան երջանկաբար և լի ամենայն բարեօք . վասն որոյ սիրեն զիշխանն ուտեւել քան զկեանս իւրեանց, և նմա յօժարին նուիրել զամենայն բարիս, զի նովաւ ունին զամենայն : Իսյց և իշխանք պարտին սիրել զհպատակս իւրեանց իբրև զրդիս, զի և ինքեանք սիրեցեալ լիցին ՚ի նոցանէ իբրև զհայր :

ԺԳ. . Իշխան որ ջանայ վասն բարւոյ և հանգըստեան ժողովրդեան իւրոյ, նորին ևս օգնեն նմա ՚ի ժամանակի նեղութեան . ոչ ինայեն ՚ի նմանէ զինչս իւրեանց, զոր ջանիւք նորա ստա-

ցեալ ունին . և այսպէս ինչը հասարակաց լինին
իշխանին առանց զբկողութեան և յափշտակու-
թեան . նա է նոցա իբրև բարեգութ հայր , և
նոքա իբրև որդի հաւատարիմ :

ԺԴ . Խշխան բարի և ազգասէր չունի հոգ կար-
գել պահապանս վասն կենաց իւրաց , զի սէրն հա-
սարակաց պահէ անվեսա զկեանս նորա . գիտեն՝ զի
՚ի կորուսանել զնա , կորուսանեն զերջանկութիւն
իւրեանց . վասն որոյ նուիրեն զանձինս իւրեանց
՚ի պահպանել զնա , զի պահեսցեն զերջանկութիւն
իւրեանց՝ զոր ունին նովու :

ԺԵ . Խշխատութիւն ինչ յօգուտ ազգի կամ
քաղաքի՝ կարէ լինել կրկնակի , կամ նուիրմամբ
անձին վասն սիրոյ հայրենեաց՝ առանց ակնկալու-
թեան փոխարինի , և կամ վաճառմամբ աշխատա-
նաց՝ վասն ընդունելութեան վարձուց : Արդ՝ նը-
ւիրումն անձին ծրիապէս՝ է գործ ազատաբարոյի ,
իսկ ակնկալութիւնն վարձուց՝ է գործ ծառայի ,
զի այս երկու ծայրը են անմէջ :

Ի՞այց պահանջէ արդարութիւնն զի հասարա-
կութիւնն ճանաչիցէ զչափ երախտեաց բարե-
րարին , որ աշխատի ծրիապէս , և հասուսցէ զփո-
խարէնն՝ զշնորհակալութիւն կամ զվարձս . միայն
թէ երախտաւորն չունիցի ինչ ակնկալութիւն ,
զի մի ազատութիւնն ազնուական՝ դարձյի յանարդ
ծառայութիւն . զի ծառայից է առնուլ վարձս ընդ-
աշխատութեան : Անհնար է թէ կորուսցէ ինչ , որ
յօգուտ ընկերին առնէ զբարիս :

ԺԶ . Խշխատիլ ծրիապէս ՚ի սէր Աստուծոյ վասն
օգտի ընկերին՝ է ծառայել Աստուծոյ , և բարե-

բարել ընկերին . իսկ աշխատիլ վասն ընկերին ա-
կընկալութեամբ վարձուց՝ է ծառայել մարդկան ,
և բարերարել անձին : Որ ակնկալութեամբ պա-
տուց և մեծութեան աշխատի յօգուտ հասարա-
կաց՝ է ծառայ մեծութեան և պատուց . իսկ որ
աշխատի աղատօրէն՝ միայն վասն սիրոյ առաքինու-
թեան , է իշխող պատուց և մեծութեան :

Ժէ . Փառքն կայանայ ՚ի բարերարութեան , և
ոչ ՚ի փարթամութեան . ապա թէ ոք կամի սաս-
նալ զիառոս , մի դադարեսցի առնել զբարիս այլոց :
Ոչ ոք կարէ ունիլ զՃշմարիտ մեծարանս և զիառոս ,
եթէ չունի բարերարութիւն : Պարտ է աշխատիլ
յօգուտ հասարակաց սոսկ վասն սիրոյ առաքինու-
թեան , և ոչ եթէ վասն փառաց՝ գովութեան՝ և
շահու . զի եթէ իբրև վարձ աշխատութեան ըն-
կալցի զիառոս կամ զգովութիւն կամ զինչ , կո-
րուսանէ զյարդ առաքինութեան , և որպէս թէ
զսկի փոխանակէ ընդ հողոյ :

Մեծատուն ոք օրէնագիր ՚ի հնաւմն՝ եղ զբա-
զում օգտակար օրէնս ազգի իւրոյ , և երդմնեցոց
զնոսա շուծանել ինչ յօրինաց անտի , մինչ ինքն
ոչ գտանի ներկոյ ՚ի միջի . և ապա գաղտ մեկու-
սայեալ ՚ի հայրենեաց իւրոց յերկիր օտար , եկաց
անդ իբրև այր մի աղքատ մինչեւ ցմահ . զայս ա-
րար վասն սիրոյ աղքին , զի հաստատուն և մշտին-
ջենաւոր մնացեն օրէնքն ընդ պարտաւորու-
թեամբ երդման :

Մերբուալ եգիպտացի՝ որ եղեւ իմաստուն թա-
գաւոր լութենացւոց , այնքան կամեցող էր բարւոցն
հասարակաց , մինչ զի ոչ կամեցաւ կարդել զորդին

իւր յաջորդ թագաւորութեան, ածեալ զմտաւ՝
թէ գուցէ գտանիցի այլ ոք առաւել արժանաւոր
քան զորդիս իւր :

Ճ. Ոչինչ են զարմանք, եթէ իշխան բարի
և երախտաւոր հասարակաց վաստահամբաւեսցի
յայնցանէ՝ որոց արարեալ է զբարիս. զի այս խեկ
են այժմ օրէնք աշխարհի՝ թէ երախտաւորն առ
աւեսցի յամենեցունց : Ուստի և բարերար իշխանն
գիտելով զայս, ոչ ինչ դժուարի ընդ դժնդակ հաւ
առւցումն զօր ընդունի, այլ միսիթարի ընդ դիւ
ցաղնական առաքինութիւնս իւր՝ որք բաւական
են սփոփել զսիրտ նորա . մանաւանդ զի հաստա
տեալ է ՚ի միտս, թէ արժան է բարւոյ իշխանի
առնել հասարակաց զբազում բարիս, գիտելով՝
թէ առաջի կայ նմա առնուլ հաստցումն յա
պաշնորհից զբազում չարիս :

ՃԹ. Ինկերական կենցաղավարութիւնն է իբր
թե անուաւոր ժամացոյց, ուր անդամք ընկերու
թեան հաղորդութեամբ միմեանց գործեն զհաւ
սարակաց բարին . զի ոմն մշակէ զերկիր, և ոմն
դարմանէ զիսաշինս . ոմն անկանէ զոստայն, և ոմն
գործէ զերկաթ . ոմն օգտակար օրինօք կառավարէ
զհասարակութիւնն, և ոմն զօրութեամբ զինու
պահէ զհայրենիս, և այլք ամենեքին ըստ պէսպէս
շնորհացն զօր ունին յԱստուծոյ՝ արդեամբք վաս
տակոց արբանեկեն հասարակութեան :

Եւ զօր օրինակ՝ եթէ մի ինչ անիւ ՚ի ժամա
ցուցէ անտի պակասեսցի կամ խանդարեսցի, տր
կարանայ այնուհետեւ զպարտուպատշաճ գործու
ղութիւն իւր անվիշտ կատարել . այլ է՝ զի կազ

՚ի կաղ ընթանայ , և է՝ զի կառեալ գաղարի : Ռստ սոյն սարասի՝ եթէ մի ՚ի կարեւոր անդամոց անտի հասարակութեան սրակասեսցի կամ խան գարեսցի , հասարակութիւնն ողջոյն լինի . ՚ի վը տանդի , կամ խապառ կործանի . որպէս եթէ պաշ կասեսցի մշակ , կամ ոստայնանկ , կամ գարբին : Եւ կամ թէ խանդարեսցի զինուորական բարեւ կարգութիւնն կամ օրինացն արդարութիւն , որպէս եթէ զինուորն փոխանակ լինելոյ քաջասիրտ և հայրենասէր , եղիցի վատասիրտ և հայրենեացն մասնիչ . և իշխանն կամ գատաւորն փոխանակ օգտակար և իմաստուն օրինաց , դիցէ զօրէնս անիրտւս և վնասակարս հասարակութեան , մանաւանդ եթէ զկամա իւր արասցէ օրէնք :

Վաս փութալի է ազգասիրին զպական յանդամոց անտի ընուլ , և զիսանդարեալն ուղղել : Իսկ եթէ չկամեսցի ուղղիլ , արժան է զայնպիսին . ՚ի բաց քեցուլ ՚ի մարմեոյ հասարակութեան , զի մի և զայլոյ յանդամոց խանդարեսցէ : Եւ ահա յայսմ է հաստատեալ երջանկութիւն և թշուտութիւն ընկերական կենցաղավարութեան :

Է . Չորք ինչ կարի հարկաւորք են առ երջանկութիւն ազգի . տուաջին՝ մեծ և առաջին գրել զպահպանութիւնն օրինաց . երկրորդ՝ իւրաքանչիւր ումեք աշխատ լինել . ՚ի ստացումն կարեւոր պիտոյից . երրորդ՝ ՚ի ժամանակի հարկաւորութեան . ՚ի թիկունս հասանել ընկերին , չորրորդ՝ ջանալ վասն օգտի և բարւոյ հասարակութեան :

Երջանիկ է ազգն , որոյ առաջնորդք են բարեւ կարգ , իշխանք հայրենասէր , քահանացք իմաս-

տուն, դաստաւորք արդար, ուսուցիչք առաքինի,
ծերք խորհրդատաւ, երիտասարդք բարեջան :

Ի՞. Աստուած ոչ առնէ որքան կարէ՝ այլ որքան կամի, իսկ մարդս ոչ առնէ որքան կամի՝ այլ որքան կարէ. և Աստուած այնչափ ինչ պահանջէ՝ ՚ի մարդկանէ զբարիս, որչափ կարէ առնել։ Բայց պարտէ առն հայրենասիրիս առաւելընտրել զօդատակարն ազգին՝ քան զիառաւորն, յորժամ չիցէ հնար զերկոսին ևս միանդամոյն առնել։

Ի՞. Որ ունի զոէրն Աստուծոյ բնակեալ՚ի սրտի իւրում, ոչ դադարի ՚ի սիրելց զընկեր իւր. իսկ սիրել զընկերնէ առնելնմա զբարիս. զի սէրնէ հիմն և արմատ, և բարերարութիւնն է սատ և բողըոջ. իսկ եթէ սասն իցէ դալար, յայտ է թէ արմատ նորա է կենսաւոր։ Ապա որ բանիւ լոկով ցաւցանէ սիրել զընկեր իւր, և չառնէ ինչ գործ օգտակար նմին, չէ կատարեալ՝ ՚ի սէրն Աստուծոյ։

Ի՞. Որ կարուսանէ զգութ և զմարդասիրութիւն, ոչ ևս է մարդ՝ այլ գաղան այլանդակ, վասն որս մինչ անկանի ՚ի վատանդս, ոչ ոք գտանի նմա կարեկից և օգնական, այլ ամենեքին իբրև ՚ի գոռ գաղանէ հեռի կան ՚ի նմանէ. զի որ անգութէր այլոց, արդարութիւնն Աստուծոյ ոչ ներէ գտանելնմա զգութութիւն յումեքէ։ Վ ասն որս մի ումեք մեղադիր լիցի ՚ի նեղութեան իւրում, զի արժանի անդթութեան որտի իւրոյ առնու զհատուցումն։

Ի՞. Որ կարէ օգնել և ոչ յանձն առնու օգնել՝ է անգութ. իսկ որ կարէ և յանձն առնու՝ այլ ոչ օգնէ, է անգութ և անիրաւ, զի առաւել սրտաբեկ առնէ զկարօտեալն։

Նշան է բարեգութ սրտի, որ ինքն ՚ի նեղութեան գոլով՝ ջանաց օդնել նեղելոյն ըստ ձեռնհաս գոլոց :

11. (Օ) գնել ամենեցուն յամենայն ժամանակի՝ է գործ Աստուծոյ . կատարել զամենայն խնդիրս՝ է գործ ծառացի . կատարել զոմանս՝ և զանց առնել զոմամբք, է գործ աղատի . տրանջել վասն այն՝ զոր խնդրեաց և ոչ էառ, է գործ անիրաւի . ապերախտ գտանիլ առ այն՝ զոր խնդրեաց և էառ, է գործ անհաւատի . չարամիլ ընդ այն՝ զոր խընդրեաց և ոչ էառ, է գործ առն բարեբարսի :

12. Այր քաջ և երկայնամիտ ոչ լինի յուռաբեկ յորժամ յապաղի կատարումն խնդրոյն՝ զոր խնդրեաց յօդուտ իւր, այլ քաջութեամբ համբերէ մինչեւ առցէ . իսկ որ անարի է և փոքրոգի, ընդ յապաղելն լքանի՝ և ՚ի բաց դառնաց : Եւ նա որ մոռանաց զբարերարութիւնն՝ զոր ընկալեալ է յումեքէ, և գանգատի վասն այնր զոր խնդրեաց և ոչ էառ, անիրաւ է և ապերախտ :

13. Յետին անմոռութիւն է և արտաքոյ բնաւորութեան՝ վատահամբաւել ումեք զանձն իւր. և զարմանք են՝ եթէ զիարդ ոմանք վատահամբաւեն զազդն իւրեանց չարախոսելով զնմանէ, որ պէս թէ ինքեանք միայն իցեն ընտիր և պատուական, և ազդն ողջայն անարդ և վատթար : Եւ ոչ տեսանեն կուրացեալքն կրիւք, եթէ ամենայն մասըն կարգի առ բոլոր ինչ, և ՚ի նմա բովանդակի . իսկ եթէ բոլորն վատթար իցէ և արհամարհ, քաջայացտ է՝ թէ և մասն ինչ նորտ է ընդ նմա անարդ և վատթար :

Արդ՝ թէ հասարակութիւնն ողջոյն ազգին իցէ անգոսնելի և վատթար, ապա նոքին իսկ չարախօսքն՝ որք են անդամ և մասն հասարակութեան ողջոյն ազգին, լինին անգոսնելի և վատթար։ Ուրեմն չարաչար կուրութիւն է վատահամբաւել ու մեք զազգ իւր։

ՏԵ. Այս մոլի՛ իւրեւ յանդիմանի և անարգի յազգէ իւրմէ, երթայ յարի յազգ յայլ կատարել զհաճոյս իւր։ զի ոչ յուսայ այնուհետեւ լընուլ զկամս չարութեան իւրոյ յազգի անդ իւրում, և ոչ ես գտանել զպատիւն զօր կորոյս։

Վպա սկսանի չարախօսել զազգէ իւրմէ՝ անխիղջ մտօք բիւր բամբասանս կուտելով՝ ի վերայ առ ՚ի չըմելզ կացուցանել զինքն, և հաճոյ յաշօտարաց։ Աւանդ կուրութեան մտացն և յաւետ անզգամութեանն. կամելով գտանել զյարգանս, առաւել անարգի. զի նախատելով զազգ իւր՝ զանձնն նախատէ. քանզի եթէ արմատն ոչ է բարի, ապա և ոստն։ Եւ այսու յաւելու զչար ՚ի վերայ չարի. զի յաւաջն միայն էր չար յազգի իւրում, և յաւելով զանարգ և զամարգի գործ ազգատեցութեան՝ լինի ամենաչար, և մատնիչ հայրենեաց։ Եւ սրով կամէր զվատթարութիւն իւր վարագուրել, այնու առաւել յայտնի ցուցանէ. զի լողզք բազմիցս անզգոյշ գտեալ հաւաստի համարին ըլլսուտ զբարտութիւնս նորա. բայց վասն ապերախստութեան նորա առ ազգն իւր՝ արհամարհեն զնա և խոտեն, ածեալ զմտաւ՝ թէ որ առ իւրան անհաւասարիմ եղե, զիա՞րդ առ օտարս լինիցի հաւաստարիմ։

Տեսեալ ազգատեցին՝ թէ ունայնացաւ մնոտի յօյս իւր, որ ակն ունէր ընուլ զհաճոյս անձին իւրոյ, միանգամայն և գտանել զպատիւ իբրեւ ձըշաբառասէր, այնուհետեւ դարձ առնել ՚ի հայրենիսն ոչ ախորժէ, զի ոչ կամի ձանաչել զսխալանս իւր. վասն որոյ իսպառ յուսահատեալ՝ յաճախէ զանհնարին բարուրանս և զստութիւնս, մերթ ՚ի վերայ միոյ և մերթ ՚ի վերայ միւսոյ ազգին, որպէս զի գանէ միւսոմ ՚ի նոցանէ բարեհաճոյ թրւեսցի. այլ սակայն միշտ անարդ և վատահամբաւ գտանի :

Արդ՝ ՚ի պատճառս չարութեան այսպիսեաց լի են գրեանք բազում ազգաց սուտ զրպարատութեամբք զմիմեանց. զի հայրենատեացն ՚ի ծածկել զյանցանս իւր՝ անխիղձ մտօք ստէ, և լսողն առանց քննութեան հաւատոյ և դատի. յորոց ծնաւ և ծնանի միշտ անհնարին ատելութիւն ՚ի մէջ ազգի և ազգի :

Իթ. Այնքան հարկ ՚ի վերայ կայ իւրաքանչիւրոց ՚ի մարդկանէ սիրել զհայրենիսն և զազգիւր, մինչև ՚ի ստիպել բանաւոր պատճառաց հարկիւ ՚ի վերայ եկելոց՝ պարաւաւոր դատի ոչ միայն զարտաքին բարիս՝ զինչս և զստացուածս, այլ և զկեանս մարմնոյ նուրիբել ՚ի սէր և յօգուտ հասարակաց բարուցն. զի այս է կշեռ իրաւանց ազգասիրութեան։ Ա ասն զի եթէ միոյն վնասուք և մահուամբ մարմնոց՝ բազումք փրկելոց իցեն ՚ի վրտանգիւ կորստեան հոգւոց կամ կենաց, վնասեացի այն մին՝ զի փրկեսցին բազումք :

Եւ յայն դիսուած ոչ համարի նա մեռեալ,

այլ անմոհական յիշտոտակաւ յաւերժացեալ . զի ընդ իւրոյ ազգին կամ հայրենւոյն կեայ միշտ կենազանի , որոց եղեւ առիթ փրկութեան . մանաւանդթէ ազգն կեայ 'ի նմին , որ ետ զանձն և զինչո իւր վասն ազգին . բատ այնմ՝ քաղցր է վտան հայրենեաց մեռանիլ :

Բայց զգուշալի է յաւետ , զի մի վտանդ կորլատեան հոգւոյ իւրոյ լինիցի . զի զի՞նչ օգուտ է՝ զաշխարհ ամենայն շահիլ , և զանձն իւր տուժել այսինքն զհոգին : Քանզի պարտ է ամենայն մարդոյ զփրկութիւն հոգւոյ իւրոյ նախադասել քան զազգ իւր , և զհայրենիսն : Օ ի ուր հոգին տուժի , անդ շահ ինչ ոչ գործի . զի ընդդէմ է իրաւանց և աստուածային վճռոյն , 'ի պատճառո սյըլոց ոմանց՝ կորուսանել ուժեք զհոգի իւր :

'Կարձեալ եթէ կորստեամբ ընչից կամ մահուամբ մարմնոյ միոյն փրկելոց իցէ հոգի միւսոյն , լաւ է միոյն թէ կորիցէ ինչք նորա , և մեռցի մարմնով , զի կեցցէ հոգի միւսոյն . զի առաւել է փրկութիւն հոգւոյ միոյն՝ քան զամենայն գանձու և զմարմնական կեանս միւսոյն . քանզի ընդ գիւտ միոյ հոգւոյ՝ ոչ ինչ գանձք տշխարհի և ոչ ինչ մարմնական կեանք կարեն փոխանակել :

Եւ դարձեալ եթէ միոյ ուրուք 'ի յերկուց ու մանց մեռանիլ հարկն ստիպեոցէ միայն մարմնոյ մահուամբ , պարտէ երկաքանչիւրոցն ևս ջանալ 'ի պահել զկեանս իւրեանց . զի նախկին է սէր անձին , և երկրորդ՝ ընկերին : Այսու օրինակաւ վարելի է և 'ի կորուստ ընչից . զի պարտ է ամենեցուն զիւրն նախ սլահպանել , և ապա զընկերին :

Եւ գարձեալ թէ պատահի ու մեք կամ զհոգին կորուսանել, կամ զինչ և զկեանս, պարտ է զհոգին պահել, և զինչ և զկեանս մարմնոյ կորուսանել. զի ոչ եթէ հոգին վասն ընչից և մարմնոյ, այլ ինչ և մարմինն վասն հոգւոյն են յաստուածուստ սահմանեալ :

Ա. Արդկայինս ազգ՝ յայտ է զի յառաջադոյն ՚ի միոջէ սկզբնաւորեալ եղեւ. և ապա տեղեաւ, լեզուաւ, կրօնիւք, և քաղաքական կաւալարութեամբ ՚ի միմեանց որոշեալ զատան . բայց ՚ի բընութիւնս մարդոյ արմատացեալ գոլով գերազանցել ՚ի վերայ ընկերին, իւրաքանչիւր ազգ օր ըստ օրէ փոյթ կալան զառ ՚ի միմեանց փոխ առնուլ զօդտակարն և զդիւրագոյնն ՚ի կենցաղօգուտ պիտոյից, որով այժմ պայծառացեալ պահճան ազգ յազգի վերայ :

Ա. Ա. Սակայն ազգային իրք յայնժամ ՚ի լաւանդր յառաջանան, յորժամ անհատ անձինք նորա ՚ի մի կամն գօտէպնդեալ ջանան յառաջ ածել ըգեբարին հասարակաց . և զօր միանդամ ստանան, զիցին յարատեռութեամբ հաստատուն պահեն . սրով ազգն ողջոյն անպակաս յամենայնէ որ ինչ մարդկութեանս է պիտանացու՝ ՚ի բարեբաստիկ կեանս վայելեն յաշնարհի :

Բայց սոյն ազգօգուտ իրողութիւն չէ հնար յատկանալ միոյ ու մեք, կամ սակաւուց ոմանց . զի եթէ ՚ի մի ոք՝ կամ յոմանս սեղմեալ լինէր, ՚ի պակասիլ նոցա չքանայր և գործն այն օդտաբեր + ապա յայտ է թէ առ ամենեսին տարածեալ պահի: Բայց ո՞յ յամենեցունց տիրաբար կարէ պահճալ

զանձնէ իւրմէ , թէ իցէ պատճառ բարութեան
ազգի միս , մինչ նոյն մին՝ ո ոք և իցէ , կարօտի
բաղմաց օգնութեան . զի բաց ՚ի յլատուծոյ ոչ
գոյ մի ըստ ինքեան բաւական՝ առնել զոր կամի :

Ուրեմն անկ է միաբանութեան բաղմաց գոր-
ծել ինչ յօդտակարաց . և այս լինի միայն ազգա-
սիրութեամբ , որպէս զի օգնութեամբ միմեանց
կարողացին ունել զոր ոչ ունէին , և անկորուստ
պահեսցեն՝ զոր միանդամ ստանան :

Վպա եթէ տեսանես թէ գոյ ազգ մի մեծ , ծա-
նիր թէ գոն ՚ի նմա բազումք՝ որք ազգասէր բարց-
իւք միաբանեալ զօրէն մեղուաց՝ նախանձախնդիր
են պահպանութեան հայրենի ազգին իւրեանց ,
ասպա թէ ոչ անհետանացը ողջոյն ազգն այն :

Վասն զի պահպանութիւն ազգի կոյանաց ՚ի
յատուկ օրէնս իւր , ՚ի կառավարութիւն իւր , ՚ի
լեզու իւր , և ՚ի սովորական կանոնս իւր . քանզի
յեղծանիլ և ՚ի կորնչչիլ սոցա՝ կորնչի և ազգն , զի :
՚ի բառնիլ այսպիսի տարբերութեանց՝ ամենայն
մարդիկ որպէս նոյն են ՚ի բնութիւնս , նոյն լինէին
և յազգի . և աշխարհս դառնայր որպէս ընդհա-
նուր բաղանիս , ուր մերկ ՚ի հանդերձից ոչ որո-
շն ՚ի միմեանց մարդիկ՝ թէ յօրմէ ազգէ իցեն :

Վպա կրօն , լեզու , սովորութիւն , և այլն , են
որպէս զարդ և հանդերձ ազգի , որք վայելչանակ
հանապազօր երկասիրութեամբ ազգասէր ան-
ձանց . զի ոմանկք զկրօնն պահպանեն , ոմանկք զի-
զուն կատարելագործեն , կէսք զգիտութիւնս պայ-
ծառացուցանեն , այլք զօդտակար արհեստո , և
զայլ պիտանիս յօտար երկրէ ՚ի ներքս ածեն : |շ-

ողբատ ոչ լինին սուանց միմեանց , զի՞ ՚ի պակասիլ միոյն՝ պակասին՝ կամ թերանան և այլք , զի կախումն ունին զմիմեանց . ուրեմն ամենեքեան պիտանի են առ ամբողջութիւն և կատարելու թիւն ազգին :

Իսյց ոչ ոք ՚ի նոցանել կարէ ասել զանձնել , թէ ինքն միայն է ըմբռնող և պահող . և ոչ ոք պարտի ուրանալ , թէ չիցէ ինքն միայն ըմբռնող և պահող ազգի : Ապա յայտ է յասացելցոց , թէ իւրաքանչիւր անհատ ազգի միոյ՝ զայս օրինակ պարտի ասել և հաւատալ , որպէս թէ ինքեան միայն կարօտ իցէ բոլոր ազգն , և դարձեալ թէ օգնել հարկէ եղբայրութեան : Օք ոչ ինքն՝ այլ միաբան եղբայրութիւնն է՝ որ պահէ զազգն , վասն որոյ և ինքն պահի ընդ ազգին . նմին իրի որ օգնէ եղբայրութեան , օգնէ իւրեան :

ԷՅ . Յատկութիւն իմն է ազգասիրութեան ջանալ շահեցուցանել զազգակիցո իւր առեւտրութեամբ՝ կամ օգտակար գործով . որովհետեւ օգուտ միոյն՝ համարի լինել միւսոյն . զի թէ այսօր նտ ՚ի քէն օգտի , ՚ի վաղիւն գուցէ դու յայլոց օգտիցիս , կամ ՚ի նմանէ : Արդ՝ այնչափ սերտ կալակցութիւն պարտի լինել ՚ի մէջ ազգայնոց , որպէս թէ համայն անհատ անձինք ազգին իցեն մի անձն և մի հոգի : Իսյց աւանդ՝ զի այժմ իսշ պառ անհետ երեկի ոգի ազգասիրութեան յազգի մերում . զի առաւել կամին ընդ օտարս առեւտրու առնել քան ընդ համազգիս , և առաւել ընդունելութիւն ցուցանեն առ օտարս՝ քան առ իւրայինու :

Եթ. Ոչ փաքր պարծանիք է ազգի միոյ ունել
յատուկ լեզու , գիր , կանոն , և կրօն . և ոչ փաքր
ազգասիրութիւն է հաստատուն պահել զնոսա .
և օր ըստ օրէ շքեղացուցանել . որով ոչ միայն
ողջոյն ազգն փառաւոր հանդիսանայ , այլ և իւ-
րաքանչիւր անհատք նորին . զի փառքն ազգի ՚ի
յանհատու իւր երեխ : Այս ազգասէր ջանիք՝ աե-
սանի յամենայն հրահանգեալ ազինս :

Հայց զիաֆր ոմանիք յազգէն մերմէ առաւել
փայթ են ուսանիլ զիւզու և զգիր օտար ազգաց՝
քան զայոց . բազումք ևս տեղեակ լեզուին՝ ընդ
միմեանս խօսին այլազգաբար , ոչ միայն ՚ի փողոցս
և ՚ի շուկայս՝ այլ և ՚ի տունս իւրեանց , գուցէ
և զայն պարծանիք համարին :

Այսու ախախւ անհոգութեան բազումք զա-
նուն եօթանասուն , ութառուն , և իննոսուն թուոց
անդիսացեալ են . զի ՚ի տասն թուոց մինչ ցվաթ-
ուունն հայերէն թուեն , և յետ այնորիկ տաճկա-
կան անուանակոչութեամք վարին . և ոչ ածեն ՚ի
միտ՝ թէ ողջոյն ազգն նախատելի լինի առաջի այլոց
ազգաց իբրև աղքատալեզու :

Մեծ անարդանիք է ազգի ոչ ունել սեպհական
լեզու և գիր , զի ոչ թուի լինել յատուկ ազգ .
ապա մեծագոյն նախատինիք է այնմ՝ որ ունիցի
և ոչ գիտիցէ . և ևս մեծագոյն արհամարհանիք՝
որ գիտէ և ոչ ՚ի գործ ածէ :

Լեզուագիստութիւնն այն գալիք է և օգտա-
կար . զի որքան լեզու գիտիցէ ոք , համարի այն-
քան թուով մարդ . բայց նախ պարտ է գիտել
զիւրն , և տպա զայլոցն : Ուստի որ ոչ գիտէ զիւ-

զու և զդպրութիւն ազգի իւրոց, արտաքոյ գաանի կարգի բնութեան, որ նախ զարմատն՝ և յետոց զստան յառաջ ածէ : Ապա պարտ է ամենեցուն նախ զիւր հայրենի լեզուն և զդպրութիւնն քաջ ուսանիլ, և ապա զլեզուս այլոց ազգաց :

Յայն սակա պարտական են առաջնորդք և գըւ խաւորք՝ որոց յանձն է խնամ և տեսչութիւն ազ գին, ամենայն հոգողութեամբ ջանալ կրթել ըն մոնկունս ազգին 'ի հայրենի լեզուս և 'ի դպրութիւնս, մանաւանդ յայնոսիկ քաղաքս՝ ուր ոչ երբեք գիտեն հայերէն :

Օ, ի եթէ առաջին հոգաբարձուք վութացեալ էին վարժել զնոսա 'ի հայրենի լեզուս, արդէն գտանէին նոքա հայրենախօս : Եւ որ տեսուչք և խնամածուք են այժմ՝ եթէ տակաւին անփոյթ արասցեն, յետնորդք նոցա գտցեն զամենեսին այլալեզուս . զի օր ըստ օրէ 'ի բազում տեղիս պակասի յազգէ մերմէ գործածութիւն հայկական քարքատուս :

Բազումք ևս անտեղեակ գոլով պատուականութեան և հնութեան Հայոց լեզուին՝ առ ոչ ինչ համարին զնա . այլ սակայն լեզու մեր կաստարեալ է, և հնագոյն քան զայլոց բազմաց, գուցէ քան զլեզուս ամենայն աղանց :

Հաւաստի իմն թուի, որպէս և մարթի ցուցանիլ 'ի բազում փաստից, թէ սա իցէ նախկին լեզուն որով խօսէր Ադամ և որդիք և սերունդք նորա՝ մինչեւ 'ի շինութիւն բաբելոնեան աշտարակին :

Ա ասն զի նահապեան Աց և ընտանիք նորա

խօսեին զլեզուն Աղամայ . որովհետեւ նախ քան
զլրհեղեղն ոչ գոյր այլ լեզու 'ի վերայ երկրի .
Եւ 'ի խօսանակիլ լեզուաց 'ի պատիմ աշտարակա-
շինութեան , 'Այ կենդանի էր 'ի Հայաստան , և
անխառն մնաց 'ի տան նորա նոյն լեզու , և բնա-
կիչք 'Ասխիջեանու և Արարադայ նովին լեզուաւ
կրթեցան : Եւ 'ի դառնալն Հայկայ 'ի կողմանցն
Բարելոնի յաշխարհն արարատեան , յոյժ հաւա-
նելի է ասել թէ նովին լեզուաւ վարեցաւ , որով
խօսեին բնակիչք տեղւոյն . մանաւանդ զի այն
բարբառ՝ էր նոյն ինքն հայրենի լեզուն Հայկայ ,
որով խօսեր յառաջ քան զլսառնակումն լեզուաց .
Հայց աւաղ՝ զի գտանին սմանիք , որք զյարդ նորա
ոչ ձանաշելով անգոսնեն 'ի զուր , որով զազգն
անպատիւ տունեն , ընդ նմին և զինքեանա՝ որ մասն
են ազգին :

“ Աշխայր յեղբօրէ օգնեալ իբրև զաղաց ամուր . և զօ-
րացեալ բարձրացեալ իբրև լուսաւորութիւն հասպատիւալ . . .
Առակ . Ժ. 19 :

“ Օ օրացարուս որդիս առջ լերուս 'ի վերայ օրինացն .
և 'ի նմին փառաւորեաջն . . . Ա . Առակ . Բ . 24 :

“ Օրինակ բարեաց և առաջինութեան մանկուց լուղեց .
և յօժարութեամբ և առջութեամբ 'ի վերայ սրբութեան օրի-
նացն մահու չափ ջանալ մարդասցեն . . . Բ . Առակ . Ա . 28 :


“ Աշխանի է որում զշնորհս զայս առնես . զի սիրէ զաղցա-
մեր , և զժողովրանոցն նա շինեաց մեղ . . . Առակ . Է . 5 :

“ Ամենայն նախառորութիւն բաժանեալ յանցն առերի .
և առուն բաժանեալ յանցն իրծանի ո . . . Առակ . ԺԱ . 17 :

“ Եւ գլուխ ամենայնի զի համարդաս իշես , համակարիս ,
Եղայրասերս , աղնուագութես , խոնարհս ” . Ա . Պետ . Գ . 8 :

“ Ուխտիս խնդրեի , ես ինչնին նշով լինելու քրիստոսէ՝
վասն Եղայր և աղջականաց իմոց ըստ մարմայ ” . Հռօմ . Թ . 3 :

“ Ես համարեցաւ չարաբիւլըն ժողովրեան Ապուծոյ ,
առն առ Ճամանակ մի վայելու ի մեջ ” . Հռօմ . Թ . 3 :



ԳԼՈՒԽ ՎԵՐԱՐՈՐԴ

ՎԱՐԺԱՊԵՏ

Ա . Արժապետք պարտին լինելքարեկեցիկ ,
զի աշակերտք առաւել ուսանին զայն ինչ՝ զոր ՚ի
վարժապետն իւրեանց տեսանեն , քան թէ յայլ
ամենայն մարդիկ : Բայց այս ինչ է խտիր . զի ե-
թէ վարժապետն է կատարեալ առաքինի , աշա-
կերտն թէպէտ և նմանող լինի նմա , այլ յոլովակի
ոչ հասանէ ՚ի չափ կատարելութեան նորա :

Իսկ եթէ վարժապետն իցէ մոլի , աշակերտն
ոչ միայն հասանէ ՚ի չափ յոռութեան նորա՝ այլ
և զանցանէ բազմօք , և լինի յոռեգայն :

Ո՞հ միայն բարի օրինակ վարուց ուսուցչին ա-
ռաւել օգուտ է աշակերտին , քան զբազում դասս
առանց բարի օրինակին :

Վարժանի է նախատանաց՝ որ զայլս աշխատի
կրթել , և զանձնէ չունի ինչ փոյթ , առ որ իրա-

ւացի է ասել . բժիշկ՝ բժշկեա զանձն քո : Օ թ
նա որ միայն զբնական մակացութիւնո գիտէ ու
սուցաննել , այլ ոչ արժանի բանաւորութեան գորա
ծը , է ծառ տերեւախիս՝ բայց անպատուղ :

Բ . Ո՞նուկ անհրահանդ և տգէտ՝ է իբրե
անբան , զի ոչ գիտէ կառավարիլ ՚ի բանէ՝ որ
յատուկ է բանաւորաց , այլ ՚ի կրից՝ որ սեպհաւ
կան է անբանից : Իսկ յորժամ ուսանի անդ զիւ
մաստութիւն , սկսանի նուաճել զկիրս , և վարիլ
բանիւ , և ելոնէ անտի այր բանական :

‘Օ՞նողք ծնանին զորդիս իբրեւ անբան , իսկ վարժ
ժապետք առնեն զնսատ բանական : Օ՞նողք տան
զաւակաց միայն զկեալ , իսկ վարժապետք տան
զբարւոք կեալ :

Գ . Ո՞նկունիք եթէ քաջ ձանաչէին՝ թէ զի՞նչէ
մնունդ մարմնոյ , և զի՞նչ մնունդ հոգւոյ , զվար
ժապետս կոչէին հայր բարի , և զծնողս հայր մի-
այն . զի ծնողք զմարմինս մնուցանեն կերակրովք ,
իսկ վարժապետք զհոգիս՝ իմաստութեամբ և ա-
ռաքինութեամբ :

Դ . Ո՞եծ զգուշութիւն պիտի ՚ի վարժել զոր-
դիս իշխանաց , ածեալ զմտաւ՝ թէ հանդերձեալ
են նոքա լինել կառավարիչ հասարակութեան :

Ե . Ենդաստանիք եթէ ոչ մշակեսցին , ոչ բերեն
զարմտիս բարեաց . մանկունիք եթէ ոչ դաստիա-
րակեսցին , ոչ պաղաքերեն զառաքինութիւն :
Չեք ինչ ՚ի կեանս մարդկան որ առաջնորդեսցէ
յառաքինութիւն , որպէս իրատ բանից , և օրի-
նակ դործոց :

Զ . Հոգի իրատու է առնել և ուսուցանել .

զի զոր խօսի աք բանիւ , պարտ է և ինքն կատարել գործով . ապա թէ ոչ ոչ ինչ զօրեն բանքն խրատու :

Է . Որ հանդերձեալ է լինել խրատիչ այլոց , նախ ինքն առցէ զխրատ յայլոց :

Ը . Խրատք իմաստնոց՝ թէ և խստագոյն թուին , բայց օդտակար են յոյժ . որպէս դեղք բժշկոց՝ թէպէտ և դառն իցեն , բայց առողջարար են հիւանդաց :

Դ . Դաւազան խրատու պիտոյ է նոցա , որք ոչ զգատանան բանիւ խրատու . զի ըստ առածին՝ որ ոչ ունկամբ լաէ զբան , լաէ թիկամբ մինչ ըմպէ գան :

Թ . Որ կարգեալ է ուսուցանել այլոց՝ զօրս ոչ գիտեն նոքա , ջանասցէ և ինքն ուսանիւ յայլոց՝ զօրս ոչն գիտէ . ապա թէ ինքն չունի փոյժ ուսանելոց , յայտ է թէ և ոչ այլոց ջանայ ուսուցանել . զի որ զօդուան անձին ոչ ինդքէ , ոչ բնաւ խնդքէ զօդուան այլոց : Մանաւանդ զի ոչ է նմաբաւական գիտել զգիտութիւն , այլ և գիտել զկերպի ուսուցանելոց . ապա թէ ոչ աշխատի բազում , և շահի սակաւ :

Ժ . Դաստառուք եթէ ձշդելով ուսուցանեն աշոկերտաց իւրեանց զգիտութիւն , յաւէտ քան զժլատս ընդունելոց են զգատաստան . զի ժլատք երկնչին ծախել զարծաթ ՚ի պէտս , կամ ընձեռել ինչ կարօտելոց , գիտելով թէ որչափ ինչ տան այլոց , այնչափ պակասի ՚ի մթերից իւրեանց : Իսկ դաստառուք չունին այդպիսի երկիւղ . զի նըմանին լուսաւոր ճրագի , յորմէ որչափ ճրագունիք լուցանիցին , ոչ կորուսանէ ՚ի լուսոց իւրմէ :

Վանաւանդ զի փորձառու են և գիտեն, թէ դա
աստուութեամբ աճի գիտութիւն իւրեանց՝ և ոչ
եթէ նուաղի. զի ըստ առածին՝ որ ուսուցանէ,
և ինքն ուսանի :

Ըայց զգոյշ լեցին դասառուք ուսուցանել
զգիտութիւն՝ որոց ուշիմ են մտօք՝ այլ յան-
դուգն բարուք. որպէս ոչ բարւոք առնեն, որք
տան զսուր ՚ի ձեռս չարաբարոյից. զի բնածիր
ուշիմութիւնն՝ ստոցական գիտութեամբ զօրա-
ցեալ, լինի ՚ի նոսա առիթ վնասու անձանց իւ-
րեանց և ընկերաց :

ԺԱ. Պատուական ձիրք բնութեան՝ որպէս սը-
րամութիւն, քաջ յիշողականութիւն, ճարտա-
րութիւն լեզուի, և այլն, որ գոլութեան պատ-
ճառք են բարեկարգ իմաստնոց, դառնան ՚ի նա-
խատինս անզգոյշ իմաստնոց : Իմաստուն մոլի՛ հր-
ըէշէ այլանդակ, զի ունի զգիտութիւն մարդոց,
և զգործ անբանից : Ասկան մարդիկ՝ եթէ արե-
գակն սփուեսցէ զմէդ միթութեան, և իմաստունն՝
եթէ արասցէ զգործ մոլեկան :

Ճ.Բ. Ենհնարին ցաւ է առն բարեսրտի տեսա-
նել զագէտս ամբարձեալ ՚ի պատիւ, և զիմաս-
տունս՝ ներգեեալ և կոխան եղեալ : Որպէս ակն
աղնիւ՝ գեղեցիկ փայլի ՚ի շարս անարգ քարանց,
նոյնպէս այր իմաստուն՝ ՚ի ժողովս տգիտաց :
Իմաստունն ոչ մեռանի, որ գրաւոր աշխատու-
թեամբ թողու յիշատակ յերկրի :

“ Ամասպութիւն բարի՝ առյ շնորհս , և ճանաչել զօրէնս՝
մրաց բարեաց է ” . Առակ . ձԳ . 15 :

“ Բանն յեր յամենայն ժամ է շնորհօք Տետոն , իբրև
աղյեւ համեմեալ էցի . Գիտել Շայէս արժան իցե յեղիւրա-
շանշիւր ումեց՝ առալ պարագանին ” . Լող . Դ . 6 :

“ Փոռ-լացիր զանյն չո ընդիր իացուցանել առաջ Աս-
պուծոյ , մշակ առանց ամօլոյ , ո-ղվու համառօքել զբան
ճշմարգութեան ” . Բ . Տիմ . Բ . 15 :



ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ճ Ն Ո Ղ

Ա . ♪ այր՝ որ բարւոք կրթէ զօրդիս իւր ՚ի
կենդանութեան , յաւերժացուցանէ զյիշատակ
իւր զինի մահուան : Բարի կենցաղավարութիւն
որդւոյ կենդանւոյ՝ փառաւոր տանէ զհամքաւ
հօրն մեռելոյ :

Բ . ՞ Օնողք՝ ՚ի մեռանիլ իւրեանց եթէ թող-
ցեն զօրդիս իւրեանց աղքատ՝ բայց իմաստուն ,
բազում ընչից ժառանգորդս առնեն զնոսա , քան
թէ թողուցուն հարուստ՝ բայց տգէտ :

Գ . Եթէ ոչ կամիս արտօմիլ ՚ի վերայ զաւակաց
քոյ , արտօմեցո զնոսա ՚ի մանկութեան իւրեանց
յանդիմանութեամբ և սաստիւք : Ոչ այնքան վիշտ
է տեսանել զօրդին վաղամեռիկ , որքան տեսանել
զնա չարաձձիկ :

Կ. Անօգուտ է հօր կրթել զորդին՝ ի վարս բարիս, եթէ մայրն թոյլ տայ նմա սավարիլ՝ ի չարիս:

Ե. Որ զորդին իւր փափկութեամբ սնուցանէ, ի տեղի կաթին թոյն արբուցանէ . զի մանկական փափկութիւնն ի զարդանալ հասակին՝ առաւելքան զմոյն վնասէ : Անգութ է մայրն, եթէ ոչ սնուցանէ զորդի իւր բայց առաւել անգութ է, եթէ սնուցանէ փափկութեամբ :

Զ. Փափկութիւնն ի մանկունս՝ է իբրև փուշ կակուղ. բայց որբան մեծանայ մանուկն՝ այնքան կարծրանայ և նա, մինչև խայթել առ որս մերձենայ :

Է. Օճողը եթէ իցեն առ որդիս իւրեանց կարի բազմագութ, որդիք նոցա լինին առ նոսա իսպառ անգութ: Աէրն հայրական դառնայ ի թըշնամութիւն, եթէ ներելով յանցանաց զաւակին՝ պատճառս տայ անգրէն մեղանչելոյ :

Ը. Խորթ մայր իրաւամբ կոչի այն ծնաղ, որ գիտէ ծնանիլ զորդիս, այլ ոչ գիտէ բարւոք կրթութեամբ սնուցանել. նա է մայր հարազան՝ որ գիտէ ծնանիլ միանգամայն և սնուցանել՝ ի համեստ վարս :

Թ. Վանկունք առաւել ուսանին՝ ի մարց քան ի հարց, զի մայրենի դաստիարակութեամբ սնանին մինչև ի զարդանալ իւրեանց, ապա պարաին մարք բարիոք կրթել զմանկունս իւրեանց, զի մի յետոյ լացցեն՝ ի վերայ կենդանի որդւոյն առաւելքան՝ ի վերայ մեռեալ զաւակին :

Ժ. Պարաական են ծնողը կրթել զմանկունս իւրեանց՝ ի բարի վարս հոգեշահ խրատուք, և

օրինակօք առաքինագործ քաղաքավարութեան իւրեանց . քանզի մատաղ հասակն մանկական՝ թէ և բնական խառնուածով իցէ բարի , սնանելովն ՚ի մէջ չարաբարոյից , և տեսութեամբ անբարի կենցաղավարութեան ծնողաց իւրոց՝ լինի վատթար և մոլի :

ԺԱ. Նախատինք հօր չարաբարոյի ծանրանայ չարաչար վարուք որդւոյ իւրոյ , զի ՚ի հօրէն ուսաւ լինել չար :

ԺԲ. Օնողք՝ արժանի են նախատանաց և պատժոց , որ զորդիս իւրեանց թողուն շրջիլ անգործ :

ԺԳ. Օնողք որ անփոյթ լինին , և ոչ տան զորդիս իւրեանց յուսումն գիտութեան՝ զի լինիցին այր բարի , և ոչ յարհեսաս կարեւորս՝ զի շահեացին զպէտա անձանց , պարտաւոր են գատաստանին զի ինքեանք գատանին պատճառ անհրահանդ և անգործ լինելոյ որդւոց իւրեանց :

ԺԴ. Ապականին ձուք , յորժամ թիսամայրն թողու անխնամ , և շրջի ըստ հաճոյս իւր . անպիտան լինին մանկունք , յորժամ ծնողք ոչ պահեն զնոսա ընդ թեօք իւրեանց , այլ անհոգ եղեալ զնոցանէ , խնդրեն զդիւրութիւն անձանց :

ԺԵ. Եթէ ոք կամի զի որդի իւր լինիցի այր բարի , յանձն արասցէ այնպիսի գատիարակի , որ ոչ միսյն իցէ գիտնական՝ այլ և առաքինի . զի մանուկն զայն ուսանի՝ զոր միանգամ յուսուցիչ իւր տեսանէ . քանզի տեսութիւն աչաց առաւել զարթուցանէ զբաղձանս կամաց՝ քան լուրն լսելեաց :

ԺԶ. Ոչ է փառք հարց տեսանել զորդիս իւրեանց գիտունս միայն՝ այլ և գործունեայս բա-

րեաց, զի ուսանելի է զգիտութիւնն վասն գործելոց զբարիս :

ԺԵ. Որդիք մեծատանց եթէ իցեն անհրահանգ, հուսկ ապա լինին աղքատ . որդիք աղքատաց եթէ իցեն հրահանգեալ, 'ի վախճանի լինին մեծատուն :

ԺԹ. Այնպէս լինի ոք յերիտասարդութեան, որպէս անեալ իցէ 'ի տղայութեան . ուստի մեծատառն ոք՝ եթէ կամի զի որդի իւր լինիցի երիտասարդ բարի, մնուսց զնու 'ի մանկութեան հասակի 'ի բարի կրթութիւնս :

ԺԹ. Որդի առն մեծատան՝ եթէ բաւական համարի զիտաւան և զհամբաւ զոր ժառանգութեամբ ունի 'ի նտիսնեաց, և ոչ ջանոյ յաւելուլ օր ըստ օրէ գիտութեամբ և առաքինութեամբ, մինչ յարկածից ժամանակին կորուսանէ զնոսա, միշտ մնոյ յանարգութեան, զի 'ի մանկութեան իւրում ոչ ուսաւ ստանալ զիտաւ :

Ի. Հարը՝ մինչ տեսանեն զորդիս իւրեանց գործել զանուղղայս, պարտական են քաղցրութեամբ խրատել զնոսա . իսկ եթէ որդիքն անհնազանդ գտանիցին, չափաւոր սաստիւք ածցեն զնոսա 'ի յուղղութիւն : Համարձակութիւն տալ երիտասարդաց, է թողուլ զանձ ամեհի ձիոց, կամ հեղուլ զձէթ 'ի բորբոքեալ հուր, կամ 'ի պարկ վշոյ արկանել զկայծ : Ճշատութիւն է գովելի չափաւ համարձակութիւն երիտասարդաց և մանկամարդաց :

Խ. Համբահաս մարդիկ՝ 'ի տեսանել և 'ի լսել զանպատշաճո, է երբէք՝ զի հետեին, և է՝ զի

՚ի բաց խորշին . իսկ մանկունք ոչ բնաւ գիտեն խորշիլ , այլ զոր լսեն և տեսանեն՝ վաղվաղակի յօժարին ՚ի դործ դնել :

ԻԲ . Օնողք՝ եթէ ոչ բարւոք վարեսցին ՚ի զար գացուցանել զորդիս իւրեանց , որդիք նոցա ոչ կարեն լինել ժառանդ բարի : Պարտ է և արժան՝ զսէրն ծնողական զոր բնութիւնն ետ ունել ՚ի վերայ զաւակաց , արահել ՚ի ծածուկ առ ժամանակ մի ՚ի սրտի իւրեանց , և յայտնել զաւակին՝ յորժամ հասանի ՚ի չափ , և կարէ ճանաչել զյարդ ծնողական սիրոյ և զպարտաւորութիւն իւր :

Ուստի մինչ տղայ է նու , և չունի զկերառութիւն բանի , տացէ նմա զքաղցր կաթն ՚ի սնունդ , և զկերակուր ինչ ՚ի յագուրդ , և զհանդերձ անպաճոյք ՚ի ծածկոյթ : Եւ յորժամ լինի մանուկ իբրև եօթնամենի , առաքեսցէ զնա ՚ի գպրատուն . ուր վարժապետն ուսուացէ նմա զգրավարժութիւն , և ապա զգիր , և զթուագիր , մինչև լիցի տասնամեայ . յետ այսորիկ զսկզբունս քրիստոնեական հաւատոյ , և բարոյական առաքինութեանց տացէ նմա սերտ ՚ի բերան ունիլ , և ՚ի միտ առնուլ :

Եւ եթէ մանուկն իցէ ուշիմ և ժբաջան և եռանդնոտ , ասաացէ նմա դաս զարհեստն քերականութեան , որպէս զի օր ՚ի յօրէ հասու լիցի նշանակութեան բառից , և խելամուտ իմաստից ընթերցուածոց , և ձեռնհաս ՚ի շարադրել զբանս ինչ բատ կանոնի և բատ սովորութեան հայկազնեան լեզուիս . և կացցէ ՚ի հրահանդս կրթութեան մինչև հասցէ յերեքտասան կամ չորեքտասան ամ հասակի իւրոյ : Յայս ամենայն ժամանակս պիտոյ է

մանկանն սատու և խրատ ՚ի ծնողացն և ՚ի գաստի արակէն, որպէս զի անդստին ՚ի թարմ և ՚ի մատաղ տիոց ուսանիցի հեռի կալ ՚ի չարեաց, և ըզ հետ երթալ բարեաց :

Եետ այսր ամենայնի պարտուպատշաճ խնաշ մոց՝ եթէ նոքին իսկ ծնողք փափագին արժանաւ որել զորդին իւրեանց որբազան կարգի և աստի ձանի, և մանուկն յօժարի, թողուցուն զնա ՚ի հրահանգս՝ ուսանիլ զարտաքին և զհոգեոր գիտութիւնս, և կրթիլ ՚ի մարզս աւաքինութեան՝ ցորչափ արժան իցէ կալ նմա։ Իսկ եթէ ծնողք կամին մուծանել զորդին իւրեանց ՚ի կարգ աշշ խարհի, տացեն զնա ՚ի կարեոր արհեստ, որով կարասէ շահիլ զպէտս կենաց :

Հայց այս բարեկարգ գաստիարակութիւնն որդւոց ոչ տեսանի այժմ ՚ի ծնողս, յաղագս որոյ ցանցառակի երեխ և որդիապարտ հնաղանդութիւնն նոցա առ ծնողս իւրեանց։ Քանզի ծնողք անդստին ՚ի կաթնաբոյծ հասակէ մանկանն մինչեւ ՚ի տիս պատանեկութեան՝ գդուեն զնա և փայտայեն։ աղիիւ զգեստուք տէճնեն։ ծիծաղին ընդ երեսս նորա։ շրջեցուցանեն ՚ի տեսարանս խաղուց և զքօսանաց։ անյապաղ կատարեն զամենայն կամս նորա և զքաղձանս։ և թէպէտ մինչդեռ տղայն է։ առաքեն զնա ՚ի գպրատուն, բայց յետ ուսանելց զհասարակ ընթերցումն և զդիր, ածեն զնա ՚ի վաճառանոցն :

Եւ մանուկն թէ և իցէ ուշիմ և եռանդնոտ, և խնդրեսցէ ուսանիլ զարհեստքերականութեան, և զգիտութիւնս կարեորս, վաղվաղակի սաստեն

առելով . Ուր ոչ եմք առնելոց զբեղ քահանայ կամ վարդապետ . և զայն ոչ գիտեն՝ թէ պարսական են առնել զնտ մարդ բանական , և ոչ եթէ թողուլ մարդակերպարան :

Ապաքէն լուիցեն ծնողք , թէ կարեւոր է ամենայն տղայոց ուսանիլ զարհեստն քերականութեան ըստ իւրաքանչիւր կարողութեան . զի գոնէ ծանիւց են զբացայսոյտ միտս բանից տսառուածաշունչ կտակարանաց հնոյն և նորոյս . խելամուտ լիցին օրինացն Աստուծոյ , որ պատուիրէ սիրել զԱստուծուած յամենայն որոտէ , և զընկերն վասն Աստուծոյ . հնաղանդ լինել ծնողաց , և պատուել զնոսակի վաստակոց ձեւաց իւրեանց :

Օ հուսկն ասացից , եթէ ծնողք բարւոք սընուսցեն և կրթեսցեն զորդիս իւրեանց , որդիքն ես լինին ժառանգ բարի , և փառք ծնողաց իւրեանց : Իսյյ քանդի ուսումնատեաց բարք բնաւորեալ է ՚ի ծնողս , վասն որոյ և անհնաղանդութիւն որդւոց առ ծնողս իւրեանց՝ յաճախեալ է յաւուրս մեր :

Ի՞ . Կործանեալ է քաղաքն , կամ մերձ է ՚ի կործանումն՝ եթէ ծնողք անփոյթ են ՚ի կրթել զորդիս իւրեանց ՚ի գիտութիւն , յառաքինութիւն , և յաշխատութիւն . զի ագիտութիւն , մոլութիւն , և գատարկաւթիւն՝ են աղքիւր վնասու և թշուտառութեան :

Ի՞ . Ամօթ մեծ է ծնողաց թողուլ զորդիս իւրեանց անխրատ , մինչեւ կարօտիլ նոցա խրատուայլոց՝ զի գայցեն յուղղութիւն : Փոքր մի անհոգութիւն ծնողաց թողու աճիլ մեծամեծ մոլու-

թեանց՝ ի զաւտկո իւրեանց . որք ապա բազում աշխատութեամբ հազիւ ուղղին , կամ իսպառ մնան անուղղելի : Քանզի և յանհոգութեանէ նաւապետին տակաւ տակաւ ընդմտեալ ջրոց ՚ի նաւն ընդ ծակտիս նորա , լճանան ՚ի գոգն , և բազում ջանից կտրօտին արտաքս թափիլ . և է ուրեք զի առնեն վնա խորասոյզ : Ուստի պարս է ծնողաց զգոց լինել և չտալ թոյլ մոլութեանց մուտ գըտանել ՚ի վարս որդւոց իւրեանց , զի գժուարին է այնուհետեւ ապաքինել ՚ի նոցանէ :

ԻԵ . Որդի անխրատ՝ սովոր է լինել ստասաց . զի զըրիպակ գործոց՝ զօր առնէ ՚ի գաղտնիո , իբրև հարցանի ՚ի ծնողաց՝ այլ ընդ այլոց տայ պատասխանի , զի մի յանդիմանեսցի : Օ այսպիսի մանուկն պարագին ծնողքն կրկնակի պատժովք խրատել , մի վասն գործոցն , և միւս՝ վասն ստախօսութեանն , որպէս զի ուսանիցի այնուհետեւ հեռի կալ ՚ի վրիպակ գործոց , և ՚ի խօսելոց զոււտ :

ԻԶ . Հայր բարի՝ եթէ ունիցի որդի բարի , երկրքին ևս լինին երանելի . զի բարի համբաւն հօր՝ տռաւելու զփառս որդւոցն . և բարի համբաւն որդւոցն՝ աճեցուցանէ զմեծարանս հօր : Եպա ջանասցին ծնողք կրթել զորդիս իւրեանց ՚ի բարիս . զի եթէ անհոգութեամբ թողուցւն զնոսա սովորիլ ՚ի չարիս , վատանունութեամբ նոցա աղաւաղի համբաւ բարութեան իւրեանց , և պարասաոր ևս գտանին գտասասանի :

ԻԷ . Եղկելի է մանուկն՝ որոց ծնողքն են չարաբարոց , յորոց և ինքն ուսանի լինել չար , և երանելի է նա՝ որոց ծնողքն են բարեբարոց , յորոց և

ինքն դաստիարակի լինել բարի : Իսկ եթէ հայրն իցէ բարի՝ և մայրն չար, յոլովակի և մանուկն լինի չար . զի տղայք՝ 'ի մատաղ տիս իւրեանց առաւել ուսանին 'ի մարց՝ քան 'ի հարց : Ուստի եթէ ծնողքն կամին զի որդիք իւրեանց եղիցին բարի, նախ ինքեանք լինիցին բարի :

Էջ. Հօր բարւոյ որդի բարի՝ յաւելու զպատիւ հօր, զի 'ի հօրէն ուսաւ լինել բարի . հօր չարաբարսյի որդի բարի՝ յաւելու զպատիւ որդւոյն, զի ինքնին ուսաւ լինել բարի :

Ի՞՞մ. 'Օնողք ոչ ունին իրաւունս գանգատել զընութենէ, զի ետ նոցա ունիլ զաւակ չարաբարսյ . քանզի ոչ եթէ բնութեամբ ծնան զնոսա չար, այլ ինքեանք անհոգութեամբ իւրեանց արարին զնոսա չար, քանզի և երկիր եթէ անգարման մնաւցէ, մոլախոտի և բուսուցանէ փուշ :

Լ. Պարտաւոր են ծնողք զարգացուցանել զորդիս իւրեանց բարւոք կրթութեամբ, որպէս զի մանկունք պարապեսցին յօգտակար արհեստու և 'ի գիտութիւնս . զգուշացցին պահպանութեան օրինաց, և լինիցին հաւատարիմ առ Կատուած և առ մարդիկ :

Վ. Ոչ այնքան ցաւոլի է կորուաս ընչից և մեծութեան, որքան կորուստ ամօթխածութեան, և բարի անուան . զի զինչ և զմեծութիւն հնար է միւսանգամ 'ի ձեռս բերել, բայց զամօթխածութիւն և զանուն բարի ոչ բնաւ . զի ըստ նմանութեան անօթյ բրտի միանգամ խորտակեալ ոչ երբէք ամբողջանայ :

Կպա զգուշացցին ծնողք 'ի պարկեցութեան

պահել զգաւակս իւրեանց . զգուշացին և զաւակք
անկորուստ պահել զհամեստութիւն և զանուն
բարի . զի երիտասարդական բորբոքն է անցաւոր ,
հեշտութիւնն վայրկենական . բայց ամօթահարու-
թիւնն և ցաւն է մշտնշենաւոր յաստի կեանս , և
պատիմն յաւիտենական ՚ի հանդերձեալն :

ԼԲ . Օ լինչ քան զայս աղետալի , մինչ հայրն
ժողովէ զարծաթ և զստացուածս բազում տառա-
պանօք , զի որդին տարեսի երջանկաբար . և որ-
դին վայրավատին առնէ զնոսա , զի ապրեսի թըշ-
ւառաբար : Եւ զինչ պատճառ եղկութեանցս ,
բայց եթէ անկարդ խնամքն ծնողական . զի հայրն
ջանայ հարստացուցանել զսրդի իւր բազում գան-
ձիւք , այլ ոչ սակաւ մի գիտութեամբ . կամի ժա-
ռանգորդ առնել ստացուածոց , այլ ոչ առաբի-
նութեանց :

ԼԳ . Իշխանք եթէ ցանկան զի որդիք իւրեանց
լինիցին իշխան , մնուսցեն զնոսա ոչ իբրև զորդի՝
այլ իբրև զծառայ . զի որ ոչ եղե ծառայ հօր իւ-
րոյ , ոչ կարէ իշխան լինել այլոց . զի նա գիտէ լի-
նել հրամանատար , որ եղեալէ հրամանակատար :

ԼՀ . Ուրախութեամբ ելանէ յաշխարհէ որ թո-
ղուցու յաշխարհի որդի բարի . և տրտմութեամբ
հրաժարի՝ որ թողու զինի իւր որդի չար :

Վպա բարւոք առնէ՝ որ ՚ի մեռանիլն յանձն առ-
նէ բարեկամին զարդի փոքր խնամել զնա և խրա-
տել : Քանզի մանուկն եթէ չունիցի զօք խնամա-
ծու , ընկերակից եղեալ չարաց՝ լինի և ինքն չար
և անզգամ . և այնուհետեւ ոչ օգտի ինչ ՚ի խրա-
տուէ բարեայ : Օ ի ըստ հասարակաց առածին ,

Խասիշիկ սեւամորթ՝ ոչ խնդրէ օճառ . անմիան չառ
նու իրատ օգտակար :

ԱՅ . Որ սիրէ զորդի իւր՝ զգուշանայ 'ի պահա
պանել զնա , ապա թէ ոչ ոչ սիրէ զորդին . քանզի
զգուշաւոր պահանութիւն յառաջ գայ յերկիւ-
ղէ կորստեան , և երկիւղն կորստեան ծնանի 'ի սիրոց .
ապա ուր պակասի գործ սիրոց , ոչ գտանի
անդ սէր :

ԱՅ . Վարք զգուշացին գտաներաց իւրեանց ,
զի մի իւիք արատեսցի համեստութիւն նոցա . զի
համեստութիւն նման է դիւրաբեկ ապակւոյ , որ
'ի դոյզն բախմանէ խորտակի , և կորուսանէ զիւրն
յարդ , և չէ հնար անդրէն 'ի ձեռս բերել :

ԱՅ . Վայր՝ որ պահէ զգուստըն 'ի տան որպէս
'ի բանակի , և ոչ թալ տայ նմա խօսակից լինել ընդ-
այլոց , ոչ այնու ցուցանէ՝ թէ գուստը իւր է չար
և անպատկառ , այլ զգուշանայ՝ զի մի լինիցի . զի
օրիորդ ամօթխած և բարի՝ որքան խնամով և ըզ-
գուշութեամբ պահեսցի , այնքան առաւել պար-
կեցու և բարեգոյն գտանի :

ԱՅ . Վանկամարդ եթէ նստիցի 'ի տան համեստ
և անխօս , այլք ամենեքին բարելաւութեան նորա
լինին մունետիկ և քարտզ :

ԱՅ . Թշնամարար սիրող է զաւակի իւրաւմ
ոյնալիսի մայր , որ զգուստը իւր ընդ աղդակա-
նաց կամ ընդ դրացեաց առաքէ 'ի զննին կամ 'ի
զբօսանա , և թողու մնալ աւուրս ինչ 'ի տան նո-
ցա , ասելով . Վաղքէն բազում ժամանակը են ,
յորմէ հետէ արդելիւալ զաւակին իմ՝ 'ի տան , խարա-

զայ կապեցաւ ՚ի սրտի նորա . թող փոքր մի արտաքոյ ելցէ , և բացցի սիրտ նորա և հովահարեսցի . զի չէ օտար տեղին , ազգական են մեզ և մերձաւոր :

Բայց աւաղ կուրութեան մտացն և անզգայութեան . այն ինչ յուսոյ և սպասէ զի բացցի սիրտ դստերն , վաղվազակի բացեալ լինին աչք նորա , և տեսանէ զմերկութիւն իւր ՚ի համեստութենէ : Կըեալ ՚ի տանէ կորուսանէ զամօթխածութիւն . մտեալ ՚ի տուն ոչ ևս մարթի գտանել : Առօրեայ զուարձութիւն զբօսանացն՝ փոխի ՚ի տրտմութիւն անփարատելի , և ցնծալից բերկրութիւնն՝ ՚ի սուդ և ՚ի կոծ :

Կպա պարտէ որդեսէր մարց հանապազ հըսկել ՚ի վերայ պահպանութեան դստերաց , և չըթողուլ հեռանալ ՚ի քղանցից իւրեանց : Օ ի նրանին նպաք ձուոց հաւուց , զօրս պարտին թրիստամարք ընդ թեօք ունել , մինչև յելանել նոցա ՚ի ձուոց . և յետ այնորիկ ընդ իւրեանս շրջեցուցանել մինչև ՚ի զարգանալ :

Կպա եթէ թողուցուն զձուս արտաքոյ թեւոց , ապականին ՚ի ներքուսոր . և եթէ թոյլ տացեն ձագուց հեռանալ ՚ի բաց , յափշտակին յանգեղաց : Ըստ սմին սարասի և մարք պարտաւոր են լինել միշտ հոգաբարձու դստերաց . իսկ եթէ անփոյթ լինիցին զնոցանէ , ինքեանք գտանին պատճառ չարեացն , և արժանի պատժապարտութե :

Խ . Մայրն՝ եթէ զբնական սէրն որով սիրէ ըդգուստը իւր՝ ցուցանիցէ յայտնի , լինի դստեր իւրում գաղտնի թշնամի . զի դուստրն՝ ՚ի տհառ հա-

սակի իւրում լնկալեալ՝ ՚ի մօրէն զհամարձակութիւն, որքան զարգանայ ՚ի տիս՝ այնքան առաւելու ՚ի համարձակութեան, մինչեւ ոչ հնազանդիլքանից ծնողին, և ոչ անսալ խրատու նորա :

Եւ զի ուսեալէ նա ՚ի մաստաղ տիոց անտի ամենայն հաճոյից իւրոց կատարիլ, ՚ի մեծութեան հասակին զնոյն խնդրէ ՚ի մօրէն. և մինչ նա զլանայ կատարել, խոժոռի ինքն և արտմի, և երբեմն կագէ և հակառակի :

Եւ այսմ ամենայնի գլխաւոր պատճառ է թուլութիւն ծնողին, որ յառ աջագոյն ետ գստերն ըգէ համարձակութիւն՝ առնել զհաճոյս կամաց իւրոց, և մինչ գժուարանայ զսպել զդուստրն, մաշի ծնողն, և աւաղ կարգայ անձին իւրոյ և գստերն : Եւ արգարե բազում ջանից պէտք են զուսպ ունել զայնավիսին, և զանուն բարի նորա չարատել : Վպա պարու է ծնողին զսերն իւր յառ աջագոյն պահել ՚ի ծածուկ, որպէս զի ՚ի զարգանալ գստերն արացէ յայտնի, որով երկարին ևս լինիցին բարեվիճակ :

ԽԱ. (Օրիորդք՝ որք զձայնս իւրեանց ոչ առնեն այլոց լսելի, համբաւ բարութեան նոցա ամենեցուն լինի ազդելի : Կոյս՝ որ բարձրածայն ընդ ումեք խօսի, խափանէ ինքնին զանուն իւր բարի : Զի օրիորդ՝ եթէ ՚ի մաստաղ մանկութենէ ուսանիցի բարձրածայն խօսել ընդ ծնողաց իւրոց և եղբարց և ազդականաց, զիարդ հնար է նմա ՚ի զարգանալ հասակին զուսպ ունել զձայն իւր, և զդուշանալ զի մի որ յօտարաց լուիցէ : Վանկամարդ՝ որ սովոր է խօսիլ բարձրաբարբառ, մարթէ

լինել այնպիսին յանդուգն և անպատկառ :

ԽԲ. Եարւոք էր՝ եթէ տունն յորտամ բնակին աղջկունք, ոչ ունէր պատուհան կամ գուռն հայել՝ ՚ի փողօցա . զի յորժամ կանդնեալ հային նոքա ակն յանդիման ՚ի տես անցաւորաց, ամբոխի բարեմութիւն նոցա, իբրև այն թէ կայծ հրոյ անկանի ՚ի խուրձս բամբակի, և ժամ ըստ ժամէ արծարծեալ՝ կիզու և ծախէ զողջմտութիւն նոցա և զշամեստութիւն : Ապա երիտասարդուհի կամ կուսան՝ որոյ աչք են ՚ի պատուհան, կամ է անամօթ, կամ սկսեալ է անամօթանալ . զի ամենայն հրդեհ ՚ի գոյզն մի կայծէ բորբոքի, և ամենայն մեծ վնաս՝ ՚ի փոքր վնասուէ գոյ յառաջ :

ԽԳ. Այլք՝ մի հաւատացեն զդուստր իւրեանց կենցաղավարիլ ընդ երիտասարդի, թէ և ՚ի մերձաւորաց իցէ կամ յաղգականաց . զի մոլեկան ցանկութիւնն խռովէ զմիտսն, մինչեւ մուանեալ զանձն, և վարիլ իբրև զանքան :

ԽԴ. Ա՛ն տրտմեսցին դստերք՝ յորժամ զդուցութեամք պահպանին ՚ի մարց իւրեանց . զի անկատար հասակ նոցա ոչ գիտելով զօդուտն՝ զորունին ՚ի պահպանութենէն, գուցէ արտմեցուցանէ զնոսա, բայց գիտացեն առ յապոյ՝ յորժամ լինիցին մայր դստերաց :

ԽԵ. Երկիր՝ եթէ ուխտեսցէ արգելուլ զդուըրշխ ջուրց, և օդ՝ զշողմն սաստիկ, միշտ մնայ ծովին խաղաղ և անխոռով . և օրիորդ ոք՝ եթէ պահ դիցէ աչաց իւրոց զի մի հայեսցի յարատ, և ականջաց՝ զի մի լուիցէ զանպատեհս, մնայ հանդարս և համեստ, ապա ցորչափ զաշն ՚ի պատու-

Հան ունիցի, և զունկն ՚ի բերանս այլոց, անհնար
է նմա կալ մնալ ՚ի տան համեստ և ամօթխած :

Որ ՚ի կուսութեան իւրում մնացէ ՚ի տան
որպէս ՚ի բանտի, յամուսնութեան իւրում գացէ
զիթճակ բարի : Կյոս շատաշընիկ՝ դիւաց է խաղալիկ :

Խջ. Շարւոք առնեն կանսյք, զի զսապատ
ականակուռ և ոսկեղէն զարդուց իւրեանց բա-
զում աչալընութեամբ պահեն . և եթէ գէպ լի-
նիցի երթալ ՚ի տունս ազգականաց իւրեանց, ընդ-
ինքեանս առեալ ածեն, և փականօք ամրացուցա-
նեն՝ զի մի կողոպտեսցի ՚ի գողոց : Շայց ոչ բա-
րւոք առնեն՝ մինչ ոչ այնչափ զգուշան դստե-
րաց որչափ զարդուց իւրեանց . և յետ կորուսա-
նելց նոցա զհամեսութիւն իւրեանց, զուր և
ընդվայր հառաջեն և կոծեն :

Եւ որամշետև օրինօք բնութեան առաւել
պարախն սիրել զզաւակս իւրեանց՝ քան զամենայն
մեծագին զարդսն, ապա առաւել արթնութեամբ
պահեսցեն զնոսա, զի մի վտանգ կորատեան հա-
սանիցի համեստութեան նոցա . և ընդ նմին եկես-
ցէ կորուստ ընչից, կորուստ զաւակի, և կորուստ
բարի անուան :

Խէ. Դուստրն մինչ փոքր է՝ աշխատի մայրն
՚ի կերպել զնա և դարմանել . այլ մինչ լինի չա-
փահաս, մայրն հանգչի, և դուստրն աշխատի :

Շայց այս հանգիստ մարմնոյ՝ յաւելու զաշխա-
տանս մտաց ծնողին . զի պարտի շուրջ հայիլ և
զգուշանալ ՚ի պահպանութիւն դստերն . զի ըստ
հաստրակաց առածին, որչափ մեծանայ զաւակն,
այնքան մեծանան և ցաւք ծնողին :

ԽԸ. Որ ընտրէ հարսնացուցանել զգուշապր իւր առն աղնուայ՝ բայց մոլեկանի, կորուսանէ զպատիւ և զհանգիստ անձին իւրոյ :

ԽԹ. Չէ արժան հայիլ ՚ի փարթամութիւն փեսայացուին՝ այլ ՚ի խոհեմութիւննորին. զի որ առնու զփեսայ հարուստ՝ բայց մոլի, առնէ ըզդուստր իւր մշտնջենաւոր գերի :

Ճ. Ոչ ընուն զպարտաւորութիւնս իւրեանց ծնողք, որ վասն վսեմութեան անուան և համբաւոյ իւրեանց՝ ոչ յօժարին տալ զդստերս իւրեանց համեստ արհեստաւորաց, եթէ չունին նոքա զմեծութիւն բազում։ Եւ մինչ դստերք իւրեանց անտես լինին ՚ի մեծատանց աճիլ ՚ի հարսնութիւն, անցեալ ըստ չափ հասակի՝ մնան ՚ի տան իբրև զայրի զամենայն աւուրս կենաց իւրեանց։ Իսկ պատճառ այսմ վեստու՝ է սնափառութիւն ծնողաց, որք խնդրեն զհարստութիւն, և ոչ զհամեստութիւն։

ՃԱ. Դժուարին է յոյժ, և բազում զգուշութեան պէտս ունի ընտրութիւն փեսայի, զի գըլխովին զսմանէ կախի երջանկութիւն կամ թշուառութիւն դստեր իւրեանց։

Վպա մի ընտրեսցեն փեսայացու զերիտասարդ ոքյայն սակա՝ զի է յաղնիւ տոհմէ, այլ զի կարէ լինել սկիզբն ազնիւ տոհմի։ Ո՞ի են բազումք, որք զաղնուութիւն տոհմի իւրեանց սպառեն յինքեանս, և են՝ որք սկզբնաւորեն յինքեանց։

ՃԲ. Դարելից խնջոյք՝ ոչ առնեն զհարսանիսն վայելուչ, այլ յարմարութիւն փեսային և հարսին։ Տուն արտմութեան է այն հարսնարան, ուր փեսայն և հարսն չեն միմեանց պատկան :

“Պատուիրեցէ՞ որո՞ոյ յերոյ, պահել և առնել զա-
մանակ բանս օրինացս այսոցիկ” . Բ. (Օրին. ԼԲ. 46:

“Ու ինայէ ՚ի գուազան՝ առեայ ըրտի իւր, իսկ ո՛-
իրէն՝ խնամով իրադէ” . Առակ. ՃԳ. 24:

“Դաստերս իցեն չո՞ պայշ իւր, և մ՛ գգուեր զնոսս և
համարյախեցուցաներ . առն իմաստնոյ պուր զնոսս, և չո՞ գործ
մէծ գուանի կատարեալ” . Աիրաք . Ե. 26:

“Ու իրադէ ըրտի՝ շահեցի զնս, և ՚ի մէջ բարեկամայ
ժառանորեացի” . Աիրաք . Լ. 2:

“Ու ուսուցանէ ըրտի, նախանյաբեկ առնել զլշնամիս,
և առաջի բարեկամայ շնծասցէ . մեռաւ հայր նորա՝ և չէ
մեռեալ, չէ նման իւր ելող յաշլարհի” . Աիրաք . Լ. 3:

“Հարհ մ՛ շայրացուցանէ՞ ըրտի յեր, այլ անուցա-
նիցի՞ զնոսս իրագու և ուսմամբ Տեսոն” . Եփես . Զ. 4:

“Ուրտի՞ հնազանդ լերո՞ ծնողաց յերոյ յամենայնի, չէ
այն է հաճոյ առաջի Տեսոն” . Կոշ . Գ. 20:

“Կամիմ զմանիամարտացր՝ ամուսնանալ, որտի՞ ծնոնիլ,
պատրար լինել . և մ՛ ինչ պատճառս պալ հակառակորտի՞ ՚ի
հայկոյութեան աղադ” . Ա. Տիմ. Ե. 14:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՌԴ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ա. Բարեբաստիկ է ամուսնութիւն, եթէ ամուսինք պահեն զհաւատարմութիւն առ միմեանք, և սիրեն զիրեարս որպէս զանձինս իւրեանց, մինչեւ այր և կին ոչ երկել երկու զանազան անձինք, քան թէ մի հոգի յերկուս մարմինս քնակեալ. որք և իցեն ողջամիտ և աշխատասէր, ուրախ, հանդարտ, վափախակի հոգածու ընտանեաց. այրն՝ յարտաքին գործս, և կինն՝ ՚ի կառավարութիւն տանն զբաղեալ. միսիթարիչ միմեանց և օդնիչ, մինչ զի ոչ յայլ սակս՝ քան թէ կեալ յօգուտ և ՚ի հաճոյս իրերաց :

Բ. Ոչ է պարտ խնդրել զկին գեղեցիկ այլ բարեբարոյ, կին գեղեցիկ տեսլեամբ՝ այլ չարաքարոյ, է օձ գեղեցկախայտ :

Որ խնդրէ առնուլ զյոյժ գեղեցիկն ՚ի կնութիւն, հուսկ ապա կամ խելագարի, կամ անկանի յաղբատութիւն :

Գ. Դեղեցկութիւն կնոջ ոչ է վայելչութիւն կերպարանաց նորա, որ աւուրց յաւուրս եղծանի, այլ համեստութիւն և հնաղանդութիւն՝ որ ոչ գիտէ պակասիլ մինչեւ ցվախճան :

Դ. Որ յամենայնի զհետ երթայ կամաց կնոջ իւրոյ՝ առնէ զանձն գերի. և որ միշտ ընդդիմանայ՝ առնէ զինքն թշնամի : Վպա ամուսնացեալն առաւել պէտք ունի խոհեմութեան քան զամու-

րին . զի ամուրին զիւր անձն միայն հոգաց բար-
ւաք կառավարել , իսկ ամուսնացեալն՝ զիւրն մի
անդամայն և զամուսնոյն իւրոյ :

Ոչ է արժան առն ունել զկին իւր որպէս ա-
զախին անարդ , և ոչ որպէս տիկին հրամանահան
ինքեան , այլ պահել 'ի չափաւորութեան :

Ե . Անզգամ է կինն՝ եթէ կամաց առն իւրոյ
հակառակ զինի . և խելադար է այրն՝ եթէ վիճէ
ընդ նմա 'ի հրապարակի :

Զ . Կին՝ եթէ բարի է , պարտ է առաւել ևս
խնամել զի բարեգոյն լինիցի . իսկ եթէ չար է ,
պարտ է համբերել զի մի չարագոյն ևս լինիցի :

Ե . Օօրապետ ոք խմասուն՝ որ բաւական է
կառավարել զմեծ իմն բանակ , տկարանայ կառա-
վարել զմի միայն կին գմնդակ . զի որ արտաքոյ
մարդկութեան կենցաղավարի , չէ հնար մարդ-
կային խոհեմութեան կառավարել զնա :

Ը . Անզգամութիւն կնոջ առաւելքան զերկ-
րաշարժ կործանէ զտուն առն իւրոյ , և քան ըդ-
հողմակոծ հրդեհ զտմենայն ստացուածս նորա 'ի
մոխիր լուծանէ : Որ կամիցի գիտելինչ զտանջա-
նաց գժոխոց , ուսանիցի յայնմանէ որ ունի ըզ-
կին անզգամ :

Թ . Վեծ արիութեան պէտս ունի տանիլ ան-
զգամութեան կանանց՝ քան բունութեան հզօր
թշնամեաց : Վասն զի անզգամ կանանց բարկու-
թիւնն է գաղանական , նախանձն դիւական , և
սէրն կեղծաւորական :

Ժ . Առվորական մոլութիւն է ազգի կանանց , առ
ոչ ինչ համարիլ զայն բարի զոր ունին , և ցանկալ

այնմ՝ զոր ոչ ունին, թէ և ստացու մենարին իցէ
անօդուտ կամ դժուարիւ:

Ժ. Կանայք եթէ գտանեն փոքր մի համար-
ձակութիւն, աճեցուցանեն զամբարտաւանու-
թիւն իւրեանց . եթէ զգան դաշն մի անպա-
տառութիւն, յարուցանեն զմեծ իմն խռովաւ-
թիւն, զի զամենայն ինչ տեսանեն խոշորացուցիւ-
աղա մեծ զգուշութիւն պիտի պահել զնոսա ՚ի
չափաւորութեան:

Ժ. Կանայք երե ին լինել դժկամակ և անհա-
ւան ընդ գլխաւորութիւն արանց, տաելսվ ընդ
միսո՞ թէ ընդէք արք կարգեցան ՚ի վերոց մեր
հրամանատար, և մեք եզաք հրամանակատար «
Եւ սրավշետե ոչ կարեն յայտնի ընդդէմ զինիլ,
զի գիտեն լինել այնմ յաստուածային կարգաւո-
րութենէ, սկսանին լռելեայն հակառակիլ» զի
գանգատեն զբարուց արանց՝ թէ տիրողաբար հը-
րամայեն մեզ: Եւ հաւաստի իմն երեի, թէ այս
արատնջ յառաջ գայ յանհաւանութենէ գլխաւ-
որութեան արանց, ապա թէ ոչ պարտ էր նոցա
յամենայնի հլու և հպատակ կող ամենայն բարե-
կարգաւթեան արանց իւրեանց:

Ժ. Վաճառէ զանձն ՚ի ծառայութիւն ան-
զերծ, որ գոլով ինքն աղքատ՝ առնու կին ընչա-
ւէտ: Եթէ կամիս գիտել, թէ որ գերի իցէ կարի
ողբրմելի և դժբաղդ, իմա զայն՝ որ ծառայ եղեալ
կնոջ իւրոյ չերեի լինել այր մարդ:

Ժ. Չէ նա այր իմաստուն, որ կարծէ զսէր
կնոջ հապտատուն. զի նորա որսէս բարուք՝ նոյն
պէս և սիրով են յոզդողդուն:

Այս որպէս առաջին է՝ ՚ի սիրողը առն իւրօյ՝ մինչ
կենդանի է նա, նոյնպէս առաջին լինի ՚ի մոռացողը,
մինչ յետ մահուան նորա ամուսնանայ ընդ այլում:

ԺԵ. Վանկամարդ կին՝ մինչ առաւելքան ըդ-
վայելուն ճշէ և լայ ՚ի մեռանիլ առն իւրօյ, կու-
րուսանէ զպատիւ իւր. քանզի բազումք վայելուչ
իմն զբարսութեամբ ասեն զնմանէ՝ թէ լալագին
կոծովն կամի կարծեցուցանել զանձն հաւատարիմ
առն իւրում, որպէս զի հաճեսցի ոք առնուլ ըդ-
նա ՚ի կնութիւն :

ԺԶ. Կանացք ոչ այլ խմիք այնպէս ըդձանան՝
սրպէս տեսանել զայլս, և տեսանիլ յայլս. վասն
սրոյ եղան օրէնք ՚ի վերայ կանանց՝ նստել ՚ի տան,
զի մի զայլս տեսանիցեն . և ծածկոյթ զանձամբ
ունել, զի մի յայլս տեսանիցին :

ԺԷ. Այն է վայելուչ արանց՝ թողուլ յաշխար-
հի յիշատակ յաւերժմական զպատերազմական քա-
ջութիւնս, զօդտակար մեծագործութիւնս, զի
մաստուն մատենագրութիւնս, և զնորանոր ար-
հեսակց հեղինակութիւնս . իսկ վայելուն կա-
նանց ազգի՝ է թողուլ զհամբաւ համեստու-
թեան իւրեանց :

Դեղեցկութիւն կանանց դառնայ յանարդանս
նոցա, թէ չիցեն ամօթխած :

ԺԸ. Բնական է արանց լինել ստկաւախօս, և
կանանց շատախօս . զի այրն ՚ի կաւոյ երկրի ստեղ-
ծաւ, և կինն յոսկերէ կողին: Վպարքն կաւ ընդ
կաւոյ զարկուցեալ՝ մեզմ ինչ շաշիւն լինի լսելի .
բայց սոկր ընդ սոկր բախեալ՝ արձակէ գանգիւն
ազգով լսելեաց :

Որ զլորհուրդ իւր յունկանէ պատմէ կանանց ,
փութով գտանէ քարոզեալ ՚ի վերսց տանեաց :

Ճ. Եթէ ՚ի շատախօսութեան կանանց ոչ գը-
տանէր բամբասանք , ոչ ոք բարկանայր նոցա , գի-
տելով թէ շատխօսութիւնն ընդաբոյս է բա-
րուց նոցա :

Որ ոք կամի լաել զունայնաբանութիւնս , խօ-
սակից լիցի ընդ կանանց :

Տ. Կանայք՝ մինչդեռ ունին զմի հոգի , գը-
ւարաւ նուածին . ապա յարժամ ունիցին զերկուս ,
(այսինքն յղի իցեն ,) ովէ որ կարաօցէ յաղթել
նոցա . զի վաղվաղակի կորուսանեն զմին , գուցէ
և զերկուսն : Եղա խոհեմութեամբ պարտ է կեն
ցաղավարիլ ընդ նոսա . որք իբրև անօթ բրտի ՚ի
դաշն բախմանէ փշին :

Ոչ ինչ են զարմանք՝ եթէ տղայք սովորաբար
լինին անխրատ , քանզի ՚ի կանանց ծնանին , և ՚ի
կաթանէ նոցա սնանին :

“ Կի՞ն ժըսդըսի՝ պատկ է առն իւրոյ . որոկու որդի՞ն
իսյորի հնասակար է , նոյնու իորուսանէ լոյր՝ ի՞ն շըրաժործ ո .
Առակ . ԺԲ . 5 :

ԳԼՈՒԽ ԻՆՍԵՐՈՒԴԻ

ԵՐԵՏԱՍՍԱՐԴԻ

Ա. Երիտասարդք այնքան կրթեսցին ոռ ոռ
իմաստնոց և առաքինեաց, մինչ զի բաժանիլ
և ՚ի հեռանալ իւրեանց՝ կարող եղիցին անկարուսո
յուշի ունել զբանս նոցա իբրև ուսուցիչ բա-
րեխրատ :

Որ ունի զիմաստութիւն, և զշաճայական քա-
ղաքավարութիւն, յոր վայր և երթիցէ, յորպիսի
ձախորդութիւնս և անկանիցի, գտանէ զիտառ
և զշամբաւ բարի :

Երիտասարդ իմաստուն՝ է որպէս ծառ խոր-
արմատ, զար հոգմունք արկածից թէպէտ և շար-
ժեն զնա, այլ ոչ կարեն կործանել :

Բ. Երիտասարդ մեծազդի՝ սովորեալ ՚ի ման-
կութենէ իւրմէ ՚ի զեղլսութիւն և ՚ի զեղծ վարս,
՚ի վախճանի անկանի ՚ի թշուառութիւն, և լինի
նպատակ նախատանաց ՚ի մէջ աշխարհի . զի մե-
ծամոռութիւնն յառաջ եկեալ ՚ի պայծառութենէ
տոհմին, չժողու նմա խոնարհիլ ՚ի չափաւորու-
թիւն . և սովորական մոլութիւնն արգելու սոտ-
նալ զբարի վարս :

Գ. Բազումք յազնուական Երիտասարդաց՝
պատճառաւ հարսառութեան իւրեանց ուսանին
զբազում մոլութիւնս . և կորուսեալ զշարստու-
թիւնն՝ ոչ կորուսանեն զմոլութիւնսն :

Դ. Օարմանիք են, զի որդիք աղքատաց ջանան

ստանալ զարծալթ , զի լինիցին մեծատուն . և որ գիք մեծատանց՝ ղհետ են վատնել զարծալթ , զի լինիցին աղքատ . և բազումք են այսպիսիք՝ որք կորուսեալ ղհայրենի փարթամութիւնն , շրջին աղքատ և կարօտեալ :

Ե . Հասակն երիտասարդական դիւրասահ է յամենայն հաճութիւնս . վասն սրոյ և ախորժակ ինչ՝ թէ և երեւեսցի նմա անմեղ , տակաւին սրարա է նմա կասկածիլ , և խորհուրդ հարցանել իմաստ նոց և փորձառուաց , և ըստ խրատու նոցա վարիլ :

Զ . Արժան է մարդոյ ոչ հաւատալ անձին իւրոյ , զի մի զիւր ինքն խաբեսցէ . և ոչ մոռանալ զիիրս իւր՝ յորոց երբեմն խաբեցաւ , զի մի այլ ևս խաբեսցի ՚ի նոցանէ : Ուղեոր ոք անծանօթ ձաւ նապարհի հետեւի առաջնորդի . բայց զարմանք են , զի երիտասարդ՝ որ ձանապարհորդէ ՚ի հասակ ծերութեան , ոչ հետեւի առաջնորդութեան ծերոց :

Է . Ե՞ որ սիսալի , բայց այնու ձանաչէ զպակասութիւն իւր , զգաստանայ , և օդտի . և է՞ որ սիսալի , բայց այնու առաւել կամակորի ՚ի կարծիս իւր , և վնասի . զի տգիտական սիսալմունքն դառնան ՚ի յանդուգն խելագարութիւն , և վնասեն չարաչար : Ուստի ոչ այնքան մեղադրելի է նա՝ որ սիսալի , այլ նա՝ որ ոչ կամի ձանաչէլ զսիսալանս իւր և ուղղել . իսկ որ ոչ ուղղի կամաւ , վնասի ակամայ :

Ը . Ուր չիք նախատեսութիւն ապաւնեսոց , փորձառութիւն անցելոց , բարեկարգութի ներ-

կոյից՝ գահավեժ լինին միտք՝ ՚ի գործել զանկար-
գըս : Շայց որ ճանաչէ զմխալանս իւր և խաստո-
վանի , չէ յանդիմանութեան արժանի , քանզի
նշան է աղնուութեան հոգւոյ նորա . և թէ այ-
նու սխալմամբ ուսաւ զգուշանալ յապագոյ ար-
կածից , և բարեկարգել զընթացս իւր , քանզի չիք
ինչ ծայրագոյն յանցանք որ խոնարհ խոսասվանու-
թեամբ չիցէ ներելի . ապա չէ արժան վհասարիլ
ումեք՝ թէ և անկեալ իցէ ՚ի վտանգս , այլ տնվե-
հեր սրտիւ ջանուլ ՚ի գտանել հնարս աղտոտու-
թեան :

Թ . Երխոսասարդք՝ որք պատուադիր լինին ար-
գոյ ծերունեաց , զօրս փորձառութիւնն բազում
իրաց արարեալ է իմաստունս , ՚ի ծերութեան
իւրեանց գտանեն զպատիւ և զյարգանս իբրեւ
փորձառուս և խոհականս . զի զոր սերմանէ ոք ,
զնոյն և հնձէ :

Ժ . Երջանիկ լինէին մարդիկ , եթէ յերիտասար-
դական հասակի ունէին զխոհեմութիւն փորձա-
ռուս ծերոց , և ՚ի տիս ծերութեան՝ զզօրութիւն
առցգ երիտասարդի : Երանի էր եթէ երիտա-
սարդք ՚ի փոխ առնուին զխոհեմութիւն ՚ի ծե-
րոց , և ծերք՝ զզօրութիւն յերիտասարդաց . զի
բազում ինչ զգայ ծերն , զօր ոչ զգայր յերիտա-
սարդութեան իւրում . և բազում ինչ կարէ երի-
տասարդն , զոր ոչ կարասցէ առնել ՚ի ծերութեան :

ԺԱ . Բարեվիճակ է մանուին , որ ընդ զարդա-
նալ և աճել հասակին՝ զարգանայ և առուելու
գիտութեամբ և առաքինութեամբ . այնպիսին և
՚ի պակասիլ ծերութեամբ ՚ի զօրութենէ մարմնոյ ,

ոչ պակասի ՚ի խոհականութենէ և յառաքիւնութենէ :

ՃԲ. Երիտասարդութիւնն է գոռող ինքնահաճութիւն, որ հաւատաբարմացուցանէ անձինթէ կարէ առնել զամենայն, և համարձակ միտյամենայն վտանգու, և անկանի յորոգայթ : Եւ երբեմն Վասուած թշլտայ նոցա սխալիլ, որպէս զի ծանիցեն զմարդկային տկարութիւնն, և զգաստացին, և մի՛ ևս ՚ի զօրութիւն անձին ապաստան լիցին :

ՃԳ. Ոխալանիք ծերոց դժուարաւ ուղղին, զի ծանր թուի նոցա անսալ խրատուց, նմանեալ հինաւուրց ծառոյ՝ որ ՚ի թիւրութենէ ոչ իւիք արհեստիւ ուղղի : Օւերք՝ թէ և ծանիցեն զալակասութիւնս իւրեանց, ոչ կարեն զգաստանալ . զի վատթար սովորութիւնն եղեալ է նոցա երկրորդ բընութիւն : Կորահասակ երիտասարդք նմանին մատաղատունկ ծոռոյ, և դիւրաւ ուղղին՝ եթէ անսան խրատուց բարեաց :

ՃԴ. Եռանդագին երիտասարդք առաւել կարօտ են խրատուց՝ քան դրամոց . զի եթէ խրատեալ իցեն և բարեկարգ, թէ և չունիցին ըղոդրամ, չէ ինչ դժուարին նոցա ստանալ զայն, և ՚ի գործ ածել յօգտակար իրողութիւնս : Իսկ եւ թէ սւնիցին զդրամ՝ բայց իցեն անխրատ, հնարէ վատնել զայն ՚ի մոլեկան գործու, և մնալ միշտ յաղքատութեան ՚ի վիստ անձանց իւրեանց :

Իսկ ծերք՝ որք առաւապին յաղքատութեան, առաւել կարօտ են դրամոց՝ քան խրատուց . քանզի բազմութեայ փորձառութեամբ վաղու ևս խրա-

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԹԻՒՆ

Ա. Յատուկ է մարդկացին ազգի յայտնելըն կերին զիմացուածս մասց իւրոց, և զկիբս անձին՝ զհաճոյս կամ զանհաճոյս. վասն որոյ իւրաքանչիւր ազանց տուեալ եղեն ձայնաւոր նշանք կամ բառք՝ յայտ առնել նորօք զարամախնութիւնս, կամ զներքին բանսն. և միայն հրահանգեալ ազանց պարգևեցան գրաւոր նշանք կամ գիրք՝ ՚ի կերպաւորել և յերկեցուցանել զբառս կամ զխօսս:

Եւ քանիզի ձայնաւոր բառք կամ խօսք առժամայնք են և ցնդականք, և ոչ ինչ օգտեն առ հեռաւորս և առ ապագայս, վասն որոյ մասնաւոր պարգև լստուծոյ յարգեցան նշանագիրք, որ զբանն մոտց՝ միանգամայն և զբարբառ լեզուի առ հեռաւորս և առ ապագայս հասուցանեն, և զգործս անցելոց և ներկայից յաւերժացուցանեն ազգէ յազգ :

Հրեշտակք ոչ են կարօտ գրոյ, զի չունին պէտքս բարբառոյ. այլ զոր միանգամ կամին յայտ առնել, տալաւորեն զայն ՚ի միտս միմեանց: Լնբանք չունին միտք և զբան, վասն որոյ անպիտան է նոցա բարբառ և գիր, զի զոր պէտս ունի պահպանութիւն բնութեան միոյն՝ ազդ առնել միւսոյն, վարի նշանաւ անցօդ և անխօս ձայնի:

Կպա միայն մարդոյ բանաւորի և բաղաքականի պիտանի եղի գիր, վարիլ նորօք ՚ի հոգեւոր և ՚ի

մարմնաւոր պէտու զի և աստու ածային պատուիս
րանք գրով դրաշմեցան , և տւետարանական և
առաքելական պատգամք գրով աւանդեցան , և
տմենայն օրինագրութիւնը և կարգը և կառաւ
վարութիւնք համօրէն տիեզերաց , և գաշինք և
սակարկութիւնք և տաւետրութիւնք մասնաւու-
րաց՝ գրով վճարին :

Ապա որ անպիտան համարի ուսանիլ դժիր և
զկարդացումն , արհամարհէ զշնորհն Աստուծոյ ,
զի գիրն ազգեցութեամբ շնորհացն Աստուծոյ
պարգևեալէ մարդկութեանս . և հաւասարի և ս
անբանից , զի զերեակացեալն ոչ կարէ նշանակել
գրով , մանսուանդ զի սանբանագոյն քան զանբանա-
գուանի , զի նոցա ոչ է պիտոյ գիր , իսկ սմա պի-
տոյ է , բայց անգուսնէ և ոչ ուսանի :

Բ . Ար ընթեւոնու զգիրս , խօսի ընդ մարդիկ՝
որք իսկզբանէ աշխարհի մինչև յաւուրս իւր սն-
ընդհատ յաջորդութեամբ քաղաքավարեցան յաշ-
խարհի . և լսէ ՚ի նոցանէ՝ զոր միանդամ ասացին
կամ արարին յընթացս կենաց . և խրատեալ ՚ի
բանից և ՚ի գործոց նոցա , ուսանի ատել զվար-
սակարս , և սիրել զօդտակարս ՚ի պահպանել զան-
ձըն . զօրանալ ՚ի ձախողակս , և անընկճելի մնալ
՚ի տարադէպ պատահարաց , աւզիւլ զմուրսութիւնն
զգայական կարողութեանց և գործարանաց իւրոց .
բարեկարգել զկիրս և զբաղձանս և զամենայն
շարժմունա հոգւոյն . խոկալ , կամիլ , և աշխատիլ
՚ի բարին առ ՚ի լինել երջանիկ :

Գ . Ար շարագրէ զգիրս , խօսի ընդ մարդիկ՝
որք յաւուրց անսի իւրօց մինչև ՚ի կանարան

աշխարհի հետղչեաէ գալոց են յաշխարհ . և ուսուցանէ նոցա զամենայն , որք կարեւ որք են ՚ի լուսաւորութիւն մասց , և յուղղութիւն բարուց . տայ Ճանաչել զպարտաւորութիւն և զյարդ մարդկութեանս . պատուասիրել զառաքինութիւն , և ատել զմոլութիւնս . ջանալ և աշխատիլ վասն յատուկ պիտոյից և օգտի իւրեանց առ ՚ի լինել երջանիկ : Կա հարկաւոր է ամենայնի գոնէ ընթեռնուլ և իմանալ զիիրս , զի ծանիցեն զանձինոթէ մարդիկ են :

Չիք զբազումն օգտակար՝ քան զզրաղումն դրոց :

Դ . Վի ինչ զարմանար , թէ զիա՞րդ սմանիք ոչ փափագին ուսման գրոց . զի ահա և անատունիք ոչ ըղձանան մարդկային կերակրոց :

Ե . Եթէ բարձցի ՚ի մարդկանէ գիտութիւն , ոչ ինչ գտանի զանազանութիւն ՚ի մէջ մարդոց և անասնոյ : Ծանկալի է լինել աղքատ և իմաստուն՝ քան տգէտ և մեծատուն :

Որ ճոխանայ ընչիւք , զբարեկամն նուազեցուցանէ , և զթշնամիս առաւելու . և որ ճոխանայ իմաստութեամբ , զբարեկամն առաւելու , և զդժշնամիս նուազեցուցանէ :

՚Աս է հարստագոյն՝ որ գիտէ բազում ինչ , և նա աղքատագոյն՝ որ գիտէ և ոչ ինչ :

Զ . Որ ցանկայ անմահութեան , ջանասցէ լինել իշխան մեծագործ , կամ իմաստուն մատենագիր , զի յիշատակ սոցայետ մահու իւրեանց մնաց անմահ :

Ե . ՚Վաղց մարմնոյ շատանոյ սակաւ կերակրով . իսկ քաղց մասց ոչ գիտէ ասել շնտ , զի որքան

առաւել ուսանի, այնքան առաւելու քաղց նորա .
որ եթէ ոչ գտանիցէ օգտակար ուսանելի ինչ,
դիմէ ՚ի վնասակարս, քանզի չունի յագուրդ :

Ապա պարտէ անպակաս տալ մոտաց զոգեշահ
ձարակ ՚ի բժշկել զքաղց նորա՝ զի մի գուցէ ձը-
գեսցի ՚ի վնասակարս, և ՚ի հոգեոր կենաց զըր-
կեսցի :

Ը. Փոփոխ կերակուրք գրդուեն զախորժակս առ
՚ի ուտել, զի ապրեսցի ըստ մարմնոյ . պէսպէս
գիտութիւնք դրդեն զմիտս առ ՚ի զքաղնուլ, զի
կեցցէ ըստ հոգւոյ . զի եթէ միտք ուրուք յափ-
րացի միովն և տաղոկացի, յայլ ինչ գիտու-
թիւնս պարապեսցի և օգտիցի :

Թ. Ոչ է իմաստուն որ գիտէ որչափ պիտոյն է,
այլ որ գիտէ՝ որչափ կարելի է գիտել :

Ժ. Յատուկ է իմաստոց գիտել բազում՝ և
խօսիլ սակաւ, որսկէս յատուկ է տգիտաց խօսիլ
բազում՝ և գիտել սակաւ, կամ ոչ ինչ :

ԺԱ. Լաւ է կուրութիւն աչոց քան կուրու-
թիւն մոտաց . կոյրն աչօք ոչ տեսանէ զլոյս արեւու .
կոյրն մոօք ոչ ճանաչէ զանձն իւր : Քանզի գի-
տել արժան է ամենայն ումեք, թէ յի՞նչ վախճան
կարգեալ է կեանք մարդոյ . ապա եթէ չգիտիցէ՝
և չկամիցի գիտել, իբրև ՚ի խաւարի մոլորեալ
շրջի . և ոչ ևս խնդրէ ուղեցոյց առաջնորդել
ինքեան, նմանեալ նաւու՝ որ ՚ի լոյնտարը ծու-
փու իցէ, և չունիցի ղեկավար ճարտար՝ հմուտ
ընթացից աստեղաց, և ծանօթ կզգեաց և եզե-
րաց . և զի՞նչ այլ ինչ առաջի կայցէ նմա, բայց
եթէ նաւաբեկութիւն և կորուստ :

ԺԲ. Ծնորելի է տրտմիլ ընդ իմաստնոց՝ քան զուարձանալ ընդ անմտաց . զի յիմաստնոց կարէ գտանել ոք զմխիթարութիւն սրտի , իսկ յանմտաց միայն զուանջանս մտաց :

ԺԴ. Եշրջանիկ կեանք գտանի միայն յիմաստունըս , զի տգէտն՝ եթէ ապիկար ոք իցէ , գուցէ նուածի ընդ ձեռուամբ այլոց , եթէ աղնուական՝ գուցէ ամբարտաւանեսցի , եթէ փարթամ՝ գուցէ մայեսցի ՚ի հեշտութիւնս մարմնական , եթէ աղքատ՝ գուցէ ագահիցէ ընչեց օտարաց , եթէ ուժեղակ՝ գուցէ լինիցի յանդուգն . զի որովհետեւ խաւարաւ տգիտութեան մթագնեալ է լոյս բանին , ոչ կարէ գտանել զորքունական զկուս պաշտայն , այլ խոտորի յաջ՝ և կամ յահեակ . իսկ իմաստունն՝ վասն զի ունի առաջնորդ ինքեան ըզքանն , և նպատակ զառաքինութիւն , գնաց անխուսոր և անսասան :

ԺԵ. Ոչ նոյն վիճակ է իմաստնոյ և տգիտի . զի իմաստուն ոք՝ թէ և սխալեսցի ՚ի մեծամեծս , կարէ տակաւին զինքն ուղղել . իսկ տգէտն թէ և վրիպեսցի ՚ի փոքրունս , մնաց անուղղելի՝ եթէ ոչ յիմաստնոց ձեռնոտու լինիցի նմա , զի ոչ գիտէ թէ զիաբրդ արժանէ յառնել ՚ի գլորմանէ :

ԺԵ. Չարմանան տգէտք ընդ իմաստունս , եթէ զիաբրդ կարեն զգործ մեծ և ոքանչելի ՚ի գլուխածել , զի չեն բաւական հասու լինել խորախոր հուրդ դիտողութեան մտաց նոցա՝ առ ՚ի գտանել զպատճառս , յորոց գրեթէ հարկաւ յառաջ պայ այնպիսի գործ :

Ոչ զարմանան իմաստունք ընդ անմիտ գործա

ագիտաց , զի խելամուտ են և գիտեն՝ թէ առանց նախատեսութեան պատճառացն զօրմէ կախէր գործն , վաղվազակի ձեռնամուխ եղեն առնել :

Ժ. Զ. Ի՞նդվայր տագնասին մարդիկ յածեալ ընդ ծով և ընդ ցամաք 'ի ստանսալ զուկի . զի թէ ըստասցին զիմաստութիւն և զառաքինութիւն՝ որ առ դուրս կայ իւրաքանչիւրոց , կամ դիւրաւ առանացին զուկին , կտոմ անպիտան լինէր նոցա սակին , և ոչ աշխատէին ընդունայն :

Ժ. Ե. Խմաստունք եթէ լինէին բազում , և տգէտք սակաւ վազու ևս հալոծական լինէին տգէտք . բայց այժմ իմաստունք հալածին 'ի տգիտաց , զի սակաւաթիւ են յոյժ :

Ժ. Զ. Մարդոյն պիտոյ է մարդ՝ զի արացէ ըդ մարդն մարդ . մարդն եթէ ոչ լինիցի մարդ , ոչ առնէ զմարդն մարդ :

Ժ. Ե. Յատուկ է առաքինութեան անկորուստ ունել զվարձս իւր . զի իմաստուն ոք և առաքինի՝ թէ և 'ի ծառայութիւն վարեսի , տակաւին փայ լի յերեսս նորա շնորհք բարելաւութեան . և գըտանէ զսիրելութիւն և զպատիւ . իբրև վարձք առ աքինութեան և իմաստութեան իւրոյ , և լինի երջանիկ :

Ե. Վաղցր և ողոք բանքն իմաստնոց առաւել յաղթեն թշնամեաց , քան զահագին ոռումքա պատերազմուղաց :

Ի. Պաւ է սիրելի լինիլ սակաւաթիւ իմաստ նոց , քան թէ բազում տգիտաց :

Ե. Վի հպարտացի գիտունն ընդ պայծա-

ռութիւն մտաց իւրոց , զի կոյ տակաւին ՚ի դիւ-
րասահ մարմնի :

ԻԳ . Աշխարհս է լիճ աղտեղի , ՚ի մէջ նորա
մուտ և ել , մարմննդ նաւ՝ խելքդ թի , վարեա
զթիդ՝ ելանել :

ԻԴ . Առական մարդիկ եթէ արեգակն փոխեալ
զընութիւն իւր՝ սփուեսցէ զմէգ մժութեան , և
իմաստունն՝ թէ տգիտացեալ զանձնէ՝ արասցէ
զգործ մոլեկան : | աւ է ուսանել բարիոք գործել
քան բարիոք խօսել :

ԻԵ . Ո՞վ իցէ որ ոչ մեզագիր լինիցի երկրի , զի
ժուժայ կրել զիմաստուն ոք , որոյ բանք իցեն բա-
րի , և գործքն յուի . զի ճոռոմաքանէ զառաքի-
նութենէ ՚ի զարմացումն լսողաց , և գործէ զմո-
լութիւնս ՚ի գոյթակղութիւն հասարակաց : Հո-
րեան յորոմն փոխարկի . եթէ իմաստուն ոք լի-
նիցի մոլի :

ԻԶ . Վ ախճան գիտութեան է ուղղութիւն
վարուց . ապա եթէ գիտուն ոք չունիցի զվարս
բարիս , խոտորեալ է ՚ի վախճանէ , և չէ խիա-
պէս գիտուն . զի վախճանն է պսակիչ և տեսա-
կաւորիչ գործոյն :

ԻԵ . Ոչ սակաւ ամօթէ իմաստնոյն , եթէ ան-
գրագէտ ոք առաւել քան զնա լիցի բարեմոյն :
Չէ նա Ճշմարիտ իմաստուն՝ որ ուսեալ է զբա-
զում գիտութիւնս , այլ որ ուսեալ է ևս գործել
զբարիս :

Օ արմանք են՝ զի ոմանք ՚ի գիտնոց ՚ի խօսիլ
և ՚ի շարագրել զգիրս՝ արթուն մտօք շուրջ հային ,
զի մի՛ սխալեսցին . այլ ՚ի գործս բարուց ոչ ջանան

զգուշանալ, զի մի վրիպեսցին, Օ ԲՇՆՀ օգուտ է մարդոյ գիտել զբաղումս, և ոչ գիտել զիւր ինքն։ Ի՞ւ Դմաստունն չարտչար վարուք իւրակք գայթակղեցուցանէ զբաղումս, քան թէ գուեհիկ ոք մոլի, զի գուեհիկն յաջո ամենեցուն է անարգ, և ոչ ոք յանձն առնու նմանող լինիլ նմա, իսկ իմաստունն է որպէս հայելի, և նպատակ հասարակաց, որում բազումք լինին նմանող, և զհետ երթան մօլորութեան նորա։

Ի՞ւ Ռազումքը զբաղումք գրեանս չարադրեցին, և զուսաննողսն արարին այն նրբամիտ և գիտուն, այլ ոչ բարի և առաքինի, զի ոչ յայն սակա աշխատեցան ՚ի գրել զգիրս՝ զի ընթերցողք նոցաւասնիցին գործել զբարիս, և լինիցին բարի, այլ զգիտութիւնս իւրեանց միայն յայտնել ջանացին փրացեալ մոօք։

Վպաքէն պլարտ է ուսանիլ զգիրս իմաստասիրականս, ոչ յայն սակա՝ զի համբաւեսցի գիտուն միայն, այլ մանաւանդ զի լինիցի բարի։ Ռանզի մարդ գիտուն և առաքինի՝ է իբրև մաքուր ոսկի՝ աղնիւ ակամք ընդելուզեալ և զարդարեալ, իսկ եթէ զերկոսեանն միանգամայն ոչ կարասցէ։ ՚ի ձեռս բերել, ընտրելի է լինել բարի քան գիտուն։

Ա. ՚Սա է Ճշմարիտ գիտուն՝ որ զօգուտն իւրաքանչիւրոց ուսուցանէ, իսկ նա որ գիտէ, բայց իւրնայէ ուսուցանել որոց խնդրեն ՚ի նմանէ, ոչ միայն կորուսանէ զոր գիտէ, այլ և ընդ անձին հակառակի, և բոլոր մարդկան թշնամի լինի. զի ոչ ինքն վայելէ զբարիսն զոր ունի, և ոչ այլոց մատակարարէ. զայնպիսին արժան է ընդ խելագարս ճշդ-

թայել իրքեւ անդէտ անձին, և հասարակաց օգտիւ է. Այս ոք համարի զանձն դժբաղդ և թըշւառ՝ պակասութեամբ անծանօթ և անհաս բարեաց, կամ զոր կործէ ունել, բայց եթէ նա՝ որ Ճանաչէր զբարեմասնութիւն ինչ կարելի, այլ ոչ ջանաց ՚ի ձեռս բերել, և կամ ուներ՝ և անհու գութեամբ կարոյս :

Վասն որոյ տգէտք՝ որք անհասանելի վարկանին զառաքինութիւն և զշնորհա՛ զորս կարէին ստանալ, և մոլիք՝ որք ոչ համարին զանձինս զըրկեալ ՚ի հոգեոր բարեաց՝ զոր ունեին յաստջագոյն, բայց կարուսին, են արդարեւ դժբաղդ և թշուառ : Արոց եթէ հտատատեալ էր ՚ի միտս՝ թէ չէ անհնարին գործել զառաքինութիւն և ստանալ զշնորհա՛, կամ թէ չար է կարուսանել զբարեմասնութիւն ինչ հոգեոր քան զամենոյն բարիս կենցաղցա, յիրաւի ցանկացին մահու չափ միշտ աշխատանոց յանձն առնուել առ ՚ի ստանալ զնոստ, քան թէ առանց նոցա կեալ օր մի : Աւրեմն որ կամի զարթուցանել զբաղձանս տգիւաց ՚ի սէր ուռաքինութեան և շնորհաց, նախածանօթս արասցէ զնոստ առաքինութեան, և կարելի գուցաւցցէ, և զգացուցցէ մոլեաց զյարդ բարեացն՝ յործէ զբկեցան, որպէս զի ինքնին շարժեացի ախորժակ նոցին՝ առ ՚ի ստանալ զառաքինութիւն և զշնորհա՛, և զկորուսեալ բարիսն անդրէն ՚ի ձեռս բերել :

Եթ. Վատուած զոր ինչ յայտնեաց, և որքան յայտնեաց, միայն զայնոսիկ պարտին գիտել մարդիկ : Իսկ զոր ինչ կամեցաւ ծածկել, ոչ է պարտ

այնոցիկ լինել խուզարկու : Վենաւթիւն գտղաշնեացն Վատուծոյ ոչ մես անպատճիմ , զի բազում ինչ ծածկէ Վատուած վասն ակարութեան մարդկան , և վասն ահաահման բարութեան իւրոյ և ի մասաւթեան : Օ ի այն է մեզ օգտակար ՚ի գիտել , որ ունի կախումն զանձնիշխան կամաց մերոց , այսինքն է՝ խոկալ զբարին և տռնել : Իսկ որ ոչ կախին զմենջ , զգիտութիւն նոցու պահեաց Վատուած ինքեան միայնոյ . և ոչ ունկաւ շահ է մեզ չգիտել զնոսա :

ՀԳ . Աղքառնիք մարդկային գործոյ՝ են զգայութիւնն , իմացականաւթիւնն , կամքն , կիրքն . եթե իմացականաւթիւնն չիցէ լուսով գիտութեան պայծառացեալ , թիւրէ զնա զգայութիւնն զհետ կրից իւրոց , և նա զկամն՝ որ է գործադիր և հուպ պատճառ գործողաւթեան : Իսկ թիւր կամաց ներդ գործութիւնն օտարացուցեալ զմարդն՝ ի մարդկորէն կենցաղավարութենէ՝ արկանէ յանբանից կարգ . վասն զի մարդն որոշի յանբանից՝ միայն իմացականին լուսով և ուզզութեամբ կամաց . ապա ՚ի մթսողնիւրանին՝ և ՚ի թիւրիւ կամաց , չեթ խափը ՚ի մէջ մարդոյ և անտանոյ :

Յայտ է փորձն ՚ի խելագարս և ՚ի տղայս , որոց միայն իմացականաւթիւնն խանգարեալ է , և միւսոյն դեռ ոչ հասունակեալ , որբ յորդորմամբ զգայութեան առնեն զոր ինչ առնեն . վասն որոյ օրէնքն ոչ դատին զնոսա արժանի պատժոց և վարձուց , զի դործք նոցա ոչ է գործ մարդկային սյլ գործ մարդոյ , վասն զի ոչ առնեն իմացական ձանազմամբ և ազատ կամօք , սյլ կորզկուրոյն և

իբր բնական ազդմամբ :

Ուրեմն պարտ է կարևոր գիտութեամբ լուսաւորել զաշո մասց , զի մի իբրև զաշացու մուրացիկ ընդ ձեռն զգացութեան յածեալ շրջեցի վասն փշրանց հացի՝ այսինքն վասն մարմնական հեշտութեան՝ 'ի դրունս զգացական կրից , և նքթիցի խսպառ : Վասն որոյ որ զուրկ է 'ի լուսոյ գիտութեան , մտօք կոյր է , և քաղցեալ շրջի , և կեայ իբրև զանբան :

ԵԴ . Տեսական գիտութիւնն առնէ զմարդո իմաստուն 'ի խօսս , և արհեստականն բազմահնար 'ի ձեռագործուն . մին պատազի զբնականօք կամ զգերբնականօք , մինչև 'ի զգալեաց աստի վերանալ 'ի ծանօթութիւն իմանալեաց . և միւսն պատազի զարհեստականօք կամ զնիւթաւորօք , մինչև 'ի նմանութիւն բնական իրաց յարմարել զարհեստակերտեալն իւր :

ԱՅԼ ոչ տեսականն և ոչ արհեստական առնեն զմարդն բարի , զի մարթ է լինել բազմաց քաջալարժ 'ի տեսական և յարհեստական գիտութիւնն առնէ զմարդն բարի : Օ, ի այլ գիտութիւնի զմիտս կատարելագործեն 'ի կարգի առ ձշմարիտն , և սա զկամս ուղղէ 'ի կարգի առ բարին . և մարդիկ վարձատրին Աստուծոյ կամ պատժին 'ի ներգործութենէ կամաց՝ և ոչ 'ի ներգործութենէ մռաց : Ապա պարտ է ուսանիլ զբարայական գիտութիւնս առ 'ի ուղղել զկամս 'ի բարին :

“ Եմասպո-լիւն օդնեւցէ իմասպերյն առն զգասն իշխոն
ու իշեն ՚ի տաղադի ” . Ժողո . է . 20 :

“ Օ ի որոց զվամասպո-լիւամբ շանց արարեալ ու մայն
քասեցան առ ՚ի չշահաւշը զբարիս , այլ և շանմասպո-լիւան
յիշաբակ լոռովն յաշնարկի ” . Իմասս . ժ . 6 :

“ Առ-լանե զնսաս իւր բանգեպն յապինի ” . Առակ .
Էջ . 26 :

“ Օ ասուայ իմասպո-ն պիրեւցէ պերանց անմասց ” .
Առակ . Ժէ . 2 :

“ Որ սպանայ զնանճար՝ սիրե զանյն . և որ պահե զվ-
ամասպո-լիւն՝ պահե զբարիս ” . Առակ . Ժթ . 8 :



ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ա. Ա. ԿԵՆՑԱՐՅԱՑ

Ա. Արկին է վիճակ մարդկան , մին՝ աստեա-
ցըս , և միւսն՝ հանդերձելըց . և ՚ի նոսա զոր ինչ
ունին վայելել բարիս , են պարգև բարերարու-
թեանն Աստուծոյ : Օ ի որպէս ինքն Աստուած
ստեղծ զմարդն , նոյնալէս ինքն զամենայն պիտոյս
նորա յաւատութենէ իւրմէ չափով , կշռով , և
կարդաւ շնորհեաց , և շնորհէ օր ըստ օրէ յօգուտ
իւրաքանչիւրոց . զի որ տայ զգով , տայ և զհետե-
ւակն գոլոյ :

Եւ զերկիրս զայս իբրև զսեղան բարելից զարդարեաց ՚ի վայելս մարդկան, և զընդհանուր բարիսն՝ զըստ, զօդ, և զջուր անձրեւոյ, որք են կարի հարկաւորք և մեծ, ետ ամենեցուն միապէս։ Իսկ զմասնաւոր բարիսն ինքեան միայնոյ յատկացոյց տալ ում կամի, որքան կամի, յորժամ կամի, զիարդ և կամի։ Թէ զընական բարիսն, այսինքն՝ զմարմնական կենաց տեսողութիւն, զառողջութիւն, զուշիմութիւն, զուժեղութիւն, և այլն։ և թէ զատացական բարիսն, այսինքն՝ զիշխանութիւն, մեծութիւն, հարստութիւն, և այլն։ Ա ասն զի այսոքիք ոչ ըստ կամաց մարդկան, այլ ըստ կարգադրութեանն Կատուծոյ պարգևին։ ըստ այնմ, «Տիրէ բարձրեալն թագաւորութեան մարդկան, և ում կամի տացէ զնա»։ Դան. Դ. 29։

Վանզի բարիք և վայելըութիւնք աշխարհի՝ ուրովհետեւ են ներկայ, զգալի, և չափաւոր, եթէ ոք կամիցի ունել մի ինչ յայնցանէ, հարկ է այնմ յայլմէ ՚ի բաց բառնիլ։ և կամ զոր մի ոք ունի, այլ ոք նոյն թուով զայն ոչ ունի։ և ՚ի ցանկալ բազմաց ունիլ զմի և զնոյն իր, անդէն ծնանին վէճք և խռովութիւնք, զի ստիպին իուել և յափշտակել ՚ի միմեանց, զոր կամին ունել։

Ա ասն որոյ եթէ Կատուծ թողոց ՚ի կամս մարդոց ունիլ զըարիսն աշխարհի՝ որպէս կամին, որչափ կամին, և ուր կամին, աշխարհս լինէր ասպարէզ աւազակաց և յափշտակողաց, և ամենեքեան լինէին զըկող և անիրաւ։ Օ ՚ի կարողքն յաղթէին տիարաց, և տկարքն միաբանեալ յառնէին ընդդէմ կորողաց, մինչև չնշել զմիմեանս յերկրէ։

զի զգալի առ արկայն 'ի լինելն ներկայ, շարժէ զգ
պայտկան բազմանս իւրաքանչիւրոց 'ի սեր և 'ի
ստացումն իւր :

Խոկ զյուլիտիտենական և զերկենային բարիսն հան-
գերձեալ կենաց, որք են իմանալի և անշափ, յան-
ձնեաց Աստուած 'ի կամս մարդոց, զի ով ոք կամի
և խնդրէ, նմա տացէ : Արպէս 'ի խնդրել որդւո-
ցըն Օերեղեայ՝ Յակօբու և Յովհաննու նասիլ
յաջմէ և յահեկէ Քրիստոսի 'ի փառսն երկնից
արքայութեան, ասաց Քրիստոս . « Ոչ է իմ տալ,
այլ որոց տուեալ իցէ » . Ապրի . Ճ . 40 : Քանզի
փառքն այն ամենեցուն է պատրաստեալ, այլ Առ-
տուած կամի՝ թէ ամենեքեան 'ի գիտութիւն
չշմարտութեան եկեսցեն և խնդրեսցեն . բայց
քանզի ոչ գան և խնդրեն ամենեքին, վասն որսց
այնոցիկ միայն տուեալ լինի , որք խնդրեն զնա .
Խոկ խնդրեցին զնա որդիքն Օերեղեաց, և առին
'ի Տետունէ :

Բայց Աստուած յիւրմէ կաղմանէ նախ ձրի տայ
և պարզեէ իւրաքանչիւրոցն զբաւական շնորհա,
որով զօրացեալ կարասցեն արժանանալ տուաւե-
լուգունի շնորհաց՝ մինչեւ հասանիլ առ փառո-
ւստ այնմ, « Օսղորմութիւն և զշմարտութիւն
սիրէ Տէր Աստուած, զշնորհս և զփառս տացէ » .
Ապր. ԶԴ . 12 : « Եթէ ոք ծարուի իցէ, եկես-
ցէ առ իս և արքցէ » . Յով . Ե . 57 : « Եթէ կա-
միս կատարեալ լինել, երթ գոր ինչ ունիս վաճա-
ռեա, և տուր տղքատաց » . Ապր . Ճ . 21 :

Արտիշեաւ փառքն արքայութեան այժմ ոչ ան-
կանին ընդ զգայութեամբ մարդոյ՝ զի շարժեսցեն

զբաղձանս նոցա ՚ի խնդրել զնա , այլ միայն ըմբռք նին զօրութեամբ հաւատոյ , և տեսանին հոգւոյ ակամբ . ապա ով որ ըստ պնդութեան հաւատոյ և սիրոյ խնդրե զնա , գտանէ և առնու :

Վանզի եթէ իբրեւ զբարիս աշխարհիս ինքն Վասուած բաշխէր զյաւիտենական բարիսն՝ որոց ոչ խնդրեն ՚ի նմանէ , հետեւէր ամենեցուն միա պէս տալ . այլ յոյնժամ ոչ զատեալ որոշէին ՚ի միմեանց խնդրողք և ոչ խնդրողք , չարք և բարիք , հաւատացեալք և անհաւատք , մանտւանդ ՚ի դերեւս ելանէին արդիւնք շնորհաց՝ հաւատոց՝ և աւաքինութեանց :

Ուրեմն սնարդեալքն ոչ կարեն մեղադրել զնա տուած՝ թէ անարգեցան . քանզի Վասուած ոչ է պատճառ անարգութեան նոցա , այլ ինքեանք , զի ոչ կամեցան և ոչ խնդրեցին ըստ արժանւոյն . զի գրեալ է , « Խնդրեցէք և տացի ձեզ , հայցեցէք և գտջիք » . Վասիլ . Է . 7 :

Ուստի Վասուած ինքնին իբր ձեռամբ առաջ նորդեաց մարդկան՝ ազգի ազգի ճանապարհաւ առ երկնային բարիսն՝ բնական և գրական օրինօք , տեսլեամբ , սքանչելեօք , օրինակօք և խրատուք նահապետաց և մարդարէից , և ՚ի վախճանի Յրիս տոսիւ տերամբ մերով , զի մի ասացեն՝ թէ ոչ գիտէաք :

Եւ ես՝ եղ ՚ի բնութիւնս մարդոյ փափագ անմահութեան՝ մեծութեան՝ և հանգստեան , որ յաստի կեանս ոչ կարէ լնուլ . զի ամենայն ոք ցանկայ կեալ , մեծանալ ՚ի փառս , և ՚ի փայելել ՚ի հանգիստ անվախճան ժամանակաս . Վհա Վա-

տուած զնոյնս խոստացաւ տող . զի պատրաստեալ
է մարդկան յերկինս անմահ կենդանութիւնն , անք
խոնարհելի մեծութիւն և անորոշում հանգիստ ,
միոյն թէ կամեոցին և խնդրեցեն զնա ըստ արշանուոյն՝ որպէս պարտ է խնդրել , և ուր պարտ
է խնդրել . ըստ այնմ , « Որ խնդրէ՝ առնու , և որ
հոյցէ՝ գտանէ » . Առաջ . Է . 8 :

Արդ՝ եթէ ոք ՚ի վիճակ աստեացս վարեցէ
զկեանս ըստ կամացն Աստուծոյ , գոհանալով զնմաշ
նէ յամենայնի , և շատացի այնու՝ զոր Աստուծօ
կարգեաց , չափեաց , և ետ իւրաքանչիւրոցն յօւ
գուտ նոցա , և յերկո առաքինութեան աշխա-
տեալ խնդրեցէ զերկնից արքայութիւնն , գոցէ
զնա աներկբայ ՚ի հանդերձեալ վիճակի :

Դարձեալ՝ եթէ Աստուծօ միօրինակ տայր ա-
մենեցուն զբարիսն աշխարհի յաստի կեանոս , եղ-
ծանէր կարգ և կառավարութիւն տիեզերաց : Եւ
եթէ զամենայն մարդիկ ՚ի միում վիճակի և կար-
գի անփոփոխ պահէր միշտ , կարծէին մարդիկ թէ
՚ի բնութենէ ունին զայն՝ իբրև զսեպհական ինչ .
և յայնժամ փարթամք և կարողք հարաբացեալ
յանդգնեին , աղքատք և տիարք յուսահատեալ
ւրանէին : Եւ թէ զինդիրս ամենեցուն կասարէր ,
բազումք զբազում անարժան խնդրուածս հոյցէ-
ին Աստուծոյ՝ ՚ի վեաս անձանց և ընկերաց :

Եւ եթէ ոչ երբէք տայր թոյլ ումեք հասանիլ
խնդրոց և բաղձանաց իւրոց , խափանէր զազա-
տութիւն կամաց մարդոց :

Ուրեմն մեծի իմաստութեան և բարերարու-
թեանն Աստուծոյ նշան է այս , զի կամաց իւրոց

սեպհականեաց զբարիսն այսոր կենցաղոյա՝ տալ ու բոց կամի , որպէս զի մարդիկ խաղաղ կենօք քաղաքավարեացին ընդ միմեանս : Խակ զերկնային վիճակի բարիսն՝ ՚ի կամս մարդոյ սեպհականեաց , զի որք խնդրեացեն զնա , նոցա տացէ :

Որովհեառև յերկինս միաբանին կամք մարդոյ ընդ կամացն Աստուծոյ , և ծայրագոյն բարին յօր անդ վայելեն՝ ոչ պակասի ՚ի բնաւից , զի է անհուն , և միապէս յադեցուցանէ և հանգուցանէ զիղձ և զփափագ ամենեցուն : Օ ի զօր ունի մի ոք , ունի զայն և այլ ոք . և յունիլ միոյն՝ ոչ բառնի ՚ի միւսոյն . և ամենայն երանեալք անթերի վայելեն յօյն բարին , մինչև ոչ ցանկալ և կարօտիլ այլց իրի , զի է պարառութիւն ամենայն բարեաց . վասն որոյ անդ ոչ գոյ նախանձ , ոչ ատելութիւն , ոչ զփաղութիւն , և ոչ յափշտակութիւն :

Բ . Օ ի՞նչ քան զայս աղետալի վիճակ , եթէ ոք յօրէ ծննդեան մինչև ցօր մահուն իցէ ՚ի ձեռ որս խարդախ սնուցչի . և ահա այս խոկ է վիճակ ամենայն մարդոյ : Օ ի ծնանի մարդ մանուկ տրխմար , և վաղվաղակի գիրկս արկանէ սնուցանել զնա պատրողական այս աշխարհ . որոյ աչք են սիրանշմար , և միտքն չարահնար . շրմունք նորա անուշակ իբրև քաղցրաւենի , և բանք նորա դառն քան զեղի . կերպարանք նորա ՚ի նմանութիւն սիրելոց , բայց սիրա նորա իբրև մահաբեր թշնամւոյ . տոտամունք նորա աղուականք , խոկ խածուածքըն անբժշկականք . ձեռք նորա նազելի , բայց ապտակն երկաթի :

Այս ինչ ծայրիւ մատին ասյ ումեք զջաշակ

քաղցրութեան, խիլյին ըստ զկակորդ նորա լեզեաւ, գաւնութեան, զոմանս վտանգէ խեղութեամբ՝ ՚ի տիս մանկութեան, զոմանս հիւանդութեամբ՝ ՚ի ծաղկեալ երիտասարդութեան, զոմանս խելտպարութեամբ՝ ՚ի հասակի կատարելութեան, զոմանս աղքատութեամբ՝ ՚ի ակար ալիս ծերութեան, և զայլս ոմանս տառապեկցուցանէ ՚ի գմնդակ ծառայութեան զամենայն աւուրս կենաց իւրեանց։ Ռայց տուաւել չար այն է, զի ամենեքին փորձիւ գիտեն զգաւաճանութիւն նորա, այլ տակաւին ոչ զգաստանան, մանաւանդ զի մատնիչ ևս լինին անձանց իւրեանց ՚ի կորուսա՝ վտան սիրոյ նորա։

Գ. Յիմար է՝ որ խարի յանցաւոր բարեաց, զի կեղծուպատիր այս աշխարհ զմիւնաւոր ժանկս կերպարանէ իբրև զսոկի, զարտմական կիրս իբրև շնչեցուալի, զվեսասակար գործո իբրև օգտակար, և զրս հաւատան և խարին՝ զրկէ ՚ի հոգեւոր բարեաց։ Ապա պարտ է աշալընութեամբ քաղաքավարիւ, զի որք ննջեն անհոգ, զարթնուն արհաւրօք։

Դ. Քանի՞ անմտութիւն է այս, զի մարդիկ ծնանին յաշխարհի, բնակին յաշխարհի, սիրեն զտշխարհ, միշտ կամին մնալ ՚ի յաշխարհ, և ոչ խելամուտ լինին քնութեան և բարուց աշխարհի, զոր եթէ գիտէին՝ համբերութեամբ տանէին վրանիգաւոր արկածից աշխարհի, և ոչ արանջային։ Օի զի՞նչ այլ ինչ յուսալի է յաշխարհէ, բայց եթէ նեղութիւն և վիշտ, զի զայն տայ՝ զոր ունի։ խիլ ունի նա զնեղութիւն և զվիշտ։ տալա զայնոսիկ ընդունելոց ևն յաշխարհէ որդիքն աշխարհի։

Ե. Մարդիկ լողագին աղաղակառ մասնեն յոշ խարհ, բայց լուռ և անձայն ելանեն յաշխարհէ . իբր զի յօրէ յօրմէ մտին 'ի յաշխարհ, զփորձ տւ ուն ցաւագին կրից նորա, և 'ի մի բարբառ տմենեքին լացին . այլ յելանել իւրեանց յաշխարհէ , իբրեւ թէ փախուցեալ զերծանին 'ի տառապանաց նորա, վասն որոյ լուռ լինին, և ոչ ճիկ հանեն , որպէս սովորութիւն է փախուցելոց : Իսկ բնակիչը աշխարհի տեսեալ զփախուստ նոցա՝ գուան, գոչեն, աղաղակ բառնան՝ զի արգելցեն , բայց նոքա որք զերծուցին զօձիս իւրեանց 'ի ձեռաց աշխարհի, ոչ երբէք գառնան յետա ըմբռնիլ 'ի նմանէ , այլ երթան անդարձ՝ լնդ որ առաջնորդեն արդիւնք գործոց իւրեանց :

Զ. Ար գանդատի զաշխարհէ , կամ է իւելուգար , կամ նորոգ զգաստուցեալ 'ի խելտգարութենէ . զի իւրաքանչիւրոք յիւրոց կրից առաւել վնասի՝ քան թէ յաշխարհէ : Եւ զի՞նչ իցէ աշխարհ , բայց եթէ բովանդակութիւն զգալի գոյութեանց որ յերկինս , և որ յերկրի . և ահա այս ամենայն արարածք Աստուծոց են բարի , և չկի ինչ 'ի նոսա խոսան :

Չ. ի սկզբնաստարելքս՝ հող , և ջուր , և օդ և հուր , բաղադրութեամբ ընդ միմեանս , և յատուկ զօրութեամբ՝ որ հարկաւ յառաջ գայ 'ի բաղադրութենէ իւրեանց , տարրացուցանեն ըզկազմուած մարդոց , և մարմինն բանական հոգւով շարժի 'ի գործ : Աստեղք արբանեկեն 'ի լուսաւորութիւն տունչեան և գիշերոց : Երկիր ծառայէ 'ի սնունդ և յաճումն կենդանեաց և բուսոց՝ 'ի

գարման մարդկան : Վաղահիք և սողունք նպաստեն
՚ի բժշկութիւն մարմնոյ , և յայլ պէտո : Աստ զօյք
ուրուք գանգատիցէ մարդ , ոչ աւանիկ ամենեւ-
քին օգտակար են և պիտանի . ուրեմն վնասի մարդ
՚ի մոլար գատաղութենէ իւրմէ , և յանկարգ բաղ-
ձանաց :

Ոսկին բարի է , մինչդեռ կոյ յընդերս երկրի ,
բայց տգահութիւնն եգիտ զնա գործիք տանջա-
նաց : Վինին անմեղ է , ցորչափ կոյ ՚ի կարասի ,
սակայն արբեցութիւնն արար զնա պատճառ խե-
լագարութեան : Կերակուր ՚ի սնունդ մարդկան
տուաւ , իսկ որկորստութիւնն դարձոյց զնա ՚ի
պէտո զեղխութեան : Հանդերձ ՚ի ծածկոյթ մար-
մնոյ սահմանեցաւ , այլ փափկութիւնն էաւ զնա
՚ի նիւթ պՃնութեան : Տուն վասն ընկերութեան
կազմեցաւ , բայց ամբարտաւանութիւնն ընդար-
ձակեաց զնա յաճումն մնափառութեան : Հան-
կութիւնն ՚ի պահպանութիւն տեսակի բնաւորե-
ցաւ , և անբարեխաւնութիւնն փոխարերեաց
զնա յանկարգ բաղձանս շնութեան :

Տեսեր ով մարդ , դու ես որ զբարի և զօդտա-
կար պարգևսն Աստուծոյ դարձուցեր ՚ի չարիս՝
՚ի վնաս անձին քո . դու ես մասն աշխարհի , և
կոչիս փոքր աշխարհ , բայց անկարգութեամբդ
լինիս մեծ չար աշխարհի : Ի զուր գանգատիս
զաշխարհէ , զի դու ես որ տանջես զքեզ իբրե
զթշնամի , գուցէ առաւել ևս քան զթշնամի . զի
օտար թշնամին ոչ այնչափ կարէ չարչարել զքեզ ,
որչափ դու չարչարես . հապա զգաստացիր ՚ի կա-
մաւոր խելագարութենէդ , և մի այսուհետեւ բամ-

բասեր զանմեղ արարածո Առառուծոյ, այլ միոյն զքեղ :

Ե. Անմիտն՝ զչարիսն զօր հարկ էր կրել սկառ ձառաւ անկարգութեան կրից իւրոց, արկանէ ՚ի վերոց երկնից, և բողոքէ զնմանէ. և ոչյայն հայի, թէ որ անկանի ՚ի հուր՝ այրի, և որ թարթափի ՚ի փուշ խոցոտի. ուստի և ամենայն որ անկարգունի զիկիրս՝ գործէ զմոլութիւնս, և որ գործէ զմոլութիւնս՝ ՚ի հարկէ զնասի :

Ը. Ամենայն որ տանջի և տառապի, կամ մեղապարտ է, կամ անմեղ. եթէ իցէ մեղապարտ՝ պարտի համբերել, զի արդար իրաւամբ կրէ ըգ պատիժ յանցանացն՝ որով յանցեաւ. Իսկ եթէ իցէ անմեղ՝ պարտի և նա համբերել, զի կոյ և մնայ նմա հասուցումն ՚ի Տեառնէ վասն խոշտանեցանացն, որով խոշտանդի տարապարտուց յանի բաւութենէ մարդկան : Ապա չէ արժան տառապելոյն՝ եթէ իցէ իրաւամբք և եթէ յանիրաւի, գանգտառել զտարերաց՝ կամ զԱռուծոյ, այլ համբերութեամբ տանիլ, ածեալ զմտաւ՝ թէ վիշտք և տառապանք աշխարհիս այսորիկ փոփոխական են և անցաւոր, և առ իթ մշնջենաւոր հանգըստեան և փառաց :

Թ. Յանիրաւի տրանջէ որ զԱռուծոյ՝ յորժամ չքաւորի, կամ հիւանդանայ, կամ ՚ի ձախողութիւն ինչ անկանի. զի ինչք՝ առ ողջութիւն՝ և յաջողուածք ՚ի Տեառնէ Առուծոյ յաւանդ տուեալ են մարդկան : Ուստի մինչ սրահանջէ և առնու զտաւանդն իւր, չէ արժան ումեք արսամիլ կամ տրանջել, այլ մանաւանդ պարտի համբերել

գոհութեամբ, որ զամս բազումն ձրիապէս վացելէաց՝ ի պարգևո նորա . որով քաղցրացուցնել զկամն Տետուն տալ անդրէն զոր էառ, եթէ օդուտ ինչ իցէ նմին :

Ճ. • Մարգիկ՝ զոր միանդամ ունին յաշխարհի ինչը և մեծութիւնք, առացուածք և զաւակք, ոչ են նոցա տեսարք՝ այլ աւանդապահք, զի Աստուծոյ է ամենայն, որ բաժանէ իւրաքանչիւր որպէս և ախորժէ, ապա չունի ոք իրաւունս արքանցիւլ զլատուծոյ, յորժամ աւնու ՚ի նմանէ զաւանդ իւր, և ասյ այլում: Օ, ի մինչ տեսանէ Եստուած, թէ ոչ բարւոք վարի ոք նոքօք, կոմ ոչ կամի վարիլ, առնու ՚ի նմանէ զաւանդն իւր՝ և ասյ ընկերին: Եւ եթէ նա բարւոք վարեսցի, յաւելու տալ զայլ ևս բարիս, ապա թէ ոչ՝ առնու ՚ի նմանէ ևս, և ասյ այլում: Ուստի եթէ ոք կամի ընդ երկար վայելել՝ ի պարգևան Եստուծոյ, ՚ի վար արկցէ զնոսա լսոտ կամացն Եստուծոյ . իսկ եթէ չարաչար վարեսցէ, կամ մտարեսրեսցէ վարիլ, անդրէն տեսանէ զանձն ունայնացեալ:

Ճ. • Որ ՚ի կեանս յայս սգայ և տառապի, ՚ի հանդերձեալ կեանսն ուրախանոյ և հանդչի, վասն այսորիկ կեանք տշխարհիս ոչ սահմանեցաւ յլուտուծոյ լինել երկարատեւ, զի մի մարգիկ յուսաբեկ լինիցին ՚ի կրելց զիթշտա ՚ի ժամանակո ձիգո, այլ արարաւ սուզ և կարճատեւ, զի առանց արանջանաց կարասցեն իսպառ համբերել, և սակաւօրեայ ժուժկալութեամբ նեղութեանցն՝ զյաւիտենականն ժարանդեսցեն հանդիսաւ և զինդութիւն:

ԺԲ. Իշխանիք աշխարհի ՚ի պատմել իւրեանց զմեղապարտս , հրատարակեն զյանցանս նոցա , զի մի ասիցեն մարդիկ՝ թէ յանիբառւի գատապարտեցին . իսկ Վատուած՝ վասն զի է մարդտակը և արդար յամենայնի , յորժամ ձախողութեամբ իւրիք պատուհան զյանցաւորն , չկամի յայտնի լինել յանցուածոց նորա , զի մի յանցաւորն վատահամբաւեսցի ՚ի մէջ մարդկան . քանզի իշխանիք աշխարհի յանձինս իւրեանց խնայեն , իսկ Վատուած յանձն մեղապարտին :

ԺԳ. Որ ոչ գոհ լինի ընդ վիճակ իւր , մեղանց ընդդէմ տեսչութեանն Վատուծոյ , որ ըստ անքնին խորհրդոց իւրոց խնամէ զտմենեսին քաղցրութեամբ . ոմանց թոյլ ասյ աղքատանալ , և ոմանց մէծանալ՝ առ իւրաքանչիւր օգուտ : Ո՞ի զի կառավարութիւն ընդհանուր աշխարհի պահանջէ ունենել կարգ ինչ յառաջնութեան և յետնութեան՝ ըստ իշխանութեան , ըստ փարթամութեան , ըստ խոհեմութեան , ըստ քաջութեան , և ըստ այլ ևս հանգամանց , որպէս զի փափոխակի օգոնելով միմեանց՝ ՚ի բարւոք խաղաղութեան վարեսցեն զիենցազու իւրեանց : Եւ միւս՝ զի տարբերութիւն և զանազանութիւն կարգաց՝ ոչ սակաւնալաստէ իւրաքանչիւր ումեք առ յաւիտենական վարձուցն արժանառութիւն : Օ՞ի առաւելեալին հոգեոր և մարմնաւոր բարութեամբ՝ երախտաւոր լինելով առ նուազն , և նուազն՝ երախտագէտ գոլով բարերարութեանցն , երկաքանչիւր նորա արժանաւորին միանդամայն յաւիտենական վարձուց : Ուստի եթէ իշխանաւորքն դժգոհ լի

նիցին զվիճակէ իւրեանց վասն ծանրութեան ըդ
բաղանաց՝ և բազմավաստակ հոգւոց, և հպատակ
քըն վասն աղքատութեան իւրեանց՝ կամ քրիս-
նաշան աշխատութեանցն մեղանչեն արդարե.
ընդդէմ ընդհանուր կարդի աստուածային նա-
խախնամութեան :

ԺԴ. Յօլովակի երկնչին մարդիկ՝ յարմէ չէր
արժան երկնչիլ, և արտմին՝ առ որ ոչ պիտէր
արտմութիւնն . զի երկնչին ՚ի ձախողութեանց՝
յորժամ տեսանեն մերձենալ, և արտմին՝ յորժամ
հասանեն չարիք : Եւ զայն ոչ ածեն զմառաւ, թէ
ձախորդութիւնք անցաւորք են և փոփոխականք .
և չէ արժան մարդոյ՝ որ վիճակեալէ անմահական
հոգւոց, երկնչիլ վեհերոտութեամբ, և արտմիլ
ցաւօք :

ԺԵ. Ոչինչ են զարմանք, զի հոգան և արտմին
մարդիկ ընդ կորուստ յաջողութեան, իսկ ընդ կո-
րուստ անմեղութեան ինչ ոչ հոգան, զի գլխովին
մարմին եղեալ զմարմնականոն միայն աեսանեն,
և ոչ ինչ փոյթ է նոցտ զատուածայնոց և զհո-
գեորաց . ապա արժանապէս զրկին ասաւ ՚ի մար-
մնաւոր բարեաց, և անդ ՚ի հոգեոր փառաց :

ԺԶ. Որ ծառայէ Աստուծոյ միամտութեամբ
սրախ . ՚ի յաջողութեան իւրում, գտանէ զԱս-
տուած ձեռնատու և օգնական ՚ի ձախորդութեան
իւրում: Մարդիկ մինչչե իցեն թողեալ զԱստուած
բաղում անդամ, Աստուած ոչ թողտ զնոսա
մի անդամ :

Երբեմն թոյլ տայ Աստուած խարդաւանիլ ու-
մեք ՚ի վտանգս ինչ, զի փոքր մի խրատեալ յուղ-

զութիւն գայցե . և մինչ աեսանէ թէ այնու ոչ
զգաստանայ , թողու հանդիպիլ առաւել ծանունց
և դժնդակ վշաաց . և եթէ նոքիմբք ևս ոչ ինչ
խրատեսցի , բարձիթողի առնէ զնա . և հասանէ
նմա որպէս արագ սուրհանդակ անհնարին կու-
րուստ և ապականութիւն :

ԺԷ . Դժբաղդութիւն և վիշտք խթան տուան
մարդոյ զարթնուլ 'ի թմրութենէ , և առնուլ 'ի
միս՝ թէ աշխարհս ոչ է տեղի երջանկութեան՝
այլ նեղութեան և կրից :

ԺԸ . Որ յաշխարհի քաղաքավարի , անհնար է
մնալ անփոփոխ յիւրօւմ վիճակի , ապա թէ ոչ
պարտ է աշխարհի յեզափոխել զիւրն բնութիւն .
զի յոլովակի տայ աշխարհ միով ձեռամք , և բառ-
նայ միւսովն . միով ակամքն ուրախացուցանէ , և
միւսովն լացուցանէ : Ապա չէ արժան վրանալ
յորժամ տայ ումեք զյաջողուածս , և ոչ արտամիլ
յորժամ բառնայ զնոսին , զի այս է բնութիւն նո-
րա՝ լինել գիւրափոփոխ : Որ յուսայ մնալ միշտ
'ի յաջողութեան , տիրեսցէ նախ 'ի վերայ բնու-
թեան և ժամանակի . և զի չէ բաւական այդմ ,
ապա մի վատահասցի 'ի յաջողուածս՝ զոր ունի ոք :

ԺԹ . Ենցեալ յաջողութիւնք յիշատակեալ 'ի
ձախողութեան՝ բազմապատկեն զվիշտսն . և ան-
ցեալ ձախողութիւնք յիշատակեալ 'ի յաջողու-
թեան՝ առաւելուն զբերկրանսն . բայց պարտ է
զգաստ կալ յերկասին ևս , զի մի գուցէ յաջողուածք
բարեդիպութեանց՝ յանդդնութեան եղիցին ա-
ռիթ , և ձախողութիւնք արկածից՝ տեղի տացեն
յուսահասութեան :

Ի . Յժէ պակասի ձիւն և անձրեւ ՚ի ձմերան , յամաքին աղքիւրք յամարան . թէ պակասի իսպառ արկածք ձախողութեան ՚ի մարդկանէ , լըսեն լեզուք ՚ի գոհանալոյ ՚ի յաջողութեան :

Ին . Յաջողութիւն չարաց ուղղէ և անհասատաս , զի ըստ օրինակի փայլատականց՝ կամ՝ ասուպ աստեղաց՝ փոքր մի փայլին փառօք , բայց անդէն անկանին և անհետանան : Մատուած երբեմն թոյլաց չարաց ունել զյաջողուածս , և գործել զանիրաւութիւն վասն բարւոյ իրիք վախճանի , որպէս զի կրթեոցէ զառաքինիս արիաբար տանել վշտաց , որով աճին վարձք նոցա և փառք :

Իբ . Դժբաղդութիւնք և անյաջողելք՝ բաղում անդամ՝ այնպէս անզգայ առնեն զմարդիկ , մինչ զի ոչ թողուն նմա ճանաչել զօդուտն անձին իւրայ : Բայց որ իմաստուն է և նախատես՝ ոչ իսպառ լքանի , զի գիտէ բարեխառնել զորտմութիւնն , և մնալ զգաստ և անընկճելի : Նշան է անհաստատ մատաց վրդովիլ յիրս՝ որք պատահին ընդդէմ կարծեաց , քանզի հաստատուն միտք ՚ի փոփոխիլ գիտուածոյ՝ մնայ անփոփոխ :

Իգ . Խոկումն դիւրափոխիս վիճակի կենցազայս՝ խոնարհեցուցանէ զյանդգնութիւն հալարտացելոցն բարեբաղդութեամք , և զօրացուցանէ ըզւլքումն սրաի վշտելոցն դժբաղդութեամք : Օք ածեալ ՚ի յուշ՝ թէ յաջողուած և ձախողութիւն իբրեւ զանիւս սրավար կառաց անդուլ հոլովեալ՝ փոփոխակի յաջորդեն ՚ի տեղի միմեանց , փարթամն զիջանի ՚ի չափաւորութիւն ՚ի յաջողութեան իւրում , և նուաստն քաջուերի ՚ի ձախորդութեան

իւրում . և Երկոքին ևս հրամեշատ տուեալ՝ ի ծոյրացեղ խոստրմանց՝ գան ՚ի միջասահմանութիւն , յորում կայանայ առաքինութիւնն :

ԷԵ . Ուր ՚ի մեծութենէ անկանի ՚ի թշուառութիւն , մնայ յանձն առնուլ զմին յերկուց աստի , կամ մեռանիլ ՚ի տրամութենէ , կամ յաղթել տրամութեան : Եւ քանզի մահուամբ իւրօլ ոչ կարէ գտանել զմեծութիւն իւր զոր կորոյս , ապա լսւ է նմա արհամարհել զամենայն վիշտ , և մը նալ կենդանի , յորում յուսալի է հասանիլ անդրէն յաւաշլին իւր բարեբաղդութիւն :

ԻԵ . Ուրախութիւնն յաւէտ ներգործէ ՚ի լեզուի քան ՚ի սրտի , և տրամութիւնն՝ յաւէտ ՚ի սրտի քան ՚ի լեզուի . զի ուրախն առաւել խօսի՝ քան զոր ունի ՚ի սրտի զըերկրանս , և տրամեալն նուազ խօսի՝ քան զոր կրէ ՚ի սրտի զցաւս . նա՝ բաղում անդամ չկարէ խօսիլ բնաւ՝ որ տրամագին է յոյժ :

ՏՐՈՒՄԵԱԼՆ յաւէտ հանդչի ՚ի վշտաց պատմելով զցաւս որտի իւրոյ՝ քան լսելով յայլոց զըանս սփոփանաց :

ԷԶ . Այր իմաստուն համբերէ դժբաղդութեանց , զի վասն այն ուսանին մարդիկ զիմաստութիւն , զի կարող լինիցին համբերել նեղութեանց . ապա որ ոչ գիտէ համբերել չէ իմաստուն : Որպէս ոսկի քննի ՚ի բալս , նոյնպէս և իմաստունն ՚ի ձախող գիտուածս :

Առառած երբեմն թոյլ տայ իմաստնոյն անկանիլ ՚ի վտանդս , այլ ոչ թողաւ կորնչիլ , բայց միայն՝ զի վտրձառութեամբ վտանդին առաւել ևս

իմաստուն լինիցի և զգոյշ:

Որ կենցաղավարի ՚ի մէջ բազմութեան, լինիցի զգուշաւոր և նախատես, որպէս զի ՚ի յեղակարծ դիալուածս ոչ ինքն վրդովեսցի, և ոչ զոք վրդովեսցէ:

ԻԵ. Զախորդութիւնն է մեծ դաստիարակ, զի զոր ոչ գիտեն մարդիկ ՚ի բարեբաղդութեան, զայն ամենայն հարկաւ ուսանին ՚ի նեղութեան իւրեանց. զի որ չէ անկեալ ի ձախողութիւնս, ոչ գիտէ ինչ, զի ոչ ճանաչէ զայլս, և ոչ զիւր ինքն, ոչ զչարս, և ոչ զըարիս:

ԻԸ. Իւղում անգամ օդոի ոք ՚ի սխալանաց իւրոց՝ քան ՚ի բարեբաստիկ գործոց: Օ ի ՚ի մեծամեծ գործոց, և ՚ի յաջող դիալուածոց հպարտանայ ոք, և կորուսանէ զիմաստութիւն, իսկ ՚ի սխալանաց իւրոց լինի խոհական և զգոյշ. ուսանի ճանաչել զչափ անձին, և ոչ լինել յանձնապաստան: Օ ի բարեբաղդ յաջողուածք յափշտակեն զմիտս, իսկ ձախող պատահաբք՝ վերածեն ՚ի զգաստութիւն: Նշան բարի ցուցանէ՝ որ ամբաստան լինի զանձնէ, զի երեի՛թէ զգաստացեալ իցէ ՚ի նախսկին անուղղոց գնացից իւրոց:

ԻԹ. Զախողակի դիալուածք՝ որ յառաջագոյն պատահեալ են այլոց, ոչ սակաւ խրատեն զմարդիկ և զգաստացուցանեն, մանաւանդ զիշխանս և զկառավարս, ածեալ զմուաւ՝ թէ այն դժնդակ վախճան մարթ է պատահիլ և ինքեանց, որպէս պատահեցաւ այլոց:

Լ. Փորձառութիւն իրաց անցելոց՝ հմտութիւն գործոց ներկացից՝ տայ ծանօթութիւն ապագայից:

Ա. Չախողութիւնք հրահանգեն զմարդ լինել բարեգութ և կարեկից վշտացելոց , ուսափ և մեծատունք՝ որք չեն են ճաշակեալ զգաւանութիւնն ձախողութեան , հաւասան զանձինս գոյլ վատուած , և ոչ ինչ համարին զմարդիկ . և կամին ծառացեցանել ախտից իւրեանց զամենես սին : Եւ յորժամ լսեն զաղքատութիւնն , զոտարութիւնն , զվիշտ , ոչ իմանան թէ զի՞նչ իցեն նոքին , և իբրև երազ թուի նոցա : Այլ յորժամ զփորձ առնուն ձախողութեան , փոխարկի խստութիւնն ապառաժ սրաից նոցա ՚ի սիրտ մարմնեցն , և զգան՝ թէ և նոքա մարդիկ են նման ինքեանց , և վարին ընդ նոսա գթութեամք :

Ա. Ոչ գիտէ կարեկից լինել փորձանառոց և նժդեհից , որ չէ կրեալ զձախողութիւնն և զօտարութիւնն . զի որ առեալ է զփորձ դժբաղդութեանն ինչ , գիտէ օգնել վասնգելոց :

Ա. Կարեվիճակ է այն , որ երբեմն սխալեալ իցէ՝ և գարձեալ անդրէն ՚ի զգասառութիւնն , զի խրատեալ նոքօք՝ այնուհետեւ ուզզէ զանձն , և ուսանի թէ զի՞նչ պարտ է առնել , և զիարդ վարիչ : Փորձառութիւնն վասնգի՝ անօդուտ իմն է մեզի և անզգայ անձանց , զի և այնու ոչ ուսանին զգասառանալ :

Ա. Եթէ ոք զիրէ իմեքէ խորհի , արժան է յաւետ նախառաես լինել ձախողակի դիպուածոցն , որ կարէ պատահիլ յընթացո գործոյն : Օ ի Ճշմարիտ խահեմութիւնն կայանաց ՚ի առսանել յառաջադայն զամենայն վասնգս . և Ճշմարիտ արիութիւնն երեի յարհամարհել զնոսա մինչ ընդ աւ

Եթ. Չախողութիւնք հրահանգեն զմարդ լինել բարեգութ և կարեկից վշտացելսց , ուստի և մեծատունք՝ որը չեն են ճաշակեալ զդառնութիւն ձախողութեան , հաւատուն զանձինս գոյլ Աստուած , և ոչ ինչ համարին զմարդիկ , և կամին ծառացեցուցանել ախտից իւրեանց զամեննեսին : Եւ յորժամ լսեն զաղքատութիւն , զօտարութիւն , զվիշտ , ոչ իմանան թէ զինչ իցեն նոքին , և իբրեւ երազ թուի նոցա : Եւ յորժամ զփորձ տանուն ձախողութեան , փոխարկի խատութիւն ապառաժ սրաից նոցա 'ի սիրու մարմնեղէն , և զգան՝ թէ և նոքա մարդիկ են նման ինչքեանց , և վարին ընդ նոսա գթութեամք :

Եթ. Ոչ գիտէ կարեկից լինել փորձանաւորաց և նժգեհից , որ չէ կրեալ զձախողութիւն և զօտարութիւն . զի՞ որ առեալ է զփորձ դժբաղդութեան ինչ , գիտէ օգնել վտանգելոց :

Եջ. Քարեվիճակ է այն , որ երբեմն սիսալեալ իցէ՝ և գարձեալ անդրէն 'ի զգատութիւն , զի խրատեալ նոքօք՝ այնուհետեւ ուզզէ զանձն , և ուսանի թէ զինչ պարտ է առնել , և զիարդ վարիլ : Փորձառութիւնն վտանգի՝ անօգուտ իմն է մեզկ և անզգայ անձանց , զի և այնու ոչ ուսանին զգատուանալ :

Եջ. Եթէ ոք զիրէ իմեքէ խորհի , արժան է յառէտ նախասես լինել ձախողակի դիպուածոցն , որ կարէ պատահիլ յընթացո գործոցն : Օ ի ճշմարիտ խոհեմութիւնն կայսնայ 'ի տեսանել յառաջադայն զտմենացն վտանգս . և ճշմարիտ արիութիւնն երեւ յարհամարհել զնոսա մինչ ընդ աւ

ուաջ ելցեն . զի որ ոչ տեսանէ յառաջագոյն զկարելի վտանգս , ոչ կարէ ունիլ զբաւական վտահութիւն ընդդէմ կալ , և զերծանիլ անվեսա :

ԱՅ . 'Դիւրին է խրատել զանուղղայս , կամ համոզել զբարկացողս , կամ քաջալերել զվհասեալս , բայց դժուարին է յոյժ՝ զօր առեն բանիւ , կատարել գործով . զի մարդիկ քաջ գիտեն ուսուցանել այլոց , բայց ինքեանք տկարսնան առնել : Օք աւանիկ կարէ ոք տեսանել զերեսս այլոց , և նշմարել զբիծսն որ 'ի նոսա , իսկ առ տեսիլ երեսաց իւրոց՝ պէտս ունի միջնորդութեան հայելոյ : 'Երդ՝ հայելի են փորձառութիւնք պէսպէս դիպուածոց , որովք ուսանի ոք խրատիլ , համոզիլ , և քաջալերիլ , և ոչ կարօտի ուսանիլ յայլոց : Իսկ որ չէ փորձառու , պէտս ունի իւմասանոցն խրատաբանութեանց , որոց եթէ անընուր գտանիցի , վարանի 'ի խորհուրդո , և յուսահատեալ վտանգի :

'Եա՝ որ ոչ գիտէ միսիթարել զանձն 'ի ձախորդութեան իւրում , վարանի միշտ հոգովք տառապանաց , և բազում անդամ անկանի 'ի յուսահատութիւն , որ մեծ է քան զամենայն չարիս : Քանզի չառնու 'ի միտ , եթէ կեանք աշխարհիս այսորիկ անդուլ հոլովի 'ի մէջ յաջողութեան և ձախողութեան , և ոչ 'ի մինն կամ 'ի միւսն դադարի . զի աշխարհո ոչ եղեւ երաշխառոր պահել զմարդիկ միշտ 'ի բարեբաղդութեան , և ոչ երբէք խոստացաւ տալ ամենեցուն զյաջողուածս :

Եշ զի չէ հատատառն ո՛ւ և իցէ վիճակ՝ յորում գտանին մարդիկ , վասն որոյ ոչ է պարտ յուսա-

հասովիլ՝ ի ձախողակս, և ոչ յապահովի և յանհոգակալ՝ ի յաջողուածս, զի մարթէ է գլորիլ ձիոյ՝ ի հարթայատակ դաշտի՝ մինչ անվեհեր արշաւէ ։ Եւ սրովինետեւ երկարանչիւր սոքա յաջողութիւն և ձախողութիւն՝ յոզդոզդուն են և փոփոխական, և չունին յարատեւութիւն, ապա մնայ մարդոյ ըզդաստ լինել՝ ի յաջողուածս, և արի՝ ի ձախողակս։

Աթ. Պատրողականն է կենցաղս և խարուսիկ, զի ղըարեբազդութիւնն և զմեծութիւնն վաճառէ անարժանից դիւրագին, և զլանայ յարժանաւուրաց . որով պատրեալ անզդոյշը՝ յօրանան՝ ի մարմական հեշտութիւնն, և ՚ի զբօսանս ուրախութեան։ Իսոց իբրեւ շրջի անիւ բազդին, քաղցր հեշտութիւնն փոխի՝ ի դառնութիւն և ՚ի զզուանըս, և ուրախութիւնն՝ ի տրտմութիւն։ Աւտի պարտ է նախահայեաց զգուշութեամբ զուսպունել զանձն, զի ծանր են տուգանիք՝ որ պատրածաւեալ մնան փոխանակ առօրեայ հեշտութեանց։

Խ. Որ ոչ շատացեալ յաջողութեամբն զոր ունի, ցանկայ առաւելագունի, ՚ի պատահիլ ձախուզութեան իմիք՝ փութով ընկճի և յուսահատի։

ԽԱ. Վագերախա է նա և տմարդի, որ զամս բազում վայելեալ՝ ի պարգևա Վատուծոյ ։ յանկանիլ իւրում՝ ՚ի ձախորդութիւն՝ վաղվաղակի սկսանի տրտնջել զՏեառնէ, և լքանիլ։

Որ անտրտունջ համբերէ ձախողակ կրից, է քաջայոյս և արի . իսկ որ տրտնջէ և գանգատի, երկչու է և վեհերուտ։

ԽԲ. Խմաստունք տռաւել երկնչին՝ ՚ի յաջողութենէ՝ քան՝ ՚ի ձախողութենէ . զի յաջողութիւնն

բազում անգամ առնել զոք յանդուգն՝ գահավէժ
լինել՝ ի վտանգս, իսկ ձախողութիւնն առնել ըզ-
գուշաւոր և զգաստ, զի մի միւսանգամ անկա-
նիցի :

Օխանելիք՝ ի հուր արկեալ, ըտ և բուրեն
զանուշահոտութիւնս իւրեանց . առաքինիք՝ ի
նեղութիւնս անկեալ, առաւել ևս ցուցանեն
զբարեմասնութիւնս իւրեանց :

ԽԴ. Որ ոչ ճանաչէ զօդուտ իւր և զվնաս,
թշնամի է անձին իւրոյ, և արգարե ոմանիք ան-
զգայեալ թանձր տգիտութեամբ, կամ յափշտա-
կեալ բուռն կրիւք՝ ոչ ճանաչեն զօդուտն իւրեանց
և զվնաս . և բանիւ կամ գործով իւրեանց գա-
հավիժեալ զանձինս՝ ի վտանգ՝ դանգատին զայլոց՝
ասելով, այս ոք կամ այն՝ արար մեզ զթշնամու-
թիւնս զայս . և ոչ գիտեն եղելիքն, թէ ոչ ոք
վեասի՝ բայց եթէ յիւրմէ : Ապա մի ոք մեզադիք
լինիցի այլոյ՝ բայց միայն անձին իւրոյ . ուշ գիցէ
ճանաչել զօդտակարն՝ զի արասցէ զայն, և զվնա-
սակարն՝ զի խորշեսցի՝ ի նմանէ, որպէս զի կա-
րասցէ պահպանել զանձն, և կալ յապահովի :

ԽԴ. Չեք բժիշկ ճարտար քան զհամբերու-
թիւնն յապաքինել զցաւս քո, և ոչ ձեռն զօրա-
ւոր՝ ազատել՝ ի նեղութենէ, և ոչ փարթամ ա-
ռատ՝ ի լուր զքեզ բարեօք, և ոչ բարեկամ կա-
րեկից՝ ի փարատել զտրտմաւթիւնս քո . զի համ-
բերութիւնն ամենայն անհնարից է Ճարակ :

Դժբաղդութիւնք՝ որչափ ակամայ տարեալ
լինին, այնքան առաւել ծանրանան :

ԽԵ. Ամենայն վիշտ և նեղութիւն՝ որ ի թքլ

տալցին Աստուծոյ գան ՚ի վերայ մարդոյ , է վրէժ
խընդրութիւն յաւաջագոյն գործեալ մեղաց . զի
որ կամաւ մեղանչէ՝ սպատմի ակամաց , Ապա որ
համբերէ խօնարհութեամբ հոգւոյ , զարդար ցա-
սումն աստուածային դարձուցանէ ՚ի քաղցրու-
թիւն , և գտանէ զազատութիւն : Համբերել
վշտաց՝ է շնորհ Աստուծոյ :

ԽԶ . Անմիտ է՝ որ կարծէ զթշնամին իւր բա-
րեկամ , և ոչ ճանաչէ՝ բայց եթէ յորժամ վեստի
՚ի նմանէ . և յիրաւի եթէ չէր անմիտ , դոնէ ՚ի
նշանաց ինչ կասկածէր զնմանէ վազագոյն , և ըզ-
գուշանայր անձին :

Ասոյգ իմն է , զի բազում են չարք յաշխարհի ,
ուր զանազան կերպիւ նիւթեն զթշնամութիւն ,
և արկանեն զմարդիկ ՚ի վտանգս . և զի յանհնա-
րիցն է բառնալ զամենեսին , կամ յուղզութիւն
ածել , ապա արժան է՝ որչափ ինչ մարթ է՝ զգաստ
և աչալուրջ կալ առ մնալոյ անվեսա :

Բայց յետ կարելի զգուշութեան եթէ վեա-
սեսցի ոք , պարտ է տալ զայն հարկաւոր և ան-
յեղի օրինաց բնութեան և աշխարհի՝ ըստ նա-
խախնամութեանն Աստուծոյ . ուր բազում ինչ
իրողութիւնք բնականք կամ բարոյականք՝ որք մեզ
երեխն ըստ գիտաց՝ վասն ոչ գիտելոյ մեր զպատ-
ճառան , հարկաւ պարտ էին լինել . զի այսպէս
պահանջէր զուգընթացութիւնն պատճառացն՝ յո-
րոց յաւաջ գան այնոքիկ գործք , եթէ օգտակարք
իցեն , և եթէ վետսակարք :

ԽԵ . ՈՒԵ քաջութիւն է տանիլ յանկարծա-
հաս արկածից բազգի , քան ընդդէմ կալ յան-

դուգն յարձակման թշնամեացն գրոհի :

Ոչ յաղթահարի 'ի ձախորդութեանց՝ որ ունի զխոնարհութիւն, զհամբերութիւն և զհնազան դութիւն, զի երեքին սոքա անբաժան ընկեր են միմեանց, և իբրև երեքիցի առասան անխզելի են 'ի բռնութենէ :

ԽԸ. Մարդիկ՝ թէպէտ և յամենայն ժամ՝ 'ի նորանոր դիպուածս ձախողութեանց անկանին, բայց կարծելով թէ համայն ձախորդութիւնք անցեալ գնացին, և առ յապայն միշտ յաջողութիւնք յաջորդեն, քաջոյս եղեալ ուրախանան . այլ յորժամ ձախորդ դիպուածք դարձեալ ժամանեն, վաղվազակի լքանին և տրտմին : Բայց սակայն ոչ երբէք պակասի յսս յաջողութեան 'ի մարդոյ, և ոչ իսպառ վերջանան ձախորդութիւնք . այսու յուսով միշտ խաբին մարդիկ, և գնեն 'ի մտի ոչ ևս խաբիլ : Եւ թուի թէ այս յուսագրութիւն յաստուածուստ հաստեալ է 'ի բնութիւնս մարդոյ, ապա թէ ոչ անդէն առժամայն յուսաբեկ եղեալ, ոչ ևս կարէին զանձինս միշտարել :

Բայց այր կատարեալ և իմաստուն՝ գիտելով թէ ոչ պակասին նորանոր արկածք, հանապազ պատրաստէ զանձն 'ի կրել զնոր փորձութիւն ինչ, և 'ի գալ նորա՝ մնայ անխռովի և անտրասում : Եւ եթէ առ ժամանակ մի տեղի տուեալ ձախողութեան՝ յաջորդէ յաջողութիւն, տակաւին ոչ ուրախանայ, որովհետեւ գիտէ՝ թէ յաջողութիւնն դիւրասահ է և անհաստատ : Ուստի և 'ի նոյն յաջողութեան՝ դարձեալ սպոտէ փորձութեան .

ոչ եթէ զնա խնդրէ , այլ զի ստոյգ վկայէ՝ թէ զհետ յաջողութեան ունի ժամանել նոր ձախորդութիւն ինչ , նմին իրի միշտ կեայ միապէս . ոչ ընդ յաջողուածս ուրախանայ , և ոչ ընդ ձախորդութիւնս տրտմի , ըստ առածին՝ թէ իմաստնոց ոչ գոյ դիպուած , ոչ տրտմութիւն , և ոչ զարմացումն :

Եւ ոչ միայն յընթացս կենաց է անյօղդողդ՝ ի պէսպէս կիրս , այլ և ՚ի մահուն իւրում լինի անվրդով , զսր միշտ անմուաց ունելով ՚ի միտս , բարեպէս ուղղէ զանձն ՚ի մեռանիլ : Վասն որոյ իմաստունք միշտ մեռանին , և ոչ երբէք մեռանին . մեռանին՝ զի հանապաղ զմահն առաջի աշաց ունին , ոչ մեռանին՝ զի բարւոք մեռանելով կենդանի գոլ համարին : Վահն ոչ վնասէ կատարելոց և իմաստնոց՝ այլ օգնէ , զի զերծուցեալ վնոսա ՚ի տառապանաց աշխարհի՝ հասուցանէ ՚ի հանդիսան յաւիտենից :

Խթ . Ո՞ք գայթակղեսցի զնախախնամութենէն և զդատաստանէն Աստուծոյ , թէ զիարդ թոյլ տայ Աստուած չարաբարոյից յաստի կեանս կեալ ՚ի յաջողութեան , և բարեբարոյից ՚ի տառապանս :

Ապաքէն որքան և չար իցէ ոք , հնար է նմաթէ երբեմն արարեալ իցէ զգործ ինչ բարի , այլ ոչ արժանաւոր երկնային վարձուց . նմանապէս որքան և բարի իցէ ոք , մարթ է և նմա առնել երբեմն զչար ինչ , այլ ոչ արժանի դժոխային վրիժուց : Եւ Աստուած՝ այնու զի է արդար՝ ոչ զոք թողուանվարձ , վասն որոյ զփոխարէնն նուազ

բարւոյն՝ զոր արար չար ոք յայս կեանս , հատուցանէ անցաւոր բարեաց յաջողութեամբ , և թռզու պատժիլ՝ ի հանդերձեալն՝ ըստ բազում չարեաց իւրոց : Այսպէս և փոխանակ փոքր չարի՝ զոր մարդկային տկարութեամբ կամ տգիտութեամբ արար բարեգործ ոք , յաստիս անցաւոր տառապանօք պատժէ . բայց՝ ի հանդերձեալն փոխանակ բազում բարեաց զոր արար յընթացս կենց , հատուցանէ զվարձս վասն անստելի խոստմանն՝ զոր խոստացաւ յտուատութենէ բարութեան իւրոց : Օ, ի բարին զոր գործէ ոք արժանի յաւիտենական վարձուց , ոչ է՝ ի զօրութենէ մարդոց , այլ՝ ի զօրութենէ շնորհացն Այտուծոյ . այլ զվարձնն հատուցանէ Այտուած իրեւ զպարարու վասն հաւատարմութեան խոսաման իւրոց . ըստ այնմ՝ “ Ա արձք ձեւ բազում են յերկինս ” :

Դարձեալ Այտուած երբեմն բառնայ զշարս յաշխարհէ , մինչ ոչ ունին դառնալ՝ ի բարին , զի մի առաւել ծանրասցի պատիժ նոցա , կամ վեսսեսցեն բարեաց : Եւ երբեմն թողու մեալ կենդանի , զի դգաստացեալ ուղղեսցին , կամ նուքօք բարիք կրթեսցին : Երբեմն բառնայ զըարիս , զի մի սահեսցին՝ ի մեզս , կամ առաւել վշտասցին . և երբեմն պահէ զնոսա ՚ի նեղութեան , զի առաւել սրբեսցին , կամ այլոց բարի օրինակ լիցին , և վարձք նոցա բազմասցին :

Ապաքէն տշխարհս կառավարի իմաստութեամբ բըն Այտուծոյ , նախախնամի ողըրմութեամբ նուրա և արդարութեամբ , որ ոչ գիտէ վրիպիլ կամ ումեք անկրաւիլ . քանդի և վասնդք՝ որ յերկինէ ,

և որ յերկրիքէ , ՚ի տարերաց , կամ յանիրաւութեանէ մարդկան , ոչ եթէ ըստ պատահման՝ այլ ըստ անկննին դատաստանացն Ասոուծոյ հասանեն ՚ի մարդիկ . ըստ այնմ , « Ոչ յարեւելից , և ոչ յարեւմոից , և ոչ յանապատէ լերանց . այլ Ասուծան դատաւոր է » . Ապօվ . ՀՂ . 6 :

Ուրեմն լռեսցեն լեզուք կարձամուաց խօսել ընդգէմ նախախնտմութեանն և դատաստանին Ասուծոյ . այլ միայն գոհացեն զնմանէ , որ զամենայն ինչ բարւոք արար , և առնէ հանապազ :

« Եւ շամենայն ինչ ըստ ինտրեցին աչ իմ , « և զբեցոյ ՚ի նոյնանէ , և « արգելվ զերբ իմ յամենայն ուրախութեանն . և ահա ամենայն անոպի է , և յօժարութիւն ոգւոյց . Ժող . Բ . 10 :

« Ո՞րդ նանրութեան նմանեաց , և առուրք նորա որով հովանի անցին » . Ապօվ . ՃԽԳ . 4 :

« Ամենայն փառա ճարտոյ իբրև զժաղիկ խոպոյ . յամատեցաւ խոպն . և Խօնափեցաւ ծաղկի նորա » . Ասայ . Խ . 7 :

« Օ ՚ի ամենայն՝ որ ինչ յաշնարկի է՝ յանկութիւն ճարտոյ . յանկութիւն է աղաց » . Յօհան . Բ . 16 :

« Ո՞ի ու ո՞ի ՚ի փորյութեան իցէ , ասիցէ իւկ յԱստուծոյ փորյիմ . զի Աստուծ անփորչ է չըրեաց . փորյին նա և ոչ զաք . իւրաքանչիւրուք փորյի առ յիւրոց յանկութեանց յգեւլ և պատրեւլ » . Յոհկ . Ա . 15 :

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԵՐՉԱՆԿՈՒԹԵՐՆ

Ա. Աչք է որ ոչ խնդրեսցէ զերջանկութիւն.
Բայց ոչ գիտելով զտեղին յորում գտանի , ան-
դուլ տառանի ընդ վայր : Աերթ համարի՝ թէ
գտանիցի ՚ի համադամ խորտիկս . և իբրև յաճա-
խէ առ այն , տաղոկացեալ թողու զնա՝ և ցան-
կաց հարստութեան , յուսալով թէ ՚ի նմա իցէ :
Եւ իբրև զփորձ առնու աշխատութեան՝ զոր
պարտ էր ունել առ ստացումն և առ պահպա-
նութիւն ընչից , գմկամակեալ ընդ այն՝ զհետ
կրթի իշխանութեան : Եւ մինչ փոխանակ հանգս-
տեան գտանէ ՚ի նմա վտանգս յայտնի թշնամեաց ,
և որոգայթս սուտ բարեկամաց , թողու զայն իբ-
րև բեռն անտանելիք , և ՚ի խնդիր լինի այլոյ :
Եւ զոր օրինակ անկեալն ՚ի ծով այսր անդք
յածեցուցանէ զձեռն գտանել ինչ՝ որով մարթաս-
ցի ապրել , ըստ սմին սարասի և սա յամենայն ի-
բը դիմէ , թերեւս հանգուցանիցէ զբաղձանս
իւր : Այլ ՚ի զուր ջանայ և տաղոտապի : զի ցոր-
շափ տգէտ է ոք և մոլիք , չկարէ լինել որտադիւր .
վասն զի երջանկութիւն՝ որ է հանդիստ մտաց և
բաղձանաց , ոչ յայլիրս գտանի , բայց եթէ յի-
մաստութեան և յառաքինութեան : Ապա պարտ
է իւրաքանչիւր մարդոյ ՚ի խնդիր լինել և ըստա-
նալ զիմաստութիւն և զառաքինութիւն , որովք
կարացէ գտանել զերջանկութիւնն բնական յաշ-
խարհիս յայսմիկ , և զգ երբնականն ՚ի կեանսն յա-
փառենից :

Բ. Որովհետու բնական է մարդոյ ՚ի խնդիր լինել երջանկութեան , սմին իրի և մանկունք՝ մինչ սկսանին նորոգ քայլել , ընդարոյս իմն տիսորժակօք ցանկան շրջիլ անդադար , զի զերջանկութիւնն մարթացին ուրեք գտանել : Ոստոստեն ընդ օդոյ ՚ի վեր ՚ի խաղալ իւրեանց , կարծելով թէ անդ իցէ բնակեալ : Զեռն կարկասեն առանուլ զօր ինչ տեսանեն , զի համարին թէ այն խոկ իցէ խնդրելին իւրեանց : Հետամուտ լինին խմանալ զօր միանդամ յունկանէ խօսին մարդիկ ընդմիմեանս , զի այնպէս թուի նոցա՝ թէ զայնմանէ զրուցաբանեն՝ որում ինքեանք փափագին :

Եայց իբրև ՚ի ծերութիւն հասանեն , յայնժամ քաջ ձանաչեն՝ թէ երջանկութիւնն ոչ գտանի ՚ի վերոյ երկրի , և ոչ ՚ի բարձունս օդոյ , և ոչ յայլ իրս յորս խնդրէին : Եւ փոխեալ զկարծիս իւրեանց , համարին գտանել ՚ի ատորինս երկրի , վասն որոյ զգլուխո և զմէջո իւրեանց ընդ երկիր մաճուցանեն : Ոչ ախորժեն՝ ՚ի վեր յառնել , և ոչ գնալ և շրջիլ ուրեք . տաղտկացեալ խորշին յամենայնէ՝ զօրս սիրէին , և ձանձրանան լսել յումեք՝ որում նախ փափագէին . և իբրև յուսաբեկ վարանական դեգերեալ՝ տագնապին ՚ի խարհուրդս , և ոչ գիտեն թէ զինչ արացեն : Հուսկ յետոյ տպաստան եղեալ մահուան՝ արթուն աչօք սպասեն նմա , հաստատութեամբ եղեալ ՚ի մաի՝ թէ նա միայն կարէ հասուցանել երջանկութեան , զօր ՚ի մանկական տիոց անտի կաթոգին բաղձանօք խնդրէին :

Որ կամի լինել բարեբաստիկ , ապաստան եւ զիցի յԱսուած , սակայն մի հեղդացի առնել

զոր կարէ՝ 'ի պահպանութիւն անձին իւրոյ . զի այնպէս կամի Աստուած , թէ մարդիկ զոր ինչ կարեն՝ արացեն , և զոր ոչն կարեն՝ ինքեան յանձնեոցեն : Իայց է մարդ՝ որ կամի զԱստուած ունել իբրև սպասաւոր . և զոր մարդկութեան է անկ առնել , և զայն թողու Աստուածոյ կատարել . և մինչ ոչ կատարի , գժկոհ լինի զԱստուածոյ , և ոչ որոշէ զատուածալայելուչ գործսն ՚ի մարդավայելուչ գործոց :

Արդ՝ գու արա զայն զոր կամիս՝ և կարես առնել , և յանձն արա Աստուածոյ զոր կամիս՝ և ոչ կարես առնել : Եւ եթէ օգուտ իցէ քեզ զոր կամիս , կատարէ Աստուած . և զոր ոչ կատարէ Աստուած , ծանիր՝ թէ այն չէ ինչ օգուտ քեզ , զի Աստուած առաւելգիտէ զօգուտսն քո՝ քանի զոր գու ճանաչես և կամիս :

Դ . Ինութիւնն մարդոյ՝ միշտ բաղձայ հեշտալեաց , զի 'ի նոսա հանդիցէ յաւիտեան , և փախչի ՚ի մահուանէ , որ է բաղձանք անմահութեան : Իսկ բնութիւնն ոչ վրիպի յայսմ , զի գործ բնութեան՝ է գործ Աստուածոյ . և զոր ինչ միանգամ ունի բնութիւնն , Աստուածոյ ունի . ընդէր ապա օրէնք արգելուն զմարդիկ ՚ի հեշտալեաց , և զմահն տաեն բարի : Ապաքէն բնութիւնն ոչ բաղձայ հեշտութեան և կենաց որ աստ է , այլ՝ այնմ որ 'ի հանդերձեալն է . ապա թէ ոչ ընդ ինքեան հակառակէր բնութիւնն : Քանզի փորձիւ գիտեմք՝ թէ ոք զհեշտալեօք փարի , տակաւին բնութիւնն ՚ի նմա ոչ հանդչի , այլ անդէն տաղտկայեալ զզուի , և ցանկայ այլոյ բաղձալոյ . նոյնպէս եթէ ոք 'ի

առաւապանաց ծերութեան կամ փորձութեան նեղի, զմահ խնդրէ :

Խոկ եթէ բնութիւն մարդոյ այսմ հեշտութեան և այսմ կենաց ըղձանայր, ուրեմն ՚ի նոցանէ ոչ ձանձրանայր, այլ խական իբր ՚ի կեդրոն իւր ՚ի նսսին դադարեալ հանգչէր ՚ի յաւխտեան։ Ապա յայտ է թէ զայլ ինչ խնդրէ նա՝ զոր մարդիկ ոչ զդան, նմին իրի նեղին տագնապին, և զբնաւթիւնն մեղադրեն։ Ապաքէն բնութիւնն անսխալէ ՚ի բաղձանս իւր, և օրէնք իրաւամբ արդելուն զմարդիկ ՚ի սնոտի հեշտալեաց աշխարհիս, զի ուղղեսցէն զկամս իւրեանց ՚ի յաւխտենական հեշտալիս և յանվախճան կեանս՝ առ ՚ի լինել երջանիկ, և մի հակառակեսցին ընդդէմ Աստուծոյ՝ որ ուղիղ սահման հաստեաց զբնութիւնն ։

Դ. Երջանկութիւնն կայանաց ՚ի սիրելն զԱստուծ ՚ի վեր քան զամենայն . զի որպէս սիրէ Աստուծ զմարդն ՚ի վեր քան զամենայն արարածս իւր, կամի զի և ինքն սիրեսցի ՚ի մարդկանէ ՚ի վեր քան զամենայն։ Որ ոչ սիրէ զԱստուծ որպէս պարտն է սիրել, վարանի անհանդիսու . զի չէ հնար յայլ իրս հանգչիլ բաղձանաց մարդոյ՝ բայց միայն ՚ի յԱստուծ ։ Վասն որոյ և մարդիկ մինչ սիրեն զիմն արտաքոյ Աստուծոյ, ոչ կարեն անտաղտուկ յարամնալ ՚ի նմա . վասն զի Աստուծ միայն է առարկայ սիրոյ, յորում կարեն հանգչիլ բաղձանկը մարդոյ :

Ե. Պարտն է ամենայնի զգուշութեամբ պահել ՚ի սրտի զերկիւղն Աստուծոյ առաւել քան զամենայն բարիս . զի նովաւ կարէ ոք ստանալ զՃշմա-

րիս առաքինութիւնս, որք առաջնորդեն առ երշանկութիւն : Որ ոչ երկնչի ՚ի գատառահայցն Աստուծոյ, կամ ունի վաէրն Աստուծոյ կատարեալ, կամ հոգւովին է գլխավին մեռեալ :

Զ. Ապերջանիկ է նա և թշուառ, որ չունի զուղիղ հաւատոս և զառաքինի վարս, զի է կոյր հոգւով, և ոչ կարէ աեսանել զարոյծառութիւն աստուծային լուսոյն : Օք թէ և իմաստուն ոք իցէ, և խաստանայցէ գիտել զամենայն, հպարտացեալ է այնպիսին և ոչ ինչ գիտէ . զի չունի զՃշմարիս գիտութիւնն, որ է ճանաչել զԱստուծու ուղիղ հաւատով, և ծառայել նմա բարի գործով :

Լաւ է սիրել զԱստուծու առանց գիտելց ըդգիտանական սահման սիրոյ, քան գիտել զահման սիրոյ առանց սիրելց զԱստուծու :

Ճշմարիս հաւատացեալն ՚ի գործ գնէ զայն՝ զօր հաւատայ . ապա որ հաւատայ՝ եթէ պատրաստեալ կոյ երջանիկ վիճակ այնմ՝ որ բարւոք կեայ, և ինքն վարի չարաչար՝ որպէս թէ ոչ հաւատացյը, պակասեալ է ՚ի հաւատաց . զի ոչ կամի գործել զչար, որ հաւատայ թէ գոյ հասուցումն իւրաքանչիւր ումեք ըստ գործս իւր :

Ոչ կարէ առնել դհաճոյն Աստուծոյ ՚ի ժառանգութիւն կենացն յաւիտենից, եթէ ոչ խընդրեացէ յԱստուծոյ, և տացի նմա առնել ըստ սցնմ, « Խնդրեցէք՝ և տացի ձեզ » . Ո՞սպէ . է . 7 :

Է. Ո՞արդս արարաւ յԱստուծոյ ազատ և անձն իշխան, բայց ոչ գիտելով զերջանկութիւն իւրծառացէ մոլութեանց որպէս գերի շղթայակապ : Ապաքէն աղօտ է նա, որ զերծ է ՚ի բոնութեւ

նէ , և իւրավի շարժի ՚ի բարիս . զի թէպէտ և կորուսանիցէ զինչս , զյաջողուածս , և զանդամն ինչ մարմնոյ , և գրաւեսցի ընդ մահուամբ , ունի տակաւին զկամնն ազատ և բարեյօժար : Իսկ որ շարաչար վարէ զանձնիշանութիւն իւր , թէ և ազատ և հրամանահան ոք իցէ , առնէ զինքն ծառայ մոլութեանց , քան զոր չիք առաւել անարդ և յետին ծառայութիւն :

Ապա մարդիկ մի արտացեն զանձինս ծառայ , որ ծնեալ են ազատ : Ճշմարիտ ազատ նա է , որ զկամն իւր հաստատեալ ունի ՚ի բարիս , և գործէ յօժարութեամբ : Ոչ բաւական համարի լինել բարի , այսինքն է՝ շատանալ սակաւ բարեօք , այլ և փութայ լինել բարեգոյն , այսինքն օր քան զօր առաւելու ՚ի գործս բարեայ :

Որ ծառայէ Աստուծոյ և հպատակի օրինոց նորա , է ճշմարիտ ազատ , յորում վիճակի և իցէ :

Ը. Երջանիկ է նա՝ որ ճանաչէ զինքն միշտ ներկայ առաջի Աստուծոյ , և զԱստուած ներկայ առաջի իւր , որպէս և է իսկ : Ճաստատեալ ՚ի միարած թէ Աստուած ոչ զայլոյ ումեքէ հոգայ՝ բայց եթէ զիւրմէ , և ինքն ոչ զայլ ինչ խորհի , բայց եթէ զհաճոյն Աստուծոյ առնել . զի Աստուած արար զամենայն վասն մարդոյ , և զմարդ վասն իւր միայն , ապա հարկ է մարդոյ միայն ծառայել Աստուծոյ . և ոյս յայնժամ լինի , յորժամ մարդ զոր ինչ խորհի և ասէ և առնէ , այն ամենայն ՚ի փառս Աստուծոյ վերածէ :

Եւ մինչ ճանաչէ զանձն ներկայ առաջի Աստուծոյ , և զԱստուած ներկայ յամենայն ուրեք , աեւ

սող գործոց և քննիչ խորհրդոց, ոչ բնաւ վրդավի
՚ի սրատահիլ վնասակար գիտուածոց . զի ստու-
գիւ ճանաչէ՝ թէ Վստուած սիրէ զինքն, և միշտ
կամի զօդուան իւր, և յորժամ թոյլ տայ գող
վնասու, է տակաւին վասն օդտի իւրոյ : Արդ՝ որ
՚ի սոյն միտս հաստատեալ է, արդարեւ ուրախ և
խաղող է նա յամենայն ՚ի կեանս իւր :

Թ. Երջանիկ է նա՝ որ ոչ ինքն է ծառայ այլում,
և ոչ զայլ ունի ծառայ կամաց իւրոց :

Ժ. Պատճառն և գործն՝ այնու զի են առջնչա-
կից, փոփօխակի հային և ցուցանեն զմիմեանս :
Արդ՝ չորք են պատճառք . արարչական, ուստի է
գործն . նիւթական, յորմէ է գործն . տեսական,
որովէ գործն . և վախճանական, վասն ոյր է գործն :

Եւ որովհեաև արարչական պատճառ մարդոյն
է Վստուած, նիւթականն՝ հող կամ տարեքք, տե-
սականն՝ հոգի բանական, վախճանականն՝ փառքն
երանութեան, վասն որոյ մարդն իբրև գործ Վս-
տուծոյ՝ ունի զկարգ և զհայեցուած առ արար-
չական պատճառն իւր առ Վստուած, զի ցանկայ
պաշտել զնա . զի թէ և ոչ կարասցէ ճանաչել
զջշմարիտ Արարիչն, տակաւին զարարած ինչ իբ-
րև զՎստուած պաշտէ՝ զո և կարծէ, զի բնու-
թիւնն իւրովի ձկափ առ այն :

Ունի զկարգ և առ նիւթն յորմէ գոյացաւ,
նմին իրի ըստ մարմնոյն՝ վասն զի է ՚ի հողոյ կամ
՚ի տարերաց, միշտ ՚ի նոյն հակի, մինչեւ լուծա-
նիլ ՚ի նա :

Ունի զկարգ և առ տեսական պատճառն առ
հոգին, զի ոչ կամի թողուլ զնա, զի մի ապա-

կանեցի , վասն որոյ խորշի մարդն ՚ի մեռաւնելոյ . զի մեռանիլն՝ է բաժանումն հոգւոյն ՚ի մարմնոյ : Իսկ հոգին իբրև անմարմին գոյացութիւն՝ ըստ ինքեան միշտ ցանկայ անմարմնոյն վիճակի , և աղասութեան ՚ի բանտէ մարմնոյն . և յաւէտ զիմանալեացն խոկալ սիրէ , և զհոգեսր միիթարութիւն խնդրէ : Եւ զի գոլալ անմահ , միշտ ցանկայ անմահութեան , և տակաւին ՚ի մարմնի բնակեալ , խնդրէ առ յապայն յիշտառակ յաւիտենական թողուլ , որ է նշան անմահութեան նորա :

Ունի զիարգ և առ վախճանական պատճառն . զի երանութիւնն ըստ որում է հանդիսաւ և լուսմն բաղձանաց , առ ինքն քարշէ զամենեսեան՝ ոքք կարգեալ իցեն առ նա : Վասն որոյ ամենայն ոք ցանկայ իւրոյ հանդստեան , որպէս Ճանապարհորդ ՚ի գէմ եղեալ տեղին . զի բնութիւնն մինչև իցեժամանեալ ՚ի վերջին վախճան իւր՝ ոչ հանդչլ : Եւ սակայն վերջին վախճան մարդոյ ըստ սահմանելոյն Վատուծոյ՝ ոչ տուեալ լինի յաստի կեսնս , այլ ՚ի հանդերձեալն . զի չիք արարած ՚ի վերայ երկրի , որ կարող իցէ նոււլ զիափառդ մարդոյ , նըմին իրի մարդիկ ՚ի կետնս յայս միշտ են անհանդիսաւ , թէ և իցեն ամենայն բարեօք աշխարհի յղիացեալ :

Եւ այս յայտնի ցուցանի ՚ի հանդարառութենէ մտաց առաքինեաց , և յալէծուփ խորհրդոց աշխարհասիրաց : Վասն զի աքք առաքինիք ուղղեալ զշտուիզ իւրեանց առ Վատուծած , անցեալ զանցանեն զբարեօք աշխարհի . և զառ արինութիւնն

կալեալ իբրև միջոց ՚ի հասանիլ առ վերջին վախ-
ճաննե, յամենայնի անդորր մտօք նաւեն ժամանել
՚ի նաւահանգիստն վերջին երջանկութեան, ոչ
ինչ փոյթ կալեալ զիրաց անցաւորաց և զփափո-
խութեանց աշխարհի : Խոկ արք աշխարհասէրք
վարանական խորհրդութեապեն անհանգիստ, և
ոչ կարեն գտանել գոնէ վայրկեան մի անդորրաւ-
թիւն մտաց, թէ և իցեն մեծադանձ իշխան՝ կամ
ինքնակալ կայսր :

Վայց ըստ որում բնութիւնն ըուռոն բերմամբ
դիմէ առ վախճանն, ՚ի գտանել գոյզն ինչ դիւ-
րութիւն մարմնոյ՝ յարի ՚ի նա զգայական կոյր
բաղձանօք, իբր ՚ի վախճան իւր . այլ տեսեալ թէ
ոչ կարէ ՚ի նմա հանգչիլ, ՚ի բաց թողու զայն՝
և ցանկոյ այլում, զզուի և յայնմանէ՝ և փափա-
գի այլոց : Եւ այսպէս ամեններին ՚ի միոյ հեշտա-
լեաց ՚ի միւս հեշտալիս ոստուցեալ թափառին
անդադար՝ հասանիլ ՚ի վախճան իւրեանց . բայց
ոչ գիտելով զինչ իցէ այն, կամ ուր գտանիցի,
ընդ վայր տագնապին :

Վապաքէն ծանիցեն զի Վատուած է ստոյգ վախ-
ճան մարդոյ, առ որ հնար է հասանիլ միայն ա-
ռաքինութեան ծանապարհաւ . թողցէն ուրեմն
զաշխարհասիրութիւնն, և զհետ լիցին առաքի-
նութեան, զի գտանել մարթասցին զոր խնդրեն .
տալս թէ ոչ չկը հնար նոցա հասանիլ ՚ի վախ-
ճան իւրեանց, և լինել երջանիկ :

Վայց ոմանք աշխարհասէրք տակաւին դեղե-
րին յիրս աշխարհի՝ գտանել զնա, այլ սակայն ոչ
փափագ մարդոյ գագարի ՚ի խնդրելոց զնորանոր

հեշտապիս , և ոչ հեշտապիք պակասին : Եւ այս
վէճ սրտի մարդոց ընդ հեշտապիս աշխարհի տեսէ
մինչև ՚ի գուռան գերեզմանի , ուր յուսաքեկ եղա-
եալ քաջ ճանաչէ մարդ , թէ ընդունայն վաստա-
կեցաւ յիրս աշխարհի գտանել զիերջին երջանկու-
թիւն իւր . բայց անկարելի է զինի այնորիկ ՚ի ձե-
ւը բերել զնա , զի յայնժամ ոկանի սերմանել +
յորժամ այլք հնձեն :

ԺԱ. Մարդիկ՝ ոչ զամենայն զօր սիրեն՝ արժանի
են սիրոյ զի սիրեն զաշխարհ և զօր յաշխարհի են
վոյելութիւնիք . վասն որոյ յոլովակի փոփոխեն
զէք իւրեանց ՚ի միոյ առ այլ , և ոչ յայս կամ յայն
մնան հաստատան : Վաս եթէ կամին միշտ մնալ
՚ի սէրն , սիրեացեն զջմարիտ բարին , զի նա մի-
այն է արժանի սիրոյ :

ԺԲ. Մարդո՛ եթէ ոչ ունէր զառ ՚ի յԱսու-
ծոյ խոստացեալ ինքեան զերջանիկ կեանս ՚ի հան-
գերձեալն , ոչ ոք գտաներ թշուառ քան զնա ՚ի
վերաց երկրի . զի ծնանի արտասուօք , ուսանի աշ-
խատանօք , ապրի տառապանօք , և մեռանի ցա-
ւալք : Վաս վոյթ յանձին ունել պարտ է ամե-
նայնի՝ գործովք բարութեան հասանիլ ՚ի ժա-
ռանգութիւն երանաւէտ կենացն խոստացելոց :

ԺԳ. Վարիկ և չարք խոստովանին զանձինս ծա-
ռայ Վատուծոյ , բայց տարբերին ՚ի վախճանն , վասն
զի բարիք ծառ այեն իրեւ զորդի , զի աշխատին
միայն վասն փոռաց և վասն սիրոյն Վատուծոյ , և
զհոգ անձանց և զիւրացնոց յանձնեն աստուածային
կամաց . վասն որոյ Վատուած հոգայ զեղցանէ , որ-
քան են յերկրի աստ , և ՚ի յերկրինս շնորհէ նոցա

զյաւիտենից փառու : Օ ի սյապէս վայելէ մեծութեանն Աստուծոյ՝ տալ տրիտուր ըստ յաւիտենի իւրում զանհուն բարիս սյնմ՝ որ ըստ յաւիտենի իւրում սիրեաց զԱստուած, և ծառայեաց նմա հաւատարմութեամբ : Եւ այս փոխարինութիւն ոչ է ըստ արժողութեան գործոյն, և կամ գործողին, այլ ըստ առատութեան բարութեան և ողորմութեան Աստուծոյ ընդունողին . զի ըստ առաքելոյն, “Ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձեալ փառացն ” . Հոօմ . Ը . 18 :

Իսկ չարք ծառայեն իբրև վարձկան, զի աշխատին վասն փառաց և վասն սիրոյ անձանց . և ոչ յանձնեն Աստուծոյ զանձինս և զիւրայինս, զի կամին ըստ հաճոյս իւրեանց առնել զամենայն ինչ . վասն որոյ և Աստուած զչարս իբրև զվարձկան՝ ժամանակաւոր բարեօք միայն վարձատրէ, ըստ որում են արարածք իւր, նմին իրի ընդ ըսպառիլ կենաց նոցա, սպառին և վարձք նոցա . ըստ օրինակի ’ի վարձու կալեալ մշակաց, որք յերեկոյանալ աւուրն առեալ զսակ արկեալ գրամն գնան, զի ոչ իբրև որդի ծառայեցին՝ զի մացեն ’ի ժառանգութիւն որդւոյ : Եւ որովհետեւ ’ի յաւիտենին իւրեանց արհամարհեցին զանհուն բարին, զոր խոստացաւ Աստուած հաւատարիմ ծառայից իւրոց, իրաւամբ զրկին յանհուն բարւոյն ’ի յաւիտենին Աստուծոյ :

“Երանեալ են ամբիջք ՚ի ճանապարհի, և ոյս գնան յօրենս Տեսան ” . Աաղմ . ՃՔԸ . 2 :

“ Եր երանեցի ժողովրեան՝ որոյ այս այսպիս է .
և երանի է ժողովրեան , որոյ ակը Աստուած է նոյս ” .
Սաղմ. Ճիւգ . 17 :

“ Երանեալ է այր որ ըստից ինչ , և ճարտ՝ որ զնակա-
պարհ իմ պահից է . զե՞ր զե՞ր գոտանէ՝ գոտանէ զիւանն ,
և ընդունի շիրո-լիւ-ն ՚ի Տեառնէ ” . **Առակ.** Ը . 34 :

“ Ռնդէ՞ր բնաւ ամբարիշոս կենաւանիչ իցեն , հեացեալ
և ՚ի մեծ-ընեան են ” . **Յոթ.** ԻԱ . 7 :

“ Երանելիչ են՝ որ պահեն զլատոս-իրանս նորս . նոյս
անին իշխանո-լիւ-ն ու-պել ՚ի փայտէն կենաց՝ և ճառանել ընտ
ուրունս չաղաքին ” . **Յայտ.** ԻԲ . 14 :



ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Ա . **Առաքինութիւնն** է գործադրութիւն օգ-
տակարաց , և խորշումն ՚ի վնասակարաց յառա և
՚ի կիրա՝ ըստ առաջնորդելոյ ուղիղ բանին , հաս-
տատեալ ՚ի մէջ երկուց մոլեկան ծայրից : Դար-
ձեալ առաքինութիւնն է բարեկարգ ունակու-
թիւն հոգւոյ , որով վարի մարդ ըստ օրինի ՚ի
խորհուրդս՝ ՚ի բանս՝ և ՚ի գործս , որք կամ յԱս-
տուած , կամ առ ինքն , կամ առ ընկերն վե-
րաբերին :

Վարդենիս օրինապահ, բարեպաշտ, արդար, և
երկրած ասի, որ անթերի կառարէ որ ինչ օ-
րինադրեալէ ՚ի վերաց իւր յԱռաջածոց, կամ ՚ի
լուսոց բանին, և խորշի յայնմ տմենայնէ՝ յորոց
տրգելուն օրէնք. ոյլ տակաւին ոչ է՝ և ոչ ասի
նա կտտարեալ առ աքինի: ՚Բանզի ՚ի լինիլ մարդոց
կառարեալ, խնդրի առ նել ինչ օր իցէ գերազանց
քան զհատարակ կանոնական պատուէրս և հար-
կադրութիւնս. վտան զի ո՛ և իցէ պատուիրան
տատուածային օրինադրեալ մարդկան, համարի
նմու պարագ, զոր եթէ կատարէ՝ ազատի ՚ի պար-
տուց, և եթէ ոչ կատարէ՝ մեայ պարտական, և
զըկի ՚ի վարձուց զոր խոստացաւ Յատուած այնո-
ցիկ՝ որք ամբողջ պահեն զամենայն հրամանս իւր:

Խոկ նա՝ որ յառաւելութենէ սիրոյն առ Յատ-
ուած՝ առնէ զգերազանց գործս բարիս՝ անդր քան
զոր ՚ի հասարակի պահանջէ, յայնժամ կոչի կա-
տարեալ առ աքինի, որոց վարձք այնիքան առ առելու-
քան զայլ, որքան ինքն առ առելու ՚ի գործս բա-
րեաց: ՚Բանզի առ աքինութիւնն յառաւելու-
թենէ ասացեալէ, որպէս թէ զըարին առ առել-
քան զայլ արար, վասն այնորիկ որ ՚ի մեզ առ ա-
քինութիւն անուանի, առ Յարաբացիս՝ ֆառկէլ-
կոչի, որ է առ առելութիւն:

՚Այս զի՝ առ աքինին կազմի ՚ի բառէս այր, յորմէ-
ածանցին և բառքս արու՝ կամ արի, և ստուգա-
քանի ունող այրաւթեան, կամ արիութեան, որ
այն ինքն է՝ արքենի, քաջ, վեհանձն, զօրաւոր
քան զայլ. յայս միտ ասէ Եղիշէ. “ Յառա-
պինիք ՚ի հոգեոր պատերազմի ”. Եղիշ. 212:

Արդ՝ օրինապահ ասին նոքա, որք զամենայն հը-
րամայեալ օրէնսն պահեն. կոչին ևս բարեպաշտ,
կամ բարեգործ, զի բարի են օրէնքն՝ զոր Աստ-
ռած կամ սուրբ Եկեղեցին օրինադրեաց. ասին
և արդար, զի արդարութիւն է՝ հնագանդելոց
զհրամանս Տեառն կատարել. կոչին և երկիւզած,
զի երկնչին յԱստաւծոյ, որ բարկանայ այնոցիկ՝ որք
ոչ առնեն զհրամանս իւր։ Ուրեմն առ ՚ի լինել
ումեք կատարեալ առաքինի, արժան է նմա առա-
ւել քան զայլ ՚ի մարդկունէ վաստակիլ ՚ի գործս
բարիս, և խորշիլ ՚ի չարեաց :

Այլ զի՞նչ ասելի է զնոցանէ, որք ոչ միայն թե-
րանան ՚ի գերազանց առաքինական գործոց, այլ
և բազում իւրիք պակասին յայնս՝ որք միօրինակ
պարտաւորեն զամենեսեան ՚ի պահել. գուցէ և
զընդդէմն առնեն հրամանացն Աստաւծոյ, և օրի-
նադրութեանց սուրբ Եկեղեցւոց։ Աղա նոքա՝
որք ոչ պահեն զօրէնս, մի ակնկալցին զվարձս օ-
րինապահաց և առաքինեաց առնուլ յԱստաւծոյ։
զի յանդգնութիւն է՝ մանաւանդ թէ յիմարու-
թիւն՝ առանց արդեանց յուսուլ և ակն ունել
վարձուց :

Բ. Առաքինութիւնն է կրկին, աստուածաբա-
նական, և բարոյական։ Աստուածաբանականն
բաժանի յերիս, ՚ի հաւատ, ՚ի յայս, և ՚ի սէր։
Աարոյականն բաժանի ՚ի չորս, ՚ի խոհեմութիւն,
յարդարութիւն, յարիութիւն, և ՚ի բարեխառո-
նութիւն։ որք առանց միմեանց ոչ գործին, և
ոչ առնեն զօք կատարեալ առաքինի։ ուր մին ՚ի
նոցանէ անթերի կատարի, այլք զհետ նորա հար-

կաւ հետեւին շղթայաբար :

Քանզի որ ունի զկատարեալ հաւատ , հետեւի նմա ունել զյոյս աներկմիտ , և զսէր անկեղծ . և ՚ի նշան արդեանց կատարելութեան սիրոյ՝ պահանջմն գործք բարոյական առաքինութեանց , որք գործին խոհեմութեամբ , արդարութեամբ , արփութեամբ , և բարեխառնութեամբ , որպէս իբրև աստիճանաւ ժամանեն ՚ի կատարելութիւն առաքինութեան , և արժանաւորին ՚ի վայելել և ՚ի ժառանգել զերկնային փառսն , զոր խոստացաւ Աստուած սիրողաց իւրոց . ուստի առաքինութիւնք են միջոցք և ձանապարհ առ երկնային փառսն , առանց որոց չէ երբէք հնար հասանիլ :

ԱՅԼ ասկայն ճշմարիտ առաքինութիւնք կախումն ունին զննորհացն Աստուծոյ , և նովաւ արդիւնաւորին , և շնորհք Աստուծոյ պարգևին յարգեանց չարչարանացն Քրիստոսի . վասն որոյ ճըշմարիտ առաքինութիւնք՝ միայն ՚ի քրիստոնեայս գտանին , և ճշմարիտ առաքինիք՝ միայն քրիստոնեայք են :

Թէպէտ և արտաքոյ քրիստոնէական հաւատոյ գոցին ոմննք , որք յազդարարութենէ լուսոյ բանին և բնական օրինաց՝ վարեսցին խոհեմութեամբ , արդարութեամբ , արիութեամբ , բարեխառնութեամբ , և ստացեալ ևս իցեն յանձննաիւրեանց զվարս ճգնութեան , զգաստութեան , ժուժկալութեան , խոնարհութեան , համբերութեան , որք և իցեն ողորմած և աղօթասէր , այս ոչ ասին տիրապէս առաքինի :

Օի այսպիսի բարոյական գործք առանց շնոր-

հացն Աստուծոյ՝ համարին իբր բնական գործութիւնք. իսկ բնական ձանապարհաւ ոչ ոք կարէ գնաւառ առ գերբնական երջանկութիւնն, վասն որոյ ապարդիւն լինին ՚ի ստացումն երանական փառաց ամենասուրբ Արքորդութեան :

Վասն զի ՚ի ժառանգել զԱստուծոյ են շնորհք, որբ բղխին յարդեանց չարչարանացն ՚Քրիստոսի . ուրեմն ոչ է ճշմարիտ առաքինի՝ որ ոչ ունիցի զհաւասս սուրբ Արքորդութեան և բանին մարդեղութեան, զի ոչ կարէ ընդունակ և արժանաւոր լինիլ աստուծային շնորհացն, նմին իրի և ոչ ժառանգ երսնական փառացն Աստուծոյ : Ապա պարտ է նախ քան զամենայն ունիլ զուղիղ հաւասս քրիստոնէական, և հետեապէս զառաքինական ունակութիւնն և զգործոքարիս :

Եւ թէպէտ նախ քան զՔրիստոս՝ ՚ի բնական և ՚ի գրական օրէնս բազումք հաճոյացան Աստուծոյ, այլ ոչ առանց շնորհացն ՚Քրիստոսի, զի հաւասային ՚ի գալոց Ուսիայն, ըստ այնմ, “Արրահամ հայր ձեր՝ ցանկացաւ տեսանել զօր իմ. ետես և ուրախ եղեւ ”. Յով. Ը. 56: Եւ թէ՝ “Հազում մարդարէք և արդարք ցանկացան տեսանել զօր տեսանէքդ, և ոչ տեսին . և լսել զօր լսէքդ, և ոչ լրւան ”. Ուապ. ԺԳ. 17:

Գ. Արդ՝ ամենայն ազգ մարդկան ունին ըզհաւասս ինչ ուղիղ կամ մոլար՝ իբրև պարտք իւմացական բնութեան . վասն որոյ և առ Արքաբացիս հաւատն ասի պին՝ կամ տէյն, որ նշանակէ ըզպարտս : Քանիզի իմացական միոք հարկաւ իրնդ-

թէ տեղի ինչ ապաստանի՝ յոր ապաւինեցի, և գոցէ զհանդիսա, մինչ վարանեալ տարակուոի և տանջի վասն այնոցիկ՝ որոց ոչ կարէ բնականապէս հասու լինել, և զորս պարզ և մեկն ըմբռնել:

Վասն զի յատկութիւն է իմացականին իմանալ ինչ որ 'ի վեր իցէ քան զբնականն, և այս է զօր ուսուցանէ հաւատքն, ապա թէ ոչ մարդն լինէր անարդ քան զանբան կենդանիս, որք առաւելքան զմարդ զգան զբնականս և զազդեցութիւնս նոցացա, և գիտեն կառավարիլ 'ի բնութենէ իւրեանց:

Քանզի աշխարհս և որ 'ի նոսա՝ արարան յանե հուն կարողութենէն Արտուծոյ. և մարդն հունաւոր կարողութեամբ իւրավ ճարտարեաց զարհեատական իրս 'ի գիւրութիւն պիտոյից իւրոց, և ըստ ձեռնհաս գոլց՝ զբաղում բնական իրս գաղտնեաց բնութեան եգիտ աշխատանօք. բայց առ այն որ գեր 'ի վերոյ է քան զբնականն, ոչ կարէր թեակոփել բնակոնաւն, այլ կարօտ էր գերբնական զօրութեան:

Վասն զի ամենայն ինչ որ ունի դէութիւն կամ զգուլ յերիս բաժանի. յարհեաստական, 'ի բնական, և 'ի գերբնական: Արհեաստականն է 'ի վայր քան զմիտս մարդոյ, զի 'ի մոտաց հնարեալ տեսակաւորի. բնակոնն հաւասար է մոտաց. իսկ գերբնականն 'ի վեր է քան զմիտս. ուստի կարօտի մարդ գերբնական շնորհաց, զի կարողացի իմանալ զգեր 'ի վերոյսն քան զինքն:

(Արդ) առաջին մարդն Ադամ ընկալեալ ունէր զգերբնական շնորհս, որով ճանաչէր զմի Աստուած Ճշմարիտ, և որոշուր զնա, զոր և յետնորդացն

աւանդեց : Այլ զինի ջրհեղեղին՝ ի բազմանալ մարդկան ՚ի վերաց երկրի՝ սերունդք նորա մռաւցան զծանօթութիւն միայն Աստուծոյ Ճշմարտի , և անձնատուր եղեն յազգի ազգի մոլորութիւնու . անկայն ոչ խսպառ անհետ եղեւ կրօնասիրութիւն ՚ի մարդկանէ , զի զհետ եղեն խրաքանչիւր բազմութիւն ժողովրդոց հնարել զպաշտելի ինչ :

Քանզի այս իղձ բնական է մարդոյ , ունել զիմն պաշտել որ ՚ի վեր համարիցի քան զամենայն , և իցէ արարիչ և խնամող ամենայն արարածոց , որ ՚ի մեր լեզուս կօչի Աստուած : Աւ ըստ նոխնի հարց ստուգաբանի՝ ասպ եած զմեղ , այսինքն հաստեց , կամ ՚ի հատառումն ածող , այսինքն է հաստիչ . ոյլ կարէ ևս ստուգաբանիլ ազդուած , այսինքն ազգեցեալ , կամ հրատարակեալ , և կամ ծանուցեալ : Քանզի չիք ինչ այնքան ազգեալ և ծանուցեալ առ արարածս՝ քան զգովն Աստուծոց . որպէս և չիք ինչ այնքան լուեալ և ծածկեալ՝ քան զինչութիւնն Աստուծոց , որ առաւել ճանաչի բացասական անուամբ՝ քան սոսորասականաւ . զի ՚ի վեր քան զմիտուէ . ուստի պարտիմք միայն զգովն նորա ճանաչել , և նմա պաշտօն մատուցանել , առ որ և բնութիւնն մեր ինքնին ձկտի :

Վասն որոյ զայլ և այլ կրօնս հեթանոսութեան առհմաննեցին մարդիկ թելաղբութեամբ դիւին . որ մոլորեցոց զնոսա ՚ի բազմաստուածութիւն , և ՚ի զանազան ազանդս պաշտաման կռոց և ըստեղծուածոց , որպէս զի նորօք զբաղեալ դադարեացին ՚ի խնդիր լինելոյ Ճշմարտիս ստուածդիտութեան :

Էայց գտան ՚ի նոսա արք իմաստաելք , որք
բնական լուսով ծանեան՝ թէ սնոտի են պաշտա-
մունք կող , և խնդրէին գտանել զհեղինակն բը-
նութեան զմի միայն Ճշմարիտն Աստուած , մինչեւ
վերանալ մոօք ՚ի կամարս աստեղաց : Ուստի ՚ի
շարժմանէ և ՚ի պատճառելութենէ արարածոց
մակաբերեցին , թէ գոյ գերագոյն էակ ինքնագոյ՝
անշարժ և անպատճառ . որպէս որ վսեմախոհն էր
՚ի նոսա՝ ասէր . | ոմն որ շարժէ , և ոչ շարժի , և
ամբաւազօք է . և նմա տալի է պաշտօն :

Եւ թէպէտ ծանեան նոքա զԱստուած , այլ ոչ
որպէս արժանն էր Ճանաչել . և ոչ ևս իբրև զԱս-
տուած կարացին փառաւորել կամ գոհանալ , որ-
պէս նշանակէ առաքեալն : Քանզի ոչ էր հնար
մարդոյ բնական գիտութեամբ վերանալ առ ծա-
նօթութիւն գերբնականին , զի զգալի կարողու-
թիւնն չունի համեմատութիւն առ իմանալի ա-
ռարկայն : Վասն որոյ գթացեալ Աստուծոյ ՚ի գոր-
ծը ձեռաց իւրոց՝ յայտնեաց զինքն առ նահա-
պետոն ազգի ազգի տեսլեամբ , օրինակօք , խոսա-
մամբ , և գրական օրինօք , որովք իբր զմանկունս
նորակիրթս վարժէր զմարդկայինս բնութիւնն
յայբբենարանի ուսման Ճշմարիտ հաւատոյ : Եւ
հուսկ յետոյ որդւովի իւրով Քրիստոսիւ տերամբ
մերով յայտնեաց , և ուսոյց զՃշմարիտ և զկատա-
րեալ հաւատոս աստուածպաշտութեան , որ նոյն
ինքն է քրիստոնէական սուրբ և ուղղափառ
հաւատքն :

Ապաքէն բաց ՚ի քրիստոնէական սուրբ հա-
ւատոյ՝ որքան և զանազան աղանդք կամ կրօնք

իցեն՝ ոչ են ճշմարիտ հաւատոք . զի կամ ոչ են հասեալ առ ՚ի ճշմարիտ լաստուածածանօթութիւնն՝ որպիսի է կրապաշտականն , կամ թերի մնացեալ են ՚ի ճշմարիտ ասպուածածանօթութենէ՝ որպիսի է հրէականն : Եւ կամ խոտորեալ յուղղութենէ ճշմարիտ հաւատոյ տեսական և գործնական մոլորութեամբ , որպիսի են հերետիկոսական ազանդքն , որը են թիւր աւանդութիւն՝ անպիտան առ ժառանգութիւն յաւիտենական փառաց : Ուրեմն քրիստոնէականն է միայն ճշմարիտ հաւատոք , որով միայն ճանաչի ճշմարիտն Կատուած՝ մի էութիւն յերիս անձինո , ՚ի Հայր՝ և յՈրդի՝ և ՚ի սուրբ Հոգի , և հաւատացեալ լինի մարդեղութիւն բանին Կատուածոյ , որպէս և սուրբ եկեղեցին ուսուցանէ ՚ի հանգանակին , և ՚ի գաւանութեանն :

Դ . Որպէս մի է ճշմարիտն Կատուած , մի է ըստ գոյացութեան և ճշմարիտ հաւատոք յամենայն ազգս և ՚ի լեզուս ուղղափառ քրիստոնէից , որ յառաքելոց անտի անընդհատ յաջորդութեամբ մինչեւ ցարդ կայ հաստատուն ՚ի մի՝ սուրբ՝ կաթուղիկէ՝ և առաքելական եկեղեցւոջ , և կացցէ մինչեւ ցյաւիտեան : Կապա ամենայն եկեղեցիք ուղղափառաց որ ընդ տիեզերս ամենայն՝ պարառութեամբ ամենայն ուղղափառ ազանց , են՝ և ասին կաթուղիկէ եկեղեցի . որպիսի է և Հայաստանեայց սուրբ եկեղեցին , հիմնեալ ՚ի վերայ քարոզութեան սուրբ առաքելոց , ՚ի սահմանագրութեան ուղղափառ ժողովոց , և յողջամիտ վարդապետութեան սուրբ հարց : Եւ իւրաքանչիւր

քրիստոնեայ՝ յարմեւ ազգէ և իցէ , որ զնոյն Ճրշ-
մարտութիւն հաւատոյ ունի , է ուղղափառ : Աւ
եթէ ընդ ուղիղ հաւատոյն արացցէ ևս զգործո-
բարիս , և բարի խստավանաւթեամբ ելցէ յաշ-
խարհէ՝ ըստ կանոնաց սուրբ եկեղեցւոյ , է սրդէ-
գիր Կատուծոյ , և ժառանգ երկնից արքայութեան:

Ե . Բաղսւմբ միայն ճանաչեն զանձինս թէ են
քրիստոնեայք , բայց ոչ գիտեն զհարկաւոր գի-
տելիս քրիստոնէական հաւատոյ և ուղղափառ
վարդապետութեան : Ա ասն որոց ՚ի լինել խօսից
զհաւատոյ՝ և զմերաբերելոցն առ հաւատու , զընդ-
դէմն ուղղափառութեան խօսելով մեղանչեն ,
կամ օտարացուցիչս իմն խօսելով լսելեաց՝ առիթո-
տան գոյթակղսւթեան : Ուրեմն արժան է ամեւ-
նեցուն գիտել զայնս՝ որք առ հաւատալիսն վե-
րաբերին , և կարեւոք Են ՚ի փրկութիւն :

Զ . Պարտաւոր են ծնողք , ուսուցիչք , կնքա-
հարք , և խստավանահարք՝ ուսուցանել համբա-
կաց զէական մասունս հաւատոյ , և զուղղափառ
վարդապետութիւնս՝ ըստ աւանդութեան սուրբ
եկեղեցւոյ , ևս և զբարսյական առաքինութիւնս :
Չի ուղղափառ հաւատքն է՝ որ առյ ճանաչել
զԱյտաւած , և է նա հիմն և խարիսխ ամենայն ա-
ռաքինութեանց , առ որ յարի յոյսն , որ է աներկ-
միտ ակնկալութիւն ՚ի ժառանգել զխոստացեալ
բարիսն , զոր ծանոյց հաւատքն . առ նմին յարա-
կցի և սէրն , որ է միաւորիչ ընդ այնմ՝ զոր հաւա-
տոյ , և առ որ յուսայ մարդն : Ուստի հաւատն
տայ ճանաչել զԱյտուած , յոյսն առ այն հասու-
ցանէ , և սէրն միտուորէ :

Եւ սէրն կատարեալ ոչ գիտէ դադարիլ՝ ի ներ-
գործութենէ իւրմէ . զի եթէ առ վայր մի լւես-
ցէ ՚ի սիրելց , անդէն կորուսեալ զզօրութիւն
իւր՝ շիջանի , և որպէս թէ մեռանի . վասն որց
հարկաւոր է նմա ելուզանել միշտ զներգործու-
թիւնս սիրոց , այսինքն սիրել զլատուած ՚ի վեր
քան զամենայն . դոհանալ զնմանէ յամենայնի .
օրհնել զնա . ոչ խնայել յինչո՞ւ և ՚ի սիրելիս , ՚ի
մարմին՝ և ՚ի կեանս վասն սիրոյն Վատուծոյ . խոր-
շել յամենայն մեղաց . միամստութեամբ որտիւ-
ծառայել նմա . կատարել զամենայն կամս նորա .
ճանաչել զերախտիս նորա . յուստ ամենայնի առ
նա , և յանձինս բերել զայլ ամենայն աստուածա-
հածոյ տուաբինութիւնս , որք վերաբերին յամ-
բողջութիւն և ՚ի կատարելութիւն սիրոյ : Օ ի
սէրն է պատկ հաւատոյ և յուսոյ , և ըստ առա-
քելցն՝ է լլումն օրինաց . զի զսիրոյն պատուիրանէ
ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան : Վա-
հաւատքն է իբրև արմատ , յոյն իբրև սատ , և
սէրն իբրև սկսուղ :

Ե . Հաւատքն և յոյն դադարին ըստ ներգոր-
ծութեան՝ ՚ի ժառանգել հաւատալեաց և յու-
սալեաց , և մնան միոյն ըստ ունակութեան : Իսկ
սէրն որ առ Վատուած՝ ոչ երբէք գիտէ դադա-
րիլ , թէ ըստ ներգործութեան , և թէ ըստ ու-
նակութեան . մանաւանդ թէ առաւել աճի և
զօրանայ , յօրժամ զսիրելեաւն փարի , և ընդ նը-
մա միանայ : Իսկ նշան սիրոյն Վատուծոյ՝ է սէրն
ընկերին . զի զլատուած պարտ է սիրել վասն իւր ,
և զընկերն վասն Վատուծոյ : Եւ ողբացէ ըզ-

վիճակ նոցա , որք բանիւ լոկով խոստանան ունել զսէր , բայց իրօք և ոչ մի ինչ արդիւնս սիրոց ցուշ ցանեն առ Աստուած , և առ մարդիկ :

Ը . Առ աքինին յամենայն 'ի կեանս իւր երկնչի և դողայ , զի մի կորուսցէ զարդիւնս առ աքինութեան իւրոց . ըստ այնմ , “ Ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք ” . Փիլու . Բ . 12 . Այլ այս երկիւղ ոչ պատճառէ ՚ի նմա զորտմական և զոտնջող կիրս , այլ յաւէտ յառաջ ածէ զմուադիւր և զուրախական բերկրութիւնս . ըստ այնմ , “ Աւրախ եղիցի սիրոտ իմ յերկնչիլ յանուանէ քումմէ ” . Աառ . ՁԵ . 11 . Եւ որքան վերամբարձ թուչի այնպիսին ՚ի բարձրութիւն առ աքինութեան , այնքան զօրանայ ՚ի նմա երկիւղ անկման . և որքան երկնչի յանկմանէ , այնքան վերասլանայ ՚ի գագաթն գերագոյն առ աքինութեանց : Ուստի ոչ ինչ փոյթէ ՚ի նմա զրկիլ յընչից , անկանիլ յիշխանութենէ , տարագրիլ ՚ի հայրենեաց , կորուսանել զաւողջութիւն և զմարմին . զի քաջ գիտէ նա , թէ սորքա են անցաւոր , և ՚ի բնութենէ իւրեանց կորստական . իսկ վարձք առ աքինութեան՝ որ է փառքն արքայութեան , է անկողոպտելի , և յաւիտենական մեծութիւն հոգւոյ : Վասն որոյ ընդ պէսպէս ձախորդութիւնս աշխարհի՝ որք կարեն պատահիլ ինքեան , ոչ տիրի , և ոչ ընկճեալ լքանի . այլ խնդամիտ բերկրանօք հրձուի , և զօրանայ ՚ի հոգի իւր . զի ունի աներկրայ յայտ առնուլ ՚ի Տեառնէ զվարձս վաստակոց իւրոց ՚ի յաւիտենական կեանս :

Յ . Այլ առ աքինի և կստարեալ չածէ ՚ի միտ

գրարին զոր արար, և ցաւի ընդ այն՝ զորով տարամութեամբ զանց արար։ Յիշատակէ միշտ զերախտիս բարերարին, և մոռանայ իսպառ զանիքաւութիւնն զոր կրեաց յումեքէ։ Հաւական համարի զիւր սակաւ գոյսն. և ոչ ինչ վարկանի զայլոց զբաղումն։ Ծնկերակցի ընդ արանց բարեաց, և հեռի կայ ՚ի հաղորդակցութենէ չարաց։ Եւսաջի մեծամեծաց պատկառ կայ և լոէ, և ընդ հաւասարս և փոքունս սիրով կենցաղավարի։ Ի բարս հեղէ և խոնարհ, և ՚ի բանս քաղցր և սակաւախօս, և առ ամենեսին հաւատարիմ։ Ի յանզողութեան ոչ բարձրամտի, և ՚ի ձախորդութեան ոչ լքանի։ լինի բարեկամ սակաւուց, և թշնամի ոչ ումեք։ Ծմենեցուն բարիս առնէ որքան կարէ, և ոչ ումեք չար ինչ առնէ՝ թէ և կարէ։ Իսկ յաւուրս մեր նա ոչ վնասէ ումեք, որ չէ կարող վնասել. զի ժամանակն գոլով չար, հազիւ գտանի ոք ուրեք, որ կարող իցէ վնասել և ոչ վնասեացէ։

Փ. Ծուաքինին յաւէտ կամի ՚ի կենաց զըկիլ քան զհամբաւ բարեմասնութեան իւրոյ բժաւութել. հաստատեալ ՚ի միաս՝ թէ կեանք աշխարհիս այսորիկ դիւրեղծական է և անցաւոր, իսկ համը բաւ բարի՝ անմահ է և մշտնջենաւոր. և անմտութիւն է փոխանակել զմշտնջենաւորն ընդ անցաւորին։ Իսյց յատուկէ առաքինւոյն առանց ակնկալութեան բարի համբաւոյ գործել զբարին։ և եթէ համբաւ չար հանիցեն ևս, շտրտմիլ ընդ այն, այլ ջանալ զի մի չար ինչ արացցեն ինքեան։ ՃԱ. Որ ոք արախտանայ՝ մինչ բարեհամբաւեն

զնա այլք , և արտօմի՝ մինչ անունը չար հանեն ըգ-
նմանէ , ծառայէ յօժարութեան և լեզուի այլց .
քանովի մարդիկ ոչ հային 'ի ճշմարիսն կամ 'ի
սուտն , այլ որպէս կամին և ախորժեն՝ այնպէս
համբաւեն :

ԺԲ . Ամենայն մեծագործ շինուածքը հնու-
թեամբ ժամանակին կարեն անհետանալ , բայց
անուն բարի ոչ բնաւ կորնչի : Ո՞նտրելի է մեռա-
նիլ բարի անուամբ՝ քան կեալ վաստահամբաւու-
թեամբ . զի որ թողու համբաւ բարի յաշխարհի ,
նաև յետ մահու մնայ կենդանի . իսկ վաստահամ-
բաւն կենդանւոյն մեռեալ , թէ և ապրեսցի զա-
մըս բազումօ :

ԺԳ . Չէ նու կատարեալ և պատուելի , որ ու-
նի զհամբաւ կատարելութեան և զպատիւ , այլ
նա՝ որ ունի զկատարելութիւն յինքեան , և ար-
ժանաւորութիւն պատուոյ : Օ՞ի ե՞ն բազումք՝
որք ունին զհամբաւ կատարելութեան և զպա-
տիւ , այլ չունին զկատարելութիւն յանձին՝ և
արժանաւորութիւն պատուոյ : Եւ ե՞ն բազումք՝
որք չունին զհամբաւ կատարելութեան և զպա-
տիւ , բայց ունին զկատարելութիւն յանձին՝ և
արժանաւորութիւն պատուոյ : Աակայն լու է լի-
նել կատարեալ և պատուելի՝ քան ունել զհամ-
բաւ կատարելութեան և զպատիւ :

Պատիւն նման է ծխոյ , և որ զհետ պնդի՝ ոչ
պակասի նմա արտօսը աշաց :

ԺԴ . Փութալի է գովութեան լինել արժանա-
ւոր , բայց վախչելի է 'ի լսելոյ զգովութիւն : Որ
ախորժէ լսել զգովիշտ իւր , կորուսանէ անդէն

զարժանաւորութիւն իւր : Այր կտառքեալ յօր ժամ առ Երեսո զգավեսո իւր լսէ , 'ի որտի իւրում զանձն անդոսնէ : Ախորժակին լսելոց զգավեսո անձին , է նշան սնափառութեան . Ճշմարիս գովութիւն գէմ յանդիման՝ է նման սուամարդահաճութեան :

ԺԵ . Բատզումբ են օրը գովին , բայց սակաւք են ՚ի նոստ արժանի գովութեան : Համբաւն բազում անդամ չէ համաշափ ընդ իրին՝ որ գովաթեամբ հոչակի . զի հասարակութիւնն սովոր է տուանց քաջ տեղեկութեան՝ ՚ի վերքոն զշշմարտութիւն իրին հոչակ հարկանել : Համբաւն է որպէս ըստուեր մարմնոց եղեալ յարեւ , որ մերթ աճիքան զմարմինն՝ և մերթ նուազի . վասն որոց չէ արժան ամենայնիւ հաւասոս ընծայել համբաւոց , այլ մանաւանդ ինդրելիք է ճշմարտութիւն իրին :

Ժ. Զ . Համբաւ գովութեան իմաստոց կամ առաքինեաց՝ որ հնչէ ՚ի բերանու ռամկաց , նմանի օկտց , որ դիւրաւ փոխիխի յամենայն ոցնու : Օ ՚ի թէ հաւատալ արժան է , եթէ ջուրք պու կարեն մնալ տնշարժ ՚ի հողմոյ , հաւատալ ՚ի դէպ է ե համբաւոց ռամկաց , այլ որպէս ՚ի մեզմ ինչ հողմոյ շարժին ջուրք , նոյնալիք և ՚ի դոյզի մի կարծեաց փոխիխի դատումն և համբաւ նոցա :

Հարեմաց է զմասնաւոր բարիս ուրուք գովութեամբ հոչակել :

Ժ. Այր առաքինի պարտ է լինել ներանձնաւոր , որպէս զի խօսեսցի ընդ մարդոց սակաւ , ընդ անձին յաճախ , և ընդ Այսուծոյ միշտ : Առանձնութիւնն բռնադատէ զհոդին ելանել յերկինս ,

և խօսել ընդ Վատուծոյ . զի Վատուած ոչ խօսի 'ի սրափ ուրուք՝ բայց եթէ 'ի միայնութեան նորա :

Վռարկայ խօսակցութեան մարդոյ ըստ որում է մարդ՝ վերածի յերիս . կամ 'ի գովութիւն Վատուծոյ , կամ առ 'ի ուսանիլ զշշմարիտ ինչ , կամ առ 'ի ուսուցանել զկարեւորա . իսկ զոր խօսիցի ոք օտար 'ի սոցանէ , խոտորի 'ի սահմանէ մարդկութեան . զի անդէն անկանի կամ 'ի տրանջանս զվատուծոյ , կամ յուսումն մօլորութեան , կամ յուսուցանել զանարժանս :

Ճ. Վռարինսութիւնն առաւել աճի 'ի կրել զնեղութիւնս վասն Վատուծոյ . և որ սիրով գիրկա արկանէ խաչին՝ ոչ զգայ զգժուարութիւն ինչ . Օի յորժամ հաստատութեամբ դնէ ոք 'ի մտի կրել զմիշտա՝ առ 'ի պահել զհաւատն և զսէրն Վատուծոյ , վիշոքն անդէն վախճան առնուն : Եւ որ 'ի միտ ածէ զշարչարանս Քրիստոսի Վատուծոյ մերոյ , համբերէ ամենայն նեղութեան աշխարհի , մանաւանդ զի արժանի համարի զանձն դառնադին ևս վշտաց և նեղութեան :

Ճանկ փշալից արդելու զյափշտակողս մասնել յայգին , և ապականել զարդիւնս նորա . նեղութիւնք և վիշտք չժողուն թշնամւոյն հոգւոց մը տանել 'ի սիրտ առարինւոյն , և կողոպտել զքարեմութիւն նորա :

Որ կարէ բառնալ զիսաշն 'ի վերայ ուսոց , չէ արժան նմա գետնաքարշ ածել :

Ճ. Ճէ արժանի վարձուց որ առնէ զքարին , այլ որ համբերութեամբ յարատեւէ 'ի նմին . զի իսպառ համբերութիւնն է՝ որ պսակէ զգործն

բարի : Որ յետու կասի՝ ի բարւոյն՝ զոր սկսեալ է առնել, խանդարէ զարարեալն . և չէ յայտ՝ թէ կարասցէ առնել լուագոյն ևս քան զայն :

Է. Առաքինւոյն վարձք և պարծանք բազմանան, մինչ կարասցէ բեղմնաւորել զարդիւնս բարեաց՝ ի դառն վիշտ . զի յայնժամ նմանի երկրի, որ բուսուցանիցէ զշուշանս՝ ի մէջ փշոց : Քանզի և մարդիկ զարմանան և գովեն, յորժամ տեսանեն զերկիր փշահեղձ՝ լի շահեկան պտղովք :

ԻԱ. Մի՛ արտամեսցին առաքինիք՝ մինչդեռ տեսանեն զայլս՝ ի յաջողութեան ճոխացեալ, և զինքեանս յանցաջողութեան ներդեեալ. այլ յայնժամ պարտ է նոցա տրտմիլ, մինչ տեսանեն՝ թէ յօրացեալքն՝ ի մեծութեան, ոչ ունին փոյթ զառաքինութեանց :

ԷՅ. Գործք դժուարինք՝ և իբր անհնարինք՝ դիւրտուոր են այնմ, որ անձանձիր շանոյ գտանել զելս . գործք դիւրինք՝ դժուարին լինին այնմ, որ դանդաղի մեղկութեամք և լքանի : Որ կամի լինել առաքինի, աշխատ լիցի կրթել զանձն իւր՝ ի դորձս առաքինութեան . որ թէպէտ՝ ի սկզբանն երեի կրել դժուարութիւն ինչ, բայց ապա զգայ զանակնունելի իմն դիւրութիւն և զհանգիստ, որպէս վաստակեալն՝ ի ճանապարհի՝ մինչ հասանէ յիջեվանն, և նաւագնացն՝ ի դէմեղեալ նաւահանգիստն :

ԷԳ. Քաջութիւն զինուորի մղել՝ ի պատերազմ, այլ յաղթել թշնամոյն : Որ պանծայ ի քաջութիւն իւր՝ ի ժամանակի խաղաղութեան, վաղաճապարէ՝ ի վախուստ՝ ի ժամանակի մտմու պատերազմի :

Պատերազմէ և կեանք մարդոյ ՚ի վերոյ երկրի ,
և յաղթողք ժառանգեն զմբցանակին : Վրդ՝ է մարդ
որ մարանչի ընդ անձին , է՝ որ ընդ աշխարհ , և է՝
որ ընդ մարդ . բայց սմն յաղթէ , և սմն յաղթի :
Յաղթէ նա անձին , յորժամ զանկարդ բաղձանս
իւր նուածէ . յաղթէ նա աշխարհի , յորժամ ըզ-
փառս և վեճութիւն արհամարհէ . յաղթէ նա
մարդոյ , յորժամ բարիս առնէ ամենեցուն , և համ-
բերէ վեասուց՝ զոր ընդունի յանիրաւ մարդկանէ :

Իսկ յաղթի յանձնէ , յորժամ զհաճոյս մարմնոյն
կատարէ . յաղթի յաշխարհէ , յորժամ փառաց և
մեծութեան ծառայէ ; յաղթի ՚ի մարդոյ , յորժամ
չար փոխանակ չարի հատուցանէ : Վպա ջանաս-
ցուք յաղթող գտանիլ յամենայնի , զի առցուք
զպսակն փառաց :

ԷՒ . Վնարի վաստավիրտ է՝ որ առ ահի կորլա-
տեան ընչից կամ մեծութեան՝ յանձն առնու ա-
նիրաւիլ առ Վպատաւծ կամ առ ընկերն . զի լաւ
է մեռանիլ քաջութեամբ , քան կեալ յանցաւո-
րութեամբ :

ԷՎ . Օ՛ԵՐԲ՝ եթէ ոչ ջանասցին զբարիս գործել
առաւելքան վերիտասարդոս , ոչ կարեն արդարա-
նալ , վասն զի ՚ի ծերս թուլացեալ են բռնու-
թիւնք ախտաւոր կրից . և զի մերձ են ելանել
յաստի կենցաղոյս , պարտին զպաշար յաւիտենա-
կան ուղղոյն սբառքաստ ունիլ միշտ :

ԷԶ . Որ յերիտասարդութեան իւրում՝ սբառ-
ձառէ զեռանդն հասակին և կրից , և ոչ առարի-
նաբար կեայ , եդեալ ՚ի մտի՝ ՚ի յամանակի ծե-
րութեան գործել դառաքինութիւն , այնպիսին

յորժամ՝ հասանի ՚ի ծերութիւն, և մօտի ՚ի գը-
րունս մահու, ունի պատճառել զակարութիւն
մարմայն։ Այլ քանզի չէ հնար ՚ի գերեզմանի
գործել զառաքինութիւն, ապա իրաւամբ ժա-
ռանդէ զպատիժ հեղգութեան իւրայ։

Էջ. կեանք մարմայն է հոգին, և կեանք հո-
գւոյն է հաւատքն կենդանի. կեանք հաւատոյն
է սէրն, և կեանք սիրոյն է յոյսն. կեանք յուսոյն
է խստառմն Աստուծոյ, և կեանք խստամանն է
Ճշմարտութիւնն Աստուծոյ, որ ՚ի խստմանն է
հաստատ. ապա սինդ կալցուք ղջաւատոյն Ճշմար-
տութիւնն, որով ճանաչեմք զՃշմարիտն Աստուծած,
սիրեմք զնա, և յուսամք աներեւութից պարգե-
ւաց նորա, զոր խստացաւ շնորհել այնոցիկ, որք
հաւատալ յուսով և սիրով ծառայեն նմա։

Էջ. Փառք կենցաղոյս և հեշտութիւն մար-
մական՝ նախ քան զատացանիլն քաղցր թուին,
այլ զինի ստացմանն դառնացուցանեն զախորժա-
կըն մարդոյ. իսկ գիտութիւն և առաքինութիւնն
որք են մասց և հոգւոյ հեշտութիւն, զներհա-
կըն գործեն, զի յառաջ քան զատացանիլն դառն
և դժուարին թուին, այլ զինի ստացմանն քաղց-
րացուցանեն ղջոգին, զորմէ ասէ մարդարէն։
“Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է ո. Աղջու։

ԼԳ. 9 :

Էջ. Առաքինութին որպէս է գեղեցիկ, նոյնպէս
է և փափուկ, մինչ զի դոյզն մի պակասութեամք
մեծապէս արաւաւորի. զի է իբրև պարզ հայելի,
որ ՚ի շոգեաց ազօտանայ, կամ իբրև դիւրաբեկ
ապակի, որ ՚ի թեթև ինչ բաղկամանէ խորտա-

կի . Վասն որոյ զգուշացին առաքինիք յինչ և իցէ պակասութենէ , զի մի տգեղացին գեղափառը երեսք առաքինութեան իւրեանց :

Ա . Աչ ամենայն որ յերկրի կենցաղավարի՝ և զվայելութիւնս աշխարհի ունի՝ համարի աշխարհասէր , այլ այն՝ որ մտօք և կամօք ՚ի սէր և ՚ի վայելութիւն աշխարհիս բևեռեալ կայ . քանզի հնար է մարմնով յերկրի բնակիլ , և հոգւով յերկինս ձեմել , ըստ առածին՝ կոյ յաշխարհի , չկայ յանապատի :

ԱՅ . Օր ինչ առնես ընկերի քում , զայն առնես արարչին քում . զի Վասուած ինքեան համարի՝ զոր առնես այլում . զի և նա իւր է արարած , և ըստ այնմ հատուցանէ քեզ՝ եթէ բարի և եթէ չար : Վպա ջանա բարի առնել ընկերի քում , զի և քեզ բարի լինիցի . զի զոր ինչ սերմանես , զնոյն ժողովես :

ԱՅ . Վարդիկ՝ բազում անդամ՝ ընդ անձանց հակառակին . զի զոր ունիլ կարծեն , զնոյն կորոսանեն : և յորմէ փախչել կամին , ՚ի նմանէ ըմբռնին . Որպէս որկրամոյն կամելով հեշտոնեալ , և ընդ երկար ապրել , խճողէ զօրովայն իւր պէս պէս կերակրովք և ըմպելեօք , սակայն նորիմբք առաւել տանջի , և կարծէ զկեանս իւր : Հպարտըն ցանկանալով յամենայնէ փառաւորիլ , մեծամեծս բարբառի զանձնէ իւրմէ , բայց այնու առաւել ևս անգոսնի , զի ամենեքին արհամարհեն զհպարտն : Վողն՝ անաշխատ կենաց փափառանօք ձեղնաբրկէ գողանալ զինչս այլոց , բայց ըմբռնեալ ՚ի վախճանի՝ չարաչար մեռանի : Վպա մի-

այն առաքինւոյն է կեալ բարեբաստիկ :

ՎԵ . Զիք պատուական քան զկեանս , բայց չիք անարգ քան զնա յաջա մոլեաց , որք յումարէտս վասնեն զնա վասն անարժան իրաց : Քանզի որ նախառն ՚ի վտանգի դնէ զկեանս վասն փառաց , ագահն՝ վասն ընչից , բղջախոհն՝ վասն հեշտութեան , սխակալն՝ վասն հանելոյ զվրէժ . որքա իրաւամբք զրկին ՚ի կենաց , զի ոչ ճանաչեն զյարգ նորս :

ՎԵ . Ոչ ոք է՝ որ ոչ սիրեսցէ զիմն , և ոչ յուսացի իմիք , զի ՚ի նմա հանդիցեն բաղձանք իւր . քանզի վախճան սիրոյ և յուսոյ՝ է լրումն բաղձանաց . ապա բարիք և չարք ունին զսիրելիս և ըգ յուսալիս , յօրոց ակնկալեալ սպասեն առնուլ ըգ լրումն բաղձալեաց և յուսալեաց՝ իբրև վարձ և սրիտուր սիրոյ իւրեանց և յուսոյ :

ՎՐԴ՝ բարիք սիրեն զլյոտուած և յուսան առնա , վասն որոյ վարձք նոցա յաստուածուստ պարգևի նոցա , որ է հանդիսան յաւխտենից : Իսկ չարք սիրեն զաշխարհս , և յուսան իրաց աշխարհի , վասն որոյ յերանել նոցա յաշխարհէ՝ մնան անվարձ յլյոտուծոյ . զի զոր սիրէին՝ որում յուսացին , մնաց անդէն յաշխարհի : Քանզի աշխարհըս ոչ կարէ ՚ի հանդերձեալ կեանս վարձատրել զսիրողս իւր . ստկայն սիրելին բարեաց Վրտուած՝ որ երկնի և երկրի է տէր , հանդուցանէ զբաղձանս բարեաց , նոյն ինքն լինելով նոցա վարձք սիրոյ նոցա և յուսոյ ՚ի հանդերձեալն :

ԱՅ . Հաստատուն և խորարմատ ծառք՝ թէ ապէտ և սստովք յամենայն հողմոց շարժին , այլ

կան մեսն յարմատու անկործան . ըստ ոյսմ՝ այդ
առաքինի յարմարէ զինքն ըստ փոփոխման դար-
ձուածոց ժամանակի , մնալով անշարժ 'ի բարե-
մոռւթեան իւրում : Քանզի ՚ի փոփոխիլ ժամուց
և ժամանակոց՝ եթէ փոխեցի մարդ ՚ի բարեմր-
տութենէն , ոչ այլ ինչ շահի՝ բայց եթէ զվասա :
Այս է իմաստութիւն մարդոյ , ՚ի յարաշորժ
գիտուածու ժամանակի՝ ՚ի բարի միտու մնալ հաս-
տատուն :

“ Աշակէմ զնել եղբարք Գլուխեամբան Ասպո-ծոյ՝ պատ-
րաստել ամարմին յեր Պատորտ կենտանի , սուրբ , հաճոյ Աս-
պո-ծոյ , զնօսուն պաշտօն յեր ։ Հոօմ . Ժ.Բ . 1 :

“ Հաստապարիմ է բանս , և ՚ի այն կամիմ զնել հաստա-
տուն լինիլ , չե ի՞նը արասցեն բարեաց Գործոց վերակացո-
վել հաստացեալ յԱստուած , չե այն է բարի և օգ-
տակար մարդկան . Տիտ . Գ . 4 :



ԴԼՈՒԽ ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԽՈՀԵՄՈՒԹՅՈՒՆ

Ե . **Պ**ահապան պատուոյ և համբաւոյ՝ է խո-
հական գատումն մոտաց և ընտրողութիւնն . զի որ
քաջ խորհի , բարւոք գատի , և ըստ պարագայից
ժամանակին յարմարէ զգործն . ոչ ոք կարէ ըստ-
գտանել զնա իւիք , այլ մանաւանդ մնառուցանե-
նմա զգովութիւն և զմեծարան :

թ. Ենքնահաւանութիւն է առնել զամենայն՝
միայն ըստ իւրում դատողութեան . և յիմարու-
թիւն է առնել զամենայն՝ միայն ըստ այլոց դատո-
ղութեան :

Գ. Օերունի ոք՝ որ ընդ լիութեան աւուրց
ունի զկապարելութիւն մտաց , գովութեան է
արժանաւոր : Օ.ի բազմամեայ փորձառութեամբ
աւստա ընտրել զլաւն 'ի վատթարէն , և զօդաս-
կարն 'ի մեասակարէն : Վպա երիտասարդք մի հա-
տանիցեն վճիռ գժուարին իրաց յաւաջքան զիոր-
ձառու ծերս , այլ նախ ընդ նոսա 'ի խորհուրդ
մոցեն , և ըստ դատման նոցա որոշեսցեն առնել :

Օերն եթէ չիցէ խոհական՝ որպէս պահանջէ-
այն արգոյ հասակ , երիտասարդ է անփարձ : և ե-
րիտասարդն եթէ չիցէ եռանդնոտ , ծեր է ու-
ժաթափ :

Դ. Չէ իմաստութիւն միամնութեամբ սըս-
տիւ վաղվաղակի հաճ և հաւան լինել խորհրդաց
իմիք՝ թէ և օդտակար երևեսցի , մինչև իցէ 'ի
քննին մատուցեալ զամենայն պարտգայս նորա ,
զի մի գուցէ վնաս ինչ պատահեալ , զիդ և ազա-
շաւ զինի եկեսցէ :

Ե. Խաբէութիւն մտաց է երկբայական կար-
ծել զամենայն անցս , ոքը ստուգիւ եղեն յանցեալ
ժամանակա , և ոչ հաւատալ՝ ոքը լինելոց են յետ
այսորիկ , և միայն հաւատափ համարել՝ ոքը ակն-
երեւ աեսանին լինել այժմուս . զի այսպիսիքս ոչ
իբրև բանաւորք 'ի գործոց ներկայիս զանցեալոն
և զապանիս իմաստափրեն , այլ իբրև անբանք
զգործ ներկայիս միայն ճանաչեն՝ որում ականա-

տես եղեն, և զայն ևս վաղվաղակի մոռանան . կամ զօր ՚ի հարկէ պատճառացն գան յառաջ, ըստ դիսաց իմն վարկանին լեռլ. և զայն ոչ գիտեն, թէ հանդերձեալ են կրել վնասուք անձանց զպա- տիժ անհաւանութեան իւրեանց :

Զ. Ո՞եծի զգուշութեան պէտս ունի խօսիլ ինչ կամ խորհուրդ տալ իշխանաց առ ՚ի ուղղել զնոսա : Օ ի թէ և ծանիցեն նորա զՃշմարտութիւն քանիցն ասացելոց, և զսխալմունս իւրեանց, բայց տակաւին զայրանան՝ եթէ իցեն ՚ի բանս խրատու փոքր մի ծանր և խիստ բառք . զի կենցաղավա- րութեամբ ընդ մարդելուզաց ուսեալ են շողո- քորթել, և լսել միշտ զհաճուկո : Աւստի բաւա- կան է խայթել զնոսա Ճշմարտութիւն պարզ բա- նից, մինչ կտմին ճանաչել զսխալանս իւրեանց :

Է. Խոհեմն առ ստացումն միոյ իրի՝ ոչ գնէ ՚ի վտանգի կորատեան զբաղումն . և վասն բազում անհաւաստի իրաց՝ զմի հաւաստին ոչ թսղու ՚ի ձեւաց :

Ը. Եթէ դէպ լիցի կռուիլ ընդ ումեք, քննելի է նախ՝ թէ ունիցի արդար իրաւունս կռուելոյ, Երկրորդ՝ թէ ընդ ում կռուեսի, կամ զինչ զօ- րութիւն իցէ նորա : Երրորդ՝ կարողութիւն իւր իցէ բաւական յաղթել նմա : Առաւել յուսալի է յաջողակ ելից հասանել խոհական խորհրդով, քան գաղանական վստահութեամբ :

Թ. Ոչ վսյելէ քաջ զօրավարի անարի վատու- թեամբ յետս կալ ՚ի պատերազմէ՝ թէ և իցէ վը- տանդաւոր, մինչ օգուտոն հայրենեաց ստիպէ . զի լաւ է նմա մեռանիլ փառօք՝ քան ապրիլ անար-

գանօք։ Ի՞այց և ոչ յանդուգն համարձակութեամբ
միջամուխ լինել ՚ի թշնամիս, ինդրելով զկորուստ
անձին։ զի խելագարութիւն է արկանել զանձն ՚ի
վտանգ մահու՝ չունելով ուստեք ակնկալութիւն
յաղթութեան։

Ար ոչ վարի խոհեմութեամբ, կըռելով զկար
զօրութեան իւրոց և զվիճակ թշնամւոյն, առա-
ւել յանդուգն է քան արի, և արժանի է նախա-
տանաց և պատուհասի՝ քան դովութեան և պը-
սակի. զի միջնորդ սասանալոց զյաղթութիւնն՝ է
սպասել դիպողագոյն առ թի։

Ժ. Եթէ կամեոցի ոք բուռն հարկանել զգոր-
ծոյ իմեքէ, որ իցէ մեծ և դժուարին, պարտ է
խորհրդակից ունել զիմաստունս և զաւսպինիս,
և ունկնդիր լինել նոյա. զի եթէ ձախողակ ինչ
դիպեոցի, մի ոք կարիցէ մեղադիր լինել նմա։

ԺԱ. Ինդդէմ բնութեան մարտ մղէ, որ ձգտի
առնել զգործա՝ որ առաւել է քան զկար անձին
իւրոց։

ԺԲ. Ար վութոյ առնել զ՛ և իցէ դործս, և
ոչ սպասէ դիպողութեան ժամանակի, է նա որ
պէս ծառ՝ որ յառաջ քան զժամանակն արձակէ
զծաղիկ, բայց վնասեալ ՚ի ցրտոյ՝ ոչ ժամանէ
բերել զարտուղ։

ԺԳ. Օսր ինչ կամի ոք ասել կամ առնել, նա-
խապէս պարտ է զամենացն պարագոյս նորս մը-
տածել, զի մի յետոյ վնաս ինչ զհետ եկեցիկ, և
վերջին զղջումն ոչ ինչ արժեոցէ։ Խորախորհուրդ
մոածութեան կարօնի դործն, առ որ միանդամ
ձեռնամուխ եղեալ անհնարին է դառնալ յետս։

ԺԴ. Այսպիսի յողվակի վասն սակաւ օգտի վնասին բազմօք . զի հայեցեալ միայն յառաջակայ օգուտն՝ ոչ մասդիր լինին մեծամեծ վնասուց՝ որք կարեն զշետ գալ նմին . զոր եթէ ուշի ուշվ դիւ աեալ էր նոցա , զգացին արդեօք և զգուշանացին . վտան որոյ ոչ զակաւ օգուտն խնդրէին . և ոչ զբաղում վնաս կրէին :

ԺԵ. Խորհրդականք ու իցէ ազգի կամ քաղաքի՝ պարտին լինել ազատ ՚ի կրից , այսինքն ՚ի սիրոյ և յատելութենէ , որպէս զի զօգուտն հասարակաց կարացեն անօրինել :

ԺԶ. Եթէ ոք կոչեսցի ՚ի տուն խորհրդոյ , մի վաղվաղեսցէ խօսիլ զկարծիս իւր , մինչև ոչ հասցէ նմա կարգն խօսելոյ :

ԺԷ. Ի ժողովս բազմութեան՝ յորժամ խօսք ինչ լինիցին վասն կարեւոր խնդրոյ իմք , ոչ է պարտ հայիլ թէ ավ է որ ասէ , այլ թէ զի՞նչ է՝ զոր ասէ . զի մարթ է լինել թէ ասացուած միոյ ումեք ՚ի նուասափ կամ ՚ի փոքունց՝ իցէ յաւէտ օգտակար քան զկշռութիւնո բազում իշխանաւորաց . ապա չէ արժան վասն անձինն նուաստութեան՝ անգոսնելի զբանն համարել :

ԺԸ. Չէ բաւական գիտել զխոսիլն բարւոք , այլ և զյարմարութիւն ժամանակին և զտեղւոյն . զի չորտչոր նուագէ քնարահար , որ ՚ի տուն մեռելոց գեղեցեղէ զերգս հարսանեաց : Որ ՚ի խնջոյս ուրախութեան խօսի զբանն աղեաից և արամութեան , զբաղը սիւկ գեղեցիկ գարնան փոխէ ՚ի ցրտաշունչ օդ ձմերան :

ԺԹ. Չգոյշ և չափաւոր պարտ է խօսիլ զանձ-

նէ, զի մի՞ ՚ի գովեստ իւր շրջեսցի քանիքն . որ թէ պէտ և առոյգ և հաւաստի իցէ , տակտւին կարծի լինել երկրայտկան . Որ ոչ ուստաւ զգուշութեամբ խօսիլ , այնպիսւոյն արժան է խօպաւ լոել :

Ի . Ենձն որ արժանի է գովութեան , պարտէ զայն գովինդ ըստ չափու առաքինութեան նորին , և ոչ առաւելազանց . իսկ եթէ հարկն ստիպեացէ խօսիլ զպակասութիւն ուրուք , խօսեսցի զեղչելով և ոչ ճշդիւ :

ԻԱ . Եխօրժելի է մարդոյ խրատել զայլ՝ քան թէ զանձն իւր , գուցէ համարի թէ առաւել գիտիցէ զշահ և զվեստ այլոց քան զիւրն : Ուստի թէ իմաստուն ոք իցէ և թէ տղէտ՝ յօժարամիտ բերի ՚ի խրատ այլոց . իսկ անձին իւրում՝ կամ ոչ բնաւ , կամ հազիւ երբէք գտանի խորհրդատու և խրատիչ , սակայն արժան է գիտել ամենայնի , թէ իւրաքանչիւրոք առաւել պարտական է հոգաւ զանձնէ՝ քան զայլոց :

ԻԲ . Պարտ է կարծել թէ կարելի է յամենայն մարդոյ հասանել ինքեան չար . բայց ոչ է պարտ չար ինչ առնել ումեք :

Ոչ է խոհեմութիւն խօպառ զհետ պնդիլ առկար թշնամոյն , զի մի՞ գուցէ յուսահատեալ ընդդէմ դարձցի , և զօրասցի ՚ի վերոյ հալածչին իւրոյ :

Բազում բարեկամք երբեմն ոչ կարեն օդնել յօրժամ անկանի ոք ՚ի տառապանս ինչ . բայց մի միայն թշնամի կարէ վնասել մարդոյ՝ մինչդեռ կայ ՚ի յաջողութեան . ապա ջանալի է ոչ բնաւ ունել թշնամի :

ԻԳ . Երկու ինչ յաւետ հարկաւոր են առ եր-

ջանկութիւն աղդի կամ՝ քաղցրի. խոհեմութիւն և զօրութիւն։ խոհեմութիւն՝ զի օգտակար օրինօք և խոհական խորհրդով կառավարեսցէ զազգն կամ՝ զքաղցրն։ Զօրութիւն՝ զի պահպանեսցէ քաջութեամբ յարտաքին թշնամեաց, և զյարտացեալն՝ ՚ի վերաց՝ որք կամին զիազաղութիւնն ամբոխել, ՚ի բաց հարածեսցէ։

Բայց հասարակութիւնն է մարմին ինչ, որոյ աչք են խոհեմութիւն, և ձեռք՝ զօրութիւն. և որպէս ձեռք առանց աչցոց անպիտան են ՚ի գործ, մանաւանդ թէ և վնասակար, զի փոխանակ հարկանելց զթշնամիս, անոգիտացեալ հարկանեն զըարեկամո. այսպէս և զօրութիւն առանց խոհեմութեան՝ է վնասակար։ Ապա մեծ վնաս է աղդի կամ՝ քաղցրի՝ յորժամ՝ պակասին խոհեմ կառավարք։

Ի՞. Այս հանճարեղ եթէ ոչ յօդուտ հասարակաց վարեսցէ զՃարտարամութիւն իւր, նման է այնմ՝ որ ունի զգեզգիկ ուսո, բայց ոչ կարէ քոյլել։

Ի՞. ՚ին ոմանք՝ որք ուրախութեամբ երթան ՚ի գործ ինչ՝ կամ ՚ի զըօսանս. բայց բազում անգամ գարձ առնեն արտմութեամբ, կամ ոչ բնաւկարեն դառնալ։ Քանզի ոչ գիտեն քաջ կշռել զհանգամսն աեղւայն՝ և ժամանակին՝ և ընկերացըն, վասն որոյ շարժին անդգուշաբար, և վնասին չարաչար։ Չէ բաւական մարդոց խոկալ զգնացից իւրաց, այլ և զամենայն պարագայից նորա՝ զի մի անկանիցի ՚ի վտանգս. կամ եթէ անկանիցի, նաև խատես գոլով նմին՝ վնասեսցի սակաւ, և գոցէ զելո։

Էջ. Յաւելու զգուշալի են փոքր չարիք քան
զմեծամեծ չարիս . զի յորժամ վտանգ ինչ ճանա
չի լինել մեծ և մահաբեր , հետարս խնդրեն մար
դիկ՝ և զերծանին . իսկ յորժամ տեսանի լինել
փոքր , չնչին իմն համարին զնու և անվնաս , և ոչ
ինչ հոգան , վասն որոյ ըմբռնին ՚ի նմանէ և վնա
սին : Ուստի պարտ է առն խոհականի , ոչ լինել
գլխովին վատահ , և ոչ կարի իմն կասկածու , այլ
զմիջինն ունել շաւիղ զգուշաւոր . զի վատահն յու
լվակի գահավիժէ ՚ի վտանգս , և կասկածուն
միշտ տանջի յերկիւզէ վտանգին :

Էկ. Հնար է մարդոյ գիտել զիսորս ծովու ,
այլ ոչ զգաղանիս որտի . և չէ իմաստուն , որ ՚ի
քանից և ՚ի գործոց ուրուք կարծէ ճանաշել ըզ-
իորհուրդս նորա : Օ, ի բաղում անդամ այլ է
սիրտ ուրուք , և այլ քանք նորա և գործ . և ի-
մաստուն ոք որչափ և համարիցի իրազեկ եղեալ
խորհրդոց նենդաւորին , տակաւին խարի ՚ի նմա-
նէ . զի անդունդ անհնարին է սիրտ առն նեն-
գաւորի :

Էջ. Օսիրտ ընդ լեզուի փոխանակէ , որ զցա-
ւըս սրտի իւրօյ պատմէ այնմ , որ միայն մնուի
խոստմամբ սովոր է օգնել , և ոչ ծագիւ մատին
՚ի գործ մերձենալ :

Այլ զգուշաւոր զիիրս ցաւոց որտի իւրօյ ոչ
յայտնէ արտաքին նշանաւ գիմոց կամ շարժմանց ,
գիտելով թէ ոչ օդուտ ինչ յայնմանէ ստանոյ :

Էջ. Դիանական ոք՝ մինչ հանդերձեալ է խօս
սիլ զերեելի ինչ խնդրօյ , սրարտէ նմա զիւրաքան-
չիւր բառսն կշռել , և սրարդ և մեկին իմացուա-

ծով բացատրել։ Օ, ի թէպէտ դիտաւորութիւն
իւր իցէ ուղիղ, և բանքն սղջամիտ, բոյց եթէ
գտանիցի ՚ի բանսն մթին ինչ կամ երկդիմի, լող
քըն առնուն զայն ՚ի թիւր միտս, մանաւանդ ե-
թէ իցեն հակառակասէր, և տուեցող ճշմարտու-
թեան . և դառն թշնամութեամբ վատահամբա-
ւեն զնա իրրե մոլորամիտ :

Խակ եթէ լսողք իցեն մոլորամիտ, ծեքեն զու-
զիղն, և մեկնեն չարաչար, և առնուն ՚ի վկայու-
թիւն խեղաթիւր կարծեաց իւրեանց, և գոյ-
թակղեցուցանեն զւամիկն, և արկանեն ՚ի նոուա
շունչ և խոռվութիւն։ Վպա մեծ զգուշութիւն
պիսի դիմանականաց ՚ի խօսիլ ինչ, որպէս զի մի
կարտոցեն չարացոյզ միտք գտանել պատճառս ՚ի
խօսել զչարիս :

1. Խոհեմն ոչ դատի զիրս արամաբաշխաբար,
այլ համեմատաբար. քանզի ոչ տմենեքին՝ որք ամ-
բարձեալ են ՚ի հաւասար իշխանութիւն, ունին
և զհաւասար փառս . և ոչ ամենեքին՝ որք ան-
կեալ են ընդ հաւասար պատժովք, ունին և ըզ-
հաւասար առնջանս . զի փառք և տանջանք պէս-
պիսանան ըստ պէսպիսութեան անձանց : Վպա
քեն տռաւել փառաւորի նուաստ ոք բարձրա-
ցեալ յիշխանական պատիւ, և տռաւել տանջի
ազնուական ոք իշխան՝ անկեալ ընդ պատժովք :
Օ, ի նուաստ սկզբան՝ առաւել վսեմ և պանծալի
երթի վախճանն փառաւոր, և փառաւոր սկզբան՝
առաւել դառն թուի և տանջազական՝ վախճանն
թշնամա :

ԱՅ. Ե՛ հիւանդութիւն՝ ոք բժշկի գեղով, և

Ե՞րբ պահեցողութեամբ . Ե բաղձանք՝ որ պէտս
ունի ջանից և աշխատութեանց , և Ե՝ որ կարօտի
ժամանակի և համբերութեան . ապա թէ ոք չգի-
տիցէ որոշել , և ըստ տեղւոյն ՚ի վար արկանել ,
ոչ լու բաղձանք և ցանկութիւն նորա . որպէս
գնալ ՚ի դէմ եղեալ տեղին՝ պահանջէ զջանս , զի
հատանիցի . և մանգաղ արկանել յանդս՝ պահանջէ
ժամանակ , զի հասունացի . Ա;ւ Ե բաղձանք՝ որ
խնդրէ զջանս միանգամացն և զժամանակս , որպէս
բաղձանք գիտութեանց և արհեստից . ապա գի-
տել զժամանակ աշխատութեան կամ համբերու-
թեան՝ տայ լրումն բաղձանաց և ցանկութեան :

ԱԲ . Խոհեմք՝ յարտաքին նշանաց ինչ բազում
անգամ ճանաչեն զներքին յօժարութիւնն մարդ-
կան . վասն որոյ չէ սուտ՝ որպէս և նոքա համա-
րին , թէ որ ՚ի փոխ առնու ուրախութեամբ ,
բաղմիցս արտմութեամբ հատուցանէ . և որ առ-
նու արամութեամբ , վճարէ ուրախութեամբ :

Ա ասն զի որ ՚ի փոխ առնու ուրախամիտ թուի
թէ անիրաւ ոք է , և ոչ կամի անդրէն դարձու-
ցանել , կամ կարի անագան . վասն որոյ մինչ ըլո-
նադատի տալ զպարտս իւր , իբրև թէ ակամայ
և արտմութեամբ հատուցանէ : Խոկ որ առնու
արտմութեամբ , երեխ թէ իրաւասէր ոք է և և
հաստատեալ է ՚ի միտս հատուցանել զպարտսն .
զի զփոխն ՚ի սահպմանէ հարկաւորութեան իբրև
ակամայ առնու , վ՛որոյ վճարէ ուրախութեամբ :

ԱԳ . Վինչ ընդ ումեք կենցաղավարիս ընտա-
նեբար , դիր ՚ի մաի քում թէ եկեսցէ ժամանակ՝
յորմէ բաժանենցիս խռովութեամբ . ապա ըն-

գաստ լեր շոտաւ նմա զգաղանիս քո , զի մի զղջառ
ցիս յետոյ :

Ա. Եթէ տեսանես զյաջողութիւն ուրուք ,
մի դիցես 'ի մոփ .քում թէ և քեզ պատահեսցի .
բայց մինչ տեսանես զձախորդութիւն ուրուք ,
այնպէս հաւատացեօ` թէ մարթէ և քեզ պա-
տահիլ . զի վաղ հասանեն առ մարդիկ վտանգա-
ռոր դիպուածք .քան թէ յաջողուածք :

Ա. Չիք հարկաւոր գիտութիւն քան զձանա
չումն անձին . զի որ ճանաչէ զանձն իւր , ճանաչէ
զլատուած . և որ ճանաչէ զլատուած , սիրէ և
զնու , և ցանկայ հաճոյանալ նմա , որով ժամանէ
'ի գագաթն կատարելութեան : Ուրեմն պարտէ
մարդոյ գիտել՝ թէ է մի 'ի հասարակ մարդկանէ
մահկանացու , տկար և հոսանուտ բնութեան վի-
ճակեալ , յամենայնի և յամենայն ուրեք միշտ կա-
րօտ աստուածային օգնականութեան . և թէ զոր
ինչ ունի , յլատուծոյ ունի , թէ բնական և թէ
ասացական :

Ա. Իւրագանչիւր մարդ կարէ ուղղել զվարո-
իւր , եթէ խորհեսցի որպէս և պարտ իսկ է խոր-
հիլ , թէ փառքն արքայութեան վասն իւր միայն
է պատրաստեալ , և ինքն միայն է գնալոց յար-
քայութիւն՝ եթէ ծառայէ լատուծոյ . նոյնպէս
և դժոխքն վասն իւր միայն է , և ինքն միայն գը-
նալոց է 'ի դժոխս՝ եթէ ոչ ծառայեսցէ լատու-
ծոյ : Կամ թէ խորհեսցի զանձնէ լինել յաշխար-
հախումք բազմութեան մարդկան , յորմէ յան-
ակնկալ ժամու յափշտակելոց են զինքն՝ տանիլ
կամ 'ի յաւիտենական փառս , կամ 'ի տանջանս :

արդ՝ զի՞նչ արդեօք առնէր յայնժամ անտանօր, արացե այժմ աստեն, զի՞նցն բան է՝ որ լինելոց է ամենայն մարդոյ :

Աճ. Վաղում ինչ իրք տեսանին յաշխարհի, ուրոց պատճառք են գաղտնի. բայց ոմանք ՚ի մարդկանէ յախտէ հետաքրքրութեան դրդեալ յուզեն և քննեն, զի կարասցեն հասու լինել պատճառացըն. սակայն որ ինչ եղեալ է, և լինի, և լինելոց է, կամ յասուծոյ է, կամ ՚ի մարդկանէ, և կամ ՚ի բնութենէ :

Վր ասուածային անհաս իմաստութեան գործըս՝ բազումք մեղանչեն յանդգնութեամբ, զի լզապատճառն կարդադրութեան, կառավարութեան, փոփխութեան աշխարհի, չարաց յաջողութեան, և բարեաց գժբախտութեան, և սյլն, ոչ կարցեալ ընդ դատման իւրեանց զուգակշիռ գտանել յայլ և սյլ անտեղի մուածութիւնս և յօտար կարծիս անկանին. և յայսմանէ անթիւ ամբարշտութիւնք յառաջ եկին :

Վր գործս ՚ի մարդկանէ արարեալս վրիպին թիւր գատաղութեամբ. զի զմիտս գործողին՝ որ առ մի վախճան դիտէ, առ զանազան վախճան վերածեն՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց իւրեանց, յորմէ և ոչ սակաւ չարիք յառաջանան :

Վր գործս բնութեան մոլորին, յորժամ ՚ի մասնաւոր փորձոյ զընդհանուր ինչ հետեւեցուցանեն. կամ որոց պատճառք են գաղտնի, զնոցանէ սնոտի կարծեօք յերազեն գիտել: Աակայն բազումք ՚ի քննել զգաղտնիս բնութեան, թէ և մասամբ իւիք կարացին գիտել, սյլ բազումք իւիք սիստե-

ցան : Եւ յայնմանէ՝ զի կամեցան զհետ կարծեաց
իւրեանց բռնի գգել զգործս բնութեան, անհա-
մար տարածայն կարծիք և վէճք յուղեցան ՚ի մէջ
բնապնդից և փիլխոսփայից, և յուղին մինչեւ ցարդ .
և երեւի թէ ոչ բնաւ ունի վերջանալ :

Քանզի չիք այլ ինչ ՚ի բնութեան, բայց եթէ
շարունակութիւն պատճառաց և գործոց . սակայն
բազում անդամ՝ պատճառն է յայտնի, և գործն
ծածկեալ, և յոլովակի ևս գործն յայտնի, և պատ-
ճառն ծածկեալ : Ապա պարտ է զգուշութեամբ
վարիլ ՚ի ճառելն զայնցանէ, որոց պատճառն և
գիտութիւնն կամ ՚ի մարդկանէ ծածկեալ է, և
կամ չափով յայտնեալ, զի մի առ Առառած՝ կամ
առ մարդ մեղանչեսցուք, և կամ սխալեալ նախա-
տեսցուք իբրև տգետ կամ յանդուգն :

ԱՅ. Այս խոհեմ՝ յորժամ՝ առնէ զգործ ինչ
մեծ յօգուտ հասարակաց, ոչ պարծի և հոչակէ
առնուլ զգովութիւն ՚ի մարդկանէ, զի ոչ ՚ի միտ
բերէ թէ ինքն արարեալ իցէ, այլ արդէն մոռա-
նայ զոր արարն, և ջանայ և ևս մեծագոյն բա-
րիս առնել ամենեցուն . զի որ պարծի ընդ գործու-
թւը, թէ և իցէ մեծ և արժանի գովութեան, կո-
րուտանէ զարդ իւր և զգովութիւն : Խոկ այր
թեթև ամիս՝ նախ քան զձեռնարկելն ՚ի գործ ինչ,
և կամ յառաջքան վլրումն նորին՝ մեծապէս պան-
ծայ և հրատարակէ . բայց իբրև ոչ յամբոկ գոր-
ծայն ժամանէ, չամաշէ առնել թէ այսպէս ոչ կար-
ծէի . վասն որոց և առակ նշառակի լինի առաջի
ամենեցուն :

ԱՅ. Այս խոհեմ ոչ պատմէ զանձնէ իւրմէ

զգործ ինչ բարի՝ լսել զգովաւթիւն, և ոչ զչար՝ ընդունիլ զնախատինս։ Օ ի եթէ զբարիսն պատմէ՝ լսողք անգուսնեն զնա իրեւ զնախառ, իսկ եթէ զչարիսն՝ լսողք անարդեն զնա, և գայթակ զին, ապա ոչ է խոհեմութիւն ասել զայն ինչ օքար գալեատ և կամ յանարդանս իւր վերաբերի։

Խ. Աչ ամենայն որ զիերպարանս ճշմարտութեան ունի, է ճշմարիտ, և ոչ ամենայն որ զիեր պարանս ստութեան ունի, է սուտ, քանզի բազում ինչ իրօք եղեն, և եղեալ են, և լինին, բայց ընդդէմ երեին մտաց մարդկան, և բազում ինչ համաձայն մտաց պատմին, որք չեղեն իրօք, և գուցէ ոչ լինիցին մինչեւ ՚ի յաւիտեան։ Ապա ոչ է արժան սուտ համարել զայն ամենայն՝ որ ընդդէմ երեի մեզ, և կամ ճշմարիտ վարչ կանել զայն ամենայն՝ որ համաձայն լժուի. այլ պարտ է խոհեմութեամբ զէտիւթիւն գործոյն և զպարագայսն քննել, ապա հաւանաւթիւն տալ, կամ չտալ։

Արդիկ՝ եթէ ճանաչեն զմի ինչ պարագայ զբանից և զգործոց ուրուք՝ որ իցէ ճշմարիտ, առայն վատահացեալ կարծեն գիտել և զայլ տմենայն գաղտնիս սրտի նորա. և ՚ի միայ բացայաց և հաւասարի զրաւթենէ՝ վաղվազակի մակարերեն զբազում անձանօթ և երկբայական հետեւթիւնս իրեւ զջշմարիտս. ուստի բազմիցս անպիտան առնեն և զայն՝ զոր ճշմարտութեամբ ծանեան։ Քանի զի ճանաչեն զմի ճշմարտութիւն, ոչ հետեւ ՚ի յայնմանէ գիտել և զայլ ամենայն ճշմարտութիւնս, այլ զնոր խորհուրդ և զքննեսւթիւն պարտ է ՚ի

մէջ բերել, և ճշդիւ խուզարկել աստիճան առ
աստիճան զամենայն կարելի և կարծելի պարագայս
իրին՝ զօրմէ է բանն. մինչեւ յամենայն կուսէ փայ-
լեսցի նշոյլ Ճշմարտութեան : Որպէս ՚ի կորնչիլ
իրիք ՚ի տան, և ՚ի լինել անդ առն ուրուք որ եր-
բեմն գողացեալ իցէ ինչ, առ հասարակ կարծիք
լինի զնմանէ՝ թէ նա գողացաւ : Այն Ճշմարիտ
է, թէ նա երբեմն գողացաւ ինչ, այլ ոչ հետեւի
թէ և այժմ նա գողացեալ իցէ . ապա զգուշա-
նալի է՝ ՚ի ճանաչելն զմի ինչ Ճշմարիտ՝ մակարերել
յայնմանէ զանձանօթ և զերկը այտկան հետեւու-
թիւնս, և պնդել իբրև զՃշմարիտ :

ԽԱ. Վարդիկ քաջ գիտեն բարւոք խօսիլ քան
բարւոք գործել. զի թէ գիտէին այնպէս առնել
որպէս և տաեն, կամ ոչ բնաւ գտանէին չարք յաշ-
խարհի, և կամ յոյժ սակաւ :

ԽԲ. Վիամտութիւնն առանց խորագիտու-
թեան՝ է յիմարտութիւն, և խորագիտութիւնն
առանց միամտութեան՝ է խորամանկութիւն .
միամտութիւնն խորագիտութեամբ, և խորագի-
տութիւնն միամտութեամբ՝ է խոհեմութիւն .
որպէս Տէրն մեր, Վարդ. Ճ. 16. լնդ. միամտու-
թեան աղաւնւոյ յարեսց զխորագիտութիւն ո-
ծին, զի ուսոււցէ զմարդիկ խորչիլ յերշից վեա-
սակար ծայրից, և հաստատիլ ՚ի խոհեմութեան :

ԽԳ. Վի ամաչեսցէ իմաստունն խոնարհիլ և
խորհուրդ հարցանել այլոց, կարծելով՝ թէ նոքա
ոչ հասանեն ՚ի չափ խոհականութեան իւրոյ .
զի ահա և ածելին առնու զօրութիւն ՚ի կակուղ
կաշւոյ վարսավիրային, և երկաթն զգենու զզօրու-
թիւն՝ մինեալ ՚ի լոյն ջուր :

“ Խորհուրդն բարեաց զի՞ւշտով լսե, և միտք սուրբք պահանջնոցին լսել ” . Առակ . Բ . 11 .

“ Ո՞ի յաջ խորորդիցին՝ և մի՛ յահեաի . բարձո լսոն ու յ ճանապարհել լսրել ” . Առակ . Դ . 27 .

“ Բարձի է խապարած բանից առն լսիլըն իւրեանց . բարձի է երիայնամիտ՝ առն զնոդարադացեալն ուժով . ” Ժաղու . Է . 9 .

“ Փառաւ և անարգանք ՚ի յեռու լւլունի . և իրծանուն մարդոյ ՚ի յեռու անարգ լւլունի իւրում ” . Այրաք . Ե . 15 .

“ Ուրեաի ընդորութեամբ արտ բարձի մարդոյ , զի ՚ի նմանէ չորհն բարեաց գոյցես ” . Այրաք . ԺԲ . 1 .

“ Եղչըրուաց այսուհետեւ խորագիւնք իբրև զօյս . և միտք իբրև լաղանիս ” . Այտովթ . Ժ . 12 .

“ Ո՛վ ու խամից զնել աշխարաի , և ու նախ նստեալ համարիցի զնախսն՝ ելեւ ուշիցի բառական ՚ի խապարուն ” . Առակ . ԺԴ . 28 .



ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍՎԱՆԵՐՈՐԴ

ԽՈՐՀԵՐԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ա . Ա չ այնքան վտանգաւոր է հեծանել յան կիրթ երիվար , քան յայտնել զգաղտնիս անփորձ բարեկամի . Ապա չէ արժան անխոտիր ում և իցե բարեկամի յայտ առնել զգաղտնիս սրտին , այլ այնմ՝ զոր վործիւ ճանաչէ սք լինել խորհրդապահ .

Ի ծակ սամփոր լնու զջուր, որ ծանուցանէ ըշ-
ծածուկի հոգւոյն այնմ՝ որ ոչ գիտէ պահել ըշ-
խորհուրդ :

Բ. Եթէ ոք կամի զգաղտնի ինչ հո չուկ հար-
կանել, դաշտմբք խորհրդապահութեան յայտ-
նեացէ զայն ռամկին. զի ռամիկն առաւել մու-
նեաիկ է խորհրդաց՝ քան խորհրդապահ։ Ապա հա-
ւատարիմ խորհրդապահութիւն ոչ է յուսալի
գտանել ՚ի մէջ ռամկոց՝ այլ իմաստնոց, և այն
ոչ ամենայն իմաստնոց՝ այլ ռամկաւուց է կարի սա-
կաւուց, առ որոյ ընտրութիւն՝ մեծի զգուշու-
թեան է պէտք :

Գ. Մեծ ինչ խնդրէ, որ խնդրէ պահել զխոր-
հուրդն զոր յայտնէ :

Դ. Որ խորհրդապահ է, ունի զքերանն ՚ի սրտի.
և որ չէ խորհրդապահ, զի իրան ունի ՚ի քերանն.
Բայց են ոմանք որք համարին զգաղտնիս՝ որպէս
քեռն ինչ ծանր, զոր ինքեանք ոչ կարացեալ տա-
նիլ, տան այլոց որպէս քեռնանկրաց ՚ի բառնալ :

Ե. Հպարտն յափշտակեալ յախտէ սնամփա-
ռութեան, ախորժէ պատճել զխորհուրդս մոտց
իւրոց՝ որ քերէ գոլիութիւն ինքեան, որով մատ-
նէ այլոց զգաղտնիս սրտի իւրոյ :

Զ. Բարկացողն ոչ կարէ պահել զխորհուրդս
իւր. զի ՚ի ցասնոււլ իւրում բուռն բարկութեամբ՝
եռաց արիւնն նորա, և ոչ ժուժայ լաել, և անդէն
վազվաղակի թափէ ՚ի սրտէն զգաղտնիս իւր,
ուստի դիւրին է գողանալ ՚ի նմանէ զխորհուրդս
գաղտնիս։ Օ ՚ի բարկացողն է իբրև զտիկ լցեալ
պատռական հեղանիւթիւն, որ մինչ բռնաբարի

յումերէ՝ պայթի առ ժամացն, և թափէ զոր ունի։
 Ե . Խորհրդապահն մի յաղագս պահելոյ ըգւ-
 խորհուրդ ինչ խօսեսցի զառւտ , և մի յերկիւղէ
 յայտնութեան գաղանեաց՝ այլափոխեալ զդէմնն
 ցուցցէ . զի դէմք և աչք առաջնորդ և դեսպան
 են սրբին . և մարդիկ այսպիսի նշանոք փութով
 նախառակա լինին , և խմանան զգաղանիս : Ապա ՚ի
 խօսիլին պարտ է միացն զմնառակարսն ծածկել , զի
 մի լիցի սոտախոս . և զկարգ բանիցն անշփոթ պա-
 հել , զի մի զնշոյ խորհրդացն երեւցուցէ ՚ի դէմն
 իւր , զորմէ լուել կամեր :

“ Որպէս ժաղաք կործանեալ ՚ի պարսպաց՝ և անդարիստ
 էցէ , նոյնպէս և այր որ ու իորհրտով ինչ գործէցէ ” :
 Առակ . ԻԵ . 28 :

“ Բազուճք խաղաղրար լիցին ժէլ . և իորհրտովից լիցի
 ժէլ մ ՚ի հաղարաց ” : Աիրաք . Զ . 6 :



ԳԼՈՒԽ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԽՈՂԱ ՄՏԱՅ

Ա . **Բ**արք մարդոյ ուղղի ՚ի ներքուստ ՚ի խղձէ ,
 և յարսաքուստ ՚ի յօրինաց . զի եթէ խիղձն թե-
 լողքեալ ՚ի թիւր կամաց՝ հակառակ զինի ընդ-
 դէմուղիղ բանի , օրէնքն յանդիմանեալ անձեն
 զնա , և ածեն ՚ի հնազանդութիւն : Խիղձն՝ երբ

ներքին արդար գաղտաւոր՝ ՚ի կողմանէ բնութեան, և օրէնքն արտաքուստ իրաւարար՝ ՚ի կողմանէ Վատուծոյ, իբրև երկու թաթ կըլոյ՝ զմէան արդարութեան ՚ի միջասահմանութեան պահեն :

Քանզի մարդիկ եթէ միայն խղճիւ կառավարեալ լինէին, բազում անձնասէրք կողմապահ լինէին բնութեան, և զուղիղն թիւրէին, և ոչ ոք էր՝ որ յանդիմանէր և ուղղէր զնոսա։ Խոկ եթէ միայն օրինօք կառավարեալ լինէին, բազումք ևս չարակամութեամք իւկը խաբէին զպարզամիւտըս, և զիրս անօրէնս իբրև զօրէնս յաւաշագրէին առնել և գործել։ Վպա կարեոր են երկաքին ևս՝ խիղճ և օրէնք, առաջնորդել մարդկան և ածել յաւաքինութիւն իբրև առ հուպ վախճան, և այնու յերջանկութիւն իբրև առ իւր վերջին վախճան։ զի ըստ առածին, Վատուած և բնութիւն ոչ երբէք գործեն ընդունայն :

Խիղճն՝ ՚ի բնական օրէնս պարտ է զհետ երթալ ուղղութեան բանի։ ըստ այնմ, « Հեթանոսք որք զօրէնսն ոչ ունին՝ բնութեամք զօրինացն գործեն ո. Հոօմ. Բ. 14։ Եւ յեկեղեցականս՝ հետեւիլ աստուածային օրինաց։ զի յաստուածայինը ոչ է բաւական միայն ուղղութիւն բանի, այլ և պահանջէ համաձայնութիւն օրինացն Վատուծոյ :

Բ. 1 ոյսն մտաց՝ է նշայլ ինչ յաւիտենական օրինաց, որ յՎատուծոյ ներտափեալ է ՚ի բնութիւնս մարդոյ։ որով մարդն առնէ զարժանն և զվայելուչն, և հերքէ զայն՝ որ չէ արժան և վայելուչ։ Եւ աստուածային օրէնք պարգևեցան յՎատուծոյ

իբրեւ թարգման նորին կամաց . զի նա՝ որ միայն բնութեամբ էր մարդ , և ձանաչըր միայն զբնական ուղղութիւնս , օրինօքն լիցի և բարսականապէս մարդ , և ծանիցէ զաստուածային ուղղութիւնս . և կամ՝ որ նախ բնականաւ էր պատկեր Վատուծոյ , օրինացն պահպանաւթեամբ լինիցի և նման Վատուծոյ՝ և աստուածային մարդ : Վասն որոյ ուղիղ բանն մտաց և օրէնքն միաբան ուղղեն զբարս մարդոյ՝ ՚ի պահել զիսիզն յուղղութեան ՚ի խորհելն , ՚ի խօսելն , և ՚ի գործելն : Վապա որ խոտորի յուղղութենէ մտաց և ՚ի հրամանէ օրինաց , հակառակի Վատուծոյ և բնութեան իւրոյ :

Գ . Եթէ ոք յամենայնի անսայ խղճին իբրեւ խղճահար , առաւել ևս սխալի . վասն որոյ հարկ է խոհեմութեամբ վարիլ ընդ խղճին . զի ոչ է արժան խապատ անկուշել , կամ գլխովին նմա հետեւիլ , այլ բարեկարգել զնա լուսով բանին և օրինօք . և յիրս տարակուսականս՝ ուր խիզճն մտաց տկարանայ որոշել , դիմել առ իմաստունս և օրինապէտս , և ուսանիլ ՚ի նոյանէ՝ զոր պարոն է առնել : Եւ յայնս՝ ուր երկուստեք ոչ պակասին հաւանական փաստք կամ պատճառք առ ՚ի առնել զիմն կամ խորշիլ , զանկասկածն և զապահովագոյնն ընտրել :

Դ . Չար է խղճահարութիւնն , բայց չար և է լինելն անխիզճ . ապա պարտ է լինել խղճմտանուոր , այսինքն՝ ոչ իբրեւ փաքրոգի յամենայնի երկնչիլ , և ոչ իբրեւ յանդուգն յամենայնի վատահիլ . այլ իբրեւ արի չերկնչիլ՝ ուր չէ պարտ , և երկնչիլ ուր պարտն է :

Ե . Յանդուցին է կամք մարդոց , և բազում
անգամ ելանել ըստ սահման բանաւորութեան .
վասն որոյ և խիզճ մտացն առւտու նմա սահմա , զի
մի քան զպայման առաջնօրդութեան բանին ար-
շաւեացէ . խոկ եթէ ոք ազդարարութեան խղճին
ոչ անսայցէ՝ պարտաւորի գասասատանի : Հայց
գատաղն վասն զի է մարդ՝ տկարանայ որոշել զի-
բաւունս արդարութեան , վասն որոյ ապաստան
առնել անդրէն զդատաստանն՝ խղճի մտաց պար-
տաւորին . զի նա է անխաք գտատաւոր գաղտնեաց
սրտի , որպէս զի պարտաւորն նմա երդնուցու . որ
եթէ ընդդէմ գատման խղճի մտացն երդնու , լի-
նի երդումն սուտ . և մնայ այնպիսին պարտաւոր
գատաստանին՝ Առուծոյ :

Զ . Վնասունք եթէ ունեին զկարողաւթիւն խօ-
սելոյ ընդ մորդկան , արդարեւ կշտամբէին զսյնո-
սիկ որք գործեն ընդդէմ ազդարարութեան բա-
նին , և խղճի մտաց : Եւ քանի անասունք ոչ ու-
նին զբան , վասն որոյ և ոչ անկանին ընդ պարտա-
ւորութեամբ պատժոց . և ոչ է վասն նոցտ կար-
գեալ գատաւոր և քննիչ գործոց : Խոկ մորդիկ՝
վասն զի ունին առաջնօրդ զբանն՝ և ազդարար
զիսիզճն , եթէ ոչ անսան նմին՝ անկանին ընդ գա-
տաստանաւ : Ասդա նախատինք են մարդոց ունիլ
զբան , և վարիլ իրեւ զանքան :

Է . Բազումք ՚ի մարդկանել քաջ ձանաշեն ՚ի
սիրոս խւրեանց , թէ սխալեալ են ՚ի գործս ինչ
կամ ՚ի բան . բայց տակաւին ընդդէմ խղճի մը-
տաց խւրեանց ջանան բանիւ արդարացուցանել
զանձինս : Եւ այս է նշան յամաս ութեան խւր-

Եանց ՚ի չարիս , զի երեխ՝ թէ ոչ կամին ուղղել զսխալտնս իւրեանց : Շէ ընտանութեան և սիրոց արժանի՝ որ յայտնի ճշմարտութեան յամառեալ հակառակի , զի մի սխալեալ երեեսցի :

Ը . Ար ոք գործէ ընդդէմ խղճի մնաց իւրոց՝ շիարէ լինել զերծ ՚ի խայթոցէ նորա . զի խայթ խղճին խիստ է քան զմահ . քանզի մոհն միան գոտմ մեռուցանէ , իսկ խայթ խղճին յամենայն ժամ : Ապա որ ունի զիսիղճ իւր անխօք դատաւոր անձին , և հնազանդի օրինաց և հրամանաց նորա , մնաց աղաս և խաղաղ ՚ի ներքին տանջանաց սրոտին :

Թ . Խիղճ մարդոց նմանի շան , որ առ օտարս հաղէ և հալածէ , և առ ծանօթս քծնի և շողոքորդէ . քանզի ՚ի խորհել և ՚ի գործել ումեք ըդշար ինչ խիղճն վաղվաղակի հաջէ և հալածել ջանաց զշտրն , իբրև օտար և թշնամի բնութեան մարդոց : Իսկ եթէ տակաւ առ տակաւ չարն ընտելասցի մուտ և ել գործել ՚ի միտո , այնուհետեւ խիղճն մնաց վարի ընդ նմա իբրև ընդ ծանօթի , և լուէ ՚ի յանդիմանելց . վասն որոց և մարդն համարձակ սահի յամենայն մոլորութիւնս , յորոց յառաջագոյն հարեալ ՚ի խղճէ խորշէր : Ապա ջանալի է ՚ի սկզբան չոալ առզի չարի խմիք , և ըդշիղճն միշտ արթուն պահել , զի մի դահավեճ լիցի մարդ ՚ի խորս չարեաց :

“ Երկշորին առանցին ի՞ն չարութեան՝ ինքեամբ վիայէ դաստաղարպեալ . մըզ կանիկ զանհնարինսն՝ նեղէալ ՚ի իշխէ մաս ” . Իմաստ . Ժէ . 10 :

“ Քանիզ պարծանք մեր այս են՝ վիայութեան մաս մերոց . զի սրբութեամբ և սպուգութեամբ Աստուծոյ , և ու մարհնեղէն իմաստութեամբ , այլ շնորհուն Աստուծոյ շքեցաք յաշխարհի ” . Բ . Կորն . Ա . 22 :

“ Ուիշիցէ՝ յանչին՝ և լնիցի՝ դաստանը չարեացն իորհրոց ” . Յակ . Բ . 4 :

“ Սիրելք՝ եթե սիրաք մեր զիւլ ոչ սովորակիցէն , զնամարյակութեան ունիմք առ Աստուծոյ ” . Ա . Յօհ . Դ . 21 :



ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

ԱՐԴԱՐՈՒԹ-ԻՒՆ

Ա . **Պ**անդատէ արդարութիւնն յորժամմարդիկ ոչ այնպէս դատին զանձինս՝ որպէս դատէին զայլս :

Բ . **Չ**է հարկ դատաւորին ընդ պատժովք արկանել զյանցաւորն , եթէ առանց մեղանչելց իրաւանց՝ կարէ զնա թողուլ անպատիմ . զի պատուհասելովն ոչ եթէ զիրաւունս պաշտպանէ , այլ զիրաւունս անգութ առնէ :

Գ . **Ե**ն մարդիկ՝ որք կամին ծառայեցուցանել

զօրէնս արդարս հաճութեան կամաց իւրեանց . և սոքա են անօրէնք և կամապաշոք , որք և չառնուն 'ի միտ՝ թէ պարսէ օրինաց իշխել 'ի վերայ կամաց մարդոյ , և ոչ եթէ կամք մարդոյ 'ի վերայ օրինաց . զի եթէ կամք մարդոյ լիներ օրէնք , լինեին այնքան օրէնք՝ որքան մարդիկ :

Բայց օրէնքն պահանջէ ունիլ և զհնաղանդեալը . իսկ 'ի կացուցանել ամենեցուն զկամս իւրեանց օրէնք , լինեին ամենեքին իշխողք , և ով գտանէր հնաղանդ օրինաց , բայց եթէ յորժամմի միայն մարդ մնայր յաշխարհի : Ա ան այնորիկ նախնի օրէնսդիրք իւրաքանչիւր ազգաց՝ սահմանեցին օրէնս բարիս , զի ամենեքին միաբանեսցին 'ի մի կամս . և որ բնութիւնն ետ իւրաքանչիւրոց զառանձին կամս , մարդիկ միացուցին 'ի մի օրէնս , ընդ որ բնութիւնն իսկ զարմացաւ , աւանելով եթէ մարդիկ գտին հնարս կառավարել զկամս իւրեանց :

Դ . Չէ արժան բնակիլ 'ի քաղաքի , ուր ոչ գոյ օրէնք , կամ ոչ գտանի գատաւոր օրինապահ . զի ուր ոչ գոն օրէնք , մարդիկ լինին անօրէնք . և ով կարասցէ մնալ անվեսս 'ի մէջ անօրինաց : Կամ թէ իցեն օրէնք , բայց թէ գատաւորն ոչ 'ի գործ դիցէ զհրամանս օրինաց , յա՞ դիմեսցէ զբկեալն ինդրել զերաւունս . զի այնպիսիքն ջատագովեն զօրէնս , այլ վարին իբրև զանօրէնս . և յեղծանել իւրեանց զօրէնս , եղծանեն զքաղսքն և զհասարակութիւն :

Օրէնք կամ բարեկարգութիւնք որք վերաբերին առ հասարակութիւնն , հասարակաց հաւա-

Նութեամբ պարաբին հաստատիլ :

Ե. Երջանիկէ քաղաքն, յորում՝ գասաւոք են իմաստուն և արդար, միապէս հոցին ՚ի գաստատանն աղքատաց և փարթամոց, եկաց և բնակոց . ոչ թիւրեն զիրաւունս վասն կաշուաց, կամ վասն երկիւզի, կամ վասն սիրոց :

Զ. Ոչ ինչ վճիռ գործոց կարէ մնալ հաստատուն՝ եթէ չլցէ հիմնեալ յիրաւունս . ուստի մարդիկ եթէ առ ժամն համաձայնեալ ընդ միմեանս, վճռեսցեն առնել զգործ ինչ՝ որ վերաբերի առ ինքեանս, ՚ի վախճանի տարաձայնին ՚ի միմեանց, և նանքանայ վճիռն՝ եթէ չլցէ իրաւամբ հաստատեալ :

Է. Եթէ այր ընդ ընկերի իւրում՝ կենցազավարեր աննենդ և խաղաղ, աւելորդ լինէր նոցագատաւոր և գատաստան . զի ոչ ոք ունէր յայն ժամ զվեճ, և ոչ ոք կարօտէր երթալ ՚ի գատ . վասն զի գատաւորն սահմանեցաւ վասն խարդախութեան և անիրաւութեան մարդկան, զի եթէ մարդիկ անիրաւեսցին առ միմեանս, գատաւորն արացէ իրաւունս : Ոսկայ արդարութիւնն, յորժամ գատաւորն՝ որ պահապանն է իրաւանց, հալածէ զարդարութիւնն ՚ի գատաստանէ իւրմէ, և զրկեալն խնդրէ իրաւունս ՚ի նմոնէ :

Որ տաէ զիրաւունս, ատէ և զայնս որ խօսին զիրաւունս :

Ը. Որ զրկէ և յափշտակէ զինչս այլոց, կորուսանէ զիրաւունս ժաւաննդութեան ընչեց իւրոց . ապա որ ցանկաց խաղաղութեամբ վայելել զինչս իւր, հատաւոցէ նմա զոր զրկեաց, զի որ զրկանօք

զինչս այլոց ժողովի , որպէս թէ զհտութիւնն զերծու իւր ծրարէ :

թ . Օ ի՞նչ քան զայս իրաւացի հատուցումն՝ յորժամ նա որ յընթացս կենաց իւրոց ցաւօք և վեսաւոք այլոց ստացեալ իցէ զինչս , թողեալ երթիցէ ցաւօք սրափ , և վեսաւոք հոգւոյ : Անիւրաւութիւնն էր արդեօք՝ եթէ նա որ զրկանօք մթերեալ էր զինչս , վայելէր ՚ի նոսա մտադիւր . զի գանձք որ ժողովին զրկանօք , պահին կասկածանօք , և կորուսանին ցաւօք :

Փ . Յանցաւոր է օրինաց՝ որ ոչ ընու զպարաւաւորութիւն իւր . ապարէն իշխանաւորն դաշտմբ հատուցման վարձուց պահէ առ իւր զպարաւաւորն զի ծառայեսցէ , և սպասաւորն ծառայէ՝ զի վարձ առնուցու : Ապա եթէ իշխանաւորն զըւացի առաջակ արկեալ վարձն , կամ սպասաւորն ոչ ծառայեսցէ հաւատարմութեամբ , մինն լինի զրկող , և միւսն դող , և երկոքին իսկ ոչ հատուցանելով զպարաւաւորութիւնն իւրեանց՝ յանցաւոր օրինաց դատին :

Փթ . Ար առանց իրաւանց տէր լինի բազմաց , իրաւունքն առնեն զես ծառայ այլոց :

Փթ . Երդար հատուցումն լինի՝ յորժամ նա որ հասցց զվասա այնմ՝ յորմէ չէր ընկալեալ չարիս , կրեսցէ զվասա յայնմանէ՝ որում սրարեալ էր բարիս :

Փթ . Ար առաջնարդ լինի մասնութեանն և դաւաճմանութեան՝ օրինակաւ իւրով ուսուցանէ այլոց վեայն առաւել և ինքեան :

Ենութիւնն է մարդոց՝ ՚ի բազում բարի օրիւ-

նակաց զատկաւ բարիս , և ՚ի սակաւ չար օրինակաց զբազում չարիս ուսանիլ :

Ժ. Վատուած՝ ըստ յօժարութեան և բաղձանաց և ջանից իւրաքանչիւր ումեք հատուցանէ զփոխարէնն . զի եթէ յօժարեսցի ոք և ջանացէ առնել զբարի կամ զչար , և չիարիցէ գործով ՚ի գլուխ ածել , տակաւին արժանաւորի վարձուց կամ պատժոց :

Վանզի գործք որ ունին զբան բարւոյ կամ չարի , վասն այն փոխարինութեան են արժանի , զի գործին ՚ի հրամանէ կամաց . ապա թէ ոչ լինելին գործ մարդոյ՝ բնական և հարկաւոր , և ոչ եթէ գործ մարդկային՝ բարսյական և կամաւոր : Եւ վասն զի կամաւորութիւնն է՝ որ առնէ զգործն արժանի հատուցման , ապա և բաղձանիքն ելուզեալ ՚ի կամաց՝ առ ՚ի գործել զբարի կամ զչար , արժանաւոր գտանի վարձուց կամ պատժոց , է՝ որ յաւէտ , և է՝ որ նուազ , ըստ յաւէտ և նուազ՝ կամ յարատե և անցողական ըղձանաց և ջանից իւրաքանչիւր մարդոյ :

ԺԵ . Շշմարիտ հաւասացեալն Վրիստոսի՝ է իբրև որդի և ժառանգ Վատուծոյ , իսկ անհաւատն՝ իբրև ծառայ և վարձկան . ուստի ՚ի գործել նոցա զչար ինչ հաւասար ծանրութեամբ , արդարութիւնն պահանջէ՝ զի պատճեսցին անհաւասար պատժովք , իբր զի սաստիկ պատուհանեցի հաւասարացեալն քան զանհաւատն . քանզի ապստամբութիւնն որդւոց է առաւել չար , և մեծագոյն պատժոց արժանի՝ քան զապստամբութիւն ծառայից :

Վպա ճշմարիտ հաւատացեալք պարտին առաւելք քան զամենայն մարդիկ ահիւ և գողութեամբ զանձանց փրկութիւն գործել . ըստ այնմ՝ “ Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրաց և զփարիսեցւոց , ոչ մտանիցէք յարքայութիւնն Աստուծոյ ” . Ամպի . Ե . 20 :

“ Եւրան արդարոյ խորհի զվարաբութիւն , և լըսու նորա խօսեացի զվարաբութիւն ” . Աաղմ . Լ. Զ . 30 :



ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱԾՆԵՐՈՒՄ

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ա . **Ջիք** քան զՃշմարտութիւնն արժանի պատուց , բայց չիք քան զնա յաւէտ անարդեալ : Աարդիկ ՚ի խօսելն ընդ միմեանս մեծացուցանեն զփառս նորա , և ցուցանեն զանձինս ջատագով Ճշմարտութեան . բայց ՚ի գործս խւրեանց արհամարհեն հանապազ , և պատուադիր լինին ստութեան :

Աակայն Ճշմարտութիւնն զմարդասկրութիւն իւր ՚ի գործ արկեալ , երկայնմտութեամբ տանի անարդանաց իւրոց , և ոչ գլխովին մեկնի յաշխարհէ՝ սպասեալ դարձի նոցա , և կամի՝ զի որպէս

ամենեքին՝ ՚ի խօսիլ իւրեանց մերձ են ճշմարտութեան, միասցին ընդ նմա և ՚ի գործել իւրեանց ։ Ուստի ամենայն որ բարիս գործէ, միանայ ընդ ճշմարտութեան. զի ամենայն բարի՝ է ճշմարիս, և ամենայն ճշմարիս՝ բարի. խկ որ չար գործէ. հեռանայ ՚ի ճշմարտութենէ, զի այն է չար՝ որ ոչ ունի զՃշմարտութիւն :

Տեսե՞ր զներսզութիւնն ճշմարտութեան, զի ոչ առ ժամայն վրեժինդիր լինի անարդողաց իւրոց, և ոչ խնդրէ իրաւունս, այլ առ ամենեսին հուպ մատչի՝ և օգնէ ստէպ, զի շահեսցի զնոսա. թէ պէտ ոչ ամենեքին հուպ առ նա գտանին, և ընդ դունին զօդնականութիւն նորա :

Բ. Վի ոք յուսասցի ՚ի սուա խօսողէ ընդունիլ զբարի ինչ, քանզի ստասացն չունի ինչ բարի. զի որ զՃշմարտութիւնն կորուսանէ, կորուսունէ զամենայն բարիս, զի ճշմարտութիւնն է ամենայն բարի :

Վտասացն զայս միայն շահի, զի թէ և զՃշմարիսն ասասցէ, ոչ ոք հաւատայ նմա :

Չէ արժան ՚ի թիւս մարդկան գրիլ, որ սովորէ սուա խօսիլ :

Գ. Չեք գովելի քան զՃշմարտութիւնն, բայց աւամդ՝ զի չեք ոյժմուս ատելի քան զայն, են բազումք՝ որք բանիւ ճշմարտասէր լինել պարծին, բայց սրտիւ ատեցողք են ճշմարտութեան : Խակ ճշմարտութիւնն ճանաչելով զգաղտնիս մարդոյ՝ ծպտեալ շրջի յաշխարհի, զի մի խօսպառ հալածեայի. բայց ճանաչեն զնու և պատուափրեն, որք ուղիղ են սրտիւք :

Դ . Ճշմարտութիւնն հալածական եղեալ՝ ի մարդկանեէ՝ որոց այլ է սիրտ և բերան , բնակի լնդ անմեղ անսասունս , որոց նոցն է սիրտ և բերոն։

Ե . Ուր ծագեալ է լոյս , ոչ բնակէ անդ խաւար . ուր թագաւորէ ճշմարտութիւն , անդ ոչ դտանին գեր :

Որ ունի զՃշմարտութիւնն ի խօսս , և զաւդշութիւնն ի գործս , ունի նա կրկին թես վերասլանալ յերկինս :

Զ . Ուր չիք ճշմարտութիւն , չիք անդ և բարութիւն . զի երկոքին սոքա են անբաժան ընկերք , որովհեաւե նոյն են իրօք ընդ միմեանս , և տարբերին տեսականութեամբ և եթ : Կպա յայտ է՝ թէ ի չարս չիք ճշմարտութիւն , զի չեն բարի . և որ չաւնին զՃշմարտութիւն , խաւարեալ են միտք նոցա , զի ճշմարտութիւնն է լոյս մտաց . վասն որոց և չարք յամենայն խորս մոլորութեան անկեալ ոչ իմանան :

Ուստի եթէ կամիցի ոք զչարին դարձուցանել ի բարի , նախ պարտ է լուսաւորել ճշմարտութեամբ զմիտս նորա , որպէս զի միտքն իւրովի յափշտակեսցի ի սէր բարւոյ . առա թէ ոչ ընդ վայր տքնի խրատին , և որպէս թէ անլուր լսելեաց ջանայ աղդ առնել զներդաշնակութիւն երգոց :

Է . Եղուր մարդոց եթէ ճանաչեր զպարտաւ ւորութիւն իւր և զչափ իւր , գուցէ ոչ փակեալ լինէր ի բերանի ընդ պարսպօք ատամանց և դըրամբք չըթանց՝ իբրև յարգելանս բանտի : Պարտաւորութիւն նորա՝ է խօսիլ զՃշմարիտն . զի լեռ զուն է թարդման խորհրդոց և մտաց , և չափ նու

բա՝ է խօսիլ զարժանն : Բայց ոչ ճանաչէ զպարտաւորութիւն իւր , եթէ ոչ պահէ զհաւատարմութիւն ՚ի խօսս , և ասէ ինչ ընդդէմ ըմբռնման և դատման իւրոյ . և ոչ ճանաչէ զչափ իւր , եթէ աւելի քան զարժանն խօսի : Վաղա իրաւամբ պատժի լեզուն՝ որ ոչ ճանաչէ զպարտաւորութիւն և զչափ իւր :

Եւ չեն ինչ զարժանք , եթէ լեզուք զառամեալ ծերոց և պառաւանց աւելի քան զարժանն խօսին , զի պարիսալ ատամանց նոցա խրամատեալ են , և դրունք շրմանցն թուլացեալ :

Յ. Որ չէ օգտախնդիր անձին , սովոր է լինել ճշմարտախօս . քանզի շահասէրքն են ոքք լւեն զճշմարիտն , և կամ ստեն : Շնդ ցորեսնն զորոմն խառնէ , որ ընդ ճշմարիտն զառւտ ինչ յարէ :

Յ. Չէ արժան ստել երբէք՝ առ ՚ի զերծանիլ ՚ի վտանգէ . զի թէ մարդկային հնարն տկարանայ ՚ի փրկել , պարտ է աղօթիւք առ Վատուած ասդաւինիլ , և զելս հնարից առ ՚ի նմանէ խնդրել , և ոչ երբէք վհատիլ և ստել . զի Վատուած է ամենեին ճշմարտութիւն , և միշտ զճշմարտութիւն կամի : Ուստի որ ոք ստութեամբ իւիք այլայլք զճշմարտութիւնն , մեղանչէ ընդդէմ Վատուծոյ , և ընդդէմ խղճի մոտաց իւրոց . և Վատուած քաջ գիտէ փրկել , եթէ իցէ օգուտ . ապա թէ ոչ լսուէ մեռանիլ պահմամբ ճշմարտութեան , քան կեալ յանցանօք ստութեան : Այսկայն Վատուած երբեմն թոյլ տայ չարաց սուտ խօսիլ՝ առ ՚ի փրկել զբարիս , որ սիրեն կորուսանել զկեանս քան ստել :

Ժռակի է ճշմարտութիւնն , սրտի , բերաւ

նոյ, և գործոյ . բայց բազում անդամ ոչ ինչ զօրէ առ մարդիկ ճշմարտութիւնն սրտի և բերանոյ, եթէ ոչ՝ ի վերայ գայցէ ճշմարտութիւնն գործոյ . որովհետեւ մարթ է ստիլ երկուց առաջնոց, կամ մնալ անդործադիր : Արդ՝ միայն Կստուծոյ է սեպհական ձանաչել զՃշմարտութիւն սրտի . մարդիկ հաւատարիմք միմեանց՝ ձանաչեն զՃշմարտութիւնն բերանոյ , իսկ հասարակութիւնն ձանաչ զՃշմարտութիւնն գործոյ :

Ապա չէ նա խոհեմ, մինչ զայն որ սեպհական է Կստուծոյ՝ պահանջէ ՚ի մարդկանէ , այսինքն յորժամ ինդրէ ՚ի մարդկանէ ձանաչել զյօժարութիւն և զբաղձանս սրտի իւրայ , թէ ստուգիւ կամիցի զայս ինչ , այլ պարտ է նմա բանիւ ևս յայտ առնել : Չէ խոհեմ, մինչ զայն որ յատուկ է հաւատարիմ անձանց՝ պահանջէ ՚ի հասարակաց , այսինքն ինդրէ ՚ի հասարակութենէ հաւատալ բանից բերանոյ իւրայ , այլ հարկ է նմա գործովք ևս ցուցանել :

Եռակի է և ստութիւնն , այսինքն սրտի՝ բերանոյ՝ և գործոյ . զի է՝ որ զայլ ինչ խորհի , և զայլ ինչ խօսի . և է՝ որ զայլ ինչ խօսի , և զայլ ինչ գործէ . և ուր մինն երից աստի չէ համաձայն , անդ է ստութիւն : Բայց օրէն է խոհեմ կառավարչին երեմն պատրուակել զՃշմարտութիւնն , այսինքն զայլ ինչ խորհիլ ՚ի սրտի , և զայլ ինչ խօսիլ , կամ զայլ ինչ գործել . բայց այս ոչ է աղաւաղել զՃշմարտութիւնն , այլ միայն թանգուգել և ծածկել , զի այսպէս պահանջէ օգուտն հասարակաց . բանզի երեմն բարին յաղթահա-

թէ զՃշմարիսն :

ԺԱ. Ար միանդամ ստէ երդման կամ դաշնն
իւրոյ վասն շահասիրութեան, վնասէ անձին, զի
ոչ ոք հաւատայ նմա յայլում նուագի, թէ և
երդնուցու պահել զիստառումն իւր, վնասէ ևս
հասարակութեան, զի բառնայ յաշխարհէ զյարդ
հաւատարմութեան, որ հաստատեալէ յերդման :

ԺԲ. Լաւ է քաջութեամբ մեռանիլ ՚ի պատե-
րազմի՝ առ հաստատուն պահելոց զդաշն հաւա-
տարմութեան, քան յաղթել թշնամոյն ուխտա-
գրուժ երդմինազանցութեամբ :

ԺԳ. Չէ արժան վնաս հասուցանել այնմ, զոր
երկրայտկան կարծեօք համարիս լինել թշնամի,
զի լաւ է թէ նա լիցի չարագործ՝ քան թէ գու :

Վազում ինչ իրազութիւն գործեցան յոււաջին
գարս, բայց այժմ կամ ոչ հաւատան նոցա մար-
դիկ, և կամ գժուարաւ, և քազում ինչ սասցի
գործին ՚ի ներկայս, զորս յետագայք կամ ոչ հա-
ւատացեն, և կամ գժուարաւ : Վազ զգաւշալի
է մեզ չստել զանցս անցելոց, զի մի և յետագայք
անսասցի համարեցին զՃշմարտութեամբ գոր-
ծեալսն առ մեօք : Ար ոչ երբէք հաւատայ ումեք,
ոչ ոք կարէ հաւատալ նմա :

ԺԴ. Աչ ամենայն հակառակութիւնն է իրաւա-
ցի, զի են ոմանկը՝ սբք հարցեալ ինչ աւմեք՝ լսեն
պատասխանի ճշմարիտ, բայց չունելով ուղիղ մի-
տրու՝ թիւրեն զբանն, և հակառակին յանիրաւի :

Վազումբ ևս լուեալ զՃշմարիտ ինչ՝ ոչ կամին
հաւատալ, մինչեւ չիցեն զփորձ առեալ, և յոր-
ժամ փորձեն՝ վկայեն լինել ճշմարիտ, բայց վնա-

առոք անձանց իւրեանց :

ԺԵ . Օ սր ինչ խօսի սր՝ պարտ է լինել ճշմարիտ . բայց ոչ զամենայն որ իցէ ճշմարիտ , պարտ է խօսիլ :

ԺԶ . Ի՞նտկան է մարդոյ խնդրել զՃշմարիտն , և ցանկալ բարւոյ . զի ճշմարիտն է առարկաց կարսղութեան մոտայ , և բարին՝ կամաց . և յատուկ է ամենայն կարսղութեան ընականաբար դիմել առ իւր առարկայն : Ի՞սկ բազումք ոչ ունելով զիտուարեալ ճանաչումն ճշմարտի և բարւոյ , վարանական դեգերին ՚ի խնդիր նոցուն . և մինչ ոչ կարեն ստանալ , անհասանելի զիրսն վարկանին . իսկ թէ ուշի ուշալ հայեսցին , կարեն զնոսա ճոշնաչել և ՚ի ձեռս բերել , զի չէ օսար ՚ի հասողաւթենէ մարդկան :

Աղստին ճշմարտութիւնն է համակերպութիւն իրի ընդ իմացութեան , խոկ բարին է այն՝ որ է համաձայն ուղիղ բանի : Ուստի եթէ ոք հետազոտէ մոօք ըմբռնել զիրն այնպէս՝ որպէս է իրն յինքեան , հասու եղե ճշմարտութեան . և որ լուսով բանին առաջնօրդի յընտրութիւն գործոց ; գտանէ զբարին՝ տպա թէ այլազգ վարեսցի , զրիպի ՚ի ճշմարտութենէ և ՚ի բարւոյ , և անկանի ՚ի մոլորութիւն և ՚ի չարիս : Ուրեմն քաջ մտադիր լինել պարտ է ՚ի հետազոտել զբնութիւնն իրին՝ ՚ի ճանաչել զՃշմարիտն , և խոհական խորհրդով վարիլ յարոշելն զմի ինչ գործողութիւն յայլմէ՝ ՚ի գտանել զբարին . և յայսոսիկ կայանայ կատարելութիւն մարդոյ :

Ուստի իմաստուհք ոքք ճանաչեն զՃշմարիտն :

և առաքինիք որք գործեն զբարին, են զուտրթամիտ և ուրախասիրտ . իսկ տգետք որք զառտն ըմբռնեն որպէս զՃշմարիտ, և մոլիք որ զառերեւոյթ բարին սիրեն փոխանակ իսկական բարւոյ, միշտ տանջին ՚ի միտս և ՚ի կամս իւրեանց, և ոչ ունին հանգիստ . զի միայն Ճշմարիտն է հանգուցիչ մոտաց, որպէս և բարին՝ կամաց :

ԺԷ . Ճշմարտութիւնն բնական իրաց հաստատեալ է ՚ի փորձս . զի ամենայն տարակուսանք կամ դժուարին խնդիրք՝ որք են շուրջ զբնական կամ զգալի գոյացութեամբ, ոչ լուծանին բանիւ՝ այլ միայն փորձով : Օ ՚ի բանն որչափ և զօրաւոր իցէ, միայն զմիտսն հաւանեցուցանէ, այլ ոչ կարէ զնա հանգուցանել, կամ իբրև ապացուցեալ Ճշմարտութիւն բռնադատել ՚ի հաւանութիւն . զի քաղցեալն ոչ յագի բանիւ, այլ խնդրէ հաց ՚ի կերակուր :

ԺԹ . Յաճախակի խաքին մարդիկ, որք հանապաղ ցանկան լսել զնորագոյնս, զի ոչ հետամուտ լինին քննել և իմանալ Ճշմարտութիւն իրին :

ԺԹ . Արտասուէ Ճշմարտութիւնն մինչ ատեն զնա նենգաւորք և ստասացք . և եթէ ոչ ուրեք գտանէին հաւատարիմք և ուղղախօսք միսիթարել զնա, իսպառ չուէր յաշխարհէս, և երթեալ բընակէր յերկինս, ուր ոչ գոյ նենգութիւն և սրտութիւն :

“ Ամենայն երկիր աղաւինի ՚ի Ճշմարտութիւն, և երկինք օրհնեն շՃշմարտութիւն . և ամենայն գործք լարդին և

Դուշն առաջի նորա . և ոչե՞ ՚ի ճշմարտութեան անիբառուն
կեա և ոչ ՚ի . Ա . Եղբաս . Դ . 36 :

“ Պիշտ են առաջի Տեսուն լըլունք սուպք . իսկ ո՛
առանձ զնաւագու ընդունել է նմա ” . Առակ . ԺԲ . 22 :



ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԲԱՐԵԿԱՄ

Ա . Բնութիւնն մարդոյ գոլով քաղաքական
և ընկերասէր՝ կարօտի բարեկամութեան , թէ
յուրախականս և թէ ՚ի տրտմականս . իսկ որ ոչ
ունիցի զսէր բարեկամութեան ընդ ումեք՝ ար-
տաքսոյ ելանէ ըստ սահման բնութեան մարդոյ ,
վասն զի ուրախութիւնն ընկերակցութեամբ բա-
րեկամաց առաւելու , և տրտմութիւնն բարե-
խառնեալ նուազի : Եւ որ ոչ գիտէ թէ զի՞նչ է
բարեկամութիւնն , ոչ գիտէ նա՝ թէ զի՞նչ է մարդ :

Բ . Կենցաղօգուտ խորհրդածութիւնն փոխա-
դարձ խօսողութեամբ բեղմնաւորի և իբր կեն-
դանանայ և ածի . զի երկու կարծիք ընդ միմեանս
բաղդատեալ ցուցանի արժանն և վայելուչն՝ և
եղանակն գիւրութեամբ ՚ի գործ գնելոյ ՚ի գէպ
ժամանակի . իսկ ՚ի մնալն առ մի ոք ծածկեալ՝
ընդ ինքեան բթանայ , և կամ մոռացմամբ կորնչի :

Վաղա պարտ է ունիլ մարդոց խոհեմ՝ և խորհրդակաղաք բահ բարեկամ խորհրդիլ ընդ նմա . զի եթէ բարի է՝ զոր կամի առնել , օգնելով բարեկամին՝ լինի բարեգոյն . խոկ եթէ ոչ է բարի , ազգարարութեամբ բարեկամին յետո կասի ՚ի նմանէ . զի օդուտ կամ վնաս խորհրդոց և գործոց՝ այլում պարզ և մեկն երեխ քան ինքեան :

Գ . Ճշմարիտ բարեկամութիւնն զտանի տիրապէս ՚ի մէջ իմաստնոց՝ մարդասիրաց և առաքինեաց . ապա որ ունի հաւատարիմ բարեկամութիւն ընդ ումեք , նշան է՝ թէ ունի նա և զիմաստութիւն , կամ զմարդասէր բարս , և զբարւոք կենցաղավարութիւն . զի ընդ այսպիսիս յօժարտմիտ և փոյթեն մարդիկ առնել զբարեկամութիւն . խոկ այն որ ոչ ունի զօք բարեկամ , նշան է՝ թէ իցէ տգէտ , կամ մարդատեաց , կամ մնի , վասն զի ամենեքեան խորշին յայսպիսեաց :

Դ . Ճշմարիտ բարեկամութիւնն կոյանաց ՚ի փոխադարձ հաղորդութեան բարեաց և շարեաց , որպէս զի յաջողուածովք բարեաց ուրախացին սիրոք , և կարեկցութեամբ չորեաց՝ թեթեացին տրտմութիւնք , ապա թէ ոչ բարեկամութիւնն փոխի ՚ի շահասիրութիւն :

Ե . Լաւ է ունիլ զիմաստուն բարեկամն՝ քան զբաղում գանձո . զի իմաստուն բարեկամն օգնէ յաւուր նեղութեան օդտակար խրատուք , այլ գանձք և մեծութիւնք ոչ բնաւ :

Զ . Յատուկ է ճշմարիտ բարեկամաց լինել հաւատարիմ միմեանց , և յատուկ է հաւատարմաց՝ ունել ընդ միմեանս սերտ բարեկամութիւն :

Օրէնք բարեկամութեան հաստատի և պահպանի ՚ի հաւատարմութեան . և ուր չքը հաւատարմութիւն , չիք անդ և բարեկամութիւն :

Ե . Օքիլ ՚ի բարեկամէն առաւել դառն է և ցաւալի , քան զրկիլ յընչից . զի ինչք բազմացուցանեն զթշնամիս , և բառնան զհանգիստ ստացողին . իսկ բարեկամութիւնն զթշնամիսն նուազէ , և զանձն բարեկամին հանդուցանէ :

Ը . Որ փութով բարեկամանայ ընդ ումեք , փութով քակէ զկազն բարեկամութեան :

Թ . Կեղծ բարեկամ՝ է սւզիսաջուր անձրեց . և սրպէս ուղին ՚ի պակասիլ անձրեց ցամաքի , նոյնպէս և կեղծ բարեկամն ՚ի դադարիլ յաջողութեան՝ անհետ լինի :

Ժ . Յատուկ է օգտախնդիր և կեղծաւոր բարեկամի , ՚ի ձախողութեան բարեկամի իւրոյ նախոկին լինել ՚ի փախչողս , որ ՚ի յաջողութեան նորանախահրաւէր լինէր ՚ի կոչնականս :

Զախորդութիւնն է փորձաքար բարեկամութեան . և որ չէ անկեալ ՚ի ձախորդութիւն ինչ , ոչ կարէ որոշել զկեղծ բարեկամն ՚ի ճշմարիտ բարեկամէ :

ԺԱ . Կեղծ բարեկամն է առաւել չար՝ քան դյայտնի թշնամին . զի ՚ի յայտնի թշնամեաց սովոր է զգուշանալ ոք , բայց ՚ի ծածուկ թշնամեաց չունելով զկասկած՝ վեսափ չարաչար :

ԺԲ . Արժանի զարմացման է՝ զի յորժամ մարդիկ զծի կամ զէշ գնոց առնուն , խուզարկեն զբնութիւն և զքարս նորա . իսկ յորժամ բարեկամ զոք ստանան , յարտաքին կերպարանս նորա և

Եթ հային , իսկ զնեբքին բնաւորութենէ նորա
անփոյթ լինին : Որ ոչ ընտրէ իւր բարեկամ և
խորհրդակից զարս առաքինիս և ճշմարտախօսս ,
արժան է զի վնասեսցի ՚ի նենդաւոր բանից խո-
րամոնկ շողոքորթաց :

ԺԴ . Օ Ռ' ՆՀ յիմարութիւն քան զսյս առաւել
վտանգաւոր , մինչ զարատաւոր անասունս առանց
դանդաղանաց արտաքս վարեն մարդիկ ՚ի տանէ
իւրեանց , իսկ զմոլի բարեկամն հանապաղ սեղա-
նակից և խորհրդակից ունին ընդ ինքեանս :

ԺԴ . Որ ստանայ զբարեկամ բարի՝ գտանէ զտ-
մենայն բարի . իսկ որ ստանայ զբարեկամ չար ,
կորուսանէ զամենայն բարի : Ծնորելի է մնալ ա-
ռանց բարեկամի , քան ընկերանալ ընդ չարի :
Վասն այնորիկ մանաւանդ ստանալի է զբարեկա-
մըն , զի բարին զոր ունի ոք՝ մնասցէ ամբողջ , և
զոր չունի՝ ստասցի նովաւ . բայց բարեկամ չար՝
զբարին զոր ունի ոք՝ բաւնայ ՚ի նմանէ , և զոր
ոչ ունի՝ ոչ բնաւ կարէ տալ . զի որ չարքն են՝
այլում բարիս առնել ոչ կարեն :

ԺԵ . Թէ կամիս ունել քեզ զտք բարեկամ և
հաւատարիմ , նախ լեր դու նմա անկեղծ բարե-
կամ , որպէս զի քոյդ բարութիւն զսյլս արասցէ
քեզ բարեկամ . զի եթէ դու ոչ կամիս այլոց ըզ-
բարին , մի յուսար՝ թէ այլք կամեսցին քեզ բարի :

ԺԶ . Չեք յաւէտ զուարձալի իմաստնոց՝ քան
կենցաղավարիլ ընդ առաքինի բարեկամն , և խօ-
սակից լինել վասն կարեոր և օգտակար իրաց . դիւ-
րին է իմաստնոց կորուսանել զամենայն վայելու-
թիւնս աշխարհի , քան զվկիլ յընկերութենէ ա-

ռաքինի բարեկամաց :

ԺԷ. Երկնաքաղաքացի 'ի դէպէ է անուանել լոզնոստ , որք 'ի գործս բարեպաշտութեան սերտ սիրով բարեկամութեան մնան 'ի միմեանց անբաժան , այս է երկնային կեանս վարել 'ի յերկրի . զի երկնայնոց է 'ի սէրն Աստուծոյ և 'ի սէր ընկերին մնալ հաստատուն : Ապա որ բարեկամութեամբ կեայ ընդ բարիս 'ի գործս բարիս , նախքան զելանելն յերջանկաց գաւառ՝ անշուշտ կրէ յանձին զնոցուն քաղաքավարութիւն :

ԺԲ. Ռազմն որքան և լուսափայլ իցէ , տակաւին պէտս ունի հաստման պատրուդի , ապա եթէ մնացէ անյարդար , լինի դիւրահալ և աղօտալոյս , այսպէս և մարդ՝ որքան և բազմահանձար իցէ , կարօտի խորհրդակցութեան բարեկամաց , զի մի գուցէ կարեւոր ինչ խորհրդածեալ իրողութիւն՝ իբրև իւղ ճրագի վաղվաղակի հալեալ սպառեսցի , կամ աւելորդ պարագայիւք առլցեալ՝ պայծառութիւն խորհրդոյն մուայլ առնուցու :

ԺԹ. Խրատ իմաստուն բարեկամաց քաջ պահապանէ զիշխաննն , քան զքագում գունդս ահեղ զօրաց : Անկանին 'ի վտանգս՝ որք անդոսնեն ըզիրատ իմաստուն բարեկամաց :

Տ. Ո՞ի նշանաց ճշմարիտ բարեկամութեան է պահել 'ի գաղտնիս սրտի զխորհուրդս ընկերին , և ոչ մատնել օտարաց . զի խորհրդապահութիւնն է հիմն բարեկամութեան , և առանց նորա սէր ընկերին չկարէ կալ կանգուն : Զէ ճշմարիտ բարեկամ , որ մինչ գժդմնի ընդ բարեկամին իւրոյ՝ լուծանէ զկնիք հաւատարմութեան , և

հրատարակէ զգաղանիս նորա :

ԷՅ. Հարազատ բարեկամ նման է հայելոց՝
կըսոյ՝ և փորձաքարի . զի որպէս հայելեաւ տե-
սանէ ոք զվացելըութիւն կամ զարատ երեսաց իւ-
րոց , և կըսով իմանայ զշափ ծանրութեան իրին ,
և փորձաքարիւ ճանաչէ զատիճան և զարժողու-
թիւն ուկւոյն . այսպէս և ազդարարութեամբ
բարեկամի կարէ ոք քաջ՝ ի միտ առնուլ , թէ խոր
հուրդ իւր զոր խորհեալն էր յաւանձնութեան
իւրում՝ իցէ վայելուշ , կատարեալ , և արժանի՝
ըստ ժամանակին , ըստ տեղւոյն , և ըստ այլ ա-
մենոյն պարագայիցն : Քանզի բազում անգամ
առանձինն առանց խորհրդակցի՝ թէ և իմաստուն
ոք իցէ՝ անկանի ՚ի սխուլանո , կամ տարակուսի
յիրո ինչ , կամ զիսորհեալն թողու տարտամ և
անգործ . վասն որոյ կարօտի այլում , զի ուղղեացէ
զսխալաննն , և զտարակուսանին լուծցէ , և զխոր
հեալն եթէ իցէ հարկաւոր և օգտակար՝ խոր-
խուսեացէ ՚ի գործ գնել : Վստա որ ունի անկեղծ
և իմաստուն բարեկամ՝ ոչ սխուլի . քանզի ազք
առաւել տեսանեն քան զակն . իսկ որ ոչ ունի
խորհրդակց բարեկամ ՚ի գործս զոր հանդերձեալ
է առնել , զգոյշ լիցի , զի կամ անկեալ է ՚ի վրի
պուկ , կամ մերձ է յանկանիլ :

ԻԲ. Հարազատ բարեկամութիւնն պահանջէ
ունիլ գհաւասարութիւն ինչ , կամ ըստ փարթա-
մութեան , կամ ըստ պատուոյ , կամ ըստ իմաս-
տութեան , և կամ ըստ խոհեմութեան . ապա թէ
ոչ փոխարկի բարեկամութեանն անուն կամ ՚ի
շահատիրութիւն , կամ ՚ի շողոքորթութիւն , կամ

՚ի գասառութիւն , և կամ ՚ի կուրօրէն հաւա-
նութիւն . վասն որոյ անհաստատ է բարեկամա-
թիւնն՝ ուր չիք հաւասարութիւն ինչ :

ԷԳ . Հոգին բարեկամութեան է անկեղծ սէր .
զի առ անց նորա բարեկամութիւնն է զի անկեն-
դան . կամ է պաճուճապատանք ինչ՝ որ արտաքին
երեւութիւ ցուցանի լինել մարդ , այլ իրօք է կեղ-
ծիք . և որպէս դիւրաւ կործանի շինուածն՝ որ չի-
ցէ հաստատեալ ՚ի վերայ վիմի , ոյնապէս փութով
եղծանի բարեկամութիւնն՝ որ չիցէ հիմնեալ ՚ի
վերայ սիրոյ :

ԷԳ . Բարեկամութիւնն որպէս գեղեցիկ է
տեսլեամբ , նոյնապէս և փափուկ է բնութեամբ .
վասն որոյ և գոյզն պակասութեամբ ծանր հիւան-
դանոյ , և փոքր ինչ անհոգութեամբ մեծամեծ
վէրս երեւեցուցանէ . քանզի մարդիկ չնշին նետիւք
սիրելեաց կարեվէր խոցին ՚ի սիրոտ՝ քան հրացայտ
գնատակօք թշնամեաց : Բաղաւմ անգամ սաստիկ
սէր բարեկամութեան յանհնարին տտելութիւն
փոխարկի անզգուշութեամբ , նմին իրի միշտ կա-
րօտի փոխադարձ դարման մատուցանելոյ , զի և պ
քան զես զօրասցի :

ԽԵ . Յաճախել առ բարեկամն առ անց կարեւոյ
ինչ առթի՝ բերէ զտազտիութիւն և զանպատ-
ռութիւնն : Եւ կարի իմն յամը և անագան երթևե-
կութիւնն հալոցուցանէ զջերմութիւն սիրոյ . ըստ
առածին , որ հեռի է յաշոց , հեռի է և ՚ի մոտաց .
ապա որ կամի արգոյ և սիրելի լինել յաշո բարե-
կամին , մի կարի յաճախեսցէ , և մի կարի անագան
նեսցի , այլ մոտացն ընակօք կշռեսցէ զժամանակն :

12. Անդ է կատարեալ բարեկամութիւն, յորժամ երկոքին ունին զմի սիրու և զմի հոգի . զորինչ կամի մինն՝ կամի և միւսն, և զորինչ առէ մինն՝ առէ և միւսն, և եթէ դադարի մինն՝ դադարէ և միւսն, մինչև երկիլ նոցա՝ թէ ոչ են երկու անձինք, այլ մի հոգի՝ յերկուս մարմինս բնակեալ։ Անդ է տեսանել անձանձիր քաղցրութիւն կենաց, և յաւերժ ուրախութիւն. ՚ի միասին կեան, և ՚ի միասին մեռանին. մանաւանդ զի մեռանին և բնաւիսկ ոչ, զի ունին ներգոյացեալ ՚ի հոգիս իւրեանց զսէր անմահ և մշտնջենաւոր։

13. Աշպն է կատարեալ բարեկամութեան՝ եթէ ոք յանձն արասցէ զօգուտն իւր ՚ի կամ բարեկամին, և ասիցէ . զայն օգուտ համարիմ ինձ, զոր կամիցի առնել բարեկամն իմ ինձ։

14. Արժան է սիրոյ և բարեկամութեան, որ մոռանայ զերախտիս բարեկամի իւրոյ. զի է մարդ՝ որ բազում անգամ զմեծամեծ բարերարութիւնս ընկալեալ է յումեքէ, և մինչ ըստ դիպաց իմն յայլում նուագի ոչ դատանէ զոր խնդրէ, վաղվազակի մոռանայ, և առ ուն հարկանէ զայն ամենայն երախտիս նորա. խոժոռի և անգոսնէ զբարեկամն։

15. Ոչ է ճշմարիտ բարեկամ, որ յորդորէ զբարեկամն իւր գործակից լինել ընդ ինքեան ՚ի մնաս այլոց . այսպիսին կերպարանօք զանուն բարեկամութեան կրէ, բայց իրօք զթշնամութիւն նիւթէ . զի տայ նմա մեղանչել, գործակից առնելով անօրէնութեան իւրոյ։

16. Բարեկամութիւնն ծնանի ՚ի սիրոյ . իսկ

սիրոյն ոչ է հարկ՝ զի սիրեցեալ առարկայն իցէ
մերձաւոր, քանզի կարէ սիրել և զկարի հեռա-
ւորն և զբացակայն։ Ուստի որք պատճառաւ
հեռաւորութեան տեղւոյ՝ դադարին ՚ի սիրելոյ
զընկերն իւրեանց, և ոչ ջտնան առնելնմա զբա-
րիս, ոչ են կատարեալ ՚ի սէրն։

ԱՅ. Օայրանան ցաւք սրտի, մինչ ՚ի վշտանալ
ուրուք՝ ուրախանան այլք։ Թեթևանան ցաւք,
մինչ ընդ վշտացելոյ ուրուք կարեկից լինին այլք։
Ապա որ ունի զկիրս ցաւոյ ՚ի սրտի, թագուսցէ
զայն ՚ի թշնամոյ, զի մի ուրախացին, և ինքն
առաւել տրտմեսցի. և յայտնեսցէ բարեկամին,
զի ՚ի վշտակցիլ նորա՝ թեթևասցի ինքն ՚ի ցաւոց
և միփթարեսցի։

ԱԲ. Ճշմարիտ բարեկամ՝ այնոքիկ են, որք վո-
փոխակի բառնան զծանրութիւն և զցաւս իրե-
րաց. բայց գտանին և ոմանք, որք բանիւ շըր-
թանց կոչեն զընկերս իւրեանց բարեկամս և սի-
րելիս, այլ ՚ի սրտէ համարին զնոսա որպէս բեռ-
նաբարձ գրաստո. զի միշտ բառնան զըեռինս
իւրեանց ՚ի յուս նոցա, իսկ ինքեանք ոչ երբէք
մերձենան ՚ի բեռինս նոցա, և սոքա են կեղծա-
ւորք, և սուտ բարեկամք։

ԱԳ. Զէ արժանի սիրոյ, որ ոչ սիրէ զիմն՝ որ-
պէս պարտն է սիրել. վասն զի կամ ոչ ճանաչէ
զյարդ նորա, կամ արհամարհէ զնա։ Եշտն ճը-
մարիտ սիրոյ ոչ են բանք լեզուի, այլ՝ արդիւնք
գործոյ։ Ոչ է անդ սէր, ուր թագաւորէ իմ և քո։

ԱԴ. Օայն պարտէ ճանաչել բարեկամ, և պինդ
ունել ՚ի սիրելութեան, որ աղդ առնէ զսիալանա-

քո առանց իրեք շահասիրութեան . զի թէ և խիստ իցեն բանքն , և ընդդէմ ախորժակին քում , հաճեաց ընդունիլ , զի հային յօգուտ անձին քո : Յիմար է նա՝ որ առէ զբարեկամ իւր , զի յանդիմանի ՚ի նմանէ :

ԱԵ . Ո՞ի զայն միայն համարեսցիս թշնամի՝ որ հասուցանէ անձին քում չարիս , այլ և զայն՝ որ բարեկամ լինել կարծի , բայց ոչ ազդ առնէ ըդսխալանս քո . և վասն շահասիրութեան իւրոյ ներքողէ զբեզ կեղծուատիր գովեստիւ , յորմէ խաբեալ անկանիս ՚ի վասնդ , և լինիս վասանուն :

ԱԶ . Ճշմարիտ բարեկամութիւնն պարտաւորէ զամենեսեան զբարիս կամիլ , և առնել ընկերին . իսկ խրատել և յանդիմանել զեղբայրն՝ որ իցէ սխալեալ ՚ի բանս կամ ՚ի գործս , է կամիլ և առնել ընկերի իւրում զբարիս . ապա որ կարող գուլով զանց առնէ , և անփոյթ լինի ՚ի գարձուցանելց զեղբայր իւր ՚ի մեղաց խրատուք կամ յանդիմանութեամբ , մեղանչէ ընդդէմ սիրոյ պատուիրանին :

ՈՀ Ըստ զօրէնս ճշմարիտ բարեկամութեան , որ տեսանէ զօրդի բարեկամի իւրոյ անխրատ՝ և ոչ խրատէ կամ յանդիմանէ :

ԱԵ . Բնական և աստուածային օրինօք պարտաւորիմք նպաստիւք ընչեց օդնել ընկերին , մինչ է ՚ի կարօտութեան ըստ մարմնոյ . ապա առաւել ևս հարկ ՚ի վերայ կայ նպաստիւք խրատուց և յանդիմանութեան օդնել կարօտելցն ըստ հոդայ : Աքժանի է վարձուց որ առաջնորդէ ումեք ընդ ճանապարհ ուղիղ . բայց ոչ է պարտ յեր-

կուանալ՝ թէ մեասցէ անվարձ, որ արգելու զոք գնալ ընդ ճանապարհ մոլար :

Ա. Հզըսցրական յանդիմանութիւնն առ հաւասար և համապատիւ բարեկամս 'ի գործ դնի . զի իշխանաւոր ոք, կամ գատաւոր մինչ յանդիմանէ զյանցաւորն, այն է սաստ կշտամբանաց. հեղինակութեամբ իւիք . իսկ եթէ փոքրն յանդիմանէ զմեծն, այն է յանդգնութիւն : Այլ խոհեմութեամբ և զգուշութեամբ իւիք որդին զհայր իւր, կրտսերն զերէց եղբայր իւր, կինն զայր իւր, և հպատակն զիշխանն իւր կարէ խրատել, և ըզգործ յանդիմանութեան 'ի վար արկանել . բայց այն ոչ ասի յանդիմանութիւն՝ այլ ազգարարութիւն, իբրև զի յուշ առնէ նմա զանպատշաճութիւն բանից, կամ գործոց, յորոց կամի խորշեցուցանել զնա :

Ա. Յանդիմանութիւնն՝ յառաջ եկեալ 'ի սիրոյ բարեկամութեան, պահանջէ ունել զայտուիկ պայմանս . նախ՝ զի յանցանիքն իցէ ստոյդ . զի յանդիմանութիւնն վասն տարապարտ յանցաւորութեան կարեվէք խոցէ զսիրտ : Երկրորդ՝ զի իցէ համաշտի յանցանացն, կամ 'նուաղքան զարժանն . զի որ տարապայման ձգի 'ի յանդիմանելն, փոխանակ զմէքս բուժելոյ առաւել և զայրացուցանէ : Երրորդ՝ զի իցէ 'ի դէպ ժամու, և առանձին . զի յանդիմանութիւն որ լինի առաջի բազմութեան, ոչ է խրատ զգաստաւթեան՝ այլ թըշնամանք : Չորրորդ՝ զի իցէ ցաւակցաբար՝ մեղմ և ազգու բանիւք . զի որ հոգւով վրէ ժխնդրութեան և խիստ բանիւք վարի, տեղի տայ յան-

դգնութեան։ Հինգերորդ՝ զի իցէ յոյս ուղղութեան։ զի առաւել վտանգաւոր է յանդիմանել զանուղղայն։

Խ. Որ զպակասութիւն բարեկամի իւրայ՝ ոչ ազդ առնէ, և ոչ խրատական բանիւք յանդիմանէ, զի մի բարեկամն վշտասցի՝ կամ խոժուեսցի, ոչ է նա Ճշմարիտ բարեկամ՝ այլ մանաւանդ թըշնամի, զի գործ թշնամութեան է՝ կարող գոլով ոչ ուղղել զսխալանս բարեկամին։ յորմէ զհետ գան նմա և այլ մեծամեծ վնասք, զորս եթէ կամեսցի յայնժամ՝ ոչ կարէ խափանել։ Վաղ եթէ խրատեսցէ, և նա ոչ անսայցէ, առցէ ընդ իւր և զոմանս ՚ի բարեկամաց, և խրատեսցէ նոքօք, զի գոնէ շահեսցի զեղքայրն։ Իսկ թէ և նոցա ոչ անսայցէ, ասասցէ առաջնորդին եկեղեցւոյ, որով ազատեսցի ՚ի պարտաւորութենէ։ որ եթէ նմա ևս ոչ լուիցէ, եղիցի իբրև զհեթանոս, և ըզմաքսաւոր։ Ո՞ադի. Ժ. 17.

“ Լ աւ Են հարուածք բարեկամի, չան զիամակոր համբոյրս թշնամոյ”։ Առակ. Իէ. 6:

“ Լ աւ Ե յայտնութիւն յանդիմանութեան՝ չան զբարեխամութիւն ՚ի ծածուակ”։ Առակ. Իէ. 6:

“ Բարեկամ հաւապարիմ՝ աշխարակ ամուր, և որ եգիս զնա՝ եգիս գանյ”։ Աիրոք. Զ. 14:

“ Օ հաւապարմութիւն սպացիր ընտ բարեկամի յաշապատթեան նորա. զի և ՚ի բարիս նորա ուրախասցիս ո. Աիրոք. Ժ. Բ. 28։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ.

ՀՏԻ ՔԱՍՏԻՐՈՒԹԻՒՆ

Ա. Ապարինութեանց ոմանք են առանձնական, որք միայն զգործողս իւրեանց մխիթարեն. որպիսի է աղօթք, և ծնրադրութիւն, բարեպաշտ խոկումն զլստուծոյ և զաստուածայնոց, զղջումն ՚ի մեղաց, ծոմալահութիւն, և պահեցողութիւն, և սյլ ապաշխարանաց գործք. և սոքա վերաբերին առ կրօնն։ Իսկ ոմանք են ընկերական, որք միան գամայն զգործողն և զընդունողն մխիթարեն. որպիսի է ողորմիլ կարօտելոց, աղատել զգերիս. ծառայել հիւանդաց, մխիթարել զտրտմեալս, բարիս առնել հասարակաց. և սոքա վերաբերին առ բարոյականն։

Եւ արդարեւ սոքա երկորին ևս են գովելի, բարի, աստուածահաճոյ, և վարձուց արժանաւոր. այլ ընկերական առաքինութիւնք՝ եթէ գործին առանց սնափառութեան, գովելի ևս են, և մեծագոյն վարձուց արժանի. զի ոչ միայն լինին յօգուտ և ՚ի շահ գործողին՝ այլ և ընկերին. մանաւանդ զի օրինակօք գործոց իւրեանց շարժեն զբաղումն բարերարել այլոց։ Իստ այսմէ և հիւրասիրութիւնն, որ ոչ միայն զհիւրընկալն ուրախացուցանէ՝ այլ և զհիւրն. որ և զայլ բաղում մասունս առաքինութեան պարունակէ յինքեան, այսինքն զմարդասիրութիւն, եղբայրսիրութիւն, բաղաքավարութիւն, օտարասիրութիւն, ողորմութիւն, խոնարհութիւն, բաղցրութիւն բարուց, և այլն։

Բ. 'Ամքաջ գիտէ թէ զինչ է լինել հիւրասէր և օտարասէր , որ երբեմն լեալ իցէ նժդեհ և պանդուխտ , չքաւոր կամ հիւանդ յօտար երկրի :

Գ. Ոչ է նա հիւրասէր , որ կոչէ ՚ի սեղան ըզ հայկատակո , կամ զքարեկամո ՚ի շնորհուկո նոցա , և ՚ի փառս անուան իւրոյ . այլ այն՝ որ զազքատս , զանցարկո , և զնժդեհո ժողովէ ՚ի տունիւր , կերակրէ և մսիթարէ զնոսա առանց փոխադարձ ակնկալութեան :

Դ. 'Դէմք զուարթունք՝ և քանք քաղցունք առաւել յագեցուցանեն զհիւրո՝ քան սեղան ըազմախորտիկ և անուշահամ ըմպելիք :

Ե. Ո՞վի և խելադար է հիւրընկալուն՝ որ այս նու գիտմամբ ասպնջական լինի օտարաց , զի եւ կեալ մատուցեն ինքեան զպատիւ և զմեծարանս :

Զ. Որ աւաջի հիւրոյ մեծարանէ զանձնէ , ոչ միայն զվարձս իւր կորուսանէ , այլ և որպէս զամբարտաւան նախատի . Քանզի հիւրն կամ պարտի գովիւլ զմեծարան տանուտէրն՝ և լինել մարդահաճոյ , կամ լուռ կալ՝ և երեիլ տմարդի : Լու է ՚ի սեղան քաղցրախօս ազքատի ուտել հաց աշոռած , քան ՚ի կոչունս մեծարան փարթամի՝ կերակուր համագամ :

" ԲԵՐԵՄ զնաց տաղելց ։ , և զազմառս անյարկս պար ՚ի պոռն ։ . եին պեսանիցե՞ զերի՝ զգեցոյշանիշեր ։ . Եսաց . ծԸ ։ 7 :

" Ի պետս ոբեց հաշրեեցարաց . զնիւրասիրո-թեան զնեփ երլայք ։ . Հռօմ . ԺԲ . 13 :

“ Եշտայրովութիւն հասպատեայի առ յէլ . զջարասի-
րութիւն ք' ճռաւանայք ; զի այնու ոմանչ յանդեպս ընկալան
պէտշտակ ” . Երբայ . ձ.Գ . 1 :

“ Եսի քան զամենայն սէր սէրս ունել ընտ դժեանս . զի
սէր ծածիկ շբաղութիւն մեղաց , օպարասէրք լնել ընտ դ-
ժեանս առանց պրանջլը ” . Ա . Պէտ . Դ . 8 :



Գ.ԿՈՒԽԻ ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ԱՌԱՋՆԵՐՈՐԴԻ

ԲԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա . Երջանիկ է քաղաքն՝ որոյ բնակիչը են
Ժրաղանիք , և վայելեն ՚ի վարձս տշխատութեան
իւրեանց . ատացեալ ունին միայն զհարկաւոր պի-
տոյս կենաց , և փախչին յաւելորդաց և ՚ի զուար-
ձալեաց . կահք և կարասիք՝ հանդերձ և տուն՝
կերակութք և ըմպելիք համեստ են և չափաւոր ;
Ծնդ է աեսանել խաղաղութիւն քաղաքացւոց՝ և
միաբանութիւն ընտանեաց , հպատակութիւն օ-
րինաց՝ և հնաղանդութիւն մեծաց , ատել զմար-
դահաճոյս՝ և սիրել զբարեսիրոս , և կեալ աղատ
և ուրախ :

Բ . Որ ոչ բաւական համարեալ զկարեւորս ան-
ձին զօր ունի , զհետ լինի վայելչականաց՝ որք ՚ի
զարդ և ՚ի զուարձութիւն վերաբերին , զրկի և
՚ի կարեւորաց անափ . և որ չէ գոհ ընդ վիճակ

իւր՝ կորուսանէ և զայն . և ապա խնդրէ , և ոչ
կարէ գտանել :

Դ . Ասկաւապէտն հանդիսաւ և անտրոտունջ
վարէ զկեանս իւր . զի ստկաւ են իրք կարեռը ,
որոց հարկաւ պէտս ունիցի , և զայնոսիկ ևս գիւռ
բաւ կարէ գտանել : Աչ տանջի ՚ի ստանալ զաւեւ
լորդս՝ որք սնուցանեն զննափառութիւնն , և ոչ
տրտնջէ յորժամ չունիցի զնոսա , զի ոչ կարօտի
նոցունց :

Վանդի որ բազմաց կարօտի , անհանդիսաւ ջա-
նայ ստանալ զնոսին . և մինչ ոչ կարէ ՚ի ձեռս բե-
րել տանջի և տրտնջէ : Խակ տրտունջն ոչ միայն է
ամբոխիչ մտաց և խարտոց կենաց , այլ և ձանձ-
րացուցիչ ընկերոց . զի ամենեքին զզուին և տաղտ-
կանան և ՚ի բաց հեռանան ՚ի տրտնջող բերանոյ ,
վասն որոյ և ոչ ոք կամի կենցաղավարիլ կամ բա-
րերարել այնպիսւոյն : Օ ՚ի այս խակ է բարք տըր-
տընջողին , անգոհ լինել զբարերարէն՝ թէ և բաղ-
մօք իցէ երախտաւորեալ ՚ի նմանէ . և մեծամեծս
տրտնջալ՝ եթէ փաքք մի ժամանակ անտես եղեալ
իցէ ՚ի բարերարութենէ նորա :

Դ . Համեսան սակաւուք շատանայ՝ որք կարե-
ւորք են ՚ի գարման կենաց , վասն որոյ միշտ մը-
տադիւր կայ և ուրախ : Խակ փառամոլն հանապաղ
ջանայ ՚ի ստանալ զարծաթ՝ ՚ի պէտս վայելչակա-
նաց , վասն որոյ անհանդիսաւ տառապի ՚ի հոգս և ՚ի
զբաղանս : Եա՛ բաղում անդամ անարժան միջո-
ցօք հնարի շահիլ , զի մի նուազութիւն ինչ բեր-
ցէ պատուոյն իւրոյ , սմին իրի չարաշար տանջի ՚ի
խղճէ մտաց : Եպա բարի է լինել չափաւոր և հա-

մեստ, և կեալ զուարթամիտ, քան լինել մեծատուն՝
բայց փառամոլ, և տանջիլ մոտք և մարմնով։

Ե. Օ յնչ առաւել ցանկալի մարդկութեանս
քան զայն՝ որ առաւել օգտակար է՝ ի պահպանել
զկեանս մեր երջանկաբար, ապա զիարդ չիցէ յա-
ւէտ ցանկալի բաւականութիւնն կարեորօք, որ
պահէ զկեանս մարդոյ զուարթ, առողջ, և երկար։

Զ. Վաղաքական կենցաղավարութիւնն միջա-
կայնոց՝ է առաւել ապահով և հանդիսա քան զայլ
վիճակս կենաց, զի եթէ լինիցի ոք կարի իմն նը-
ւաստ, այլք իշխեն նմա, վասն որոյ կայ միշտ ՚ի
տառապանս նեղութեան և վշտաց։ Եւ եթէ լի-
նիցի կարի իմն յարգոյ, ինքն իշխէ այլոց, վասն
որոյ կրէ հանապազ զթշնամութիւն ՚ի յաշաղկո-
տաց։ Իսկ որ զմիջակայինն վարէ զկենցաղ, ոչ
գլխովին ընկճեալ է ընդ իշխանութեամբ ուրաւք
իբրև զնուաստ ոք, և ոչ կրէ զթշնամութիւն ՚ի
յաշաղկոտաց իբրև զիշխանաւոր ոք, վասն որոյ
միշտ կայ խաղաղ և մտադիւր, չափաւոր պի-
տոյիւք շատացեալ։

Է. Տրտմութիւն է սրտի ըղձանալ բաղմաց,
և հասանիլ սակաւուց. և բերկրութիւն է հո-
գւոյ ըղձանալ սակաւուց, և հասանել բաղմաց։
Վպա մի՛ ցանկասցի ոք բազում ստացուածոց, զի
մի՛ տրտմեսցի յորժամ չկարիցէ ունել, այլ սակա-
ւուց և կարեորաց միտ գիցէ, զօրս դիւրին է՝ ՚ի
ձեռս բերել։ Եւ եթէ բաղմաց ևս հասանիլ նմա
դէպ լիցի, յայնժամ ուրախամիտ բերկրեսցի ան-
ձըն նորա, իբրև զայն՝ որ ՚ի պեղելն զերկիր գր-
անանէ զգանձ։

“ Ես եմ պատուի մի համով խաղաղութեամբ, ուն զբուհն է շենքօք և բարեօք լշամութեամբ ” . Առակ . Ժե . 1 :

“ Ըստ Հայութակ մեծ ասպարագու լին է բաւ-
կանութեամբ հանդերձ ” . Բ . Տիմ . Զ . 6 :



ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԿՐԱԳՈՒՆԴՈՒԹԵՒՆ

Ա. Երկիրն է մայր գթած, և ոչ գագարի երբեք ՚ի բաշխելոյ զսլարդեւո բարիս որդւոց իւրոց, և առնել զնոսա վարթամ։ և ոքքան առաւելուն ՚ի ջանս գործել զնա, այնքան առաւել արդիւնս շահեկանս մատուցանէ նոցա . ապա պարտաւոր գտանին բնակիչք՝ եթէ թողուն զերկիրն անգործ և զանձինս կարօտ :

Բ. Պարտէ ջանալ և աշխատիլ յայնպիսի արհեստա, որով մնանի և պահպանի կեանք մարդոց. և ահա այսպիսի է արհեստն մշակութեան: Ծովզղի աշխատութիւնն առողջ պահէ զմարմինն և զօրացուցանե, իսկ ծուլութիւնն՝ հիւանդագին առնե, և տկար:

Գ. Եարեքաստիկ վարթամութիւն՝ մշակութիւնն է համարելի, որ աննախանձ լնձեռէ ըզ ձշմարիս հարկաւորս կենաց մարդկան. իսկ թէ

կարելի է մարդոյ գործելով զերեսս երկրի ստանալ զհարկաւոր պէտան, ուրեմն տարապարտ տաժանի ՚ի խնդիր ուկւոյ և արծաթոյ՝ ական հատեալ ՚ի խորս երկրի :

Դ. Բազումք ՚ի մարդկանէ զերջանիկ հարստութիւնն՝ որ զետեղեալէ ՚ի մշակութեան երկրի, մահու չափ պատերազմաւ և արեան հեղմամբ զօր ամենայն տառապին գտանել. և ոչ գիտելով թէ ուր իցէ, ՚ի զուր թարթափին ընդ ամենայն երկր : Չէ յանդունդս խորոց թաքուցեալ, այլ կայ ՚ի պատրաստի ՚ի ներքոյ ոտից իւրեանց . եթէ գործեն զնոտ, ոչ միայն զդարման կենաց գտանեն՝ այլ և զիսազազութիւն, զառողջութիւն, և զերկարութիւն կենաց՝ աւելի քան զոր կարծեն այլով եղանակաւ ունել :

Ե. Անափառութիւնն է ազքիւր թշուառութեան . զի բազումք վասն չափազանց վայելութիւն ՚ի կարեւորացն ևս զրկին, և տառապին ՚ի կարօտութեան . ապա որք հարկաւոր պիտոյիւքն չտանալ կամին, գտանեն զինդութիւն և զիսազազութիւն :

Զ. Առաւելքան զամենայն արհեստո՝ որք ծառայեն ՚ի դիւրութիւն՝ ՚ի զարդ՝ և ՚ի վայելութիւն մարդկան, պարտ է ծաղկեցուցանել զարհեստա՝ որք հարկաւորք են կենաց, որպիսի է երկրագործութիւն, հովուութիւն, դարբնութիւն, ոստայնանկութիւն, և հիւմնութիւն: Ճողովուրդք որք չտանան հարկաւորօք, և ոչ զհետ կրթին վայելուականաց, կեան անմեղ և հանդիստ կենօք . ոչ տանջեն զայլս անիրաւ յափշտակութեամբ, և

բռնութեամբ . և ոչ արկանեն զանձինս 'ի չարաշար աշխատանս առ ՚ի ստանալ զաւելքրդս , որք ոչ են կարեղը կենաց՝ այլ անոտի վայելչութիւն : Ինութիւնն սակաւուք սովոր է շատանալ , իսկ ցանկութիւն ոչ երբէք գիտէ ասել բաւ :


Է . Այրոյ և յարգանաց են արժանաւոր ճարտար արհեստագէտք , զի կազմեն զարհեստակերտուածս հանձարաւոր , որք թէպէտ են գործ ու շիմ մտաց , այլ ոչ հարկաւոր 'ի պէտս կենաց : Իսկ զիարդ չիցէ գովելի մշակն , որոյ գործ է հարկաւոր և կենցազօդուած , և ոչ ըստ գործոց ճարտարաց 'ի վայելչութիւն մարդկան հնարեալ . զի քըրտնաջան վաստակոցն արդեամբ կերակրէ զքաջանձար արհեստաւորս , և զամենայն վիճակ մարդկային աղգի :

Ոչ է պարտ անդունել զմշակութիւնն . զի ոչ որ աւողջ միտս ունի , արհամարհէ զգործ ինչ պիտանի՝ արարեալ ձեռամբ անհանձար գիւղականի , այլ հաճեալ հաւանի ընդ այն , և մեծ շընորհ և երախտիս անձին վարկանի :

Ը . Հերեկոն թագաւոր Աթենացւոց՝ որ եղիտ զկիրառութիւն արծաթի գրամոց , եղ օրենըս հպատակաց գործել զերկիր , և պաղովք նորա սնանիլ . գարմանել զիսաշինս , և զիաթն նոցա առնոււլ 'ի կերակուր , և զասրն 'ի ծածկոյթ , զի ասեր , երկիր տայ անպակաս զպտուղիւր 'ի սնունդ մարդկան , մինչ աշխատին 'ի նոսա մարդիկ : Իսցց յորժամ ետես՝ եթէ 'ի պատճառս գրամոց թողին զերկրագործութիւնն , և ապականեցին զքարս իւրեանց , և յախտէ արծաթսիրութեան յաճախեւ :

ցան չարիք ՚ի վերայ երկրի , զղջացաւ յօյժ , և
առ դառնութեան սրտին թողեալ զիշխանութիւն
իւր , առանձնացաւ յանմարդի խորշ լերանց , և
եկաց անդ աղքատ և թափագին մինչեւ ցվախ-
ճան կենաց իւրոց :

“Ու ո՞չ կամիցի գործելու կերպէ մ’” . Բ. թես. Գ. 10:



ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

ՏԱՌԱՅՑՈՒԹԻՒՆ

Ա. Ծառայ կամ սպասաւոր՝ որ միայն զդիւ-
րութիւն անձին ընտրէ , ոչքարւոք ծառայէ տեառն
իւրոյ . զի ծառայ բարի յանձն առնու կրել զնեղու-
թիւն յօդուտ տեառն իւրոյ . իսկ ծառայ վատ խոյս
տայ ՚ի գժուարութենէ , և ոչ օգնէ նմա ՚ի ժա-
մանակի հարկաւորութեան :

Բ. Օ յի՞նչ օգուտ է շրթամբք խօսից երեխլ
տիրաձան , և գործով գտանիլ դաւաձան . զի ոչ
լեզուն է որ տիրասէր առնէ , այլ գործն՝ որ յա-
ռաջ գայ յանխարդախ սրտէ . ծառայ օգտախրն-
դիր ոչ կարէ լինել հաւատարիմ տեառն իւրոյ ,
և ոչ բարեջան ՚ի վաստակս :

Գ. Ծառայ որ նենդէ տեառն իւրում , և յա-

Եթ ՚ի կողմ՝ թշնամւոյն, արժան է զի պատժեսցի յայնմանէ՝ որում եղեւ թեւակից . զի որ իւրում բարերար տեառն գտաւ գտաւածան, ոչ այլ ուժեք յուսալի է լինելնմա հաւատարիմ:

Դ. Կամք ծառային պարտի լինել այն՝ զոր ունի տէր իւր . սիրել զոր սիրէ, և ատել զոր ատէ . զի որ ջանայ խոնարհեցուցանել զտէրն ՚ի կամն իւր, և գործել ըստ հաճոյս անձին իւրայ, ոչ է ծառայ՝ այլ տէր : Եւ ոչ իսկ արժան է ծառային քննել զպարագայս գործոյն, ընտրել կամելով ըդդէպն և զանդէպն, այլ միտյն կամակար հնազան գութեամք ՚ի կատարումն պատուիրանին փութալ:

Ե. Հաւատարմութիւն սպասաւորին երեխի յիւրաց գժուարինս . զի՞նա է հաւատարիմ, որ եռանդագին սիրով և զուարթութեամք տանի վշտաց . իսկ որ խոժոռի և արտնջէ՝ անարժան է սպասաւորութեան և վարձուց : Դոյզն մի ծառայութիւն մեծաւ սիրով առաւել հաճելի է քան մեծ ինչ աշխատաւթիւն արարեալ նուազ սիրով :

Զ. Հնազանդութիւն ծառային յառաջ գայ ՚ի բարերարութենէ տեառն . և ուր առաւելէ բարերարութիւն, անդ առաւելէ հնազանդութիւն :

Է. Շնդդէմ արդարութեան է զաշխատաւոր սպասաւորս թողուլ անխնամ ՚ի ծերութեան նորա կամ ՚ի տկարութեան . զի որ մինչ կարողն էր ծառայէր հաւատարմութեամք, արժան է զի խնամարկեսցի ՚ի տկարութեան իւրում, ապա թէ ոչ ոչ երբէք գտանիցի հաւատարիմ սպասաւոր :

Ը. Եթէ տեարք լինէին բարի, ոչ գտանէր ծառայ չար . զի ծառայք ոչ այլ իմլիք ցանկան և հե-

տեին, բայց եթէ նմանող լինել տեառն իւրեանց,
և 'ի պատիւ նոցա հասանել:

Թ . Այն է կատարեալ ծառայութիւն առ Առ
տուած, որ յառաջ գայ միայն 'ի սիրոյն Աստու-
ծաց . և ձշմարիտ սիրողն յանձն առնու կորուսա-
նել զինչս, զարասիւ, զսիրելիս, և զանձն իսկ,
զի մի կորուսցէ զսէրն Աստուծաց : Անկատար ծա-
ռայութիւնն է՝ որ յառաջ գայ յերկիւղէ պատ-
ժաց . զի որ առ երկիւղի ծառայէ և հնազանդի,
առաւել զինքն սիրէ քան զԱստուծած :

“ Օ ծառայ ճշմարիտ որ վասպակիցէ տեղ՝ մ' զայրացու-
ցե՞ . և զվարյիան որ առեալիցէ զանյն իւր ՚ի վերայ ա՞-
մ' լըսեր ” . Այրաք . է . 22 :

“ Օ ծառայ ծիր սիրեա դու, և յաղապութենէ իարօտ
շնա մ' առներ ” . Այրաք . է . 23 :

“ Օ առայն հեաղանդ լըրու պերանց յերոց յամենայ-
նի . մ' առ ականէ ծառայութեամի իբրև մարդահամոց ” .
Առզոս . գ . 22 :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՅՈՐԴ

ՀԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ♫ Կեղեցիկ դուստր խոնարհութեան ՚ի
դէպ է անուանել զնազելի հնազանդութիւնն , զո-
րյ զբազմապատիկ ձիրս շնորհաց՝ վայելողք միայն
ձանաչեն . զի բարոյապէս ազատ կացուցանէ ըզ-
կամս մարդոյ , որ ազատ գոլով բնականաբար հը-
նազանդութեամբ բանին , անհնազանդութեամբն
նմա՝ եղեալ է ծառայ կրիցն բարոյապէս . և այս
ազատութիւն՝ է անաշխատ թագաւորութիւն ,
առանց պատերազմի յաղթութիւն : Անդ է տե-
սանել ամենայն թշնամեաց պարտութի . անդ վեր-
ընձիւզին երիներանդ ծաղիկք խաղաղութեան .
անդ բարգաւաճին կենցազօդուտ պտուղք սիրոյ
և խնդութեան :

Ապաքէն որդիք մարդկան , որք միանդամ ցան-
կայք կցորդակից ձեղ ունել զվայելագեղ օրիորդն
խոնարհութեան զհնազանդութիւնն՝ որպէս և
կամի Աստուած , փութացարուք ընդ առաջ ելա-
նել նմա և ողջագուրել . առեալ ածել զնա ՚ի սե-
նեակ սրտի ձերոյ , և իբրև դշխոյ պանծալի բաղ-
մեցուցանել ՚ի գահոյս կամաց և յօժարութեան
ձերոյ , որպէս զի և դուք թագ ականակուռ կա-
պեալ ՚ի գլուխ՝ պսակեսջիք փառք :

Բ. ♫ Հնազանդութիւնն ենթագրէ զներգործու-
թիւն ինչ գրական , կամ ՚ի ներքս յինքեան , և
կամ արտաքս : Ի ներքս , որպէս հնազանդիլ կամաց
առ բարւոք առ աջադրութիւն մոտց , և կամ կա-

միւզեր ինչ ըստ կամաց հրամայողին։ Եւ առ արտաքս, որպէս հայիլ աչօք, խօսիլ լեզուաւ, գործել ձեռօք, և այլն։ Ապա պաշտօն հնազանդութեան՝ է գործողութիւն ինչ դրական, գործադրիչ այնմ ամենայնի՝ որ է վայելուց օգտակար և բարի, առաջադրեալ՝ մոտաց՝ կամ՝ ի հրամայողին։

Գ. Հնազանդն ոչ ունի զյատուկ կամն, զի կամքնորա՝ է կամքն հրամայողին։ և այսու ոչ եթէ բառնի անձնիշխանութիւն մարդոյ, այլ առաւել հաստատի։ Օ ի մեծ իշխանութիւն է մարդոյ այնպէս կառավարել զկամն իւր, մինչև ամենայն ակնարկութեան մոտաց հնազանդեցուցանել, զորս միտքն յատուկ ճանաչմամբ իւրով օգտակար համարի, և առաջադրէ նմա առնել։ Ապա թէ ոչ՝ մարդն լինէր անկարող՝ ի շարժել զկամն իւր, որով բառնայր խօսառ ազատութիւն անձնիշխանութեան։ զի կամքն գոլով բաղձանք իմն կոյր՝ ոչ կարէր ընտրել զբարի և զչար, եթէ ոչ հնազանդէր մոտաց։

Ուստի մինչ միտքն տեսնեալ զօդուտն անձին իւրոյ՝ յորդորէ զկամնն հնազանդիլ կամաց այլում, արդէն միացեալ է ընդ նմա։ և այնուհեաւ այն ոչ է կամք այլոյ՝ այլ կամք իւր, և իբրեւ իւրոյ ինքեան հնազանդի ազատաբար։ Ապա ուրեմն որ ազատ կարողութեամբ ենթարկէ զկամն իւր կամաց այլում, զոր սեպհականեալ ունի ինքեան իբրեւ յատուկ կամք, ոչ եթէ կորուսանէ զանձնիշխանութիւն իւր, այլ առաւել հաստատէ։

Դ. Հնազանդիլ կամացն Աստուծոյ՝ բնական է ամենայն ստեղծուածոց, ըստ որում Աստուծ է հեղինակ բնութեան, ուստի և յաւիտենական

անհեղի օրինացն Աստուծոյ հնազանդին ամենայն
արարածք . իսկ հնազանդիլ օրինացն Աստուծոյ՝
է հնազանդիլ աստուածային կամաց , զի՞ նմանէ
է օրինագրեալ :

Արդ՝ օրէնքն աստուածային առ հաստատուն
և անեղծանելի մնալոյ տպաւորեցան ՚ի միտս մարդ-
կան , որք կոչին բնական օրէնք . կամ՝ աստուածային
յայտնութեամբ ՚ի գիր արձանացան , որք և ասին
գրաւորական և շնորհական օրէնք , զորս մարդիկ
օրինագէտք՝ կամ՝ որոց յանձն է պաշտպանութիւնն
օրինաց , գուն գործեն հանապազօր հրատարակել
ամենեցուն . և որք լսենն՝ պարտաւորին հնազան-
դիլ , և ՚ի կատարումն նոցին փութալ :

Են և օրէնք եկեղեցական և քաղաքական , որք
թէպէտ չեն յատկապէս հրամայեալ Աստուծոյ ,
սակայն դիմեն ՚ի լրումն կամացն Աստուծոյ . զի
եկեղեցականն հսցի ՚ի բարեկարգութիւն ճշմա-
րիտ կրօնի , և քաղաքականն ՚ի բարւոք կտուալա-
րութիւն հասարակաց : Աղա որ ոչ հնազանդի օ-
րինացս այսոցիկ , արժանի է պատժոց՝ իբրև հո-
կառակող աստուածային կամաց :

Ե. Հնազանդութիւնն պարտաւորէ զհնազան-
դեալն մինչև ցմահ . զի եթէ ոք ՚ի միումնուագի
անհնազանդ գտանիցի , զուաջին վարձսն ևս կո-
րուսանէ . զի ո՞ր շահ ստացի ոք ՚ի հնազանդու-
թենէ օրինաց , եթէ ՚ի վախճանի օրինազանց ել-
ցէ յաշխարհէ :

Զ. Վարդիկյինչ ինչ գործողութիւնս՝ զորս պարտ
էին առնել , պատճառանօք իմն կարեն զանձինս
անբասիր կացուցանել եթէ զանց արասցեն զնու-

քօք . այլ ոչ է մարթ անբասիր մնալ նոցա , եթէ
անհնազանդ գաանիցին այնց , որոց աստուած ային
կամ մարդկացին օրինօք պարտաւորին հնազանդիլ .
Ուստի պարտին ամենեքեան պատապարիլ ընդ
դրօշակաւ հնազանդութեան . և որ ոք ստամբա-
կեալ վտարանջէ , արժանի է պատուհասի , զի գը-
րեալ է . Որդի անհնազանդ ՚ի կորուստ եղիցի :

Ե . Ոչ ոք բաւական է յընթացս կենաց անվլոէպ
ընթանալ ինքնին առանց առաջնորդի . քանզի որ
ընդ անծանօթ ձանապարհ գնայ , պէտս ունի ու-
մեք լինել նմա ուղեցոյց : Իսկ մարդիկ մինչ գան
յաշխարհ՝ անծանօթ են կենցաղոյս ձանապարհի .
ուրեմն կարօտին ուսանիլ յայլոց զՃանապարհ ու-
ղեղ , ընդ որ ունին անցանել ՚ի կեանս իւրեանց ,
զի մի խոտորդիցին յուղեղ պողոտայէ մարդկօրէն
կենցաղավարութեան ՚ի յառս և ՚ի կիրս . և այս
լինի հնազանդութեամբ տեղեկագունից : Օ ի զօր
ոչ գիտէ ոք առ որ դիմէ , պարտի ուսանիլ յայ-
լոց , զի հասանիլ կարիցէ :

Մարդ՝ եթէ ոչ վարժեսցի ՚ի հմտագունից ՚ի
խօսս , ՚ի գործս , ՚ի վարս , և յուսմունս , անարդ
քան զանքանս գտանի : Ենքանք ՚ի կառավարու-
թիւն իւրեանց ունին դաստիարակ զբնութիւնն .
իսկ մարդիկ կարօտին լնուլ զայն ՚ի միմեանց , տը-
գէտք ՚ի գիտնաց ուսանելով , և տկարք ՚ի կարո-
ղաց ինամելով . և այսոքիկ բարեմասնութիւնք
ոչ կարեն յառաջանալ այլով իւիք , բայց եթէ
հնազանդութեամբ ուսուցչաց և ինամակալաց :

Եորածին տղայն ՚ի մնալն անխնամ՝ կամ մե-
ռանի , կամ այլանդակ իմն դառնայ . զի թէ ոչ

պնդեն՝ ՚ի խանձարուրս զփափուկ անդամն նորս ,
բայլէ իբրև զգորտ : Վասն որս Կատաւած ինա-
մածու բնութեան մարդկան՝ զառաջին ծնողս մեր
՚ի կատարեալ հասակի ստեղծ , և ՚ի միտս նոցա
տպաւորեաց զամենայն հարկաւոր գիտելիս , ՚ի
կառավարել զնորաքոյս մանկութիւնն մարդկայինս
բնութեան . և սերունդք նոցա վարժութեամբ
ուսեալ առ ՚ի նոցանէ՝ առ յետնսրդս աւանդե-
ցին . և խոհականագոյնքն ՚ի նոսաս ընդ գարս դա-
րս բազում փորձիւ զբազում կենցազօգուտ խը-
նամն ՚ի վերայ յաւելին մինչեւ ցարդ՝ ՚ի գիւրու-
թիւն կենաց մարդկան . բայց այս ամենայն եզե ,
և լինի հնազանդական հոգւով :

Օ ՚ի եթէ ոչ անսային յետինք ՚ի գործ դնել զսր
լուան և տեսին յառաջնոց , ոչ գտանիւր այժմ՝ օգ-
տակար ինչ՝ յաջորդութք հասեալ առ ժառանգս
նախնեաց : Ուստի հարկաւոր էր արդեացս , կամ
ունել զամենայն շնորհա՛ զոր ունէր նախկին մար-
դըն , կամ զուրկ մնալ յամենայն բարեմանու-
թենէն , և կամ կրել իւրաքանչիւրոց զբազում
տարժանմունս ՚ի գիւտ նոր ՚ի նորս կենցազօգուտ
պիտոյից : Կաղաքէն պարտ է համբակաց հնազան-
դիւ հմտագունից առ ՚ի ուսանիլ զամենայն հար-
կաւորսն , թէ արհեստականս , և թէ իմաստասի-
րականս , մանաւանդ զբարոյականս . որպէս զի կո-
րասցեն գնալ անմոլար յընթացս կենաց , և բար-
ւոք զելս գտանել ՚ի հովտէս տառապանաց :

Ը . Կշակերտք պարտին հնազանդիւ ուսուցչաց
իւրեանց յո՛ և իցէ տրհեստս , թէ յազատականս
և թէ ՚ի ծառայականս . և յանձն առնուլ զաշխա-

տանս կամակար սիրով, և ջանալը աստ չափու՝ մինչեւ՝ ի կատարեալ տեղեկութիւն։ Իսյց արդէն բազումք անհնազանդութեամբ յետս կացեալ, մեսն թերի յօդտաբեր ուսմանց, որով զրկին ՚ի բարեբաստութենէ, զոր մարթ էր նոցա ստանալ՝ եթէ հնազանդեալ ՚ի գործ դնէին զպատուերըս ուսուցչաց։

Իսյց և ուսուցիչք պարտին ուսուցանել անհնախանձ և փոյթեռանդն, զի մի համբակըն ՚ի մնավատակ տարժանմանց վշատեալ լքանիցին, ապա թէ ոչ հակառակ լինին Աստուծոյ, որ կամի զի մարդիկ օգնեսցեն միմեանց ՚ի բարի կրթութիւնըս ուսմանց։

Թ. Հնազանդիլ Աստուծոյ, ծնողաց, ուսուցչաց, իմաստնոց և ծերոց, և ևս բարեբարաց՝ որպիսի են թագաւորք, իշխանք կամ առաջնորդք, ոչ միայն գրական և շնորհական օրէնք, այլ և բնական օրէնք զնոյն օրինադրէ։ Որովհետեւ մարդիկ ծնանին տգէտ և անհրահանդ, կարօտին ապա ուսանիլ ՚ի գիտնոց՝ և հրահանդիլ ՚ի խնամակալուաց։ ուրեմն որ ոչ հնազանդի սոցա, չարաչար մեղանչէ, և պատժոյ է արժանի։

Արտաքին կերպարանաւ և բանիւ բերանոյ ոչ ոք զանձն օտարացուցանէ ՚ի հնազանդութենէն Աստուծոյ, բայց գործովք սակաւք գտանին, սակայն Աստուծած ոչ ՚ի բանո՝ այլ ՚ի գործս հայի։ Ապա որ կամի գիտել թէ իցէ հնազանդ Աստուծոյ, քըննեսցէ զգործս իւր, որ թէ իցէ աստուծային օրինաց համաձայն, է հնազանդ։ իսկ եթէ այլ ազգ ինչ իցէ, ծանիցէ զինքն անհնազանդ։

Ժ. Հնազանդութիւնն ոչ է անկարգաբար հրպատակութիւն կամաց այլում, այլ ունի շափ՝ կարգ՝ և կանոն. չափն է կարողութիւն հնազանդելոցն, զի ոչ ոք պարտաւորի բառնալ զլուծ՝ ի վեր քան զիար իւր : Կարգն է արժանապատութիւն այնց՝ որոց հնազանդիլ պահանջէ . որպէս հայր արժանապատիւ է քան զմայրն, երէց եղբայր քան զկրտաերն, թագաւոր քան զիշխանս, հոգեսոր առաջնորդք քան զաշխարհական տեարս, և չէ արժան զնուազն նախամեծար ընտրել քան զառաւելն : Խսկ կանոնն է աստուածային կամքն . զի սա է յաւիտենական կանոն ուղղութեան արպաւորեալ՝ ի միտս մարդկան, յորմէ ոչ ոք պարափ զարտուղել : Խսկ եթէ ոք ընդդէմ կամացն Աստուծոյ բռնաբարէ զոք՝ ի հնազանդութիւն յինչ և իցէ իրս և պատահմունս, եղծանէ զիանոն հրնազանդութեան, վասն որոյ ոչ ոք պարտաւորի հնազանդիլ նմա :

ԺԱ. Անտշխատ հնազանդին մարդիլ յորոց երկնչին, զի մի՛ վեաս ինչ կրեսցեն . բայց եթէ վեասն իցէ հոգեսոր, չէ արժան առ երկիւղի հնազանդիլ . զի լաւ է կորուսանել զինչս, զպատիւ, և զմարմնոյ կեանս՝ քան կորուսանել զհոգի :

ԺԲ. Ոմանք անվարձ ելանեն՝ ի հնազանդութենէ, զի հնազանդին այնոցիկ, որոց համբաւ և մեծութիւն՝ ի փառս աշխարհայինս բարձր է՝ և ոչ յաստուածայինս . և յանկանիլ սոցա՝ ի սնոտի հողմաձիգ բարձրութենէ, կորնչին և վարձք հնազանդելոցն նոցին : Այս ոչ է հնազանդութիւն առ աքինական՝ այլ ծառայական և մոլեկան, և այ-

առ ախտիւ բազում են այժմ ախտացեալք : Իսկ եթէ հնազանդէին առարինեաց և իմաստնոց, մեծութեան նոցա և փառաց՝ որ բարձր է առաջի Կատուծոյ, լինէին և ինքեանք հազորդակից :

ՃԴ. Այր հըռ և հնազանդ՝ թէ և պակասեսցի մահուամք, տակաւին համբաւ նորա և փառք՝ որ է պատուզ հնազանդութեան նորա, մնայ անծորելի . զի թէպէտ նա գնաց յաշխարհէս, բայց զբազում բարի գործս եթող յաշխարհի կենդանի, զօրս հնազանդութեամք ուսաւ կատարել : Օի փառք անձին գործն է, և ըստ գործոց զանազանին մարդիկ, որովհետեւ ըստ մարդկութեան ամենեքեան են նոյն :

ՃԴ. Հնազանդութիւնն բռնի՝ կրէ ընդ իւր զապստամքութիւն ինչ գաղտնի . զի միշտ ժամ՝ պարապոյ խնդրէ նուաճեալն Ծընկէց լինիլ՝ ի բռնութենէ . և երկոքին ևս տանջին ՚ի միտս, բռնաւորն՝ զի մի թողուցու վտարանջել, և նըւաճեալն՝ թէ որպէս ազատեսցի ՚ի բռնութենէ : Այս է շարաչար հնազանդութիւն, որ անարդ ևս է քան զգերութիւն, զի որ գերի է, միանդամ վշտացաւ՝ յորժամ եղև գերի, և յետ այնորիկ ունի զինքն յօրէնս գերւոյ, վտան որոյ ոչ այնքան վշտանայ . նա՞ զի գուցէ գերին իբր ՚ի ստացուած իւր խնայէ ՚ի նա, և ոչ տառապեցուցանէ :

Իսկ որ ոչ է գերի օրինօք պատերազմի, Ճանաչէ զինքն ազատ, թէ և իցէ հպատակ՝ կամ հարկատու . որոյ ազագաւ մինչ բռնաբարի անդր քան զօրէնս հպատակաց կամ հարկատուաց ՚ի շարաչար հնազանդութիւն, տառ աղի մեծապէս, և

ապստամբիլ խորհի : Վպա չե արժան զոք բռնիւնուաճել՝ ի հնազանդութիւն՝ այլքաղցրսւթեամբ և բարերարութեամբ :

ԺԵ . Հաւասարապատիւ իշխանաց դժուարին է հնազանդիլ միմեանց , զի ամենայն աղնուական ծանր համարի իւրումնմանւոյ հնազանդիլ . յայսմանէ յառաջանայ անհնարին խռովութիւն և հակառակութիւնն առ միմեանս , և վիշտ և վիաս առ հասարակութիւնն : Վպա արժան է աղաչել զիստուած՝ զի զգլիսաւորս ազգի կամքաղաքի ՚ի սէր շարժեսցէ . զի սոքա միայն շաղկապաւ սիրոյն կարեն միաբանիլ , և միմեանց հնազանդիլ՝ յօգուատանձանց և հասարակութեան :

ԺԶ . Ի բառնիլ հնազանդութեան՝ բառնին բարեկարգութիւնք յամենայն կառավարութենէ . զոր օրինակ՝ եթէ զօրապետք ոչ հնազանդէին արքայի , և զօրք՝ զօրապետաց , ուր երևէր յաղթութիւն թշնամեաց : Օի թէպէտ քաջութեամբ մղի պատերազմ , բայց պահանջի ևս հնազանդութիւն ամենայն ակնարկութեանց զօրապետին , ուրով անգին լինի արիւնն զոր հեղուն : Իսկ եթէ ինքնարշաւ մղեսցին ՚ի պատերազմ առանց հրամանի զօրապետին , ոչ ՚ի համարի գնոց է հեղումն արեան նոցա . այսպէս ամենայն բարեկարգութիւնք յաշխարհի՝ հիմնեալ կան ՚ի կանոնն հնազանդութեան :

ԺԷ . Պարտաւոր են մանկունք՝ հպատակիլ սիշը բով և զուարթութեամբ ամենայն ակնարկութեանց ծնողաց և ուսուցչաց իւրեանց , և ևս եղբարց , կամ ինամածուաց , մինչև չտալ տեղի

սրումութեան նոցա : Վասն զի չար և վտանգաւոր է հակառակիլ կամաց ծնողաց , կամ վարպետաց , կամ եղբարց , և կամ այցելուաց , որք ըդքարին նոցա կամին և առաջադրեն . որովհետեւ հաստին մանկական չէ բաւական անձամբ անձին զօդուան իւր խորհիլ , և առնել : Վաս ուսանիցին որդիք հնազանդ լինել ծնողաց իւրեանց , զի և որդիք իւրեանց հնազանդեսցին ինքեանց . զի զոր ինչ սերմանէ ոք , զնոյն և հնձէ :

ԺԸ. Հնազանդութիւնն է ենթարկել զկամո 'ի ներքայ հրամանի այլոյ , կամ վասն սիրոյ , կամ վասըն վարձուց , և կամ վասն երկիւղի : Որ վասն սիրոյ հնազանդի , սիրէ զանձն նորա՝ որում հնազանդի : Որ վասն վարձուց հնազանդի , սիրէ զինչս նորա , զար ակն ունի առնուլ 'ի նմանէ : Որ վասն երկիւղի հնազանդի , սիրէ զիւր ինքն՝ զի մի պատժեսցի :

Վագրէն երեքին ևս են բարի և օգտակար . այլ առաջինն յոյժ գովելի է , և կատարեալ 'ի կարգի որդիութեան . զի որդւոց է վասն սիրոյ հնազանդիլ ծնողաց : Երկրորդն է 'ի կարգի վարձկանութեան . զի վարձկանաց է վասն վարձուց հնազանդիլ վարձատուաց : Երրորդն է 'ի կարգի ծառայութեան . զի ծառայից է յերկիւղէ պատժոյ հնազանդիլ սերմանց , որ առաւել ծառայութիւն առի քան հնազանդութիւն , վասն զի ոչ է կամաւոր . իսկ հնազանդութիւն է՝ որ լինի աղատ կամօք . նա զի ամենայն որ է ծառայ՝ հարկ է նմա լինել ևս հնազանդ , այլ ոչ ամենայն որ է հնազանդ՝ պարտ է լինել ևս ծառայ :

“ Ի ասե ունկնդրութեան չան զլոհ ընպիր , և հնաղան-
տութեան չան զջարոյ իրաց ” . Ա . Թագ . ԺԵ . 22 :

“ Որպէս անհնաղանդութեամբ մոյն մարդոյ մշղուոր
բաղումք եղն . նոյնպէս և հնաղանդութեամբ մոյն՝ արդար
բաղումք եղնցին ” . Հռօմ . Ե . 19 :

“ Հնաղանդ լերուս ամենայն մարդիեցն սպեղժուածոյ
վասն Տեսան . իւե լագաւորի՝ իբրև առաւելուածու , իւ-
ելու բարաւորաց՝ իբրև ՚ի նմանե առաստելոյ ՚ի վըեժիցն-
տրութեան լարագործացն , և ՚ի գովութեան բարեգործացն ” .
Ա . Պետ . Բ . 13 :



ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ա . Ճանկալի է ամենայն կենդանեաց ընկե-
րութեամբ կենցաղավարիլ ընդ տեսակակիցս իւ-
րեանց , առաւել ևս մարդկացին ազգի , որք բա-
զւմ անգամ ՚ի բազում իրս փոփոխակի կարօտին
օդնականութեան միմեանց , ՚ի ձախողակի պա-
տահման , ՚ի ժամանակի հիւանդութեան , ՚ի սլա-
կասիլ կարեոր պիտոյից : Եւ որովհեաւ մարդիկ
ծնանին տգետ և տկար , առաւել քան զայլ ա-
մենայն կենդանիս սկսու ունին գարմանց և ուս-
ման՝ առ ՚ի կեալ և լինել երջանիկ . և զայտոսիկ

ոչ կտրեն գտանել յառանձնակեցութեան , բոյց
եթէ յընկերական վիճակի :

Իսկ թէ բնական է մարդոց ըղձանալ ընկերա-
կան կենցաղավարութեան , յայտ է փորձիւ . զի ա-
հա ՚ի գտանիլ ու մեք յանապատ անմարդի , որու-
մի և տառապի . և ՚ի տեսանել զիսուոն բազմու-
թիւն մարդկան , ուրախանոյ և միսիթարի : Աակայե
պարտ է ընտրել զայնպիսի ընկեր , որ յուրախա-
կան կիրա ուրախակից լինիցի , և ՚ի տրտմական՝
կարեկից և միսիթար : Եւ որքան քաղցր է և ցան-
կալի ընկեր բարի , այնքան դառն է և տաղտկալի
ընկեր չար : ՚Աա ՚ի գժուարին գիտուածս գիտէ
բառնալ զծանրութիւն ցաւոց , և գիւրացուցա-
նել զտառապանս . սա պատճառէ զանակնկալ վր-
տանդս , և յաւելու վիշտո ՚ի վերայ վշտաց :

Բ . Բազում չարք են ՚ի մարդիկ , որք եթէ չար
ընկերի ոչ պատահէին , ոչ լինէին չար . են և բա-
զում բարիք , որք եթէ բարւոց ընկերի ոչ հանդի-
պէին , ոչ լինէին բարի : Ապա լինել չամ բարի՝
յոլովտկի պատճառի յընկերութենէ : Օ գուշառ-
ցին երիտասարդք յընկերութենէ չարաց , եթէ
ոչ կամին լինել չար և վատահամբաւ . զի հասակն
երիտասարդական՝ գիւրասահ գոլով ՚ի մոլութիւ-
նըս , օրինակաւ չար ընկերին փութով ուսանի ըդ-
չարիս . յիմար է այն՝ որ անխոտիր ընդ ամենեօին
ընկերանաց :

Գ . Աչ ինչ են զարմանք , զի բազում բարեբա-
րոց մարդիկ հազիւ զմի ոք չար կարեն ուղղել . իսկ
մի ոմն չար բառական է մոլորեցուցանել զբազու-
մըս . քանիզի և բազում առողջք զմի բորոտ ոչ կա-

ըեն որբել, բայց մի ոք բորոտ կարէ ախտացուցանել զբաղումս :

Դ. Բաղումք ընկերակից լինելով չարաց, ոչ միայն զհայրենի ժառանգութիւնս վատնեալ՝ ՚ի յետին չքաւորութիւն հասին, այլ և զանգին դանձ ամօթխածութեան և պարկեշտութեան կորուսին. և անարդ անուն ստացեալ՝ առակ նշաւակի եղեն յաշխարհի, և կորեան զկորուսան յաւիտենից : Ապա մեծի զգուշութեան պէտս ունի ընտրութիւն ընկերաց :

Ե. Չարտահէր մարդիկ՝ շողոքորթ և կեղծ բարուք արտաքուստ երեխն բարի, բայց իբրև զօձ գեղեցկամորթ զլժոյն մահու ծածկեալ ունին ՚ի ներքս ՚ի սրտի, և խաքելով զանփորձ երիտասարդս՝ արկանեն ՚ի պէսպէս մոլութիւնս : Ապա եթէ կամիցի երիտասարդն կենցաղավարիլ ընդումեք, քննեսցէ զընկերս նորա . եթէ իցեն բարեհամբաւ, ընկերակից լինիցի և ինքն. իսկ եթէ իցեն վատանուն, խորշեսցի ՚ի նմանէ, զի մի և ինքն լինիցի վատանուն . զի ըստ առածին, այլ յընկերէ իւրմէ ձանաչի :

Զ. ՚Իժուարին իմն է երիտասարդաց հեռի կալ ՚ի տեսաւորութենէ չարաբարոյ ընկերաց . զի այն հասակ առայգ և եռանդնոտ՝ ցանկայ երթալ ՚ի զբօսանս և ՚ի որճանոցս, և ընկերակից լինել ընդբազմաց : Բայց պարտէ գիտել նոցա, թէ արք բարեբարոյք սակաւ, իսկ չարք բազում են յոյժ. ապա ընտրելի է ընդ սակաւուց բարեաց կենցաղավարիլ՝ քան անխտիր ընդ բազմաց, զի մի գուցէ հանդիպեսցին չարաբարոյ ընկերաց :

Ե. | առ է ընդ բարի ընկերս գտանիլ՝ ի վեց
արս, քան ընդ չար ընկերս ՚ի հեշտալի վայելս .
նա է ՚ի մահուանէ կեցուցիչ, իսկ սա՝ մարմնոց
և հոգւոյ անողարմ դահիճ :

Ը. | թէ ոք ընկերակցի ընդ չարս, կամ պարտ
է համաձայնիլնոցին, կամ հակառակիլ. եթէ հա-
մաձայնի, լինի և ինքն չար . իսկ եթէ հակառա-
կի, առնէ զնոսա թշնամի ինքեան : Ապա յաւէտ
զգուշալի է ՚ի կենցաղավարութեան, զի մի գու-
ցէ ընկերակից լինիցի ընդ չարս . զի գիւրին է
ընկերանալ, բայց գժուարին է օտարանակ :

“ՈՇԵԼԱԿ իմ մ’ նախանջիր ընդ չարս, և մ’ շանկանայ-
ցեա իւլ ընդ նոսա ”. Առակ . ԻԴ . 1 :

“ՈՇ անջին չար է՝ այլոց բարի ուլքնի ”. Արք . ԺԴ . 8 :

“Ի պաշոց նոյս ծանիջն զնոսա . մ’ լե հաղթե՞ն ՚ի իշու
իտուլ իւմ ՚ի պապասին լուու ”. Առաջ . Է . 16 :

“Յառնէ հերյուածողէ՝ յետ մանդամ և երկիցս իրա-
պելյ՝ հրաժարեալիր . գիտասալիր չե լիւրեալ է այնպիսին ”.
Տիւր . Գ . 10 :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՃԵՐՈՐԴ

ԽՈՇԱՅԻ ՀԱԿՈՒՏԻԿՆ

Ա. Ուղես չիք մեծագոյն շար քան զհպարտութիւնն , նոյնպէս չիք մեծագոյն բարի քան զխնարհութիւնն , զի նա առնէ ատելի Կրտուծոյ և մարդկան , և սա՝ օիրելի և հաճոյ . նա անհանգիստ տառապեցուցանէ , սա անվրդով խաղաղութեամբ հանգուցանէ : Եւ թէ խորհեսցի մարդ՝ թէ զբնչէր նախ , և զինչ ոյժմ , և զբնչ լինելոց է առ յապայն , ոչ կարէ բնու հպարտանալ :

Քանզի սկսանին է յանարդ նիւթոյ , ծնանիլին ցաւօք , կեան տառապանօք , իշխանութիւնն անօդուտ , փառքն վաղաթառամ , կեանքն կարձատե , մահն հարկաւոր , մարմինն ապականացու և կերակուր որդանց . յայսմ ամենայնէ և յայլ բազում գլխոց դիւրին է մարդոյ առնուլ՚ի միո զթշուտառութիւն բնութեան իւրոյ , և լինել խոնարհ :

Բ. Ոչ է նա ճշմարիտ խոնարհ , որ բանիւ լրկով զանձն անպիտան խոստովանի . բայց մինչ ըզ նոյն յայլմէ լսէ , վրդովի գժդմնի և բարկանայ . ուստի յայտ է թէ այնպիսին առաւել հպարտ է քան խոնարհ . զի խոնարհն խոստովանութեամբ կամի գովութիւնս ընդունիլ , և փառս որսալ՚ի մարդկանէ : Ո՞անաւանդ զի ստասաց է և կեղծաւոր , զի զայլինչ ունի ՚ի լեզուի , և զայլինչ խորհի ՚ի սրափ . և որպէս խարդախ ուկեգործ զարցըն փոխանակ ուկրոյ ջանայ ՚ի վար արկանել :

Գ. | Խոնարհն՝ զգործ բարի և օդտակար բազմաց սովորէ առնելի ծածուկ, զիմի գովութեամբ հոչակեացի, քանզի ՚ի Տեառնէ ակն ունի առնուլ զհատուցումն։ | Խոկ հալարտն՝ զփոքը ինչ գործ բարի զոր առնէ՝ ցանկայ հրատարակել, զի ընկալցի զգովութիւն ՚ի մարդկանէ՝ իբրև վարձ գործոց իւրոց, վասն որոց և ոչ առնու վարձս ՚ի Տեառնէ։ | Խոնարհն եթէ զգովեստ անձին յումեքէ լսէ, ամաչէ և արտմի. | Խոկ հալարտն դուռզանաց և բերկրի, և կամի զի առաւել ևս լուիցէ։

Դ. | Խոնարհութիւնն վասն զի է բարի՝ ոչ խարէ զոր, այլ ընդունի զամենեսին որք սիրեն զնա, զի այս բնութիւն է բարւոյ, զամենեսին հաղորդս առնել բարութեան իւրոց։ | Եւ է որպէս անդամնու աղնիւ, որ ՚ի տունջեան և ՚ի գիշերի փայլի. առ աղքատս՝ որք գոհ են զմիճակէ իւրեանց և շատանան կարեսօրօք, ունի շողազիւն՝ բայց աշխալցոյս. | Խոկ առ փարթամա՝ որք ազգօդուտ արդեամբ Ճախանան, իբրև ՚ի քաջարուեստ ակնաշործէ բաղմանիիւն Ճախարակեալ մեծապայծառցանաց, և զաշս ամենեցուն առ ինքն դրաւէ։

Ե. | Կատարեալ խոնարհն՝ թէ և ունիցի զմեծամեծ շնորհս, զինչս, զպատիւ և զմեծութիւն, տակաւին նուաստ զգացումն ունի զանձնէ իւրմէ. ոչ տեսանէ զբարիսն զոր ունի, այլ կամի ըզպակասութիւնս իւր տեսանել զի ուղղեսցէ զնոսա, որով և ևս արժանանաց շնորհացն Արտուծոյ։

Զ. | Ո՞ի ոք զխոնարհութիւնն կարծիցէ պակասութիւն անձին զօրութեան, կամ յիմարութիւն մոտց, կամ թիւրութիւն կամաց. այլ Ճշմարտիւ-

գիտասցէ , թէ նա է նշան արիութեան ոգւյ , իմաստութեան մոտաց , և ուղղութեան կամաց : Վանզի անարին՝ յիմարն՝ և մոլին ոչ երբէք կարեն խոնարհիլ . զի ոչ ամենեքեան բաւական են ունիլ զայնքան մեծ զօրութիւն , մինչեւ յաղթել զանքան կիրս հպարտութեան և բարկութեան , և լինիլ հեղ և խոնարհ : Ա ասն որոյ որ կամաւ խոնարհի առաջի ամենեցուն , է զօրեղ , իմաստուն , և բարի . և ընդ հակառակն՝ անզօր , յիմար , և մոլի է նա՝ որ չունի զխոնարհութիւն . զի ոչ կարէ նուաճել զմոլեկան կիրս անձին իւրոյ , և զյազթանակ խոնարհութեան առնուլ յասպարիզի կենցաղոյս :

Ե . Են բազումք՝ որք գովիեն զխոնարհութիւնն առաջի մարդկան՝ առ ՚ի ցուցանել զանձինս խոնարհ . իսկ նա՝ որ ճշմարիտ խոնարհ է ըստ սրաին Աստուծոյ , գովիէ զխոնարհութիւնն յայն սակա՝ զի է բարի և արժանի գովութեան , և ոչ եթէ այնու խոնարհ կարծեսցի ինքն և փառաւորեսցի . նա՝ զի ճշմարիտ խոնարհն ոչ երբէք համարի զանձն հասեալ ՚ի կատարեալ խոնարհութիւն , այլ միշտ կրթէ զինքն առ այն հասանիլ :

Ը . Ոչ է նա խոնարհ՝ որ առաջի մեծամեծաց նուաստացուցանէ զանձն , և կերպարանի ՚ի կերպարանս խոնարհի , բայց մտօք հաւասարապատիւնոցին , կամ վերագոյն քան զնոսա զանձն վարկանի . այլ նա՝ որ քան զայլս ամենեւսին նուաստ ճանաչէ զանձն իւր , թէ և ունիցի զմեծագոյն առաքինութիւնս , և զայլ ստացական բարիս առաւել քան զնոսա :

թ. Աչ է նա խոնարհ, որ մինչ գտանէ զյա-
շողաւածս բարեաց, և զպատիւ ՚ի մարդկանէ,
երեխ հանդարտ և խոնարհ. իսկ յորժամ անկանի
՚ի ձախորդութիւն, և կրէ զարհամարհանս, վը բ-
դովի և գաւնանայ: Ճշմարիտ խոնարհութիւնն
ոչ է ծառայ մոլութեանց, զոր իբրև անարդ գե-
րի, կամ անբան գրաստ՝ ըստ հաճոյս ոք կապեսցէ
և արծակեսցէ, կամ իբրև աւելորդ զգեստ ագա-
նիցի ոք, և ՚ի բաց հանցէ. այլ ազատ է և ինքն-
իշխան, հարկաւոր զարդ հոգւայ, և պարծանիք
ազգի մարդկան:

Եպա ճշմարիտ խոնարհն յամենայն ժամ՝ և
յամենայն ուրեք մնայ հանդարտ և անվրդով. ոչ
՚ի պատուիլ իւրում ամբարտաւանէ, զի ոչ երբեք
զանձն արժանի պատույ համարի. և ոչ յարհա-
մարհիլն վշտանայ, զի գիտէ ունիլ զպակտառ-
թիւնս արժանի անարդանաց:

Ժ. Շնդվայր ջանայ խոնարհ երեխիլնա՝ որ բդ-
հետ պնդի փառաց. զի թէ և արտաքուստ ունիցի
զկերպարանս խոնարհութեան, բայց ՚ի ներբուստ
կրէ յինքեան զհոգին հպարտութեան: Իսկ ճշմա-
րիտ խոնարհն որքան ՚ի բարիս յաճախէ, այնքան
առաւել ամաչէ. և իբրև բազմապուղ ոստ ծա-
ռոց՝ որքան առաւելու արդեամբք, այնքան առա-
ւել խոնարհի: Վասն որոյ զամենայն բարիս զոր
ունի՝ շնորհացն Աստուծոյ տեառնագրէ և գո-
հանայ, և միշտ զանձն անարժան վարկանի, և
երկնչի՝ զի մի գուցէ մեծամոեսցի, որով մեծա-
մեծ ևս պարդեաց գտանի արժանաւոր:

ԺԱ, Խոնարհն ոչ միայն երկարակեաց լինի և

առողջ, այլ և յամենայն ժամանակս ազատ մնայ ՚ի վեասուէ . զի ոչ խառի յումեքէ , ոչ տրտմի , ոչ յուսահատի , ոչ զայրանայ , յորոց պատճառ ին ազգի ազգի հիւանդութիւնք և մահ . ոչ թշնա մանայ ընդ ումեք , վասն որոյ և ոչ ոք չանայ վեա սել նմա . և այսպէս խաղաղ և երջանիկ կենօք կըն քէ զաւուրս իւր :

ՃԲ . Այն է հեղ և խոնարհ , որ թէպէտ կա րող է վրէմինդիր լինել անիրաւութեանց արա րելց ընդդէմ իւր , այլ աստուածալախ իմն եր կիւղածութեամբ ներէ : Խոկ հպարտն վասն փոքու յանցանաց ջանայ վրէմս պահանջել , զի եր եւեսցի կարող :

ՃԳ . Ո՞ի խաբեսցեն զանձինս մեծամիտք ՚ի մը նալ իւրեանց անպատիմ՝ մինչ ոչ թողուն դյան ցանս զղջացելոյն , որ թախծագին պաղատանօք հայցէ զներումն : Օ, ի թէպէտ և երկայնամիտ լի նի Աստուած , և յապաղէ պատմել , զի թերես դարձին ՚ի խատարտութենէ իւրեանց , բայց յետոյ իբրև տեսանէ յամառեալ , սատոկագինս պատուհասէ . որպէս ուժգին հարկանէ ոք ասրուկ , որքան զձեռն իւր հեռի տարածէ : Ոչ իմիք ներ ողութեան է արժանի , որ չէ ներողամիտ :

ՃԴ . Որ կամի մերժել յանձնէ զմեծամուշ թիւն , ամբարձյէ զալս իւր՝ և հայեսցի ՚ի հսյա կապ դամբարանս . ածցէ զմուռ , թէ մարդիկ՝ որ երբեմն մեծաշուք փառօք բարդաւաճեալ Ճոխա նային ՚ի վերայ երկրի , զիարդ այժմ ՚ի ներքոյ եր կրի նեխեալ և հողացեալ կոխան լինին յամենայնէ :

ՃԵ . Իշխանք և մեծատունք՝ դիւրաւ կարեն ըս-

տանեալ զխոնարհութիւն, եթէ ածցեն զմսաւ՝ թէ
յ՞ր աստիճան բարձրութեան ամբարձեալ կան,
զի որ ՚ի բարձրունս բնակի՝ առաւել երկիցէ յանկ-
մանէ, քան որ ՚ի ստորին վայր գտանի։ Ապա իշ-
խանկ՝ որ ՚ի վերոյ են քան զբազումն, ՚ի խոնար-
հութեան կալցին զանձինս խւրեանց առաւել
քան զբազումն, զի մի անկանիցին։ քանզի մեծու-
թիւն և փառք յաշխարհի որչափ բարձրագոյն
իցեն, այնչափ վտանգաւոր են և երկեզուա:

“ Արյակի արմատն ՚ի խոնարհ՝ և արտացէ պարու-
թ վեր ”. Դ. Խաչ. Ճ.թ. 50 :

“ Խոնարհաց և հեղոց աղաջան՝ միշտ ժեղ համոյ եղեն ”.
Յուդիթ. թ. 16 :

“ Հայեցաւ նա յաղըլո խոնարհաց . և ու արհամարհեց
զննութեան նոյս ”. Սաղմոս. ՃԱ. 17 :

“ Որչափ մեծ ես՝ խոնարհեցո զնել յամենայի . և սուազի
Ասպուծոյ գոյցես շնորհու ”. Արքաք. Գ. 20 :



ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ԵՕԹՆԵՐՈՐԴԻ

ՀԱՄԲԵՐՈՒԹՒՆ

Ա. ♦ ամբերութիւնն է զօրութիւնն այն ա-
րիութեան, որով դիմակալէ անզուսակ կրից . սա
ոչ յաւելու ինչ ՚ի ներգործութիւնս, զորս ներ-
գործեն մարդկացին գործարանք ներքին և արտա-
քին, այլ միայն է զօրութիւն ինչ բնաւորեալ ՚ի

պապել և արգելուլ զայն ամենայն , զսր խոհեմուշ
թիւնն ոչ թոյլատրէ առնել . Վ ասն զի խոհեմուշ
թիւնն է ընտրել զառնելիս և զնորշելիս , և ա-
րիութիւնն է ՚ի դործ դնել . իսկ զօրութիւնն՝ որ
ընդդէմ կայ և խափանէ առնել զոր արգելու խո-
հեմութիւնն , ասի համբերութիւն . Վ պա համ-
բերողն է տիրող ՚ի վերայ բուռն կրից , իսկ ան-
համբերն՝ յաղթահարեալ և տկար :

Եւ խորհրդաբար կոչեցաւ համբերութիւն ,
այսինքն համբերող . զի յորժամ կիրք բարկու-
թեան սրէ և ջերմացուցանէ զարիւնն , ՚ի կծու
և ՚ի դառն համ փոխարկէ դքաղցրութիւն նորա .
զի որպէս յայտ է ՚ի փորձոյ , յորժամ սաստիկ ե-
ռայցէ քաղցրահամ ինչ , փոխի ՚ի կծու և դառ-
նահամ : Իսկ առն համբերողի զիջանին կիրք , զո-
վանոյ արիւնն , և անդէն ստանայ զառաջին բնա-
կան համն քաղցրութեան , ուստի ասացաւ համ-
բերութիւն , այսինքն համբերողութիւն :

Բ . Չիք յաղթող դժուարութեանց աշխարհի
քան զհամբերողն , և ոչ յաւէտ տկար քան զայր
ապաժոյժ . զի ոչ գոյ այնքան ծանր և դժուարին ,
որում կատարեալ համբերութիւնն ոչ յաղթեո-
ցէ , և ոչ թեթեագոյն ինչ բեռն , զոր անհամբե-
րութիւնն ոչ ծանրացուսցէ , զի ու իցէ իր դիւ-
րաբառնալի , ՚ի պակասիլ համբերութեան լինի
անտանելի : Վ ասն որոյ այր անհամբեր յամենայնի՝
տաղտկանոյ , խուռի , և յուսահատի . և ոչ միայն
անձին իւրում է տանջանիք , այլ և ամենեցուն , նը-
մին իրի ամենայն ուրեք է անարդ և թշուառ :

Գ . Ո՞նչ արդեօք շահի ոք անհամբերու-

թեամբ՝ ՚ի պատահիլ դժուարութեան, բայց եւ թէ զառաւել վիշտո . որում եթէ համբերէր, վիշտքն դադարէին ՚ի լինելոց վիշտ : Վանդի ան համբերութիւնն բազում անգամ սնոտի կարծ եօք երևակերպէ զդժուարութիւն, ուր չիք բը նաւ դժուարութիւն . կամ զաակաւն առաւելու, և զփոքրն մեծացուցանէ . զի նմանի խոշորացոյց ապակւոյ՝ որ զլուն իբրև զփիղ երևեցուցանէ, կամ մելամաղձութեան ախտի՝ որ զչգոյն իբրև զգոյ կարծեցուցանէ . սմին իրի հանապաղ տան ջի՝ որ ոչ գիտէ համբերել :

Դ . Այն լինի ոք անհամբեր՝ ընդ որ ոչ հաճի կամք իւր . զի եթէ ամենայն ինչ լինէր ըստ կամաց, ապաքէն կամք իւր հաճեալ հաւանէր, և միաբանէր ընդ նմին . և յայնժամ՝ ոչ բնաւ պարտէր գտանիլ ՚ի մարդում ունակութիւնն համբերութեան : Խոկ արդ՝ գոյ ունակութիւն համբերութեան տպաւորեալ ՚ի կամս մարդոյ անդստին ՚ի բնութենէ . ապա պարտին գտանիլ յաշխարհի ներդործութիւնիք ինչ կամ պատահարք՝ որք իցեն ներհակք հաճութեան կամաց առ ՚ի համբերել նոցին : Եւ որովհետեւ ամենայն կարողութիւն կարգեալէ առ իւր առարկայ, ապա և կարողութիւնն համբերութեան կարգեալէ առ հակառակս կամաց մարդոյ՝ առ վիշտու և նեղութիւնս, որպէս առ իւր առարկայ :

Ապա որ ոչ կամի համբերել կրից, բարձցէ յաշխարհէ զամենայն հակառակ ներդործութիւնը և զվիշտո . խոկ եթէ չէ բաւական այսմ, զայն արասցէ՝ առ որ բաւական գտանի, այսինքն է՝ համ

բերել գժուարութեանց : Իսկ եթէ ոչ ախորդէ համբերել , բարձցի ինքն անհամբերն յաշխարհէ , որ ոչ կամի հնազանդիլ ընդհանուր կարգի տիեզերաց , որ ՚ի հակառակ էութեանց գոլով բաղկացեալ զհակառակ ներգործութիւնս ածէ յառաջ :

Ե . Համբերութիւնն անդ երեխ , ուր անհամցյը կամաց մարդոց պատահին . որպէս հիւանդութիւն , ձախորդութիւն , չքաւորութիւն , անպատութիւն , ևս և մահ սիրելեաց , և որ սոցուն են սակի՝ վշտացուցիչ դիալուածք : Արդ՝ եինչ յայսցանէ՝ որ յաստուածային կարգադրութենէն լինի , Ե՞ որ ՚ի մարդկանէ պատճառի , և Ե՞ որ ՚ի կամաց կամ յանզգուշութենէ ուրոք յառաջ դոյ :

Առա ովլ անհամբեր , ում ՚ի սոցանէ բարկանալ արժան է . զի անհամբերութիւնն յառաջանայ ՚ի բարկութենէ : Եթէ բարկանաս հեղինակին բնութեան՝ որ է Աստուած , թէ ընդէր թողու գալ գժնդակի պատահարացու , հակառակիս Արարչին քում : Եթէ բարկանաս մարդկան , զի վշտացուցին զքեզ , հարկիս ուրեմն զամենայն մարդիկ ՚ի կամս քո խոնարհեցուցանել , զի արասցեն զհաճոյս կամաց քոց . և այս է յանկարելեաց սակի , զի չէ բաւական մի ոք նուաձել զկամս բազմաց , և հնազանդեցուցանել ինքեան , ոյլ մանաւանդ քեզ անկ է նուաձիլ ընդ կամօք նոցա և հնազանդիլ : Իսկ եթէ բարկանաս անձին քում , զի հասոյց քեզ չարիս , ահա դու ընդ քեզ ոգորիս . և այս է անհնարին յիմարութիւն : Վպազոր ակամայ կրես , պարտիս կամաւ համբերել :

Զ. Անհնար է մարդոյ ամենեին զերծ՝ ի վը-
տանգէ մնալ, մինչդեռ կենցաղավարի ՚ի կեանս
յայսմիկ. ապա ՚ի հասանել արկածից՝ պարտ է ա-
րիաբար տոկալ և համբերել, և իբրև վէմ ան-
դրդուելի՝ զալիս փորձութեանց կենցաղցս ծո-
վու փշրել և յետս դարձուցանել, զի լու է համ-
բերել տառապանաց և կեալ, քան անհամբեր
բարոյիւք լքանիլ և զմահ համբուրել:

Է. Պարտ է ունիլ մարդոյ զհամբերութիւնն,
ոչ միայն վասն շահու անձին՝ ոյլ և վասն աստուած-
սիրութեան, եղբայրսիրութեան, և ազգասիրու-
թեան: Քանդի է մարդ՝ որ գիտէ համբերել մի-
այն վասն օգտաի իւրոյ. իսկ ուր ոչ գուցէ ինքեան
շահ ինչ, թէպէտ և օգտակար իցէ բաղմաց, չկա-
մի համբերել: Իսյց սակայն պարտ է համբերել
վասն աստուածսիրութեան, մինչ յուսալի է փո-
ռաւսրութիւն անուանն Աստուծոյ. վասն եղբայր-
սիրութեան՝ մինչդեռ այնու եղբայրն քո շահեալ
լինի. վասն ազգասիրութեան՝ յորժամ ազգն ողը-
ջոյն բարեհամբաւի: Քանդի անհամբերութեամբ՝
է զի փառքն Աստուծոյ խափանի, է զի՝ եղբայրն
քո գթէ կամ կործանի, և է զի՝ ազգն ողջոյն պաւ-
խարակի կամ վնասի: Ապա փութալի է ստանալ
զհամբերութիւն, առ ՚ի ստանալ վարձս աստ և
՚ի հանդերձեալն:

Ը. Համբերութիւնն՝ առանց իրիք սանձի նը-
ւաճէ զանբան կիրս բարկութեան ընդ հնաղան-
գութեամբ բանին: Աս է օրիորդ գեղեցիկ՝ որ
ընդ առաջ ելանէ ամեհի առիւծու գաղանացեալ
բարկութեան, ուր գեղով երեսաց՝ բարեձեու-

թեամբ կերպարանաց՝ համեզսութեամբ բանից՝
և վայելչութեամբ ձայնից՝ ՚ի հեղութիւն հան-
գարտութեան ածէ զվիրագն անհեթեթ՝ առա-
ւել քան երկաթի կապանօք :

Եւ ՞ կարէ զարդիւնս համբերութեան ճա-
նաչել, բայց եթէ նա՝ որ գիտէ համբերել. քանդի
զբնչ չար ոչ յառաջ գայր ՚ի բաղմահոյլ ամեհի
կրից իբրև զալիս ծովու առ միմեանս բաղիսելոց,
եթէ համբերութիւնն իբրև վէմ որձաքար ոչ
խորտակէր զբոնութիւն նոցա : Այս յաղթու-
թիւն՝ որով յաղթէ համբերողն ամենայն գժուա-
րութեանց և կրից, է մեծ և զաւարձալի. զի որ
զմուաւ ածէ զվարանգն՝ յորմէ համբերութեամբն
զերծ գտաւ, տօն ցնծութեան կատարէ : Ապա լեր
ծառայ համբերութեան, զի ազատ լիցիս ՚ի ծա-
ռայութենէ բարկութեան . և որ ծառայէ համ-
բերութեան, ամենայն կիրք նմա ծառայեն :

Թ. Վեդհանուր բնութիւնն է քաջավարժ դաս-
ախարակ՝ ածել զանհամբերն ՚ի համբերութիւն,
և խոհական խորհրդով ընտրել զժամանակ խօսելոց
և գործելոց . ոչ ամենայն ինչ յամենայն ժաման-
յաջողի լինել. զի է ինչ՝ որում սլարտ է լինել ասս
և այժմ, և է ինչ՝ որ յայլում տեղւոջ և յայլում
ժամանակի . ապա թէ ոք չիցէ խելամուտ սոցին
ընտրութեան և հանգամանաց, ոչ մի ինչ մարթի
ըստ կարգի խօսիլ կամ գործել :

Տես՝ զիանրդ գիտեն տունկք զժամանակն ար-
ձակելոց զտերեւ, զժաղիկ, և զպտուղ . և հաւք
զծուս ածելոց, ՚ի թուխս նստելոց, և զծագս հա-
նելոց . իսկ եթէ ապաժաման քերին ՚ի գործս՝ առ-

որ կարգեալ են՝ ի բնութենէ հաստատուն օրինօք, եղծանին և ըբանան։ Ապաքէն ուսիր համբերել՝ ով մարդ, և պահել զկարգ բանական բնութեան, զի մի քան զանգգայս և զանբանս երեւսցիս անզգայ և անբան։

Ժ. Դազումք համբերեն դառն նախատանաց օտարաց առ երկիւղի, բայց խրատական բանից բարեկամաց՝ որք ծանր թուին, ոչ համբերեն վասն սիրոց։ սոքա նմանին դիւահարի, որ երկիւղիւ բանտապետին զգաստանաց, և սիրով բարեկամին կատաղի, որոց պարտ էր առաւել համբերել սիրելեաց քան օտարաց։

Եւ մի ասիցէ ոք, թէ ակամայ բռնադատիմ համբերել օտարի։ Ապաքէն եթէ արժան է համբերել օտարի յոչ կամաց, պապա ևս առաւել արժան է համբերել բարեկամին յօժարութեամբ կամաց, եթէ առ ակամայն գիտես զիջանիլ, ընզ գէր ՚ի կամաւորէն յետս նահանջիս. յայտ ուրեմն է՝ թէ ոչ ունիս զսէր, որով անարդ քան զամենայն արարածս գտանիս. զի չիք արարած՝ որ ոչ ունիցի սէր կամ գիմողութիւն առ նմանին իւր. տես՝ յոր յետին անարդութիւն հասեր ով անհամբեր։

ԺԱ. Այն ինչ զոր ամենեքին գովեն և պանծան ունելէ բարի և օգտակար, զի ոչ է մարթ ամենեցուն միանգամայն խարիլ և սխալիլ. իսկ արդ՝ զհամբերութիւնն ամենեքին գովեն և ունել պարծին, նա և նոքին իսկ անհամբերք. ապա է բարի և օգտակար մարդկան։ Ուստի որ ոչ գիտէ համբերել նեղութեան՝ որում պարտ է համբերել, է

անխոհեմ և արժանի մեղադրութեան . զի անխոհեմութիւն է հերքել զբարի ինչ և օգտակար , և մեղադրութեան արժանի՝ ոչ ճանաչել ումեք զպարատաւորութիւն իւր :

ԺԲ . Ոչ ինչ այնպէս զօրաւոր գեղ երևեցաւ յաջևարհի ՚ի բժշկել զծանր ծանր հիւանդութիւն , որքան համբերութիւնն . զի անպիտան լինէին ամենայն դեղք և ճարտարութիւնք բժշկաց՝ եթէ անհամբեր լինէր հիւանդն ՚ի պահել զպատահանս բժշկին : Աղա համբերութիւնն գործ կատարեալ ունի . և որ համբերէ ձախողակի դիպուածոց , ՚ի վախճանի գտանէ զելս յաջողակ և զդիւրութիւն :

ԺԳ . Քաջահանձար խորհրդածութիւնք խմասոնց՝ իբր խոր յիմարութիւն համարէին , եթէ ոչ ընկերանայր նոցա համբերութիւն ՚ի գործ զընել զդիտմունս իւրեանց , սպասելով դիպողագոյն առթի և ժամանակի . ապա այր անհամբեր՝ թէ և իցէ նրբամիտ և խորախորհուրդ , տակաւին յիմարէ՝ և ոչ ինչ գիտէ . զի ոչ կարէ յառաջացուցանել զայն՝ զօր խորհեալն է յառաջագոյն :

ԺԴ . Քաղումք կարէին հասանիլ բաղձանաց իւրեանց որոց ցանկային , եթէ գիտէին համբերել որչափ սիմոցն էր . որ իբր քաջ ուղեցցց ընդանմոլար ճանապարհս առաջնորդէր նոցա ՚ի գէմ եղեալ աեղին : Խոկ անհամբեր բարոյիւք վաղվաղեալ յընթացս՝ կորուսին զՃանապարհն , և դեղերեալ յաղամող և յանելշաւիզ չկարացին ժամանել ՚ի նպատակ բաղձանաց իւրեանց :

ԺԵ . Չեք զօրեղ բարեկամ՝ որ կարող իցէ աւ

զատել զոք՝ ՚ի նեղութենէ՝ քան զհամբերութիւնը, զի բազումք անկեալ՝ ՚ի տառապանս՝ չունեւլով զհամբերութիւնն զօրավիգ ինքեանց, վհատեալ լքան և զբաւեցան ՚ի կենաց, որք եթէ գիտէին յուսով համբերել՝ կարէին ելանել՝ ՚ի տառապանաց, և մոռացեալ զվիշտա՝ զուարձանային ընդկենդանիս, բայց արդէն ընդ մեռեալս են :

ԺԶ. Բազում պիտոյք են յաշխարհի ՚ի պահել զիեանս մարդոյ, սակայն ոչ ամենեքին միապէս կարեորք . զի են իրք՝ որք եթէ պակասիցին, տակուին պահպանին կեանք մարդոյ՝ բայց ոչ վայել չաբար, որպէս աղ՝ իւղ՝ միս՝ գինի, և այլն : Եւ են իրք՝ որք եթէ պակասեացին, պակասի և կենդանութիւն մարդոյ, որպէս օդ՝ ջեր՝ հաց՝ ջուր՝ Այսպէս բազում առաքինութիւնք պիտոյ են մարդոյ, յորոց ոմանք եթէ պակասին, կարէ լինել մարդ՝ սյլ ոչ կատարեալ, որպէս իմաստութիւն, արիութիւն, առատաձեռնութիւն, զուարձախօսութիւն, և այն : Խոկ առանց համբերութեան ոչ կարէ լինել մարդն մարդ, զի համբերութիւնն այնպէս պիտոյ է մարդոյ առ ՚ի կեալ մարդկաբար, որպէս օդ, հաց, և ջուր՝ առ ՚ի կեալ կենդանի : Ապա որ ոչ դիտէ համբերել, ոչ գիտէ նա և կեալ մարդկաբար :

“ Համբերելով համբերի Տեռուն, և նայեցաւ առ իս, և ըստ աղօնիշ ինոյ ” . Աազմոս . ԼՅ . 1 :

“ Վ այ որ ի՞րուսեալ զհամբերութիւն ” . Աիր . Բ . 16 :

“ Որ համբերեացէ ՚ի սպառ՝ նա կեցցէ ” . Աատ . Ճ . 22 :

“Պիտոյ է յեղ համբերութիւն, զի շիամս Աստուծոյ ա-
րարեալ հասցես առեւուայն” . Երբ . Ժ . 36 :



ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ՈՒԹԵՐՈՐԴԻ

ԽՈԿՈՒՄՆ ՄԱՀԱՏ

Ա. **Օ**տևողութիւն մարմնական կենաց ՚ի
գեպ էր կոչել անընդհատ յաջորդութիւն մահու .
և որովհետեւ յամենայն վայրկենի քայլափոխէ ՚ի
մահ , գրեթէ յամենայն վայրկենի մեռանի . և
որչափ առաւելու ամօք ՚ի կեանս , այնչափ առա-
ւել կը մահունս : Ապա յիրաւի յիմարութիւն է
յանմահից կարգի գնել զանձն , և անփոյթ լինել
զհոգեորաց . այլ մանաւանդ յամենայն կիսի Ճա-
նաչել զանձն մեռանելոց , և գործել զբարիս , որ
է կեանք հոգւոյ՝ և պատճառ երջանկութեան :

Բ. **Ծ**էպէտ Աստուած վասն օգտի մարդկան
ծածկեաց ՚ի նոցանէ գիտել զժամանակ օրհաս մա-
հուն , բայց և ոչ յամայրամեան երկարութեամբ
կենաց եթող մոռանալ՝ որպէս յառաջին դարսն ,
յորս ապրէին զբազում հարիւրաւոր ամս՝ մինչ
անցանել զինն հարիւր ամօք : Ա. Ա. Հազիւ իբր
զտասանորդն կենաց մարդկան առաջնոյ դարուն
առ յետնորդս եթող . զի դուն ուրեք արդէն շուրջ
զիննսուն կամ զհարիւր ամօք պարաբերի ժամա-

նակ մարդոյ , և այն ցաւօք և հեծութեամբ :

Եւ զայս արար Աստուած՝ ոչ միայն՝ ի կարձել զարութիւն մարդկան , այլ և առ ՚ի զգաստ առ նել զնոսա . զի գոնէ այսու չափաւոր թուով ծանուցեալ զկարձութիւն կենաց մարդկան , յամենայն ժամ արթուն և պատրաստ գտանիցին տնօրինել զկեանս իւրեանց ՚ի բարիս : Եւ ոչ այսու միայն՝ այլ և ինչ ինչ յայտնի նշանօք ծանոյց ըկ մերձենալ մահուն , այսինքն՝ սպիտակութեամբ հերաց , ծերութեամբ , հիւանդութեամբ , և պէսպէս տկարութեամբ մարմնոյ : Աղա ոչ են ազատ մարդիկ՝ ի մեղադրանաց , եթէ տակաւին յաղ գարարութենէ սոցառչ զգան զմերձենալ մահուն :

Գ . Որչափ մեծանայ ոք հաստկաւ , այնչափ առաւել մօտի ՚ի գերեզման . զի կեալն մարդոյ՝ է խոնարհիլ ՚ի մահ . և յորժամ ծերանայ , յայնժամ հասանէ ՚ի դրունս մահու :

Դ . Չիք սոսոյգ քան զմահն , և չիք անսոսոյգ քան զօր և զժամանակ մահուն . սակայն այր խոհեմ ոչ է անծանօթ , զի քաջ գիտէ՝ թէ ամենայն վայրկեան է ժամանակ մահու իւրայ :

Իսկ արդ՝ ժամանակն բաժանի յերիս , յանցեալն , ՚ի ներկայն , և յասպառնին . անցեալն և ապառնին ոչ են ընդ իշխանութեամբ մարդոյ , զի մին անց գնաց , և միւսն չեւս է եկեալ : Եւ ներկայն է յարահու՝ և անկայուն , ՚ի գոլն՝ անդէն չքանայ , և փոխի ՚ի յանցեալն . անուամբ յորջորջի , բայց իրօք ոչ երեխ , զի է յարափախուստ միջոց անցելց և ապառնւոյ . և ասացաւ ներկայ , զի իբրև կէտ անբաժանելի ՚ի մէջ կայ երկուց ժա-

մանակաց , և ահա միայն ներկայ ժամանակն է՝ ՚ի գործածութեան , զօրով յածի կեանք մարդոյ :

Իսկ ժամանակն է փոփոխական տեղութիւն ստեղծական և փոփոխական իրաց . և ժամանակ ասի , զի գոյ ժամանէ միշտ . և այս լինի մեզ ՚ի հոլովմանէ արեգական , որ չափէ զվայրկեան , ըդ ժամ , զօր , զամիս , և տարի . և ասի տարի , զի միշտ տանի զժամ և զժամանակ կենաց մերոց . տես ուրեմն յորպիսի անկայուն միջոց զետեղեալ է կեանք մարդոյ :

Արդ՝ որ զայս քաջ ՚ի միտ առնու , ճանաչէ զինքն ՚ի վայրկենի իմկը ներկայ ժամանակի մեռանելոց , զի յամենայն վայրկենի հնար է մեռանիլ . և այսու մտածութեամբ զմահն կրէ միշտ առաջի իւր . ըստ այնմ՝ Հաւատաց քեզ ամենայն օր ծագել վերջին . և այսպէս գիտէ զօրհասն՝ թէ յայսմ կիտի յորում գտանի , մեռանելոց իցէ , որովհետեւ ոչ գիտէ՝ թէ կարիցէ մնալ կենդանի ՚ի յաջորդ վայրկեանն , որ գեռ ևս է ապառնի :

Ե . Վարդն կեայ տուրեառութեամբ շնչոյ , և այն յառաջ գոյ ՚ի շարժմանէ և ՚ի բազմանե սրտին . արդ՝ եթէ դադարիցի բաղիսումն սրտի , խկոյն մեռանի մարդն . իսկ ոչ ոք գիտէ թէ Երբ դադարիցի , զի հնար է՝ թէ վայրկեանն յորում առնու ոք զշունչ , իցէ վերջին . ապա յամենայն շնչառութիւնս պարտի ասել թէ այս վայրկեան է վերջին , որով միշտ զգաստ մնայ : Այս է նկատումն սրբոց , որը ճանաչեն զինքեանս յամենայն շնչառութեան մեռանելոց . իսկ որ ճանաչէ՝ թէ արդէն մեռանի , ոչ կարէ մեղանչել . ապա իս-

կումն մահու ազգաստ պահէ զմարդքն՝ ի մեղաց։
 Զ. Մահն է անհրաժեշտ սատիկան մարդկան
 ի կողմանէ Աստուծոյ, որ յօրէ ծննդեան կալեալ
 ունի զօձիս իւրաքանչիւր մարդոյ՝ ածել կացուցա
 նել տռավթի Աստուծոյ։ Ապա կարի յանդուգն է
 նա՝ որ ոչ զարհուրի, մինչ գիտէ թէ ի ձեռս ան
 խար սատիկանի անկեալ կայ, որ կարէ ընդքարշ
 տանիլ զինքն՝ ի յատեան անտչառ արքայի ի գա
 տել։ Արդ՝ որ ի սոյն լինի միշտ մտախոհ, ոչ եր
 բէք կարէ մեղանչել։

Է. Թուուի թէ կեանք մարդոյ՝ ի վերայ երկրի՝
 իցէ երեք օր, մի օր ծննդեանն, մի օր մահուան,
 և մի օր ամենայն ժամանակ կենաց նորա, թէ
 երկար իցէ և թէ սուզ։ Բայց յաւէա երեխի լի
 նել թէ իցէ երեք վայրկեան, զի ծնանի ի մի վայր
 կենի, կեայ ի մի վայրկենի, մեռանի ի մի վայր
 կենի. զի յամենայն վայրկենի հնար է մեռանիլ։
 Աս աւանիկ թէ և կեցցէ զամս բազումն, համա
 րի իբրև զմի վայրկեան ժամանակի, զի ամք բաղ
 կանան յամոց, ամիսք յաւուրց, աւուրք՝ ի ժա
 մուց, ժամք՝ ի վայրկենից, և ոչ այլ ինչ են ամք,
 բայց եթէ բազմազատկութիւն վայրկենից. յայս
 մանէ յայտ է՝ թէ հեշտութիւն կամ տանջանք զօր
 կրեն մարդիկ յաշխարհի, են վայրկենական։ Ապա
 մեծ անմոռութիւն է սակս վայրկենական հեշտու
 թեան կամ տանջանաց մեղանչել առ Աստուծ,
 զի երկոքեանն ես ի վայրկենի իմիք են, և իսկոյն
 անցանեն։

Ը. Կեանք մարդոյ՝ թէ և տեեսցէ զամս բա
 զումն, է տակաւին սուզ, զի զիէս մասն յափշտա-

կէ քունն, զմի մասն տանի անդգայութիւնն տղայ ու թեան, զմի մասն գողանան դատարկաբան ընկերք, գուցէ և զմասն ինչ տկարութիւնք մարմնոյ և ցաւք, ապա ջանալի է՝ 'ի գործ ածել զայն մասն ժամանակի զոր 'ի ձեռին ունիմք՝ 'ի բարի և յօդակար իրողութիւնս :

Թ. Աչ ոք 'ի մարդկանէ կարաց մինչև ցարդ, և ոչ կարացէ ոք երբէք խկութեամբ նշանակել զաղատկեր մահու . զի զայն՝ միայն մեռեալք տեսին և ուսան, և չեղեւ միում 'ի նոցանէ դառնալ յաշխարհ 'ի յայանել կենդանեաց՝ թէ որպիսի ինչ է մահն . ապա կենդանիք որքան զարհուրելի գոլ ցուցանեն, ատկաւին ոչ կարեն լրիւ յայտ առնել, զի անծանօթ են զնմանէ : Վահն յաւէտ անաղօրմ գտանի յայսմ մասին, զի մի անգամ գոյ առ կենդանիս, և այն 'ի վերջին կէտն . թէպէտ և յայնժամ ուսանին մարդիկ՝ թէ ո՞իցէ, ո՞րպիսի պատրաստութեամբ սպասելի է նմա, զի արդ պարտ է ընդունիլ, զի՞նչ արդեօք խնդրէ 'ի մէնջ, սակայն այն ամենայն ուսումն է անօգուտ, զի յետ այնորիկ ոչ կարէ ոք 'ի գործ գնել:

Ժ. Վահն մի անգամ պատահի մարդկան, բայց մարդիկ յերկիւզէ նորին պաշարեալ գրեթէ յամենայն ժամ կենդանւոյն մեռանին : Եյլ սակայն ընդվայր տանջանք է երկնչիլ յայնմանէ, յորմէ աղատիլ չէ հնար . միայն պարտ է պատրաստ գտանիլ, զի մի իբրև չարագուշակ դահիճ 'ի գուրըն մահու, այլ իբրև աւետարեր հրաւիրակ կոչեսցէ զքեղ՝ 'ի յարկն յաւիտենից :

Ճ. Աչ զարհուրի 'ի մահուանէ խմաստունն,

զի ճանաչէ զմահն անհրաժեշտ պարոք բնութեան մարդկեղէն կազմուածոյ . ոչ զարհուրի առաջինին , զի գիտէ զնա բարեհրաւեր առաջնորդ առ Արտուած ճանապարհին : Վեռանի աներ կիւղ և ուրախ , որ միշտ զմահ իւր ունի 'ի մտի , և սդոյ ՚ի վերայ յանցուածոց իւրոց : Վեռանի երկիւղիւ և արտմութեամբ , որ ոչ յիշէ զմահ , և ուրախանայ ՚ի հաճոյս մարմնոյ և աշխարհի :

ՃԲ . Եթէ կամիս չերկնչիլ ՚ի մահուանէ , կալ միշտ զնա ՚ի մտի քում . զի ընդելասցիս ընդ նմա իբրև ընդ բարեկամի , և մի զարհուրեսցիս ՚ի նր մանէ՝ յորժամ առեալ տանիցի զքեղ յայլ աշխարհ : Եւ եթէ կամիս տեղեկանալ բնութեան և բարուց նորա , յաճախակի երժ յայցելութիւն մահամերձ հիւանդաց , և տես՝ թէ որպէս մեռանին նորա . զի սյս բնութիւն է մահու , միապէս վարիլ առ ամենեսին , առ մեծատունս և առ աղքատս , զի ոչ երկնչի յումեքէ : Եւ ուսեալ քոզմեուանին՝ աներկիւղ լիցիս ՚ի մահուանէ , որ է յատուկ պարտաւորութիւն քո , զոր բնութիւնն՝ աստուածասահման և անյեղի օրինօք եղեալէ ՚ի վերայ քո : Ծաղ՝ նա երկիցէ ՚ի մահուանէ , որ ոչ յիշէ զմահ , և չէ ընդ նմա ընդել և բարեկամ . վասն որոյ մինչ գայ առ նա մահն , երեի նմա իբրև սոսկալի թշնամի , որ եկեալէ վարել զնա յանցերձ և ՚ի դժնդակ ծառայութիւն :

Որ միշտ զմահ իւր՝ ունի ՚ի մտի , ՚ի մեռանիւ իւր՝ նա ոչ զարհուրի . զի մահն եկեալ՝ սրպէս ընտանի , հրաւիրէ հանդչիլ յիւրն հայրենի : Որ ՚ի մահուանէ՝ միշտ հեռի փախչի , զմահն առնէ՝

անհաշտ թշնամի . գոյ որպէս զինուոր՝ տհեղ արքայի , առնիլ խառութեամբ՝ ուր ոչն կամի :

ԺԴ . Օ ինչ օգուտ է կեալ բարի անուամբ , և մեռանիլ վասութեամբ . զի չարաչար մահն եղծանէ զբարի կեանս , յորս եկեաց ոք զբազում ժամանակս . և բարի մահն տայ մոռանալ զանբարի կեանս անցեալ ժամանակաց : Խայց քանզի ոչ գիտէ մարդ՝ թէ յորմւմ աւուր մեռանիցի , որպէս զի բարի մահուամբ կնքեսցէ զկեանս իւր . զի գոյ մահն որպէս զգող գիշերի՝ ի ժաման՝ յորմւմ ոչ կամիցի ոք : Ապա յցժ օխալի նա , որ սպանէ աւուր վախճանի , զի լինիցի բարի : Եւ քանզի ամենայն օր կարէ լինել վախճան կենաց , տպա զօր ամենայն պարս է գտանիլ բարի , որպէս զի բարի մահուամբ կնքեսցէ զվախճան իւր :

ԺԴ . Այս է բարի մահ՝ յորժամ՝ ի շնորհս Արտուծոյ մեռանի մարդն . զի որպէս կեանկը մարմայ է հոգին , նոյնպէս կեանկը հոգւոյն՝ է շնորհքն Աստուծոյ : Վեռանի մարմինն՝ մինչ բաժանի հոգին՝ ի նմանէ . մեռանի հոգին՝ յորժամ բաժանի՝ ի նմանէ աստուածոյին շնորհք : Անմահ է բնութեամբ հոգին մարդոյ , բայց՝ ի զրկիլն յաստուածոյին շնորհաց՝ ասի մեռանիլ բարոյականապէս . իսկ շնորհքն պահպանի և աճի առաքինութեամբ , ապա ոյր առաքինի է՝ ի շնորհս Աստուծոյ , վասն որոյ մահն առաքինեաց է բարի :

ԺԵ . Արեք են վասն որոց դաւն թուի մահ . ուր աշխարհի , խիղջ մոաց , և անստուգութիւն փրրկութեան : Ուստի ասէք ոմն իմաստասէք , որովհեան ոչ գիտես՝ և թէ յորմւմ աեղւոջ և յորմւմ

Ժամանակի սպասէ քեզ մահն, դու յամենայն ժամ
սպասեսջիր նմա, զի մի անպտղաստ գտանիցիս
՚ի գալատեան նորա :

Ժ2. Վարդս ունի աղասութիւն նմանիլ հրեշ
տակաց և անբանից . եթէ հոգւովն վարի՝ նմանի
հրեշտակաց, իսկ եթէ մարմնով նմանի անբա-
նից : Արդ՝ մինչդեռ կենդանի է մարդ, թէպէտ
կարէ վարել զկեանս ըստ նմանութեան անբանից,
այլ ոչ կարէ յետ մահու մնալ աննորդելի և ան-
պատիժ ըստ նմանութեան անբանից . քանզի ու-
նի հոգի բանական և անմահ ըստ նմանութեան
հրեշտակաց, վասն որոյ ըստ նմանութեան հրեշ-
տակաց չարաց պատճի ՚ի յաւիտեան : Այս խոր-
հեսցի իւրաքանչյուր զվախճան իւր, և արացէ
որպէս և կամի :

Ժ3. Այր բարի և իմաստուն՝ ՚ի քաջառողջ կեն-
դանութեան իւրում զմիտո մահամերձ հիւանդաց
ունի: Օ ՚ի յայնժամ բազում ինչ ճշմարտութեամբ
զրայ հիւանդն, զորս յառողջութեան իւրում ոչ
զգայր . վասն զի քաջ ճանաչէ ՚ի նոյն կէտ զօդուտ
և զարատուականութիւն առաքինութեան, զոչըն-
չութիւն և զմիտո աշխարհային հեշտութեան և
մեծութեան : Վարդիկ որքան և մոլի իցեն յառող-
ջութեան իւրեանց, ՚ի ժամ մահու զգաստանան,
և ցանկան առաքինաբար կեալ . բայց աւաղ՝ զի
ոչ ինչ կարեն շահիլ, վասն զի արեգակն ՚ի մուտա-
է խոնարհեալ :

Ժ4. Ոչ ոք քաջ ճանաչէ զգառնութիւն մահու,
բայց այն՝ որ էտո զՃաշակ մահու . այլ զլինչ օ-
գուտ իցէ գիտել յայնպիսում ժամանակի, մինչ

ոչ կարէ այնու հետեւ քաղցրացուցանել զդաւնութիւննորա : Այսպիսի և այժմ ոչ խսդառ մնայ անգիտելի՝ որոց աչք են ՚ի գլխի իւրում, զի մարթէ և սակաւուք իրազգած լինել նմա, և զօդուան անօրինել : Օ, ի եթէ ոք եղեալ զանձն ՚ի տեղի հոգեվար հիւանդի՝ տուաջի նկարեցէ զանհրաժեշտ մահուն զպատկեր, փոքր ՚ի շատէ իմանայ զանհնարին տագնաապ և զգաւնութիւնն ժամուն այնորիկ : Ուստի և նա որպէս ՚ի մեռելոց կենդանի՝ յառողջութեան իւրում հոգայ և պատրաստէ զկարե որսն անդառնալի ուղւոյն և յաւէժ կենդանութեանն . որովք դառնութիւնն փախի ՚ի քաղցրութիւն, և տագնաապ մահուն ՚ի հանդիսաքնոյ, և առաջնորդ կենացն անվախճանից :

Յ.թ. . Խորհրդով սահմանեցան գերեզմանասունք իւրաքանչիւր ազգաց ՚ի քաղմամբօխ հրապարակս, կամ ՚ի դրունս քաղաքաց, կամ յանցս ձանապարհաց, զի որ ՚ի քաղաքին են մարդիկ, տեսեալ ըզմահարձանս զգաստասցին և յիշեսցեն, զի և ինքեանք թաղելոց են անդ . և որք ՚ի քաղաքն մըտանեն, ՚ի միտ առցեն՝ թէ և ՚ի նմա մարդիկ մեռանին : Քանզի անմռունչ քարքառք մեռելոց՝ առաւել զարթուցանեն զմարդիկ յիշատակել զօրմահուն և զգաստանալ, քան մեծաձայն աղդարարութիւնք կենդանեաց :

Ե. Բարւոք գրեն ՚ի մահարձանս մեռելոց, թէ ԱՅՍ և ՏԱՊԱՆ ՀԱՆԴՍԵԱՆ . որովհետեւ մարդ ՚ի մեռանիւ իւրում՝ հանգչի ՚ի տառապանաց աշխարհի . զի փորձութիւն է կեանք մարդկան ՚ի վերայ երկրի :

Ասկայն եթէ կարէին մարդիկ զատանել՝ ի միւմեանց զքարիս և զչարիս, ՚ի դէպ էր գրել զցոս միայն՝ ի մահարձանս բարեաց. իսկ ՚ի մահարձանս չարաց՝ լու ևս էր գրումել ԱՅՍ ՏԱՊԱՆ ՏԱՆՉԱՆ ՆԱՅ: Քանզի չարք ՚ի մեռանին անցանեն յառօրեայ վշտաց աշխարհի՝ ՚ի յաւիտենական տանշանս, այսինքն ՚ի մահուանէ ՚ի մահ, որպէս և բարիք ՚ի կենաց ՚ի կեանս:

ԻԱ. Օգերեզմանատունս եթէ ոք անուանեսցէ բնակարան ստախօսից, ոչ սիալէ. վասն զի թաղեալքն ՚ի նոսա՝ ՚ի կենդանութեան իւրեանց ըզբազում ինչ ասէին, և խոստանային առնել. այսինքն շինել, քակել, ուտել, ըմպել, պճնիլ, շրջել, և այլն, այլ ստելով խոստման իւրեանց, գնոցին անդր և դադարեցան, և առնեն ինչ ոչ:

ԻԲ. Գերեզմանատունն է այնպիսի դպրոց, յորում մեռեալք վարժեն զիենդանիս, համերք ըզխօսունս. այբբենարան կամ գիրք ընթերցանութեան՝ են մահարձանիք շիրմաց, զրս եթէ ուշիուշով ընթերցցի ոք, զքազում կենցաղօգուտ շահեկանութիւնս գտնձէ անձին. ՚ի միտ առնութէ ոյք են թաղեալքն, ում սպասեն, զինչ խորհին, զիարդ թողեալ զժառանգութիւնս և զստացուածս իւրեանց՝ մերի և կողոպուտ աստ ընկողմանին. Ճսխարան լեզուք կան լոիկ. քաջարուեստ մատունիք՝ անգործ, սիդաճեմ ընթացք՝ կաշկանդեալք. որք ոչ սեղմէին ՚ի հոյակապ ապարանս՝ յերկիանդուն տապանի բովանդակին. զայսօսիկ և առաւել քան զայն օդտակար խրառոս ուսանին կենդանիք ՚ի մեռելոց:

ԷԳ. ՈՐՔ 'ի կեանս խրեանց սովոր են հոգալ զաանց, զվաճառաց, և զաւեւարութեանց, նա և 'ի ժամաւ մահուան խրեանց զնոցանէ միայն խոկան. զնուաս յանձն առնեն յեանոց, և վասն նոցասպատուիրեն աշխատ լինել, որպէս թէ միւսանգ գամ դառնալ ունին յաշխարհ: Խորհին զիրաց՝ յորոց հրաժարին, և ոչ զայնց՝ առ որս 'ի պատրաստի են երթալ. խօսին զանցաւորաց՝ և ոչը յաւիտենականէն: Պատառիրեն կատարել զշինուածո՛ զորս հիմնաւորեցին. զարդարել զայգիս և զբուրաստանո՛ զորս անկեցին. շահեցուցանել տոկոսեօք զմայր դրամոցն՝ զորս գանձեցին, հոգալ զարծաթոյն՝ զորս 'ի վարձու ետուն, արդիւնաւորել զշոհավաճառութիւնն՝ զոր սկզբնաւորեցին: Եւ զի՞նչ քան զայս անմիտ խորհրդածութիւն և ջանք՝ անփոյթ լինել զՃշմարիտ պիտոյից, և հոգալ զայնց՝ որք չեն ինչ նմա պիտանացու:

ԷԳ. Օգոյշ են մարդիկ 'ի պահպանութիւն մարմնաւոր ընչեց, այլ անհոգ՝ 'ի պահպանութիւն հոգեւոր բարեաց. բայց որ իմաստունն է, առաւել քան զմարմնաւոր ստացուածս գուն գործէ անկորուստ ունել զհոգեւոր բարիս:

ԷԵ. Գործք մարդկային ըստ էակութեանն են անցաւոր և անկայուն, այլ ըստ ներգործութեան կամացն անփոփոխ և մնացուն. զի յոր միանգամ յարի կամքն և սիրէ աղատ ներգործութեամբ, 'ի նմա յաւիտեան մնալ ախործէ եթէ հնար իցէ. վամն որոյ ըստ յօժարսութեան բաղձանացն չափի հաստացումն յաւիտենական բարւոյ կամ չարի:

'Կամքն գոլով աթոս սիրոյ, ներգործ

ծելնորա և յարիլինչ է սիրել զնա . և յորժամ՝ ի բարին յարի՝ զլատուած սիրէ , որ է յաւիտենական . զի միայն Աստուած է իտկապէս բարի և ազքիւր բարութեան . ըստ այնմ , “ Չիք ոք բարի , բայց մի Աստուած ” : Եւ յօրժամ՝ ի չար ինչ յարի , յետա դաւնայ ՚ի սիրայն Աստուծոյ առ ստեղծուածս . նըմին իրի ժամանակաւոր գործոց մարդոյ հասուցանի փոխադարձ վարձք՝ կամ պատիժ յաւիտենական . զի առարկայն զոր սիրեաց՝ կամ առեաց , է Աստուած յաւիտենական :

Ապաքէն յամենայն կէտ կամք մարդոյ կարէ յարիլ կամ՝ ՚ի բարի ինչ՝ կամ՝ ՚ի չար , ունակաբար կամ ներգործաբար . և ոչ գիտէ մարդ , թէ ՚ի հասանել մոհուան՝ ՚ի բարին կամս գտանիցի , թէ ՚ի չար կամս Ուրեմն պարտ է մարդոյ յամենայն ժոմ հաստատել զկամս ՚ի բարի խորհուրդս և յաստուածահանցոյ գործս , զի ընկալցի իւր վարձք յաւիտենական զամենաբարին Աստուած . քանզի զներգործութենէ կամաց իւրաքանչիւր ումեք կախի հաստուցումն , եթէ բարի՝ և եթէ չար :

Տջ . Վահն զերկուս շնորհս առնէ բարեաց , մի՝ զի ազատէ զնոսա ՚ի չարեացն աշխարհի , յորս տառապէին . և միւս՝ զի հասուցանէ զնոսա ՚ի ժառանգութիւն երկնացին բարեացն , որոց փափէին : Եերհակ այսմ , զերկուս վնասս առնէ չարաց , մի՝ զի զրկէ զնոսա ՚ի փայելչութեանց աշխարհի , յորս հեշտանային . և միւս՝ զի մատնէ զնոսա ՚ի տանջանս դժոխաց , յօրմէ երկնչէին : Վասն որոց բարիք ուրախութեամբ մեռանին , խկ չարք թախճութեամբ :

Ի՞ւ . Ամհն ոչ վարի աշառանօք ընդ ու մեք , վասն որոյ ոչ ոք պարտի զնմանէ գանկատել : Օք եթէ բառնայր յաշխարհէ միայն զծերս , ով կարէր ըդմոլութիւնս երիտասարդաց զսպել . եթէ զերիտասարդս , ո՞ բաւական լինէր զագահութիւն ծերաց յաղթահարել : Եթէ զցաւագարս միայն 'ի կենաց հասանէր , ո՞ կարող էր արդեօք զուժեզացն յանդգնութիւն չափաւորել . եթէ զառողջամարմնավ , ո՞ ձեռնհաս գտանէր զցաւագարս և զհիւանդս խնամել : Եթէ միայն զաղքասս 'ի բացտանէր , միթէ մարթ ինչ էր ու մեք զփարթամացն հպարտութիւն խոնարհեցուցանել . եթէ զփարթամս միայն , ո՞ կարէր զթիւ աղքատաց 'ի հտմար առնուլ : Եթէ զառաքինիս բառնայր 'ի միջոյ , աշխարհս լինէր դժոխք , զի մնային միայն մարդիկ դիւազգիք , եթէ զչարս , յոյժ սակաւգտանէին մարդիկ յաշխարհի , որովհետեւ սակաւաթիւ են բարիք : Ապաքէն մահն ընդ ամենես սեան միօրինակ վարի , զի զամենեսեան զգասաւ և անտրտում պահեսցէ . վասն որոյ ոչ ոք իրաւունս ունի տրանզալ զնմանէ , զի մարթ է իւրաքանչիւր ու մեք ըմբռնիլ 'ի մահուանէ՝ յորում հասակի և իցէ :

Ի՞ւ . Արտնեղութիւն է յոյժ և տանջանք մոտաց սպասել գալստեան ու մեք , մանաւանդ յորժամ յամէ նա 'ի գալ . ուստի լաւ է՝ եթէ այլք սպասեսցեն քեզ գնալ առ նոսա , քան թէ գու սպասեսցես գալստեան նոցա առ քեզ : Ապա անհնարին տանջանք լինէր կենդանեաց , եթէ սպասէին մեռելոց՝ միւսանդամ գալստեան նոցա յաշխարհ ,

զրս սիրէին . բայց այժմ ոչ տանջին կենդանիք , զի ոչ սպասեն մեռելոց , այլ մեռեալք սպասեն կենդանեաց՝ երթալ առ նսսա :

Իթ . Որ վասն յանցանաց մատնի 'ի բանդ , ոչ զայլինչ մտածէ . բայց եթէ ազատիլ . իսկ մարդիկ 'ի նախկին մարդն յանցանօք ըմբռնեալ՝ արկան իբր 'ի բանդ՝ 'ի բաղմավիշտ յայս աշխարհ , ուր մնան յամենայն 'ի կեանս որպէս յարդելանս , և 'ի մեռանին ազատին . ուրեմն մահն է ազատիչ 'ի բանդէ վշտաց աշխարհի : Բայց Վասուած ու զրմած և գիտակ ամենայնի՝ զրս կրեն մարդիկ յայս աշխարհ , կարձեաց զժամանակ կենաց մարդոյ . և ինքեան միայնոյ պահեաց զբանալին , այս ինքն զվարիո մահուն , զի մի ոք տաղտկացեալ 'ի գառն վշտաց , համարձակեսցի ինդրել զմահ , կամ զիւրովին երթալ : Վասն որոյ մահն որ ըստ կամացն Վասուածոյ լինի , ոչ միայն ազատէ զմարդն 'ի բանտէ տառապանաց աշխարհի , այլ և հասուցանէ 'ի լաւագոյն կեանս . յայն սակս մահն ասի դուռն լաւագոյն կենաց :

Վապքէն քանի գառն լիներ կեանիք մարդոյ 'ի վերայ երկրի , եթէ ոչ էր մահ . յայտ է փորձն 'ի չարաչար ախտացեալս , 'ի զառամեալ ծերս , 'ի յետին չբաւորս , և յանդերծ փորձանաւորս , ու բոց ամենեցուն մսիթարիչ է մահն :

Չիք ճարտար բժիշկ յապտքինել զցաւս հիւանդին՝ առաւելքան զօրհաս մահուն . զի ուր ոչ ազդեն զօրութիւննք գեղոց քաջարուեստ բժըշկաց , սա առանց ինչ գեղոց գիտէ ապաքինել : Վապք մեծ ողորմութիւն է յՎասուածոյ առ մարդ

գիկ լինիլ նոցա մահկանացու . որ և ոչ փոքր պատիւ է մարդոյ , մինչ լոտուած ինքեան սեպհական արար գիտել և կամիլ զօր և զժամ մահու . ուրեմն մի երկնչիր 'ի մահուանէ , այլ ջանա՝ զի բարի մահուամբ ելցես յաշխարհէ :

Ա . Երանելի է մարդ , որ գիտէ՝ թէպէ պանդուխտ է 'ի վերայ երկրի , վասն որս ընդ ժամանակս առաքէ 'ի բուն հայրենին իւր 'ի յերկինս զգանձս բարեաց՝ զօր ստացաւ յամենայն 'ի կեանս իւր . և կտակագրութեամբ իւրամի պատրաստեալ զպիտոյս ճանապարհի՝ սպասեալ մնայ գալստեան մահու իբրև հմուտ տաղնորդի , ճանապարհորդել յերկինս՝ 'ի վայելել յաւիտեան յարդիւնս վաստակոց իւրոց :

Հայց է մարդ որ գիտէ՝ թէ երկիրս չէ տեղի սեպհական ինքեան , այլ իջևան ինչ առժամանակեայ բնակութեան . որովհետեւ չէ ծնեալ մարդս վասն երկրի՝ ըստ օրինակի անբանից , այլ վասն երկնից՝ ըստ նմանութեան հրեշտակաց . բայց սակայն ոչ ինչ հոգայ զայնմանէ , և ոչ ջանայ ամբարել անդ զգանձս իւր վայելել անվախճան կենօք :

Եւ թէպէտ կտրապետն մահու հիւանդութիւնն՝ բազում անդամ եկեալ աղդ առնէ նմա , այլ նա տակաւին ոչ զգաստանայ պատրաստական գտանիլ : Եւ մինչ յաւուր միում իբրև զգող գիշերի յանկարծակի հասեալ բունադատէ տանիլ , յայնժամ զգայ մարդ զվրիպակն զօր արար , բայց անագան : Օքի թէպէտ ըստ ձեւնհաս գոլոյ աճապարէ պատրաստել , այլ ոչ ամենայն կտրեար պիտոյիւր . և ոչ ևս կարէ առնել կտակագրիր , որպէս

զի ամենայն ինչ յետ մահու իւրոյ լինիցի բարեկարգ և օրինաւոր : Վասն որոյ յոլովակի յառնէ խոտլութիւն՝ իմէջ ժառանգորդաց . և այր ընդ եղբօր իւրոյ ՚ի դատ վարեալ , ծախեն զինչս բազումս ՚ի դատաստանական կուիւս . և եթէ ոչ խաղաղացացին ՚ի համոզանաց հոգեւոր հովուաց և մտերիմ բարեկամաց , հայրենի ժառանգութիւնն ամենայն ոչ կարէ լինել բաւական վայրավատին ծախուց նոցա :

Վպա ամենայն ոք փութասցի մինչդեռ ժամանակն ՚ի ձեռս է , պատրաստել զպէտս հոգւոյ և մարմնոյ իւրոյ հաստատուն կուակագրութեամբ : Իսյց այս գովելի սովորութիւն՝ զոր հաստատուն օրինօք պահեն այլազգ քրիստոնեայք , նուազեալ տեսանի այժմ յազգի մերում , թերեւս յանհոգութենէ առաջնորդաց և իշխանաց . որ արդար և պիտանի է յոյժ և օգտակար , մանաւանդ առն քրիստոնէի և բարեկալաշտի :

ԱՅ. Չիք թշուառ և սզրմելի քան զայն , որ ընկողմանեալ ՚ի մահիճս տանջի արտաքուստ մահաբեր յաւօք , և ՚ի ներքուստ ՚ի խղճէ մտաց . ՚ի միոյ կողմանէ տեսանէ զխուճապումն մահու՝ վարել զհոգի իւր յանձանօթ ինչ տշխարհ , և ՚ի միւս մէ կողմանէ նշմարէ զպատրաստութիւն ժառանգորդաց իւրոց՝ տանիլ զմարմին իւր ՚ի գերեզմոն : Վրկեղք գանձուց և սասցուածոց՝ որք զետեղեալ են մի զմիով տւաջի աչաց իւրոց , յաւելուն զտառապահնս նորա . զի յուշ անդր ածեն զզրկեալսն՝ յորոց յանիբաւի էառ , և զկարօտեալ որն՝ որոց զլացաւ տալ . սնոտի յայսն առողջու-

թեան՝ զոր տան նմա մերձաւորք իւր , ոչ կարէ միսիթարել զնա , զի տեսանէ զանդամա մարմնոց իւրոյ լուծեալ և թալկացեալ :

Վպա որ կամի անտրատում մեռանիլ՝ յորմէ ան հնարին է խորշիլ , կտակագիր արասցէ ՚ի կենդանութեան իւրում . եթէ զրկեալ իցէ զօք , հատուսցէ նմա . եթէ զլացեալ իցէ նալաստել կարօտելց՝ եկեղեցեաց և վանորէից՝ տասցէ ըստ արժանւոյն . և մաքրեալ զմիտս ՚ի խղճէ չարեաց խոստովանութեամբ և հազորդութեամբ՝ հրաժարեաց ցի ՚ի տառապանաց կենցաղցոյ հանդչիլ՝ ի յերկինս :

ԵԲ . Ե՞ս որ խրատէ զշիւանդն հաստատուն կրտակագրութեամբ անօրինել զամենայն պէտս հոգւոց իւրոյ և մարմնոյ , զողորմութիւնն աղքատաց , զպատարագիս , զնպասան եկեղեցեաց և վանորէից , և զոր այլ ևս են հոգողութիւնք յօդուտ որդւոց և ընտանեաց իւրոց . յուշ արարեալ նմա՝ թէ այս ամենայն պատրաստութիւնք ոչ եթէ փութացուցանեն զմահ , այլ խոստանան զառողջութիւն . զի թեթեացուցեալ զմիտսն ՚ի բաղմատագնաալ հոգոց , և մաքրեալ զսիրան ՚ի խղճէ չարեաց , թեթեացուցանեն և զշիւանդն ՚ի ցաւոց . նա՝ զի ցորչափ կենդանի է կտակագիրն , ոչ ոք ունի իրաւունս պահանջել ՚ի նմանէ ինչ . զի կտակ յետ մահուն է հաստատուն :

ԵԱՅԼ յորժամ ինքն հիւանդանայ , չածէ ՚ի միտ զիսրատն որովլ խրատէր զայլն . և եթէ ոք ՚ի բարեկամաց առաջադրեսցէ նմա կտակագիր լինել , խոժուի և երեսս դարձուցանէ՝ ասելով . միթէ ամենայն որ հիւանդանայ՝ մեռանելոց իցէ : Յա-

ւելու ասել՝ թէ զգամ յանձն իմ, զի ես այսու
հիւանդութեամբ ոչ մեռանիմ . բայց թէ հիւ
անդացայց առ ՚ի մահ , յայնժամ եղեալ եմ ՚ի
մահ առնել զկատակագրութիւն : Օ այսոսիկ և զոր
այսպիսիք են անտեղի բանք՝ յանդգնի խօսիլ ,
որպէս այն՝ թէ Աստուած ոմն իցէ գիտել զօր
մահուան :

Ուստի բարւոք առնէր , եթէ ոք զիսրամն զոր
տայր այլոց հիւանդաց՝ արձանագրէր ՚ի թղթի , և
՚ի հիւանդանալ իւրում կատարէր գործով : Վան
զի մահն ոչ զոք ունի իւր խորհրդակից , զի ազդ
արացէ նմա զժամն օրհասական . և ոչ ումեք ա-
չառէ , զի յապաղեսցէ . և ոչ յումեքէ երկնչի , զի
հեռի կացցէ . ոչ զոք թողու կենդանի , զի և ին-
քըն ընդ նմա անմեռ մնացցէ :

Եւ վասն զի կայ մնայ մարդկան մի անդամ մեռ-
ուանիլ , գուցէ յայսմ հիւանդութեան մեռանեւ-
լոց իցէ . զի չիք նմա յայտնութիւն ՚ի վերուստ ,
թէ յայլում նուագի մեռանիցի : Ապա որ ուսու-
ցանէ զայլս , և զանձն ոչ ուսուցանէ , բազում գու-
նից պարտաւոր գտանի . իբրև զծառայն որ գիւ-
տէ զկամս տեաւն իւրոյ , և ոչ պատրաստէ ըստ
կամաց նորա :

Էֆիշէ ոք եթէ ոչ ճանաչէ զպատճառ
հիւանդութեան ուրուք , ոչ կարէ առողջացու-
ցանել զնա . զի պնդացուցիչ գեզս տայ՝ որում օ-
շարակ պիտի , և երակ հատանէ՝ որ խարանաց
կարօտի . սմին իրի բազում բժիշկք բազում ան-
դամ՝ ՚ի խորհօւրդ մտեալ՝ ոչ կարեն բժշկել զիսու-
թացեալն : Օ և նոքա միայն մարմնական ախտա-

որութեանց գոլովլ հմաւտ՝ անտեղեակ են հիւանեացութեանց հոգւոց . և ո՞ գիտէ , գուցէ հիւանեացութիւն այնմ՝ որում ջանան օդնել , իցէ պատճառեալ՝ ի խղճէ մասոց :

Օք որ վերս ունի ՚ի հոգին , և տագնապի հանապաղ ՚ի խայթէ մասոց , նա ՚ի դոցըն մի հիւանեացութենէ մարմնոյ տկարանոյ , և անկանի ՚ի մոհիձո ցաւոց , և զիստրդ օդնեսցեն այնպիտուցն ճարտարութիւնը բժշկաց , կամ որ շահ նմա ՚ի մարմնական գեղոց . և այսու օրինակաւ բազում են ախտացեալք , զօրս չէ մարթ ճանաչել :

Վոլոս պարտաւոր են մերձաւորք հիւանդին՝ տանեց դանդաղանաց տանիլ առ նո զհոգեորքիցէլ , որ խորհրդական խոստվանութեամբ ծանիցէ զցաւս հոգւոց նորա , և զօգտակարն մատառոցէ նմա զդարման . և հիւանդն ազատեալ հոգւովլ ՚ի խղճէ չարեացն , առողջասցի և ՚ի մարմնական ախտաւորութենէն : Եշ եթէ մահ ևս ՚ի վերսոց հասանիցէ՝ ոչ ինչ տագնապեսցի , այլ որպէս ՚ի քաղցր քուն հանդիցէ . և փրկութեամբ հոգւոց իւրոց բերկրեալ՝ զուարթ դիմօք ՚ի պարասաւեալ օթեանս երկնից ճանապարհ արացէ . և փոխանակ սգոց և արտմութեան զօր թողլոց է մերձաւորտց իւրոց , թողուցու հոգեղուարձ ըստփանս և միսիթարութիւն :

Էֆ . Վյնէ ճշմարիտ բարեկամ , որ օդնէ բարեկամին ՚ի մեծի նեղութեան նորա . իսկ ոչ կարէ լինել այլ ինչ նեղութիւն մեծ ՚ի կեանո մարդոց՝ քան զօր մահու նորա . ապա ճշմարիտ բարեկամն ՚ի լսել զհիւանդութիւն բարեկամին ,

երթաց և օգնէ նմա օգտակար խրառուք, որպէս
զի փութացի առնուլ զառւրբ խորհուրդն ապաշ-
խարութեան, և արացի կոտակբութիւն։

Ի՞սյց աւազը՝ զի զբաղւեմն տեսանեմք յաւու-
րըս մեր, որք պանծան զանձանց լինել բարեկամ
հիւանդին։ և երթեալ յայցելութիւն նորա,
չառնեն ինչ զրոյց զապաշխարութենէ և զկտա-
կագրութենէ, այլ վեր՝ ի վերոյ խօսելով զհիւան-
դութենէ նորա և զբժշկոց, դառնան և յուսա-
գրեն զնա առողջանալ, և իբրև մարդարէ՝ կամ
որդի մարդարէի նշանակեն նմա զօրն և զժամն ե-
լանելոյ նորա՝ ի մահճացն, և երթալոյ՝ ի վաճա-
ռանոցն։ Եւ ողորմելի հիւանդն հաւատացեալ
բանից նոցա, յապաղէ տեսանել զպատրաստու-
թիւն իւր. և մինչ օրհաս մահուն սահիպէ զնա,
հազիւ առեալ զիսրհուրդն ապաշխարութեան՝
ելանէ յաշխարհէ։

Այսպիսիք ոչ են ճշմարիտ բարեկամ հիւան-
դին՝ այլ շողօքորթ, չասացից թէ թշնամի. զի
փոխանակ փութացուցանելոյ զհիւանդն տեսանել
զպատրաստութիւն անդառնալի գնացիցն, սուտ
խոստմամբ առողջութեան՝ տան նմա յապաղել.
փոխանակ նպաստամատոյց լինելոյ, վեասու նորա
գտանին պատճառ։

Այլաքէն ընդ ամենայն մարմնաւոր ծառայու-
թեանց և բարերարութեանց կարէ մարդ ըստ
արժանւոյն հաստուցանել. բայց ընդ հոգեւոր խր-
բատու՝ անհնարինէ մարդոց առնել արժանի հա-
տուցումն։ Օքի հոգին է անդին, ապա և խրանն
որ տուեալ լինի՝ ի փրկութիւն հոգւոյ՝ է անդին։

իսկ առ այն՝ որ է անգին, պահանջի արժանի հատուցումն՝ վարձք անգին. բայց քանզի տալ դայն անկարելի է մարդկան, ապա Վասուած տայ և հատուցանէ ընդ հոգեոր անգին խրառուց զվարձս անգին :

ԱՅ. Այսպան սասափիկ է և զօրտւոր սէրն ծընողական, մինչ զի ՚ի մեռանիլ որդւոյն մնայ անմեռ ՚ի սիրո ծնողին, մանաւանդ եթէ որդին ից բարեբարս : Բայց ոչ վայելէ հաւատացելոյ անդր քան զպայման սգալ և տրտմիլ . զի եթէ բարի էր որդին, ոչ է արժան լալ, զի մեկնեցաւ ՚ի միջա չարեաց, և դնաց վայելել յարդիւնս բարեաց իւրոց : Իսկ եթէ չար էր, ոչ բնաւ արժան է լալ, զի կանխահաս օրհասիւ բարձաւ չարն ՚ի միջոյ, և ոչ յաւելու պատիժ նորա, որ եթէ մընայր կենդանի, կարէր գործել զայլ և չարիա՝ յաւելու զպատիժ իւր : Բայց է երբեմն զի թոյլ տայ Վասուած մեռանիլ որդւոյ բարւոյ, զի մի գուցէ լինիցի չար . և բառնայ ՚ի կենաց որդի չար, զի մի չարագոյն ևս լինիցի :

ԱՅ. Իմծ մեծ ունել ՚ի վերայ մեռելոյ՝ և վայ իւք և ճշով ողբալ, արտաքրոյ է մարդկային բանաւորութեան, և անվայել քրիստոնէական յուսոյ և կրօնի : Օ ՚ի եթէ ուղիղ հաւատով և բարի վարուք հրաժարեցաւ ՚ի կենցաղոյս, նա յանմահական կեանս ուրախացեալ բերկրի . և դու իւրեւ անյօյս ոք սգաս արտմութեամբ, որպէս թէ չիցէ անդրէն յառնելոց : Իսկ եթէ չարաչար վարուք մեռաւ, բաւական է նմա սուգն զոր ունի ՚ի վերայ իւր . զի թէ և աշխարհ ամենայն ՚ի մի

վայր ժողովեսցին և կօծեսցին, ոչ կարեն հաւառ
սարիլ սգոյ և տրտմութեանն, զոր ունի մեռեալն
՚ի վերայ կարստեան իւրոյ :

Եթէ ասիցեն, բարեացալարտ ոմն էր մեռեալն
և երախտաւոր բաղմոց : Ապաքէն արժան էր նու-
ցա գիտել, թէ սաստիկ սգով չկարեն լինել շը-
նորհապարտ . իսկ եթէ ախորժեն, անմուաց ՚ի
մորի կալցեն զերախտիս նորա, և բանիւ և գրով
յիշատակեսցեն զհամբաւն բարութեան, և զազգ-
օդուտ արդիւնս վաստակոց նորա՝ յազգէ ազգ մին-
չե յաւիտեան . մանաւանդ զի յօրդորեալ յօրի-
նակէ նորին՝ լինիցին իւրաքանչիւր լսա կարի բա-
րերար և երախտաւոր հայրենեաց իւրեանց :

Իսկ եթէ ասիցեն, բաղմորդի էր մեռեալն և
անստացուած, և եթող որբ և անխնամ զօրդիս և
զընտանիս իւր : Օ յի է՝ զի չառնուն ՚ի միտ, թէ
ոչ ինչ օգտէ սուդ և թափածութիւնն, զի ոչ կարէ
նուր զաքտս օրբոյն և այրոյ : Համա փօխար-
կեսցեն զսուդ իւրեանց ՚ի գթութիւնն, և մար-
դասէր կամօք խնամածու լինիցին նոցա մինչեւ ՚ի
զարդանալ, և հոգալ զկարեաց իւրեանց՝ մի թու-
զուցուն յազգարծի և անխնամ զօրբոն, և մի կա-
րոսեալ զընտանիս նորա :

Եւ թէ ասիցեն . սիրելի էր մեզ մեռեալն և
բարեկամ : Իսկ արդ՝ պարտ էր նոցա ոչ մեծակա-
կան ձայնաբաճակութեամբ լինդ վայր ալազակել,
և սգով և կօծով ՚ի թուխս համակիլ, այլ հաստա-
տուն կալ ՚ի սիրելութեան, և որ ինչ վայելէ բա-
րեկամութեան՝ ՚ի նոյն կանինել . ազօթս առնել
վասն մեռելոյն, և տալ պատարագիս և ողօրմու-

թիւն . ՚ի բարելից շինութեան պահել զտուն նորա , և խնամով զարգացուցանել զորդիս նորա . զուստերսն տալ յուսումն գիտաւթեան՝ և յարհեասս պիտանիս , և զգստերսն բարեկարգութեամբ պահել և ամուսնացուցանել , և սիրով բարեկամութեան հոգածու լինել ընտանեաց նորա , որպէս թէ ինքն իցէ կենդանի :

Վպատափեն , եթէ ՚ի ծաղկեալ հասակի մեռաւ . ծանիցեն այնպիսիքն , թէ և այն էր հարկաւոր՝ և գրեթէ բնական , նկատմամբ պատճառացն՝ յորոց եկն յառաջ մահն տարաժամ :

Վպաքէն մարմին մարդոց ըստ անյեղի օրինաց արարչապետին բնութեան՝ բաղկացեալ է յայլասեռ տարերաց կամ ՚ի նիւթոց , որք ունին զտարբեր յատկութիւնս , զտարբեր շարժմունս , և ըլտարբեր ներդործութիւնս : Վանդի հողն է հաստատուն , անթափանցելի , և ծանրագոյն քան զայլ սրն : Զուրն է մածուցիկ , որ ընդմաեալ յամենայն կազմութիւնս գործարանաց մարմնոց , տայ նոցա լինել գիւրաշարժ : Օդն է հոսանուտ , որ տայ միջոց այլոց տարերաց մարմնոց շարժիլ առ հարկաւոր գործու : Հուրն է յաւէտ ներդործական և շարժուն : Ուստի և մարմինն բաղկացեալ յայտցիկ տարերաց կամ ՚ի նիւթոց , ունի զզանազան յատկութիս նոցա . այսինքն զանթափանցութիւն , զծանրութիւն , զգանդաղութիւն , զբաժանելութիւն , զշարժականութիւն :

Վրդ՝ մինչ հաւասարակշիռ են տարերքս , զօրացուցանեն և պահպանեն զմարմին մարդոց . բայց մինչ կորուսանեն զհաւասարակշուութիւնն , ոլու

կարացուցանեն և առքերեն զմահ . և որք պատճառ էին պահպանութեան և կենաց , լինին առիթ ապականութեան և մահուան : Քանզի հուրն առաւելեալ՝ երադէ զշարժումն մասանց նիւթոյ , և խանգարէ զկազմուած մարմնոյ . ջուրն առառացեալ՝ թուլացուցանէ զջիլս և զնեարդս . օդն լրցեալ անցարմար մասամբ՝ բերէ զմահաբեր ախաս :

Կորուսանեն զհաւասարակշռութիս իւրեանց տարերք , մինչ ՚ի բազմամեայ գործողութենէ արկարանան գործարանիք մարմնոյն . և նուազի օր ըստ օրէ ձգողական շարժումն տարերաց , որք ձգէին զմասունս համեմատս էութեան իւրեանց ՚ի որնունդ և յաճումն մարմնոյ , և ՚ի պահպանութիւն կենաց . և ընդ հակառակն՝ սկսանին տարերք վանողական շարժմամբ վանել զնիւթո՝ որք աննման են էութեան իւրեանց , և տկարանան և քակտին , և յսցանէ յառաջ գայ մահն ծերութեան ըստ սահմանելոյն Աստուծոյ :

Կորուսանեն ևս զհաւասարակշռութիւնս իւրեանց տարերք , է՝ որ ՚ի կերակրոց և յըմպելեաց , և է՝ որ ՚ի խառնակեցիկ վարուց . է՝ որ յապականութենէ օդոյ , և է՝ որ յամբօխմանէ կրից , և յոյլ ևս բաղում և ՚ի զանազան պատճառաց , որք կարեն խանգարել զկազմուած մարմնոյ և գործարանաց . ուստի և տարերք վանողական շարժմամբ հերքեն զնիւթսն , որք ոչ համեմատին էութեան իւրեանց , և նուազին և քակտին , և յսցանէ յառաջ գայ մահն տարաժամ :

Եւ զայսոսիկ վերկոսին , այսինքն զշարժումն ձգողութեան՝ որով պահպանին կեանիք , և զշար-

Ժումն վանողութեան՝ որով լուծանին կետնիք ,
հաստատուն օրինօք սահմանեալ է Աստուած ՚ի
բնութեան մերում մինչև ՚ի կատարած աշխարհի :
Եւ յորժամ փոփոխեցին օրէնքը բնութեան յօ-
րէնս շնորհաց , և եղիցի երկին նոր և երկիր նոր ,
յայնժամ նորոգեցի և մարմին խոնարհութեան
մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց որ-
դւոյն Աստուածոյ . և առցէ իւրաքանչիւր զհատու-
ցումն գործոց իւրոց :

Խոկ արդ՝ եթէ՛ մահն ծերութեան՝ և եթէ մա-
հըն երիտասարդութեան են բնական և հարկա-
ւոր , մինչ զպատճառն յորոց յառաջ գան՝ խե-
լամսութեամբ քննեցուք : ՞ ՚ի որ արկանի ՚ի
հուր , հարկաւ այրի . և որ գահատիչ լինի , հար-
կաւ խորտակի . այսպէս ամենայն պատճառ հար-
կաւորապէս ներգործէ , ուստի և ամենայն գործ
է հարկաւոր և բնական , նկատմամբ պատճառ այն՝
որք զուգընթանան և յառաջածեն զգործն : Ապա
չէ պարտ արտմութեամբ լքանիլ լիդ մահ մե-
ռելոյն , այլ զգասատութեամբ զարժաննեն տնօրինել ,
և զնոյն կատարել փութալ :

“ Եթէ մեռանիցի մարդ՝ կեցյէ , վախճանեալ զառու-
թնաց իւրոյ : Ապասեցից մինչ միւսոնդամ լինիցիմ ” .
Յոր . Ճ.Դ. 14 :


“ Ապիսաւ լայ ՚ի վերայ մեռելոյն զի հանգեաւ ” .
Աերաք . ԽԲ . 11 :

“ Ո՞վ մահ՝ որպե՞ս զի տառն է յիշարակ չո մարդոց խա-
լալացելը ՚ի վերայ սպացուածոց իւրոց ” . Արքաք . ԽԱ . 1 :

“ Ո՞վ մահ՝ զի գեղեցիկ էն տափասփանչ չո , իշրօնելը
առն , և նուազելը ՚ի ջրութենէ ” . Արքաք . ԽԱ . 3 :


“ Եթե ու հապն ցորենոյ անկիւալ յերկիր մեռանիցի , ինչն
մայն իայ . ապա լի մեռանիցի , բաղը-մ արդիւնս առնէ ” .
Յովհ . ՃԲ . 24 :

“ Օ ի թոշանն մեղաց մահ է . այլ շնորհան Աստուծոյ՝
իւտանչ յահիպենից , ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի սեր մեր ” .
Յովհ . Զ . 25 :



ՑԱՆԿ

ԳԼՈՒԽ ԱՐԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ



ԳԼ.

ԵԲ.

Ա.	Առաջնորդ	1:
Բ.	Քահանաց	17:
Գ.	Էշխան	21:
Դ.	Ճաղավարդ	47:
Ե.	Վզգասեր	54:
Զ.	Վարժապետ	74:
Է.	Օճող	78:
Ը.	Վմաւսնութիւն	95:
Թ.	Երիտասարդ	101:
Ժ.	Գիտութիւն	105:
ԺԱ.	Վիճակ կենցաղյա	117:
ԺԲ.	Երջանկութիւն	144:
ԺԳ.	Վարքինութիւն	155:
ԺԴ.	Խոհեմութիւն	176:
ԺԵ.	Խորհրդապահութիւն	191:
ԺԶ.	Խիզմ մասց	195:
ԺԷ.	Վրդարութիւն	198:
ԺԸ.	Շամարտութիւն	205:
ԺԹ.	Բարեկամ	211:
Լ.	Հիւրասիրութիւն	223:
ԼԱ.	Բաւականութիւն	225:
ԼԲ.	Երկրագործութիւն	228:
ԼԳ.	Օպուայութիւն	231:
ԼԴ.	Հնազանդութիւն	234:
ԼԵ.	Ծնկերութիւն	244:
ԼԶ.	Խոնարհութիւն	248:
ԼԷ.	Համբերութիւն	255:
ԼՅ.	Խոկումի մահու	262:

919
920

919

h.2

920

h.1

0024684

0024684

